ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ՀԱՅԿ ԴԱՎԹԻ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ատենախոսություն

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ քաղ.գիտ.դոկտոր,

պրոֆեսոր Գ.Քեռյան

Երևան – 2019

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 3

Գլուխ 1. ՓԱՓՈՒԿ ՈՒԺ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ........ 18

1.1. Փափուկ ուժ հասկացության տեսահայեցակարգային հիմքերը ........ 18

1.2. Փափուկ ուժի ռեսուրսները և չափելիության հիմնախնդիրը ........ 42

1.3. Փափուկ ուժի ինստիտուցիոնալացումը և մեխանիզմների տիպաբանությունը ........ 58

Գլուխ 2. ԱՐՏԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ........ 69

2.1. ԱՄՆ փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում ........ 70

2.2. ԵՄ փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում՝ որպես նորմատիվ ուժի դրսևորում ........ 91

2.3. Չինաստանի փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում՝ որպես «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի բաղադրիչ ........ 119

Գլուխ 3. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ........ 141

3.1. Փափուկ ուժի ռուսական ընկալումը և ազդեցության մեխանիզմները Հարավային Կովկասում ........ 141

3.2. Իրանի փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում ........ 161

3.3. Թուրքիայի փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում ........ 182

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 204

Օգտագործված գրականության ցանկ ........ 218

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** ԽՍՀՄ փլուզմամբ և սառըպատերազմյան ժամանակաշրջանի ավարտով միջպետական հարաբերություններում ռազմական ուժի կիրառման առերևույթ սպառնալիքը մղվեց երկրորդ պլան: Աշխարհի մի շարք գոտիներում ստեղծված անկայուն իրավիճակի բերումով ռազմաքաղաքական բլոկների բախման վտանգին փոխարինելու եկան համաշխարհային նոր սպառնալիքներ, որոնց ակնհայտորեն անհնար էր հակազդել հին գործիքակազմի կիրառմամբ: Այդպիսի սպառնալիքների թվում կարելի է մատնանշել միջազգային ահաբեկչությունը,զենքի, թմրանյութերի անօրինական շրջանառությունը, կազմակերպված հանցավորությունը, անօրինական միգրացիան, ավելի ուշ՝ կիբեր հարձակումները և այլն: Վերջիններս հաճախ մասնագիտական գրականության մեջ որակվում են որպես «ոչ ավանդական սպառնալիքներ»: Ակնհայտ դարձավ, որ եթե միայն ռազմական ուժը բավարար էր երկու հակառակորդ բևեռների զսպման համար, ապա նմանատիպ անդրազգային սպառնալիքներին դիմագրավելու գործում նրա գործնական օգտակարության մակարդակը բավականին ցածր է: Հենց նմանատիպ «ոչ ավանդական» սպառնալիքներին արդյունավետ կերպով դիմագրավելու և հակազդելու անհրաժեշտությունից ելնելով՝ պետությունների արտաքին քաղաքական գործիքակազմում աստիճանաբար սկսեցին ավելի մեծ տեղ զբաղեցնել փափուկ ուժի մեխանիզմները:

Հատկանշական է, որ ի տարբերություն կոշտ (ռազմական) ուժի, փափուկ ուժի գործիքակազմին տիրապետում և այն կիրառում են ոչ միայն աշխարհի

հզոր ուժային կենտրոնները, այլև ոչ պակաս, իսկ երբեմն նույնիսկ ավելի արդյունավետ ձևով՝ համեմատաբար ավելի փոքր պետությունները, ինչպիսիք են, օրինակ, Շվեյցարիան և Սինգապուրը: Ընդունված է ասել, որ փափուկ ուժը փոքր պետություններին «իրենց քաշից ավելի ծանր» հարված հասցնելու հնարավորություն է ընձեռում:

Սակայն թերևս սխալ կլինի փափուկ ուժը դիտարկել միայն որպես նմանատիպ սպառնալիքներին հակազդելու միջոց՝ դրանով իսկ խիստ նեղացնելով դրա կիրառման իրական դաշտը: Հիմնավոր կլինի պնդել, որ այն ներկայումս վերածվել է պետությունների շահերի առաջմղման և բավարարման համալիր գործիքակազմի, որն առավելապես օգտակար է երկարաժամկետ նպատակների իրագործման համատեքստում:

Բնականաբար, փափուկ ուժի մեխանիզմները չէին կարող շրջանցել ավանդականորեն աշխարհաքաղական և աշխարհատնտեսական կարևոր հանգույց հանդիսացող Հարավային Կովկասը, որը մշտապես եղել է համաշխարհային ու տարածաշրջանային դերակատարների շահերի բախման թատերաբեմ և առանձնացել է այստեղ ներգրավված դերակատարների շատ խիտ պատկերով: Ընդ որում, եթե այդ դերակատարների ներգրավվածության տարբեր ասպեկտներ և չափումներ (ռազմաքաղաքական, տնտեսական և այլն) ուսումնասիրվել են ինչպես հայրենի, այնպես էլ արտասահմանյան հեղինակների կողմից, կոնկրետ փափուկ ուժի դիտանկյունը մնացել է ստվերում: Մինչդեռ տարածաշրջանում բավականին մեծ թվով արտաքին դերակատարների ներգրավվածության արդյունքում ստեղծվել է փափուկ ուժի

մեխանիզմների բազմաշերտ մի խճանկար, որում արտացոլված են ինչպես այդ դերակատարների հետապնդած ռազմավարական շահերը, այնպես էլ «թիրախ» երկրների առանձնահատկությունները: Այս իմաստով,մեծ կարևորություն ունի,մի կողմից, այդ արտաքին դերակատարների փափուկ ուժի մեխանիզմների համեմատական վերլուծությունը, որը հաշվի կառնի նրանց մոտեցումներում տարբեր գործոններով պայմանավորված տարբերությունները, մյուս կողմից, կվերհանի տարածաշրջանի երեք երկրներից յուրաքանչյուրում կիրառվող փափուկ ուժի մեխանիզմների առանձնահատկությունները:

Սույն աշխատանքը փորձ է ուսումնասիրության ենթարկելու փափուկ ուժի թե՛ տեսական, թե՛ կիրառական ասպեկտները՝ հաշվի առնելով,որ մինչ այժմ չեն եղել ուսումնասիրություններ, որոնք հիմնված կլինեին հիմնախնդրի այդ երկու կողմերի համաժամանակյա ուսումնասիրության վրա:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակը Հարավային Կովկասում ներգրավված արտաքին դերակատարների փափուկ ուժի մեխանիզմների ուսումնասիրությունն է՝ վերհանելով այդ դերակատարների մոտեցումներում և կիրառվող գործիքներում առկա տարբերությունները: Վերոնշյալ նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- Վերլուծելով մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները՝ հստակեցնել փափուկ ուժ եզրի լեզվաբանական և բովանդակային դաշտը, այդ հիմքով փորձել առաջ քաշել հեղինակային սահմանում

- Ուսումնասիրել փափուկ ուժի ռեսուրսների և չափելիության խնդիրը՝ որպես փափուկ ուժի կիրառման անհրաժեշտ նախապայման
- Վերլուծել փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացի առանձնահատկությունները և փափուկ ուժի մեխանիզմների էությունը՝ որպես այդ գործընթացի արդյունք և փափուկ ուժի ռեսուրսների իրացման հիմնական գործիք
- Դասակարգման ենթարկել փափուկ ուժի մեխանիզմները, փորձել առաջ քաշել հեղինակային տիպաբանական մոդել
- Օգտագործելով առաջ քաշված տիպաբանական մոդելը՝ համադրաբար վերլուծել, մի կողմից՝ համաշխարհային, մյուս կողմից՝ տարածաշրջանային դերակատարների փափուկ ուժի մեխանիզմները տարածաշրջանի երկրներում՝ վերհանելով դրանց մոտեցումներում առկա տարբերությունները,
- Համեմատել տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրում կիրառվող փափուկ ուժի մեխանիզմների բնույթի և դինամիկայի տարբերությունները
- Բացահայտել այդ դերակատարների կողմից կիրառվող փափուկ ուժի մեխանիզմների կապը տարածաշրջանում նրանց ռազմավարական շահերի հետ

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը Հարավային Կովկասում ներգրավված արտաքին դերակատարների կողմից կիրառվող փափուկ ուժի մեխանիզմների համեմատական վերլուծությունն է և օրինաչափությունների վերհանումը: Հետազոտության առարկան արտաքին

դերակատարների կողմից տարածաշրջանի երեք երկրներում կիրառվող քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական, տեղեկատվական և այլ գործիքների վերլուծությունն է:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության շրջանակներում օգտագործվել են ինչպես համագիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներից հիմնականում կիրառվել են համեմատական և նկարագրողական մեթոդները: Մասնավոր գիտական մեթոդներից օգտագործվել են համակարգային, կառուցվածքային-գործառնականը: Արտաքին դերակատարների փափուկ գործիքակազմի վերլուծության շրջանակներում կիրառվել է ինստիտուցիոնալ մեթոդը: Աշխատանքի նպատակներից ելնելով օգտագործվել է նաև փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը: Պատմականության սկզբունքի պահպանումը և կանխակալ դիրքորոշումների շրջանցումն ապահովել են հետազոտության եզրահանգումների ճշգրտությունը: Օգտագործվել են հիմնահարցի տարբեր ասպեկտները ուսումնասիրած նախորդ հեղինակների փորձը և նվաճումները:

Թեև Հարավային Կովկասում այս կամ այն ձևով ներգրավված են մի քանի տասնյակ դերակատարներ, սույն աշխատանքում որպես հիմք է ընդունվում 3+3 ձևաչափը՝ առանձնացնելով 3 արտատարածաշրջանային (ԱՄՆ, ԵՄ, Չինաստան) և 3 տարածաշրջանային (Ռուսաստան, Իրան Թուրքիա) դերակատարներ: Վերոնշյալ 6 դերակատարների առանձնացումը պայմանավորված է կոնկրետ փափուկ բաղադրիչի մասով այլ դերակատարների շատ ավելի սահմանափակ ներկայությամբ: Որպես 2 խմբերի

տարանջատման հիմք է ծառայում առաջին հերթին աշխարհագրական հարևանության, ինչպես նաև պատմական սերտ առնչությունների գործոնը,որով պայմանավորված՝ դերակատարների երկրորդ խմբի փափուկ ուժի մեխանիզմները որոշակի տարբերություններ ունեն առաջին խմբից,օրինակ, ի դեմս տարածաշրջանի երեք երկրներում համայնքների առկայության: Միևնույն ժամանակ, նման տարանջատումն օգտակար է աշխատանքի համաչափության տեսանկյունից:

Փափուկ ուժի իմաստավորման և խառնաշփոթից խուսափելու գործում առաջին կարևորագույն խնդիրը փափուկ ուժ եզրի լեզվաբանական դաշտի պարզեցումն է:Ջ.Նայի կողմից շրջանառության մեջ մտցված soft power եզրի power բաղադրիչը, ինչպես հայերենում, այնպես էլ ռուսերենում, ունի թարգմանության երկու համազոր տարբերակ՝ ուժ և իշխանություն (сила և власть): Թե և soft power-ը բովանդակային առումով որոշակի հատման կետեր ունի «իշխանություն» կատեգորիայի հետ, սույն աշխատանքում power եզրն օգտագործվում է ուժ, կարողություն (capability) իմաստով: Ինչ վերաբերում է եզրի առաջին բաղադրիչին, ապա այն ուղղակիորեն թարգմանվում է որպես «փափուկ»,և երբեմն սխալմամբ ասոցացվում է թուլության հետ: Իրականում այն փափկության/թուլության հետ որևէ առնչություն չունի,այլ մատնանշում է ուժի որակապես այլ տիպ՝ իրեն բնորոշ էական հատկանիշների համախմբով:

**Աշխատանքի գիտական նորույթը** փափուկ ուժ եզրի էության բացահայտման, պետությունների արտաքին քաղաքական գործիքակազմում դրա տեղի և դերի, ինչպես նաև մշակված տեսամեթոդաբանական ապարատի հիման վրա տարածաշրջանում ներգրավված արտաքին դերակատարների՝ տարածաշրջանում

տարվող քաղաքականության փափուկ ուժի պրիզմայի ներքո ներկայացման առաջին փորձն է հայրենական քաղաքագիտության մեջ: Իրականացված հետազոտության արդյունքում առաջ են քաշվել գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները`

- մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումների ու մոտեցումների վերլուծության հիման վրա առաջ է քաշվել փափուկ ուժ քաղաքագիտական հասկացության հեղինակային սահմանումը
- փորձ է արվել ամփոփել ու փափուկ ուժի ռեսուրսների վերաբերյալ առկա տիպաբանական մոդելները` վերհանելով դրանց առավելություններն ու թերությունները
- տարանջատվել են փափուկ ուժի ռեսուրսներ և փափուկ ուժի մեխանիզմներ հասկացությունները, վերհանվել են դրանց տարբերությունները և փոխկապվածությունը
- առաջ է քաշվել փափուկ ուժի մեխանիզմների 2 տիպաբանական մոդել ,որոնք օգտագործվում են արտաքին դերակատարների փափուկ ուժի մեխանիզմների ուսումնասիրության համատեքստում
- ուսումնասիրվել և համադրվել են ինչպես արտատարածաշրջանային, այնպես էլ տարածաշրջանային դերակատարների փափուկ ուժի մեխանիզմները
- ուսումնասիրվել են տարածաշրջանի երեք երկրներից յուրաքանչյուրում կիրառվող փափուկ գործիքակազմի տարբերությունները և օրինաչափությունները

- փորձ է արվել բացահայտվելու այդ դերակատարների փափուկ ուժի մեխանիզմների բնույթի վրա այդ երկրների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի ազդեցությունը

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:** Հետազոտված թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականությունը կարելի է բաժանել երկու լայն խմբի: Առաջին խումբը կազմում են փափուկ ուժի տեսահայեցակարգային ասպեկտների վերաբերյալ առկա մենագրությունները և հոդվածները: Հաշվի առնելով, որ եզրն ի սկզբանե գիտականորեն մշակվել է Արևմուտքում և դեռևս համեմատաբար «երիտասարդ է»՝ այս խմբում հատկապես մեծ տեղ են զբաղեցնում արևմտյան հեղինակների աշխատությունները: Մասնավորապես, աշխատանքի համար անկյունաքարային նշանակություն ունեն եզրի հեղինակ Ջ. Նայի աշխատությունները[1,2,3,4], որոնցում առաջ են քաշվում փափուկ ուժի տեսահայեցակարգային հիմքերը, համակողմանիորեն քննարկվում են փափուկ ուժի ռեսուրսների, պետությունների արտաքին քաղաքականության մեջ դրանց ունեցած տեղին և դերին առնչվող հարցեր: Հատկանշական է, որ խնդրո առարկայի շուրջ Ջ.Նայի ընկալումները ժամանակի ընթացքում ենթարկվել են որոշակի էվոլյուցիայի՝ սկզբնական շրջանին բնորոշ ընդհանրական պատկերացումներից փոխակերպելով գիտականորեն մշակված և նույնիսկ չափելի գործոնի:

[1] Տե՛ս **Nye J.,** Bound to Lead: The Changing Nature of American Power, Basic Books, New York, 1990
[2] Տե՛ս **Nye J.,** Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, New York, 2004
[3] Տե՛ս **Nye J.,** The Powers to Lead, Oxford University press, 2008
[4] Տե՛ս **Nye J.,** The Future of Power, Public Affairs, New York, 2011

Փափուկ ուժի տեսահայեցակարգային ասպեկտների վերաբերյալ ուշադրության է արժանի Ջ. Գալլարոտտիի աշխատությունը[5], որի շրջանակներում փափուկ ուժը դիտարկվում է միջազգային հարաբերությունների տեսությունների դիտանկյունից, վերհանվում են դրանց հատման կետերը: Հետազոտության համար բավականին արժեքավոր է եղել Ս. Լյուքսի մենագրությունը[6], որը թեև նվիրված է իշխանություն եզրի ավանդական ընկալումներին, սակայն տեսահայեցակարգային շատ դրույթներ կիրառվել են սույն ատենախոսությունում: Կարևոր իրադարձություն էր 2017թ. Փափուկ ուժի ձեռնարկի հրատարակումը, որը հանդիսանալով համեմատաբար ավելի նոր հրապարակում, արդիական մոտեցումներ է առաջ քաշում փափուկ ուժի էության, դրա հիմնական հատկանիշների և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ: Պետք է առանձնացնել նաև Կ. Գրեյի[7] մենագրությունը, որում ուսումնասիրվում է փափուկ և կոշտ ուժերի փոխհարաբերակցության հիմնահարցը, առաջ են քաշվում մի շարք տեսահայեցակարգային խնդիրներ: Ուշադրության են արժանի նաև Պ. Բեկրեկի և Մ. Բերետցի[8], Ջ. Գալլարոտտիի[9], Ջ. Գավենտայի[10] հոդվածները:

Փափուկ ուժի տեսահայեցակարգային ասպեկտներին որոշակի անդրադարձ է կատարվում ռուս հեղինակների մենագրություններում և

[5] Տե՛ս **Gallarotti G.**, Cosmopolitan Power in International Relations, Cambridge University Press, New York, 2010

[6] Տե՛ս **Lukes S.**, Power: A Radical View, 2nd edition, Palgrave Macmillan, London 2005

[7] Տե՛ս **Gray C.**, Hard Power and Soft Power: The Utility of Military Force as an Instrument of Policy in the 21st Century // US Army War College Strategic Studies Institute, 2011

[8] Տե՛ս **Bachrach P., Baratz M.**, Decisions and Nondecision: An Analytical Framework // American Political Science Review 57, no 3, September 1963, p. 632-642

[9] Տե՛ս **Gallarotti G.**, Soft Power: What it is, Why it's Important, and the Conditions Under Which it Can Be Effectively Used // Division II Faculty Publications, Wesleyan University, 2011

[10] Տե՛ս **Gaventa J.**, Finding the Spaces for Change: A Power Analysis // Institute of Development Studies, Volume 37, Number 6, 2006 p. 23-33

հոդվածներում: Վերջիններս հիմնականում կենտրոնանում են փափուկ ուժի շուրջ արևմտյան գրականության մեջ առկա տեսակետների քննարկման և վերաիմաստավորման վրա, ինչպես նաև Ռուսաստանի փափուկ ուժի քաղաքականության հնարավորությունների և հիմնախնդիրների, արևմտյան դերակատարների համեմատ նրա փափուկ գործիքակազմի տարբերությունների վրա: Առկա են մի շարք արժեքավոր աշխատություններ՝ ի դեմս Մ. Նեյմարկի մենագրության[11], որտեղ հեղինակը վերլուծության է ենթարկում եզրի իմաստավորման արևմտյան փորձերը և դրանք համադրում է փափուկ ուժի ռուսական ընկալման հետ: Արժեքավոր են նաև Գ.Ֆիլիմոնովի[12],Ա.Սերգունինի և Լ.Կարաբեշկինի[13],Մ. Լեբեդևայի[14], Օ. Լեոնովայի[15] աշխատությունները, որոնք լույս են սփռում այդ եզրի ռուսական ընկալման առանձնահատկությունների վրա:

Հայրենական գրականության մեջ փափուկ ուժի տեսահայեցակարգային ասպեկտները գրեթե ուսումնասիրված չեն: Առկա աշխատություններից ուշադրության են արժանի Ս. Շիրխանյանի[16], Ն. Մինասյանի[17][18] հոդվածները:

Գրականության երկրորդ խումբը կազմում են Հարավային Կովկասում ներգրավված արտաքին դերակատարների քաղաքականության վերաբերյալ

[11] Տե՛ս **Неймарк М.**, «Мягкая сила» в мировой политике, Дипломатическая академия МИД России, Москва, 2017
[12] Տե՛ս **Филимонов Г.**, «Мягкая сила» культурной дипломатии США, РУДН, Москва, 2010
[13] Տե՛ս **Sergunin A.**, **Karabeshkin L.**, Understanding Russia's Soft Power Strategy // Politics, 35 (3–4), 2015, p. 347–363
[14] Տե՛ս **Лебедева М.**, Ресурсы Влияния в мировой политике // Полис. 2014. No 1, с. 99-108
[15] Տե՛ս **Леонова О.**, Мягкая сила – ресурс внешней политики государства, // Научно-аналитический журнал «Обозреватель-Observer», 2013 № 4, с. 27-40
[16] Տե՛ս **Ширханян С.**, К вопросу о «мягкой силе» Республики Армения: аспекты национального брендинга // Вестник РАУ, 2017, № 2 (26). с. 64-76
[17] Տե՛ս **Մինասյան Ն.**, Փափուկ ուժի ռեսուրսները և իրացման ռազմավարությունը // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2017 թիվ 3 (24), էջ 38-44
[18] Տե՛ս **Մինասյան Ն.**, Պետության փափուկ ուժի չափելիության խնդիրը և միջազգային ինդեքսները // «21-րդ ԴԱՐ», թիվ 5 (75), 2017թ., էջ 68-77

առկա մենագրություններն ու հոդվածները, որոնց մի մասում փափուկ ուժի գործոնը շոշափվում է ուղղակիորեն, մյուս մասում առկա է ընդամենը հպանցիկ անդրադարձ: Այս խմբում կարելի է նախ առանձնացնել արևմտյան հեղինակների ուսումնասիրությունները, որոնք հիմնականում կենտրոնացած են ԱՄՆ-ի և ԵՄ-ի, մասամբ նաև մյուս դերակատարների տարածաշրջանային քաղաքականության, դրա հիմնական բաղադրիչների, խնդիրների և սահմանափակումների, ինչպես նաև այլ դերակատարների հետ հարաբերման հիմնահարցերի վրա: Ուշադրության են արժանի Ս. Կոռնելլի[19], Մ-Դ. Պոպեսկուի[20], Ա. Պատալախի[21], Է. Վաստնիջի[22], Մ. Կոնրոյի[23], Ի. Կոնստանտին-Բերսեանի[24] աշխատությունները:

Ռուս հեղինակների ուսումնասիրություններից արժեքավոր են հատկապես Ա. Կոռնիլյովի և Ա. Մակարիչևի[25], Ե. Սաֆոնկինայի[26] աշխատանքները:

Տարածաշրջանում արտաքին դերակատարների քաղաքականությունը բավականին ուսումնասիրված է հայրենական գրականությունում, թեև այդ աշխատությունների գերակշիռ մեծամասնությունում կոնկրետ փափուկ ուժի բաղադրիչին շատ քիչ անդրադարձ է կատարվում:

[19] Տե՛ս **Cornell S.**, The Politicization of Islam in Azerbaijan, Silk Road Paper, Central Asia-Caucasus Institute, October 2006
[20] Տե՛ս **Popescu M.-D.**, Exploring The Limits Of The Eu's Normative Power Towards The South Caucasus // Europolity, vol. 7, no. 1, 2013, p. 53-71
[21] Տե՛ս **Patalakh A.**, EU Soft Power in the Eastern Neighborhood and the Western Balkans in the Context of Crises // Baltic Journal of European Studies, 7(2), 2017, p.148–167
[22] Տե՛ս **Wastnidge E.**, The Modalities of Iranian Soft Power: From Cultural Diplomacy to Soft War. Politics, 35(3–4), 2015, p. 364–377
[23] Տե՛ս **Conroy K.**, Semi-recognized states and ambiguous churches: the Orthodox Church in South Ossetia and Abkhazia // Journal of State and Church, 57(4), 2015, p. 621-639.
[24] Տե՛ս **Constantin-Bercean I.**, Impact of Iran on Azerbaijan: Means of Religious Influence //Studia Universitatis Babeș - Bolyai Studia Europaea, 2017, p. 1-17
[25] **Kornilov A., Makarichev A.**, Russia's Soft Power in the South Caucasus, Discourses, Communication, Hegemony, Religion, Nation and Democracy in the South Caucasus, Routledge Taylor and Francis Group, 2014, p. 255-276
[26] Տե՛ս **Сафонкина Е.А.**,Турция как новый актор политики мягкой силы // Вестник международных организаций, Т. 9. № 2, 2014, с. 145–166

Սույն հետազոտության համար հատկապես արժեքավոր են եղել Մ.Սահակյանի[27], Ն.Գալստյանի, Ա. Մարկարովի և Հ. Միքայելյանի համահեղինակությամբ[28] լույս տեսած մենագրությունները, «ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում» միջմասնագիտական հետազոտությունը[29], Ն. Գալստյանի[30], Ե. Վարդազարյանի[31], Ա. Թերզյանի[32], Է. Դավթյանի[33], Մ. Հակոբյանի[34] թեկնածուական ատենախոսությունները: Մ. Սահակյանը վերլուծության է ենթարկում «Մեկ գոտի մեկ ճանապարհ» նախաձեռնությունը՝ որպես Հարավային Կովկասում Չինաստանի քաղաքականության և դրա փափուկ բաղադրիչի առանցք: Ն. Գալստյանի, Ա. Մարկարովի և Հ. Միքայելյանի

[27] Տե՛ս **Սահակյան Մ.**, Չինաստանի «Մեկ գոտի մեկ ճանապարհ» նախաձեռնությունը և Հայաստանը, Նորավանք ԳԿՀ, Երևան 2018, էջ 23

[28] Տե՛ս **Галстян Н., Маркаров А., Микаелян Г.**, Открытая Россия: новый облик в эру информации, Издательство Института диаспоры и интеграции, Москва 2012

[29] Տե՛ս Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում», միջմասնագիտական հետազոտություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009

[30] Տե՛ս **Գալստյան Ն.**, Հայաստանի եվրոպական ինտեգրման քաղաքական չափումները, ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2006

[31] Տե՛ս **Վարդազարյան Ե.**, ԱՄՆ, ԵՄ և ՌԴ ռազմավարությունը Հրվ. Կովկասում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2013

[32] Տե՛ս **Թերզյան Ա.**, Էներգետիկ շահերի ապահովման հիմնահարցը Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականության մեջ (քաղաքական չափումներ), թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2014

[33] Տե՛ս **Դավթյան Է.**, Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական եռակողմ համագործակցությունը 1991-2016թթ., թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2018

[34] Տե՛ս **Հակոբյան Մ.**, «Արևելյան Գործընկերություն» ծրագրի գործառման համեմատական վերլուծությունը Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի օրինակով, ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան 2018

համահեղինակությամբ[35] լույս տեսած մենագրությունում անդրադարձ է կատարվում տարածաշրջանում Ռուսաստանի ներգրավվածության մի շարք չափումներին (ռազմաքաղաքական, տնտեսական), որոնց թվում մատնանշվում են նաև փափուկ գործոններ՝ ի դեմս կրթականի, մշակութայինի և այլն: «ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում» միջմասնագիտական հետազոտությունում վերհանում են ԵՄ-ի՝ որպես միասնական դերակատար հանդես գալու հնարավորությունները և տարածաշրջանի երկրների հետ համագործակցության հիմնական ձևաչափերը: Ն. Գալստյանի թեկնածուական ատենախոսությունը ևս նվիրված է տարածաշրջանի երկրներից Հայաստանի եվրոպական ինտեգրման առանձնահատկություններին, որի շրջանակներում վերլուծության են ենթարկվում ԵՄ-ի նորմատիվ քաղաքականության հիմքերը: Ե. Վարդազարյանը վերլուծության է ենթարկում տարածաշրջանում ԱՄՆ, ԵՄ և ՌԴ շահերը՝ վերհանելով նրանց մոտեցումների և կիրառվող գործիքակազմի տարբերությունները: Ա. Թերզյանի աշխատանքը նվիրված է էներգետիկ գործոնին՝ որպես ԵՄ տարածաշրջանային քաղաքականության հիմնական պատճառականներից մեկը, շոշափվում են նաև էներգետիկ և փափուկ գործիքների հակասականության խնդիրը: Է. Դավթյանն իր աշխատանքում ներկայացնում է տարածաշրջանի երկրներից Վրաստանում Թուրքիայի քաղաքականության մի շարք կարևոր ասպեկտներ՝ հանգամանալից ներկայացնելով նաև փափուկ համագործակցության օրինակներ: Մ. Հակոբյանի

[35] Տե՛ս **Галстян Н., Маркаров А., Микаелян Г.**, Открытая Россия: новый облик в эру информации, Издательство Института диаспоры и интеграции, Москва 2012

աշխատանքը նվիրված է ԵՄ Արևելյան գործընկերությանը՝ որպես տարածաշրջանի երկրների հետ ԵՄ հարաբերման հիմնական ձևաչափի, ինչն օգտակար է ԵՄ փափուկ ուժի քաղաքական մեխանիզմների վերլուծության իմաստով: Հետազոտության համար արժեքավոր են եղել նաև Վ. Բայբուրդյանի[36], Հ. Քոթանջյանի[37], Վ. Տեր-Մաթևոսյանի[38][39], Ա. Իսրայելյանի[40], Ն. Գալստյանի[41],Հ. Սարգսյանի և Ն.Դունամալյանի[42], Ե.Վարդազարյանի[43], Գ. Չոբանյանի[44], Ձ. Բաբուխանյանի[45] հոդվածները, որտեղ շոշափվում են տարածաշրջանում ներգրավված այս կամ այն դերակատարի կամ դերակատարների խմբի քաղաքականության «փափուկ» ասպեկտներ՝ ի դեմս կրոնական, կրթական և այլ գործոնների:

Գրականության այս խմբում նաև պետք է մատնանշել «Կրոնը և փափուկ ուժը Հարավային

---

[36]Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրան-Ադրբեջան. Հարևաննե՞ր թե աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ու ժողովուրդներ», հատ. XXII, Երևան , 2003, էջ 7-38

[37] Տե՛ս **Kotanjian H.**, Managing Strategic Changes Through DEEP Reforms: A View from the Perspective of U.S.–Armenia "Smart Power" Cooperation, Connections , Vol. 11, No. 4 (Fall 2012), p. 83-90

[38] Տե՛ս **Ter-Matevosyan V.**, **Cooperation** paradigms in the South Caucasus: Making sense of Turkish-Georgian relations // Études arméniennes contemporaines, 4 | 2014, p. 103-125

[39]Տե՛ս **Տեր-Մաթևոսյան Վ.**, Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում // «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (65), 2016, էջ 33-58

[40] Տե՛ս **Իսրայելյան Ա.**, «Թյուրքականության» գործոնը Իրանի և Ադրբեջանի Հարաբերություններում (1991-2016 թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXXI, Երևան 2018. էջ 149-159

[41] Տե՛ս **Գալստյան Ն.**, Եվրոպական միության հարավկովկասյան քաղաքականության հիմքերն ու առանձնահատկությունները // Ժամանակակից Եվրասիա, հատոր II (2), 2013, էջ 111-120

[42] Տե՛ս **Саркисян О. Л.**, **Дунамалян Н. А.**, Публичная дипломатия на научной Южном Кавказе // Сборник международной конференции «Современные проблемы управления». № 3-4/2017. с. 439-447

[43] Տե՛ս **Վարդազարյան Ե.**, ԱՄՆ, ԵՄ և ՌԴ հայեցակարգային մոտեցումներն անվտանգության հիմնախնդիրներին // «21-րդ դար», թիվ 5 (45), 2012թ., էջ 50-67

[44] Տե՛ս **Չոբանյան Գ.**, Թուրքական կրոնական ազդեցությունը Ադրբեջանի Հանրապետության վրա // 21-րդ ԴԱՐ, թիվ 6 (76), 2017թ., էջ 37-54

[45] Տե՛ս **Բաբուխանյան Ձ.**, Հայաստանի Հանրապետության իմիջը և հանրային դիվանագիտությունը, «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (64), 2015թ., էջ 71-80

Կովկասում հոդվածների ժողովածու»[46], որտեղ տեղ են գտել տարածաշրջանի երեք երկրների հեղինակների ուսումնասիրությունները Հարավային Կովկասում արտաքին դերակատարների փափուկ ուժի մեխանիզմների առանձնահատկությունների շուրջ:

Աշխատանքում օգտագործվել են նաև պաշտոնական կայքերի՝ հետազոտության խնդիրներին վերաբերող տեղեկատվությունը, տարբեր լրատվամիջոցների հրապարակումներ:

**Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:** Հետազոտությունը թույլ է տալիս որոշակիորեն լրացնել փափուկ ուժ եզրի, պետության արտաքին քաղաքական զինանոցում դրա տեղի և դերի մի շարք ասպեկտների վերաբերյալ բացը: Այն տեսական կարևոր նշանակություն ունի փափուկ ուժի էական հատկանիշների բացահայտման, դրա դրսևորման առանձնահատկությունների և ձևերի, փափուկ ուժի ռեսուրսների և մեխանիզմների տարանջատման և դրանց փոխկապակցվածության վերհանման իմաստով:

Տարածաշրջանի արտաքին դերակատարների փափուկ ուժի մեծանիզմներն ուսումնասիրվում են հենց մշակված տեսամեթոդաբանական ապարատի հիման վրա՝ ճանապարհ բացելով այդ ապարատի կատարելագործման ու այլ հետազոտական նպատակներով դրա կիրառման համար:

Կիրառական առումով աշխատանքը արժեքավոր է նրանով, որ հետազոտության հիմնական դրույթները, ինչպես նաև արդյունքներն ու եզրակացությունները կարող են հետագա ուսումնասիրությունների հիմք հանդիսանալ՝

---

46 Տե՛ս Religion and Soft Power in the South Caucasus, edited by A. Jödicke, Routledge, Taylor and Francis Group, 2018

հաշվի առնելով տարածաշրջանում ներգրավված դերակատարների գործիքակազմում պարբերաբար տեղի ունեցող «թարմացումները»: Այն կարող է օգտակար լինել նաև պետական և քաղաքական գործիչների համար: Այն կարևոր է, քանի որ ամբողջացնում է արտաքին դերակատարների քաղաքական մոտեցումների մասին պատկերացումները և այս տեսանկյունից կարող է օգտակար լինել նրանց հետ հարաբերություններում քաղաքական կուրսի մշակման համար:

Աշխատանքի թե՛ տեսական, թե՛ կիրառական հատվածները կարող են նաև ներառվել գիտաուսումնական պրակտիկայում՝ հաշվի առնելով այս թեմային առկա դասընթացների շատ հպանցիկ անդրադարձը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից,երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

## Գլուխ 1.ՓԱՓՈՒԿ ՈՒԺ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

### 1.1. Փափուկ ուժ հասկացության տեսահայեցակարգային հիմքերը

Փափուկ ուժ եզրը գիտական շրջանառության մեջ է մտցվել 1990թ. ամերիկացի քաղաքագետ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայի կողմից՝ իր «Հարկադրված առաջնորդություն. ամերիկյան ուժի փոփոխվող բնույթը» աշխատության մեջ[47]: Հաշվի առնելով, որ այն չի բոլորել նույնիսկ իր «30-ամյակը»՝ եզրը թերևս կարելի է «երիտասարդ» համարել: Միևնույն ժամանակ, ներկայումս

[47] Տե՛ս **Nye J.,** Bound to Lead: The Changing Nature of American Power, Basic Books, New York, 1990, p. 7

քաղաքագիտական և միջազգայնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել դրա տասնյակ սահմանումների և կոնցեպտուալացման փորձերի: Չնայած դրան՝ ինչպես դիպուկ կերպով նկատում է ԵՄ փափուկ ուժի հիմնախնդիրն ուսումնասիրած հեղինակներից մեկը, «փափուկ ուժ եզրն իր ներմուծումից ի վեր հասարակական-քաղաքական և այլ շրջանակներում ավելի շատ քննարկվել է և օգտագործվել է, քան հասկացվել»[48]:

Պետք է նշել, որ ավանդականորեն միջազգային հարաբերություններում գերակա է եղել ուժի/իշխանության ռեալիստական ընկալումը, որի համաձայն պետության ուժը չափելի և շոշափելի այնպիսի կարողությունների ամբողջություն է, ինչպիսիք են տարածքը, բնակչությունը, բանակը, տնտեսությունը և այլն, իսկ պետությունների վարքի հիմնական դրդապատճառը սեփական անվտանգության ապահովումն է: Սկզբունքորեն ռեալիստական տեսության հիմքում ընկած է դեռևս 17-րդ դարում Թոմաս Հոբբսի կողմից ձևակերպված «անարխիայի», «բոլորը բոլորի դեմ պատերազմ» ընկալումը, որտեղ ևս յուրաքանչյուր դերակատարի կենսագործունեության առանցքային դրդապատճառը սեփական անվտանգության ապահովումն էր[49]: Ճիշտ է՝ Թ.Հոբբսի ուշադրության կենտրոնում պետության ծագման հիմնահարցն էր, հետևաբար այս տեսլականը նա ավելի շատ վերագրում էր միջպետական հարաբերություններին, մինչդեռ ռեալիստները հիմնավորեցին նույն սկզբունքի կիրառելիությունը միջազգային հարաբերություններում:

---

[48] Տե՛ս **Nielsen K.**, EU Soft Power and the Capability-Expectations Gap // Journal of Contemporary European Research. No 9 (5), 2013, p. 727

[49] Տե՛ս **Gallarotti G.**, Cosmopolitan Power in International Relations, Cambridge University Press, New-York, 2010, p. 7

Ջ. Նայի պնդմամբ՝ փափուկ ուժ եզրի ներմուծմամբ նա փորձել է լրացնել միջազգային հարաբերությունների տեսությունում ուժի մասին քննարկումներում առկա բացը և հաղթահարել դրամիակողմանի ընկալումը՝ միայն որպես չափելի և շոշափելի կարողությունների ամբողջություն[50]: Նրա համոզմամբ, պետության ուժի համատեքստում ոչ պակաս, նույնիսկ ավելի կարևոր դերակատարություն են խաղում այնպիսի ոչ նյութական գործոններ, ինչպիսիք են պետության գրավչությունը, հեղինակությունը, նրա հավաքական իմիջն ու ընկալումն այլ դերակատարների աչքերում:

Ընդհանուր առմամբ, Ջ. Նային մի շարք հեղինակներ դասում են միջազգային հարաբերությունների տեսություններից նեոլիբերալիզմի դպրոցի ներկայացուցիչների շարքին՝ հաշվի առնելով մեկ այլ նեոլիբերալ Ռ. Կեոհեյնի հետ միասին 1977թ. գրված «Ուժ և փոխկախվածություն» աշխատությունը և «համալիր փոխկախվածության» տեսության զարգացման գործում նրա ունեցած ավանդը[51]: Ջ. Նայի՝ նեոլիբերալ դպրոցի ներկայացուցիչ լինելու ինքնին ուժով շատ հեղինակներ բուն փափուկ ուժ եզրը ևս դասում են նեոլիբերալ «բառաշարին», ինչը թեև ունի իր հիմքերը, սակայն ակնհայտորեն կան նաև միջազգային հարաբերությունների այլ տեսությունների հետ հատման եզրեր: Կարելի է համաձայնել Ն.Չիտտիի և Լ.Դոնգի այն կարծիքին, որ փափուկ ուժ եզրը նույն չափով, եթե ոչ ավելի տեղավորվում է կոնստրուկտիվիստական տեսության տրամաբանության մեջ, որի

[50] Տե՛ս **Nye J.,** Soft power: the origins and political progress of a concept. Palgrave Communications volume 3, 17008, 21.02.2017

[51] Տե՛ս **Rana W.,** Theory of Complex Interdependence: A Comparative Analysis of Realist and Neoliberal Thoughts // International Journal of Business and Social Science Vol. 6, No. 2; February 2015, p. 290-291

ուշադրության կենտրոնում են գտնվում ոչ նյութական այնպիսի գործոններ, ինչպիսիք են նորմերը, ինքնությունը, մշակույթը և այլն[52]: Ի վերջո, փափուկ ուժի համար ֆունդամենտալ նշանակություն ունեցող գրավչության կատեգորիան ինքնին սոցիալական «կոնստրուկտ»է:

Անշուշտ, Ջ. Նայն առաջինը չէր, ով մատնանշեց պետության ուժի համատեքստում բանակի, տնտեսության, բնակչության, տարածքի կողքին ոչ նյութական գործոնների կարևորությունը: Միայն կոշտ (ռազմական) ուժով խնդիրները լուծելու նպատակահարմարությունը և արդյունավետությունը վիճարկվել է ենթարկվել դեռևս հնագույն ժամանակներից: Օրինակ, չինական քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչ Լաո-Ցզին, խոսելով առաջնորդի կարևորագույն որակների մասին, նշում էր, որ լավագույն առաջնորդը նա չէ, ում հրամանները մարդիկ անվերապահորեն կատարում են, այլ նա է, ում գոյության մասին մարդիկ գրեթե չգիտեն[53]: Այդպիսով, նա առաջարկում էր ուժի և հարկադրանքի վրա հիմնված կառավարումը փոխարինել նորմերի և արժեքների վրա հիմնված «անտեսանելի» կառավարմամբ:

Պատմությանը հայտնի թերևս ամենաառաջին և միաժամանակ փափուկ ուժի կիրառման դասական օրինակներից է հույն նշանավոր զորավար Ալեքսանդր Մակեդոնացու (Ք.Ա. 356-323թթ.) կառավարման ժամանակաշրջանը, որը նշանավորվեց վերջինիս գրաված տարածքներում հելլենիստական մշակույթի տարրերի՝ հունական

---

[52] Տե՛ս **Chitty N.**, Soft power, Civic virtue and World politics, The Routledge Handbook of Soft Power, 1st Edition, Routledge Taylor and Francis Group, 2017, p.16

[53] Տե՛ս **Tianyang S.**, Global Ethics in the Thought of Laozi: Constructing China’s Soft Power, China Report, 2013, p. 255-256, https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0009445513491527

փիլիսոփայության, պոեզիայի, գրականության, արվեստի տարածմամբ: Գրավյալ տարածքների վրա իրականացվող այս «մշակութային էքսպանսիան» կոշտ (ռազմական) և փափուկ ուժերի փոխկապակցված արտահայտման յուրատեսակ օրինակ էր և Ա. Մակեդոնացու հաջողության գրավականներից մեկը[54]: Ընդ որում, մշակութային այդ գերակայությունը շարունակվեց մի քանի դար շարունակ՝ նույնիսկ նշանավոր զորավարի մահից հետո: Իսկ հիմնահարցի հետազոտող Ու. Յակոբն առհասարակ Ա. Մակեդոնացու տիրապետության ամենակարևոր արժանիքը համարում է հենց հելլենիստական մշակույթի ամրապնդումը՝ որպես համաշխարհային կարևոր արժեք[55]:

«Մշակութային էքսպանսիայի» նմանատիպ տարրեր կարելի է տեսնել նաև Հռոմեական կայսրության նվաճումների ժամանակահատվածում, երբ, օրինակ, գրավված տարածքների վրա իշխանությունն ամրապնդելու նպատակով այդ տարածքների բնակիչներին առաջարկվում էր Հռոմի քաղաքացիություն[56]:

Նույնիսկ հպանցիկ հայացք նետելով պատմական տարբեր ժամանակաշրջաններում գոյություն ունեցած կայսրություններին՝ կարելի է վերհանել հետևյալ օրինաչափությունը. դրանք հակված են գրավյալ տարածքներում սեփական տիրապետությունը ամրապնդելու և հսկայական տարածքների վրա հարաբերական անդորր պահելու համար օգտագործել փափուկ ուժի տարրեր, որոնք ունեցել են յուրատեսակ «սոսնձող»

---

[54] Տե՛ս **Габриелян А.**, История возникновения и развития концепции «мягкой силы»: применимость на евразийском пространстве, Центр Стратегических Оценок И Прогнозов, 13.11.2015, http://csef.ru/ru/politica-i-geopolitica/491/istoriya-vozniknoveniya-i-razvitiya-konczepczii-myagkoj-sily-primenimost-na-evrazijskom-prostranstve-6436

[55] Տե՛ս **Udo-Jacob J.**, Cultural approaches to soft power, The Routledge Handbook of Soft Power, 1st Edition, Routledge Taylor and Francis Group, 2017, p.138

[56] Տե՛ս **Nye J.,** The Future of Power, Public Affairs, New York, 2011, p. 27

նշանակություն: Սա լիովին տրամաբանական է, քանի որ առանց համապատասխան մշակութային ազդեցության, անհնար է պատկերացնել մի քանի տասնյակ ազգեր ու էթնիկական միավորներ համախմբող և պահելի տարածք ունեցող կայսրությունների գոյատևումը:

Տեսահայեցակարգային առումով փափուկ ուժ եզրին բավականին մոտ է իտալացի քաղաքագետ Անտոնիո Գրամշիի կողմից 1930-1940-ական թվականներին առաջ քաշված «մշակութային գերակայության» հայեցակարգը: Հանդես գալով մարքսիստական տեսության դիրքերից՝ վերջինս պնդում էր, որ իշխող դասակարգը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնագավառում գերակայություն հաստատելու համար օգտագործում է մշակութային ազդեցության միջոցները, որի մեջ մտնում են գաղափարախոսությունը, բարու և չարի մասին պատկերացումների ամբողջությունը, խորհրդանիշները, ավանդույթները և այլն[57]: Ավելին, Ա. Գրամշին առաջ էր քաշում «գերակայություն համաձայնության հիման վրա» սկզբունքը,որը սերտորեն շոշափում է փափուկ ուժ եզրի հիմքերը: Ա.Գրամշին առանձնացնում է իշխող դասակարգի իշխանության իրականացման երկու եղանակ՝ հարկադրական և համոզման: Նրա տեսությունը հատկանշական է ոչ միայն նրանով,որ սահմանում է իշխող դասակարգի կողմից իշխանության իրականացման այլընտրանքային եղանակները, այլև մատնանշում է մշակույթը՝ որպես գխավոր գործիք: Իհարկե, Ա. Գրամշիի տեսության շրջանակներում մշակույթի նշանակությունը բացարձակեցվում է: Մշակույթը

[57] Տե՛ս Selections from the Prison Notebooks, edited and translated by Quentin Hoare and Geoffrey Nowell Smith,ElecBook, London, 1999, p. 526-527, http://abahlali.org/files/gramsci.pdf

որպես առանձին բաղադրիչ ավելի ուշ ներառվեց Զ. Նայի տեսությունում՝ որպես փափուկ ուժի հիմնական ռեսուրսներից մեկը:

Հետաքրքրական է, որ նույնիսկ ուժն ավանդաբար նյութական կատեգորիաներով բնութագրող ռեալիստական դպրոցի շրջանակներում ոչ նյութական գործոնները ևս անտեսված չեն: Այսպես, օրինակ, ռեալիստական դպրոցի հիմնադիր-հայրերից մեկը՝ Էդվարդ Կարրն առանձնացնում էր ուժի 3 տեսակներ՝ ռազմական, տնտեսական և ուժ կարծիքների նկատմամբ[58]: Եթե առաջին երկուսը նյութական և չափելի են, ապա երրորդը իր բնույթով գաղափարական է:

Եզրի հեղինակ Զ. Նայն ինքը ապա համաշխարհային քաղաքականությունը ներկայացնում է որպես եռաչափ շախմատային տախտակ, որի առաջին մակարդակը բնութագրում է աշխարհում ռազմական փոխհարաբերակցությունը,և այստեղ ԱՄՆ-ն, իր կարծիքով, ունի բացահայտ գերակայություն մնացյալ բոլոր դերակատարների նկատմամբ: Երկրորդ մակարդակը տնտեսական հարաբերություններն են, որտեղ աշխարհն արդեն բազմակենտրոն է և չկա հստակ ընդգծված առաջատար: Վերջապես երրորդ մակարդակը անդրազգային հարաբերություններն ու սպառնալիքներն են, որոնք դուրս են պետությունների մոնոպոլ վերահսկողությունից և որոնց շարքին են դասվում թմրանյութերի, զենքի անօրինական շրջանառությունը, ահաբեկչությունը, համաշխարհային կլիմայական փոփոխությունները և այլն: Նայի կարծիքով, ժամանակակից քաղաքական լիդերները հաճախ սխալմամբ կենտրոնանում են

[58] Տե՛ս **Carr E.**, The Twenty Years’ Crisis, 1919–1939: An Introduction to the Study of International Relations, Palgrave Macmillan, London, 1939

բացառապես առաջին և երկրորդ հարթությունների վրա, ինչը երկարաժամկետ հեռանկարում պարտվողական ռազմավարություն է: Երրորդ հարթությունում առկա խնդիրների լուծումն ունի ոչ պակաս կարևորություն և պահանջում է հատկապես փափուկ գործիքակազմի կիրառում[59]: Հետևելով այդ տրամաբանությանը՝ Նայը պայմանականորեն պետության հավաքական ուժը բաժանում է 3 բաղադրիչների՝ ռազմական,տնտեսական և փափուկ:

Ջ. Նայի կողմից եզրի ներմուծումից հետո մասնագիտական գրականության մեջ տեղ են գտել դրա կոնցեպտուալացման բազմաթիվ փորձեր, որոնց արդյունքը եղել նաև այդ եզրի մի քանի տասնյակի հասնող սահմանումների առկայությունը: Բնականաբար, այդ սահմանումների գերակշիռ մասի հեղինակները արևմտյան, հատկապես ամերիկյան քաղաքագիտական մտքի ներկայացուցիչներ են՝ հաշվի առնելով, որ եզրն ի սկզբանե ձևավորվել և մշակվել է Արևմուտքում:

Փափուկ ուժի սահմանումների թերևս ամենալայն մոտեցման համաձայն, պետության կողմից սեփական շահի բավարարման նպատակով կիրառվող բոլոր ոչ-ռազմական (կոշտ) գործիքները դիտարկվում են որպես փափուկ ուժ: Նմանատիպ սահմանում է առաջարկում, օրինակ, Քեմբրիջի բառարանը,որի համաձայն «փափուկ ուժը պետության կողմից մշակութային և տնտեսական ազդեցության կիրառումն է՝ ի հակադրություն ռազմական միջոցների՝ համոզելու այլ երկրներին կատարելու այս կամ այն քայլը»[60]: Մոտավորապես նույն կերպ Կոլլինզի բառարանը փափուկ ուժը սահմանում է որպես «սեփական նպատակների

---

[59] Տե՛ս **Nye J.**, The Powers to Lead, Oxford University press, 2008, p. xv
[60] The Cambridge Dictionary, https://dictionary.cambridge.org/dictionary/english/soft-power

իրականացում առանց ուժի գործադրման՝ հատկապես դիվանագիտությամբ, համոզմամբ և այլն»[61]:

Կարծում ենք՝ նման սահմանումները պարունակում են շատ քիչ տեսական օգտակարություն, քանի որ փափուկ ուժի տիրույթը դրանց պարագայում այնքան լայն է, որ եզրի էությունը մնում է չբացահայտված: Արդյո՞ք ոչ ռազմական գործիքների ամբողջ սպեկտրը, օրինակ, տնտեսական պատժամիջոցները, կարելի է համարել փափուկ ուժի դրսևորում:

Այս իմաստով, առավել մեծ օգտակարություն է ներկայացնում սահմանումների այն խումբը, որը հստակեցնում է եզրի կիրառման բովանդակային դաշտը: Պետք է նշել, որ սահմանումների գերակշիռ մեծամասնությունում փափուկ ուժը ենթադրում է անհամաչափ փոխհարաբերակցություն (հիմնականում լատենտ)՝ այդպիսով նաև ենթադրելով այն կիրառող սուբյեկտի և օբյեկտի առկայությունը: Այսպես, եզրի հեղինակ Ջ. Նայը «Յարկադրված առաջնորդություն. ամերիկյան ուժի փոփոխվող բնույթը» աշխատության մեջ փափուկ ուժը սահմանում է որպես «ցանկալիին հասնելու կարողություն ոչ թե հարկադրանքի, այլ գրավչության և հավաքագրման միջոցով»[62]: Այս սահմանումը Ջ.Նայի հետագա աշխատություններում ենթարկվեց որոշակի էվոլյուցիայի. 2004թ. գրված «Փափուկ ուժ. համաշխարհային քաղաքականությունում հաջողության հասնելու միջոցները» աշխատության մեջ նա փափուկ ուժը սահմանում է որպես «կարողություն հասնելու նրան, որ մյուսները ցանկանան այն արդյունքը, ինչը դու ես ցանկանում[63]»: Իսկ 2011թ. գրված «Ուժի

[61] Collins free online dictionary, https://www.collinsdictionary.com/dictionary/english/soft-power
[62] Տե՛ս **Nye J.,** Bound to Lead: The Changing Nature of American Power, Basic Books, New York, 1990, p. 9
[63] Տե՛ս **Nye J.,** Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, New York, 2004, p. 5

ապագան» աշխատությունում, որը կարելի է համարել ոչ միայն փափուկ ուժի, այլև առհասարակ ուժի/իշխանության էության մասին երբևէ գրված ամենաֆունդամենտալ աշխատանքներից մեկը, Ջ. Նայը փափուկ ուժը սահմանում է որպես «օրակարգի ձևավորման, համոզման և դրական գրավչության միջոցով ուրիշների վրա ազդեցության ունակություն` ցանկալի արդյունքին հասնելու համար»[64]: Ինչպես երևում է` Նայի սահմանումներում ակնհայտորեն ուրվագծվում են փափուկ ուժի բովանդակային սահմանները` այն վերաբերում է միայն այն միջոցներին/կարողություններին, որոնք այս կամ այն չափով գրավչություն են առաջացնում:

Ամերիկացի քաղաքագետներ Պ. Վիոտտին և Մ. Կաուպպին փափուկ ուժը սահմանում են որպես ոչ նյութական կարողությունների ամբողջություն, ինչպիսիք են հեղինակությունը, մշակույթը և արժեքները, որոնք կարող են նպաստել պետության նպատակների իրագործմանը[65]: Բ. Մատերնը փափուկ ուժը սահմանում է որպես «այլ պետությունների և դերակատարների վարքի վերահսկում նորմերի միջոցով»[66]: Համանման մոտեցում ունի ամերիկացի մեկ այլ քաղաքագետ Ս. Բրեսլինը, ով փափուկ ուժը սահմանում է որպես «համոզմունք առ այն, որ ուրիշները կսատարեն քեզ և քո քաղաքական առաջնահերթություններին` քաղաքական և սոցիալական համակարգերի, արժեքների և քաղաքականության հանդեպ գրավչությունից դրդված»[67]:

---

[64] Տե՛ս **Nye J.,** The Future of Power, Public Affairs, New York, 2011, p. 20-21
[65] Տե՛ս **Viotti P, Kauppi M.**, International relations and world politics, Pearson, 5th ed., 2013, p. 207
[66] Տե՛ս **Mattern B.**, Why ‘soft power’ isn’t so soft: representational force and the sociolinguistic construction of attraction in world politics // Millennium – Journal of International Studies, vol. 33, no. 3, 2005, p. 583–612
[67] Տե՛ս **Breslin S.**, The Soft Notion of China’s ‘Soft Power.’ Chatham House, 2011, p. 1-18

Փափուկ ուժի չափման առաջին նախագծերից մեկի՝ Չիկագոյի խորհրդի և Արևելյան Ասիայի ինստիտուտի կողմից այն սահմանվում է որպես անուղղակի միջոցներով՝ համոզման կամ գրավչության միջոցով ազդելու կարողություն[68]:

Ոչ արևմտյան հեղինակների սահմանումների շարքում կարելի է առանձնացնել ռուս հետազոտող Օ. Լեոնովայի մոտեցումը, ով փափուկ ուժը սահմանում է որպես «միջազգային գործընթացների լատենտ կառավարման արտաքին քաղաքական ռեսուրս և յուրահատուկ գործիք, որն արդիական է դարձել գլոբալիզացիայի դարաշրջանում»[69]: Բավականին ուշագրավ է ռուս հետազոտող Ա. Ֆեմենկոյի սահմանումը, ում կարծիքով «փափուկ ուժը ոչ թե թշնամիների համոզման, այլ տատանվող զանգվածների համար պայքարի գործիք է, վերջիններիս քո կողմը գրավելու մեխանիզմ»[70]:

Ս. Շիրխանյանի կարծիքով, փափուկ ուժի տակ նկատի է առնվում պետության գրավիչ իմիջի ձևավորման գործընթացը, որն առաջացնում է մարդկանց և պետությունների համակրանքը, որի արդյունքում վերջիններս կամավոր կողմնորոշվում են դեպի տվյալ պետության գաղափարախոսությունը, արժեքները՝ ներգրավվելով նրա քաղաքական (և ոչ միայն) շահերի իրացման տիրույթում[71]:

Վիետնամցի քաղաքագետ Ա. Վուվինգը գնում է էլ ավելի հեռու՝ փափուկ ուժը սահմանելով որպես «կարողություն հասնելու նրան, որ մյուսները ոչ

---

[68] Տե՛ս Chicago Council on Global Affairs, in partnership with the East Asia Institute, “Soft Power in Asia: Results of a 2008 Multinational Survey of Public Opinion,” p. 2

[69] Տե՛ս **Леонова О.**, Мягкая сила – ресурс внешней политики государства, // Научно-аналитический журнал «Обозреватель-Observer», 2013 № 4, с. 27-40

[70] Տե՛ս **Фененко А.**, Реальность и мифы «мягкой силы», РСМД, 27.01.2016

[71] Տե՛ս **Ширханян С.**, К вопросу о «мягкой силе» Республики Армения: аспекты национального брендинга // Вестник РАУ. 2017. № 2 (26), с. 65

անպայմանորեն ցանկանան, այլ գոնե ընդունեն այն տեսլականը, որը դու ունես»[72]:

Վերոնշյալ սահմանումները, ինչպես նշվեց, ունեն մեկ ընդհանրություն. դրանք բոլոր փափուկ ուժը սահմանում են որպես ցանկալի արդյունքին հասնելու միջոց՝ թեև դրանցից յուրաքանչյուրի ուշադրության կենտրոնում տարբեր մեթոդներ և սկզբունքներ են: Փափուկ ուժի էության վերաբերյալ այլ տեսակետ ունի ամերիկացի քաղաքագետ Ջ. Գալլարոտտին: Վերջինս փափուկ ուժը դիտարկում է որպես «մետաիշխանության» տարատեսակ, որը ապահովում է համապատասխան միջավայր՝ սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունների համար[73]: Այսինքն, փափուկ ուժն ինքնին ներգործության ձև չէ, այլ և յուրատեսակ միջավայր է, որի շրջանակներում ծավալվում են դերակատարների մնացյալ փոխհարաբերությունները: Եթե մյուս մոդելների դեպքում փափուկ ուժը ենթադրում էր որոշակի անհամաչափ փոխհարաբերություն, ապա Ջ. Գալլարոտտիի մոտեցման շրջանակներում սուբյեկտ/օբյեկտ տարանջատումը վերանում է և առհասարակ շահերի բախում կարող է չլինել: Ջ. Գալլարոտտին, այդպիսով, հակված է նրան, որ փափուկ ուժն իր բնույթով կառուցվածքային գործոն է և ոչ թե պետության հավաքական ուժի բաղադրիչ:

Փորձելով հետադարձ հայացք նետել փափուկ ուժի սահմանման հարցի շուրջ առկա մոտեցումների վրա՝ կարծում ենք, որ դրանց մեծ մասում ոչ բավարար շեշտադրում է կատարվում փափուկ ուժի կիրառության համար գերկարևոր նշանակություն

---

[72] Տե՛ս **Vuving A.**, How Soft Power Works, Paper presented at the panel “Soft Power and Smart Power”, American Political Science Association annual meeting, Toronto, 03.09.2009, p. 5-6

[73] Տե՛ս **Gallarotti G.**, Soft Power: What it is, Why it’s Important, and the Conditions Under Which it Can Be Effectively Used // Division II Faculty Publications, Wesleyan University, 2011, p. 11-12

ունեցող մեկ այլ փոփոխականի՝ օբյեկտի վարքի վրա: Հիմնավոր կլինի պնդել, որ փափուկ ուժը պարզապես ոչ ռազմական կարողությունների ամբողջություն չէ, այն յուրատեսակ փոխհարաբերություն է, որում առանցքային նշանակություն ունի օբյեկտի կամավոր «ենթարկվելիությունը» սուբյեկտին, ինչը կարող է դրսևորվել տարբեր ձևերով (այդ մասին ավելի հանգամանալից կխոսվի ստորև):

Այս իմաստով, սույն աշխատանքում տեղ գտած փափուկ ուժի սահմանման ելակետը բրիտանացի քաղաքագետ, Նյու-Յորքի համալսարանի պրոֆեսոր Սթիվեն Լյուքսի կողմից «Իշխանություն. արմատական տեսակետ» աշխատությունում ձևակերպված քաղաքական իշխանության «երրորդ երեսի» հայեցակարգն է: Ճիշտ է՝ վերջինիս ուշադրության կենտրոնում ավելի շատ իշխանություն կատեգորիան է, սակայն նրա աշխատությունում տեղ են գտել փափուկ ուժի էության ընկալման տեսանկյունից մի շարք առանցքային հիմնադրույթներ: Մասնավորապես, Ս. Լյուքսը, փորձելով դասակարգել մասնագիտական գրականության մեջ արծարծված քաղաքական իշխանության բոլոր մոտեցումները, պայմանականորեն բաժանում է դրանք երեք «երեսների»՝ մոդելների (three faces of power)[74]:

Այսպես, ըստ նրա տիպաբանության, իշխանության առաջին «երեսը» 1950-ական թվականներին կոնցեպտուալացվել է Յեյլի համալսարանի քաղաքագետ Ռոբերտ Դալի կողմից և լրամշակվել Պոլսբիի, Վոլֆինգերի կողմից: Իշխանության առաջին «երեսի» դեպքում սուբյեկտը ուժի կամ դրա սպառնալիքի գործադրմամբ ստիպում է

[74] Տե՛ս **Lukes S.**, Power: A Radical View, 2nd edition, Palgrave Macmillan, London 2005, p. 15-17

օբյեկտին վարվելու սեփական կամքին համապատասխան: Իշխանության այս մոդելի դեպքում պատճառահետևանքային կապը սուբյեկտի ներգործության և օբյեկտի վարքի միջև հստակ է:

Իշխանության երկրորդ «երեսը» տեսական ամրագրում է ստացել ամերիկացի քաղաքագետներ Պ. Բեկրեկի և Մ.Բերեցի կողմից: Իշխանության այս մոդելը միջազգային հարաբերությունների տեսությունում նաև հայտնի է կառուցվածքային ուժ/իշխանություն (structural power) եզրով, երբ սուբյեկտի ներգործության թիրախը ոչ թե օբյեկտն է, այլ այն միջավայրը, որտեղ նրանք փոխգործակցում են: Այլ կերպ ասած՝ սուբյեկտը «կարգավորում է» միջավայրն այնպես, որ օբյեկտն այլևս ունակ չի լինում գործել իր ցանկացածի պես[75]: Ընդ որում, տվյալ դեպքում օբյեկտը կարող է ինչպես գիտակցել, այնպես էլ չգիտակցել նման «կարգավորման»գոյությունը:

Եվ վերջապես իշխանության երրորդ «երեսի» դեպքում, որն առավել կարևոր է սույն ուսումնասիրության շրջանակներում, օբյեկտը սեփական կամքով և համոզմամբ վարվում է սուբյեկտի նախընտրությունների համապատասխան, կամավոր և գիտակցաբար «ենթարկվում է» նրան: Ս. Լյուքսի կարծիքով, իշխանությունն ամենաարդյունավետն է, երբ անտեսանելի է[76]:

Փորձելով պրոյեկտել վերոնշյալ մոդելները խիստ կենցաղային իրավիճակի վրա՝ կարելի է բերել հետևյալ օրինակը. եթե մայրը փորձում է հասնել նրան, որ երեխան դուրս չգա տնից վատեղանակին (իսկ վերջինս շատ է ուզում դաանել), նա կարող է՝

[75] Տե՛ս **Bachrach P., Baratz M.**, Decisions and Nondecision: An Analytical Framework // American Political Science Review 57, no 3, September 1963, p. 632-642
[76] Տե՛ս **Lukes S.**, նշվ. աշխ., էջ 1

1) Հարկադրել երեխային՝ ուղղակի իրահանգի կամ այլ տեսքով
2) Կողպել դուռը, որի արդյունքում երեխան այլևս ունակ չի լինի հասնելու իր նպատակին, թեև կշարունակի ձգտել դրան (բացակայում է երեխայի վրա որևէ ուղղակի ազդեցությունը, փոխարենը կարգավորված է միջավայրը)
3) Համոզել երեխային՝ վատեղանակի,ուշ ժամի, բակում այլ երեխաների բացակայության և այլ նմանատիպ փաստարկներով, որի արդյունքում երեխան կամավոր կհրաժարվի այդ գաղափարից

Մեր կարծիքով, փափուկ ուժը վերաբերում է իշխանության վերոնշյալ «երեսներից» բացառապես երրորդին: Վերջինիս և փափուկ ուժի միջև առանցքային ընդհանրությունն այն է, որ երկուսի հիմքում է դրվում է օբյեկտի *կամավոր* ենթարկումը սուբյեկտին: Ընդ որում, եթե իշխանության առաջին երկու մոդելներում առկա է որոշակի առերևույթ հակադրություն կողմերի միջև, որը իշխանության «գործադրումից» հետո պահպանվում է, ապա երրորդ երեսի դեպքում սուբյեկտը նույնիսկ երկխոսության է գնում օբյեկտի հետ՝ փորձելով «հավաքագրել» վերջինիս: Իշխանության այս երեք «երեսները» մասնագիտական գրականության մեջ երբեմն անվանվում են բաց, թաքնված և անտեսանելի իշխանություններ[77]:

Այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել մեկ կարևոր հանգամանքի. եթե միջանձնային մակարդակում փափուկ ուժի կիրառման վարքաբանական վերջնարդյունքը հեշտորեն տեսանելի և չափելի է, ապա միջպետական կամ վերպետական մակարդակում փափուկ ուժի

[77] Տե՛ս **Gaventa J.**, Finding the Spaces for Change: A Power Analysis // Institute of Development Studies, Volume 37, Number 6, 2006 p. 24-25

կիրառության վերածումը վերջնարդյունքի կարող է ընթանալ բավականին բարդ և երկարատև, իսկ արդյունքը լինի դժվար տեսանելի: Այստեղ հարկ է կատարել երկու կարևոր արձանագրում՝

1. Փորձը, ցույց է տալիս, որ եթե միջանձնային հարաբերություններում փափուկ ուժի արդյունավետությունը հեշտորեն չափվում է օբյեկտի վարքի փոփոխությամբ, ապա միջազգային հարաբերություններում փափուկ ուժի արդյունավետության մասին կարող է վկայել ոչ միայն և ոչ այդքան օբյեկտի վարքի, որքան նրա *երկարաժամկետ առաջնահերթությունների փոփոխությունը* և դրանց առավել «մերձեցումը» սուբյեկտի երկարաժամկետ առաջնահերթություններին, գաղափարախոսությանը, արժեքներին: Սա ստեղծում է փափուկ ուժի վերջնարդյունքի արդյունավետության գնահատման ևս մեկ տիրույթ:
2. Փափուկ ուժի կիրառման մեխանիզմների և հստակ վերջնարդյունքի միջև պատճառահետևանքային կապի դժվար տեսանելիությունը բավարար հիմք չի տալիս պնդելու, որ այդպիսի կապ գոյություն չունի: Ավելին, որոշ դեպքերում նմանատիպ կապը բավականին տեսանելի է, ինչպես օրինակ, Հարավ-արևելյան Ասիայի այն երկրներում, որոնք փորձում են ընդօրինակել Սինգապուրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման մոդելը: Այս դեպքում անգամ քաղաքական, տնտեսական, սոցիալական գործոնների և հասարակական համակարգի փոխակերպման մեթոդների մակերեսային վերլուծությունը, ինչպես նաև այնպիսի լրացուցիչ գործոնների դիտարկումը, ինչպիսիք են աշխարհագրական

հարևանությունը և այլն, հստակորեն բացահայտում են առավել հաջողված փորձի տեղայնացման փաստը:

Այլ կերպ ասած՝ արդյունավետ փափուկ ուժի կիրառման վերջնարդյունքը կարող է լինել ճանաչողական (կոգնիտիվ)՝ դրսևորվելով սուբյեկտի հանդեպ ընկալումների, սեփական առաջնահերթություններում նրա դիրքի փոփոխությամբ, և վարքաբանական՝ դրսևորվելով սուբյեկտի շահերին համապատասխան վարքի փոփոխությամբ: Այդ երկու մակարդակները սերտորեն փոխկապակցված են՝ դրական ընկալումը ժամանակի ընթացքում փոխակերպվում է համապատասխան վարքի: Ընդ որում, ճանաչողական մակարդակից դեպի վարքաբանականի անցման գործընթացը հիմնականում տարերային բնույթ ունի և կախված է նաև օբյեկտ-երկրի մշակութային առանձնահատկություններից: Այստեղ կարելի է հիշատակել նաև Առնոլդ Վոլֆերսի՝ միջազգային հարաբերություններում պետությունների հետապնդած նպատակների տիպաբանությունը, ով դասակարգում էր տիրապետության (կարճաժամկետ, կոնկրետ չափելի նպատակներ) և միջավայրային նպատակներ (երկարաժամկետ, կառուցվածքային և ոչ չափելի)[78]: Հիմնավոր կլինի պնդել, որ փափուկ ուժը վերաբերում է այս նպատակների երկրորդին:

Ամփոփելով փափուկ ուժի էության մասին վերոնշյալ պնդումները՝ կարելի է առանձնացնել փափուկ ուժի հետևյալ հիմնական բնութագրիչները.

ա) փափուկ ուժը որոշակի կարողությունների ամբողջություն է, որի միայն մի մասն է

[78] Տե՛ս **Wolfers A.**, Discord and Collaboration: Essays on International Politics, Baltimore MD: John Hopkins University Press, 1962, p. 73-77

«պատկանում» պետությանը, գտնվում նրա վերահսկողության ներքո

բ)փափուկ ուժը ենթադրում է օբյեկտի «կամավոր» ենթարկում սուբյեկտին

գ) փափուկ ուժը կարող է գեներացվել ինչպես սուբյեկտի կողմից համապատասխան նպատակադրման արդյունքում,այնպես էլ առանց դրա

դ) փափուկ ուժի արդյունավետ կիրառման վերջնարդյունքը կարող է լինել ինչպես օբյեկտի առաջնահերթությունների/գերակայությունների, այնպես էլ նրա վարքագծի փոփոխությունը

Հենվելով էական բնութագրիչների այս համախմբի վրա՝ կարելի է առաջ քաշել փափուկ ուժի հետևյալ սահմանումը. *փափուկ ուժը առանձնահատուկ միջոցների և կարողությունների այնպիսի ամբողջություն է, որոնց գործադրման արդյունքում օբյեկտը կամավոր կողմնորոշվում է դեպի սուբյեկտի գաղափարախոսությունը, արժեքները, առաջնահերթությունները՝ արդյունքում նպաստելով նրա քաղաքական կամ այլ շահերի բավարարմանը:* Այդպիսով, եթե կոշտ ուժն ինքնին կարող է օգտագործվել հակառակորդին հարկադրելու, ոչնչացնելու և այլ նպատակներով, ապա փափուկ ուժը «հավաքագրում է» օբյեկտին՝ «համոզելով» նրան բնականորեն անցնել սուբյեկտի կողմը, կիսել վերջինիս դիրքորոշումը կամ տեսլականը: Ընդ որում,սահմանման մեջ հատուկ չի նշվում սուբյեկտ-պետություն, կամ օբյեկտ-պետություն՝ հաշվի առնելով, որ փափուկ ուժ կարող է կիրառվել վերպետական կառույցի (ԵՄ) կամ նույնիսկ անհատի կողմից:

Վերոնշյալը թույլ է տալիս գալու մեկ այլ կարևոր եզրահանգման. փափուկ ուժը չի կարելի իր

էությամբ որակել «դրական» կամ «բացասական»: Փափուկ ուժի արդյունավետության չափումն անհրաժեշտ է իրականացնել միմիայն պրագմատիզմի տեսանկյունից: «Իսլամական պետությունը» ևս կիրառում է փափուկ ուժ և ունի իր կողմնակիցները, որոնց ստվար մասը հավաքագրվում է ինքնակամ՝ ընկնելով քարոզչական նյութերի և կարգախոսների ազդեցության տակ: Անշուշտ, մանիպուլյատիվ մեխանիզմների կիրառման վրա հիմնված փափուկ ուժը հիմնականում չի լինում արդյունավետ երկարաժամկետ հեռանկարում, սակայն դա արդեն այլ հարց է: Փափուկ ուժի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ հենց դա է,որ այն համեմատաբար (ի տարբերություն ռազմական ուժի) հասանելի է բոլոր երկրներին, և շատերը ներդրում են կատարում այդ ոլորտում՝ միջազգային հարաբերություններում «իրենց իրական քաշից ավելի ծանր հարված հասցնելու» կարողություն ձեռք բերելու նպատակով[79]:

Փափուկ ուժ հասկացության բովանդակային ասպեկտների վերլուծության անբաժան մասն է կազմում ժամանակակից միջազգային հարաբերություններում փափուկ ուժի դերակատարության շեշտակի աճի նախադրյալների ուսումնասիրությունը և դրա համեմատությունը կոշտ (ռազմական) ուժի դերակատարության հետ: Ըստ էության, փափուկ ուժ եզրն ինքնին ձևավորվել է ի հակադրություն կոշտ ուժի և վերջինիս հետ դուալիստական ընկալման շրջանակներում: Այդ երևույթին անդրադառնում է նաև Ջ.Նայը: Այսպես, փափուկ ուժի դերակատարության աճի նախադրյալներից նա առանձնացնում է հետևյալները՝

---

[79] **Nye J.**, Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, New York, 2004, p. 89

1) ժամանակի ընթացքում հզոր ուժային կենտրոնների՝ սեփական խնդիրները բացառապես ռազմական ճանապարհով լուծելու անկարողությունը
2) ժամանակակից ռազմական ուժի կործանարար բնույթը
3) գաղութատիրության ժամանակաշրջանի ավարտը և արդյունքում կոշտ ուժի «պահանջարկի» նվազումը
4) ժողովրդավարացման միտումների առկայությունը և հատկապես առաջատար ուժային կենտրոնների մի մասի՝ ժողովրդավարական քաղաքական համակարգեր ունենալը (ԱՄՆ/Եվրոպա)[80]

Ջ. Նայի կողմից կոշտ ուժի կիրառելիության սահմանափակումը պայմանավորող վերը թվարկված գործոններին, մեր կարծիքով, կարելի է ավելացնել ևս երկուսը՝

5) Սպառազինությունների ներկայիս հագեցվածության և տեխնոլոգիական զարգացվածության պայմաններում այդ բնագավառում մրցունակ մնալու համար պահանջվում են անհամեմատ ավելի մեծ միջոցներ, ընդ որում ոչ միայն ֆինանսական, այլ և մարդկային, տեխնոլոգիական և այլն, քան նախկինում: Նմանատիպ ծախսատարության հետևանքով պետություններն իրենց անվտանգայնացումը չեն տեսնում բացառապես սպառազինությունների գերկուտակման մեջ՝ նախապատվություն տալով փափուկ ուժին:

6) Միջազգային հարաբերությունների լայնամասշտաբ ինստիտուցիոնալացումը, այլ կերպ ասած՝ միջազգային կազմակերպությունների և

[80] **Nye J.**, Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, New York, 2004, p. 18-21

տարատեսակ բազմակողմ ձևաչափերի քանակի աննախադեպ աճը, որոնք ունեն սահմանափակող նշանակություն և որոնք պետությունների կողմից ուժի միակողմանի կիրառումը դարձնում են խիստ անհեռանկարային, դրանց վտանգումը բավականին թանկ գին ունի պետությունների աչքերում:

Միևնույն ժամանակ, սա չի նշանակում, որ աշխարհում այլևս չկան պետություններ, որոնք սեփական խնդիրները լուծելիս այդուամենայնիվ ապավինում են ռազմական ուժին: Ինչպես նշում է Ջ. Նայը, «նույնիսկ եթե Հյուսիսային Կորեայի բռնապետ Կիմ Յոնգ Ինը դիտում է հոլիվուդյան ֆիլմեր և սիրում պիցցա, միևնույնն է, դրանք դժվար թե որևէ կերպ ազդեն միջուկային զենք ստեղծելու նրա մտադրության վրա»[81]: Այստեղ պետք է ընդգծել, որ փափուկ ուժը պետության ուժի նույնչափ կարևոր և կարելի է ասել՝ համազոր բաղադրիչ է, և փափուկ ուժի թուլացումը կնշանակի ոչ միայն ռազմական ուժի, այլև առհասարակ պետության «հավաքական ուժի» թուլացում: Ջ. Գալլարոտտին այս երևույթն անվանում է «իշխանական պատրանք», երբ ռազմական ուժի կուտակումը «ամենակարողության» զգացում է առաջացնում տվյալ դերակատարի մոտ, մինչդեռ ռազմական ուժով ժամանակակից պայմաններում գրեթե անհնար է գրանցել լուրջ և երկարաժամկետ հաջողություններ:

Ինչ վերաբերում է ներկայումս ուժի այդ երկու բաղադրիչների՝ կոշտ և փափուկ ուժերի միջև փոխհարաբերակցության հիմնահարցին, ապա այստեղ առկա են տարբեր մոտեցումներ: Ջ. Նայ ինքը հակված է այն կարծիքին, որ կոշտ և փափուկ ուժերը պետության հավաքական ուժի համազոր բաղադրիչներ են, դրանք *փոխլրացնում են* միմյանց,

[81] Տե՛ս **Nye J.**, Bound to Lead: The Changing Nature of American Power, Basic Books, New York, 1990, p. 12

եթե առաջինը հիմնվում է ավելի շատ նյութական չափելի գործոնների վրա, ապա երկրորդը նորմատիվային բնույթ ունի: Տրամաբանական է, որ այդ բաղադրիչներին յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները. կոշտ ուժի կիրառման դեպքում տվյալ պետության ձեռքբերումներն ավելի շոշափելի են կարճաժամկետ հեռանկարում, մինչդեռ փափուկ ուժի արդյունավետ կիրառման արդյունքներն ավելի տեսանելի են երկարաժամկետ հեռանկարում: Փափուկ ուժի ռեսուրսներն այն չափով չեն գտնվում պետության մոնոպոլ վերահսկողության տակ, որքան ռազմական (կոշտ) ուժի ռեսուրսները[82]: Ավելին, Ջ. Նայի կարծիքով փափուկ ուժի ոչ-պետական, մասնավոր «սեկտորը» աստիճանաբար պետք է խաղա ավելի մեծ դեր նոր տեղեկատվական ժամանակաշրջանում: Նրա կարծիքով, յուրաքանչյուր երկիր սեփական արտաքին քաղաքական գործունեության մեջ ձևավորում է կոշտ և փափուկ բաղադրիչների իր սեփական համադրությունը: Իսկ այդ երկու բաղադրիչների հնարավոր այնպիսի հարաբերակցությունը, որն այն կիրառող սուբյեկտի համար տվյալ համատեքստում ապահովում է առավել ազդուն արդյունք, Ջ. Նայն անվանում է «խելացի ուժ» (smart power)[83]:

Հետազոտողների մեկ այլ խումբ հակված է փափուկ ուժը *ստորադասել* կոշտ ուժին: Այս մոտեցումն առավել բնորոշ է դասական ռեալիստական դպրոցին, որի ներկայացուցիչները, թեև չափելի ռեսուրսների կողքին առանձնացնում էին ոչ նյութական ռեսուրսները, սակայն դրանք, որպես կանոն, ստորադասում էին կոշտ ուժին: Միջազգային հարաբերություններում

[82] Տե՛ս **Nye J.,** Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, New York, 2004, p. 14
[83] Տե՛ս **Nye J.,** The Future of Power, Public Affairs, New York, 2011, p. 207-215

պետությունների վարքի հիմնական դրդապատճառը սեփական անվտանգության ապահովումն է, հետևաբար բանակը, տնտեսությունը, բնակչությունը, տարածքը ունեն առաջնային կարևորություն, իսկ ոչ նյութական գործոնները մղվում են երկրորդ պլան: Իսկ փափուկ ուժն այս համատեքստում ցանկալի, բայց ոչ պարտադիր «շքեղություն է», որն իրենց կարող են թույլ տալ ռազմական, տնտեսական, ֆինանսական և այլ ռեսուրսներով հարուստ պետությունները:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով վերոնշյալ մոտեցումները, կարծում ենք, որ հիմնավոր կլինի պնդել, որ փափուկ ուժի վերագրումը բացառապես տնտեսապես և ռազմապես հզոր դերակատարներին չի հաստատվում փորձով: Ավելին, ժամանակակից աշխարհում երբեմն նմանատիպ «կոշտ» չափելի գործոններով շատ ավելի ցածր ցուցանիշներ ունեցող երկրները փափուկ ուժի բաղադրիչով զգալիորեն գերազանցում են «հսկաներին»: Պատճառն այստեղ թերևս ակնհայտ է՝ փափուկ ուժը, ճիշտ է, զգալի չափով կախված է ներդրված տնտեսական, մարդկային և այլ նմանատիպ ռեսուրսներից, սակայն այն իր մեջ պարունակում է նաև որոշակի սուբյեկտիվ բաղադրիչ, քանի որ հիմնվում է մարդկանց ընկալումների, պատկերացումների, գնահատականների վրա: Ինչպես նշվեց ավելի վաղ, փափուկ ուժի կիրառման վերջնարդյունքը ունի նաև ճանաչողական չափում:

Միևնույն ժամանակ, փափուկ ուժն առանց համապատասխան տնտեսական հիմքի ևս դատապարտված է ձախողման: Եթե x երկիրը տիրապետում է փափուկ ուժի a,b,c ռեսուրսներին, սակայն ունակ չէ համապատասխան մեխանիզմների միջոցով դրանք վերածելու լիարժեք քաղաքական վերջնարդյունքի,

ապա այս դեպքում չի կարող խոսք գնալ փափուկ ուժի գոյության մասին:

Ամեն դեպքում, կարծում ենք, որ ներկա ժամանակահատվածում ուժի այդ երկու բաղադրիչները հաճախ հանդես են գալիս այնքան փոխկապակցված կերպով, որ նույնիսկ դժվար է լինում դրանք զատել միմյանցից: Կարելի է բերել հետևյալ օրինակը. ՀՀ մասնակցությունը ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելություններին, մի կողմից, բարձրացնում է կոնկրետ այդ ստորաբաժանումների մարտունակությունը, տալիս է անգնահատելի փորձառություն, որը կարող է օգտագործվել այլ իրավիճակներում, մյուս կողմից՝ դրական է անդրադառնում Հայաստանի իմիջի վրա՝ որպես վստահելի գործընկերոջ և միջազգային անվտանգության դոնորի: Այդպիսով, մեկ գործողությամբ ՀՀ-ն ավելացնում է իր ինչպես կոշտ,այնպես էլ փափուկ ուժի պոտենցիալը:

Փափուկ ուժի կիրառման տիրույթը մեծանում է ժամանակից աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական միտումների բերումով: Այս համատեքստում պետք է առանձնացնել առաջին հերթին գլոբալացման և տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացները: Տեղեկատվության փոխանակման և փոխանցման աննախադեպ արագությունը և հասանելիությունը աշխատանքի և միաժամանակ սպառնալիքների հսկայական դաշտ են բացում ինչպես պետությունների, այնպես էլ ոչ պետական դերակատարների համար: Կիբեր տարածությունը բնավ չի նվազեցնում աշխարհագրական տարածության կարևորությունը, սակայն պետության գործառնության ոլորտներին ավելացնում է ևս մեկ կարևորը՝ իր ռիսկերով և

հնարավորություններով: Այս տարածության հատկանշական ասպեկտներից մեկն այն է, որ այն նվազեցնում է, մի կողմից, խոշոր և փոքր աշխարհաքաղաքական դերակատարների, մյուս կողմից, պետությունների և ոչ պետական դերակատարների միջև տարբերությունը, հետևապես փափուկ ուժի քիչ թե շատ համաչափ հնարավորություններ (քան ուժի մնացած տարատեսակների դեպքում) է ընձեռում բոլորի համար:

Մյուս կողմից, չի կարելի իդեալականացնել փափուկ ուժը և դիտարկել այն որպես բոլոր խնդիրների լուծման բանալի, այն խնդիրների լուծման ամենևին ունիվերսալ մեխանիզմ չէ: Ինչպես իրավացիորեն նշում է Կ.Գրեյը, «կենսական շահերի բախման դեպքում փափուկ ուժը առաջին զոհերից մեկն է»[84]: Սա վկայում է այն մասին, որ փափուկ ուժը մեծապես կախված է այն համատեքստից և միջավայրից, որում կիրառվում է:

## 1.2. Փափուկ ուժի ռեսուրսները և չափելիության հիմնախնդիրը

Ինչպես նշվեց, միջազգային հարաբերություններում պատմականորեն ռազմական (կոշտ) ուժի գերակա դերակատարությամբ պայմանավորված՝ պետության ուժը բնութագրվել է հիմնականում նյութական, չափելի ռեսուրսներով, ինչպիսիք են բանակը, տնտեսությունը, բնակչությունը, տարածքը և այլն: Սակայն, ռազմական ուժի տիրույթի նվազման հետ մեկտեղ, թեև նմանատիպ չափելի գործոնները շարունակում

[84] Տե՛ս Gray C., նշվ. աշխ., էջ 103

են մնալ կարևոր, սակայն դրանցով այլևս անհնար է ամբողջական պատկեր ստանալ պետության հավաքական ուժի վերաբերյալ: Հավաքական ուժը բնութագրող «Նորահայտ» ռեսուրսների շարքին են դասվում են նաև փափուկ ուժի ռեսուրսները, որի տակ նկատի է առնվում տվյալ երկրի փափուկ ուժի հիմքը հանդիսացող այն միջոցների/կարողությունների համախումբը, որն օգտագործվում է տվյալ պետության փափուկ ուժի ամրապնդման՝ գրավչության, իմիջի, հեղինակության բարձրացման համար:

Մասնագիտական գրականության մեջ երբեմն կարելի է հանդիպել այնպիսի մոտեցումների, որոնցում փափուկ ուժը նույնացվում է դրա կիրառման համար անհրաժեշտ ռեսուրսների հետ, հետևաբար փափուկ ուժի, որպես առանձին եզրի գոյության անհրաժեշտություն չկա: Այսպես, օրինակ, պատմաբան Ն. Ֆերգյուսոնը փափուկ ուժը սահմանում է որպես «ոչ ավանդական ուժեր, ինչպիսիք են մշակութային և առևտրային միջոցները»[85]: Քննադատական այս թևի ներկայացուցիչները հիմնականում ժխտում են փափուկ ուժի գոյությունն այն հիմքի վրա, որ դրա ռեսուրսները չեն գտնվում պետության մոնոպոլ վերահսկողության տակ, դրանց մի մասը գեներացվում են տարերայնորեն, հետևաբար այն չի կարող դիտարկվել որպես պետության ուժի բաղադրիչ:

Պետք է նշել, որ նմանատիպ մոտեցման մեջ առկա է ներհատուկ սխալ առ այն, որ փափուկ ուժը նույնացվում է իր ռեսուրսների հետ, մինչդեռ, ինչպես հայտնի է, միայն ռեսուրսների

---

[85]Տե՛ս **Ferguson N.**, Think Again: Power, Foreign Policy, 03.09.2009, https://foreignpolicy.com/2009/11/03/think-again-power/

տիրապետելը դեռևս չի երաշխավորում արդյունավետ փափուկ ուժի կիրառում: Այդ ռեսուրսները դեռևս պետք է համապատասխան ռազմավարության, հմտությունների և մեխանիզմների միջոցով իրացվեն և վերածվեն վերջնարդյունքի, ինչից հետո միայն կարելի է խոսել փափուկ ուժի արդյունավետության մասին:

Ի տարբերություն ռեսուրսների այլ տեսակների՝ փափուկ ուժի ռեսուրսներն աչքի են ընկնում մի շարք յուրահատկություններով: Նախևառաջ, եթե կոշտ ուժի ռեսուրսները կարող են ավելացվել /կուտակվել կարճ ժամանակահատվածում, ասենք սպառազինությունների x քանակի գնմամբ, ապա փափուկ ուժի ռեսուրսներն անցնում են ավելի երկարատև ձևավորման գործընթաց՝ բյուրեղացնելով նաև հասարակական-քաղաքական, տնտեսական, պատմական էվոլյուցիան: Ինչպես իրավացիորեն նշում է Ն. Մինասյանը, փափուկ ուժի ռեսուրսների կարևոր առանձնահատկություններից է դրանց կառավարման և վերահսկողության բարդությունը, իսկ դրանց արդյունավետությունը կախված է «թիրախ լսարանի ընդունելիությունից»[86]:

Մասնագիտական գրականության մեջ առկա են փափուկ ուժի ռեսուրսների մի շարք տիպաբանություններ, որոնց մի մասը կրկնվում են բովանդակությամբ, սակայն տարբերվում են կառուցվածքով, մյուսներում առկա են ռեսուրսների տարբերվող բաղադրիչներ:

Փափուկ ուժի ռեսուրսների վերաբերյալ «դասական» է համարվում Ջ. Նայի մոտեցումը, ով

[86] Տե՛ս **Մինասյան Ն.**, Փափուկ ուժի ռեսուրսները և իրացման ռազմավարությունը // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2017 № 3 (24), էջ 40

առանձնացնում էր 3 հիմնական ռեսուրս: Դրանք են՝ տվյալ երկրի մշակույթը (այնքանով, որքանով այն գրավիչ է մյուսների համար), արժեքները (այնքանով, որքանով տվյալ պետությունը հետևում է իր հռչակած արժեքներին ներքին և արտաքին խնդիրների լուծման համար) և արտաքին քաղաքականությունը (այնքանով, որքանով տվյալ պետության գործողությունները լեգիտիմ են այլ դերակատարների աչքերում)[87]:

Հատկանշական է, որ 2011թ. հրապարակված «Ուժի ապագան» աշխատանքում Ջ. Նայն ընդլայնում է փափուկ ուժի ռեսուրսների իր տիպաբանությունը՝ ավելացնելով նոր բաղադրիչներ: Այսպես, նրա կարծիքով ուշագրավ է, որ որպես փափուկ ուժի ռեսուրսներ կարող են հանդես գալ նաև կոշտ ուժը բնութագրող ռեսուրսները, ինչպիսիք են օրինակ բանակը կամ տնտեսությունը[88]: Ըստ այդմ, որևէ պետություն բանակը մարդասիրական նպատակներով օգտագործելու դեպքում կարող է նպաստել տվյալ երկրի իմիջի և գրավչության ամրապնդմանը: Ասվածի վառ վկայությունն են, օրինակ, սկանդինավյան երկրները, որոնց զինված ուժերը մշտապես ներգրավված են տարատեսակ խաղաղապահ գործողություններում: Պատահական չէ, որ փափուկ ուժի գրեթե բոլոր միջազգային ինդեքսներում այդ երկրներն զբաղեցնում են առաջատար դիրքեր:

Փափուկ ուժի տեսանկյունից նույնքան արդյունավետ կարող են լինել նաև տնտեսական զարգացման տեմպերը, ՀՆԱ-ի մակարդակը: Գաղտնիք չէ, որ կայուն տնտեսական առաջընթաց գրանցող երկրների տնտեսական մոդելները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում և

[87] Տե՛ս **Nye J.,** Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, New York, 2004, p. 31
[88] Տե՛ս **Nye J.,** The Future of Power, Public Affairs, New York, 2011, p. 85-87, 99

ընդօրինակվում: Ասվածը կարելի է վերագրել, օրինակ, 4 ասիական «վագրերին» (Սինգապուր, Հրվ. Կորեա, Հոնգ-Կոնգ, Թայվան) որոնք, կարճ ժամանակահատվածում գրանցելով հսկայական տնտեսական աճ, միանգամից դարձան ընդօրինակման մոդելներ ինչպես իրենց տարածաշրջանում, այնպես էլ դրանից դուրս[89]:

Փափուկ ուժի ռեսուրսների շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի մշակույթը՝ որպես փափուկ ուժի ռեսուրս, որը թերևս ամենաշատն է ուսումնասիրվել և քննարկվել: Փափուկ ուժի հիմնական մյուս ռեսուրսներից մշակույթի առանցքային տարբերությունն այն է, որ երկրի մշակույթի և արժեհամակարգի հանդեպ վերաբերմունքը հանրության կողմից շատ ավելի կայուն է[90]: Մշակութային ռեսուրսի մեկ այլ յուրահատկությունն է այն, որ այն այս կամ այն չափով ներհատուկ է յուրաքանչյուր երկրի: Այդ իմաստով բավականին արժեքավոր կարելի է համարել Ու. Յակոբի այն միտքը, որ յուրաքանչյուր երկիր պետք է գտնի իր սեփական մշակույթի այն բաղադրիչը, որը կարող է եռանդով տարածել որպես մշակութային գերակայության միջոց[91]: Մշակույթի ռեսուրսն ընդունված է բաժանել բարձր և ցածր (զանգվածային) բաղադրիչների. եթե բարձր մշակույթը հիմնականում հովանավորվում է պետության կողմից և դրա ազդեցության թիրախը հիմնականում այլ երկրների քաղաքական էլիտաներն են, ապա զանգվածային մշակույթը միտված է ազդելու հասարակության ավելի լայն

---

[89] Տե՛ս **Schmiegelow M.**, The Asian Newly Industrialized Economies: A Universal Model of Action // Civilisations, 40-1, 1992, p. 133-135

[90] Տե՛ս **Բաբուխանյան Զ.**, Հայաստանի Հանրապետության իմիջը և հանրային դիվանագիտությունը, «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (64), 2015թ., էջ 74, http://www.noravank.am/upload/pdf/21_Dar_06_2015.pdf

[91] Տե՛ս **Udo-Jacob J.**, նշվ. աշխ., էջ 142

շերտերի վրա (այդտեղից էլ անվանումը), ավելի տարերային բնույթ ունի և նպաստում է երկարաժամկետ նպատակների իրականացմանը:

Փափուկ ուժի ռեսուրսների մեկ այլ տիպաբանություն է առաջարկում Ջուլիո Գալլարոտին: Վերջինս դրանք բաժանում է ներքին և արտաքին տիպերի, որոնցից յուրաքանչյուրի համար առանձնանցում է իր «ենթառեսուրսները»[92]: Այսպես, արտաքին ռեսուրսների ներքո նա նկատի է առնում պետության կողմից միջազգային իրավունքին, նորմերին և ինստիտուտներին մշտապես հետևելը, միավեկտոր քաղաքականությունից խուսափելը, դաշինքային պարտավորությունների կատարումը, սեփական նեղ կարճաժամկետ շահերն ավելի ընդհանուր երկարաժամկետ շահերի համար զոհաբերելու պատրաստակամությունը և այլն: Ներքին ռեսուրսների շարքին են դասվում հասարակության մշակույթը, դրա գրավչությունն այլ հասարակությունների համար, քաղաքական ինստիտուտները, որոնք պետք է հիմնված լինեն ժողովրդավարության, բազմակարծության, սահմանադրականության սկզբունքների վրա, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանությունը: Ինչպես տեսնում ենք, Գալլարոտիի մոտեցումը հիշեցնում է Նայի տիպաբանությունը. այն, ըստ էության, դրա ավելի համակարգված և համընդգրկուն տարբերակն է: Միջավայրային չափման ավելացումը (ներքին կամ արտաքին) հեշտացնում է փափուկ ուժի ռեսուրսների դասակարգումը և վերլուծությունը:

[92] Տե՛ս **Gallarotti G.**, Soft Power: What it is, Why it's Important, and the Conditions Under Which it Can Be Effectively Used // Division II Faculty Publications, Wesleyan University, 2011, p. 20-23

Համանման տիպաբանություն է առաջ քաշում ռուս հետազոտող Օլգա Լեոնովան: Վերջինս նույնպես բաժանում է իրականացնում փափուկ ուժի ներքին և արտաքին ռեսուրսների միջև: Այսպես, արտաքին ռեսուրսների շարքում մատնանշվում տվյալ պետության դիրքը միջազգային հարաբերություններում, քաղաքակրթական կարգավիճակը (արդյոք տվյալ ազգը որևէ հին քաղաքակրթության ժառանգ է, թե ոչ), քաղաքական և տնտեսական զարգացման մոդելը, տեղեկատվական ռեսուրսները, հաղորդակցման մակարդակը: Ներքին ռեսուրսների թվին են դասվում գաղափարախոսությունը, կենսամակարդակը, արժեքները, մենթալիտետը, մշակույթը (արվեստ, գրականություն, կինոարտադրություն, երաժշտություն և այլն), տեխնոլոգիական զարգացման մակարդակը[93]:

Օ. Լեոնովան նաև առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում սփյուռքին՝ որպես պետության փափուկ ուժի հնարավոր ռեսուրս, որը կարող է հանդես գալ որպես այլ դերակատարների աչքերում տվյալ պետության դիրքերն ամրապնդող կարևոր մեխանիզմ: Անշուշտ, իրականացվող քայլերի արդյունավետությունը բարձրացնելու համար յուրաքանչյուր պետության համար հրամայական է դառնում սփյուռքի ռեսուրսի ներգրավման պետական քաղաքականության մշակումը, սեփական և սփյուռքի քաղաքական ուղենիշների համաձայնեցումը: Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Նեյմարկը, «սփյուռքի ռեսուրսը փափուկ ուժի տեսանկյունից ունի երկակի նշանակություն, մի կողմից, այն ընդունող երկրի վրա ազդեցության մեխանիզմ է, մյուս

[93] Տե՛ս **Леонова О.**, նշվ. աշխ., էջ 2

կողմից՝ սփյուռքի գիտական, ինտելեկտուալ և այլ ներուժը կարող է օգտագործվել հայրենի կարողությունների ամրապնդման համար»[94]։ Սփյուռքը կարող է նաև հակադարձ ազդեցություն ունենալ տվյալ պետության դիրքերի ամրապնդման, այլ պետությունների աչքերում նրա գրավչության բարձրացման տեսանկյունից, եթե նրա տեսլականը չհամընկնի պետության պաշտոնական քաղաքականության հետ, ինչը հաճախ հանդիպող երևույթ է։ Հաշվի առնելով հայկական սփյուռքի առկայությունը և ազդեցությունը մի շարք երկրներում՝ փոխհամաձայնեցված քաղաքականության անհրաժեշտությունը հատկապես արդիական է ՀՀ-ի դեպքում։

Փափուկ ուժի ռեսուրսների մեկ այլ դասակարգում է առաջ քաշում Ա. Վուվինգը։ Վերջինս տալիս է ռեսուրսների ավելի լայն տիպաբանություն՝ չսահմանափակվելով միմիայն պետության փափուկ ուժի ռեսուրսների դասակարգմամբ[95]։ Այսպես, ըստ Ա. Վուվինգի, դրանք են՝

1) «Բարեսրտությունը» (beneignity)՝ այլ դերակատարների հանդեպ սուբյեկտի դրական վերաբերմունքը, որն ընդգրկում է վարքամոդելների մի ամբողջ սպեկտր՝ նրանց հանդեպ պասիվությունից մինչև նրանց պաշտպանություն և հոգատարություն նրանց նկատմամբ։

2) Գրավչությունը (brilliance), որի տակ նաև նկատի ունի այս կամ այն ասպարեզում պետության նշանակալի նվաճումները (օրինակ տնտեսական աճի տեմպերը, ժողովրդավարացման գործընթացում

---

94 Տե՛ս **Неймарк М.**, «Мягкая сила» в мировой политике, Дипломатическая академия МИД России, Москва, 2017, с. 149

95 Տե՛ս **Vuving A.**, How Soft Power Works, Paper presented at the panel “Soft Power and Smart Power”, American Political Science Association annual meeting, Toronto, 03.09.2009, p. 8-12

գրանցած հաջողությունները և այլն), որոնք ճանապարհ են բացում այդ երկրի փափուկ ուժի ամրապնդման համար: Այն «արտաքին փայլը», որը ստեղծվում է պետության շուրջ նման դեպքում, կարող է ընդօրինակման հիմք հանդիսանալ այլ դերակատարների կողմից, ինչն անպայման ամրապնդում է տվյալ երկրի իմիջը և գրավչությունը նրանց աչքերում:

3) «Գեղեցկությունը» (beauty), որի տակ նկատի է առնվում արժեքների, տեսլականների, նպատակների և դրանց հասնելու միջոցների հարցում պետությունների ընդհանրությունները: Դրանք այլ դերակատարների աչքերում առաջացնում են կանխատեսելիություն, վստահություն:

Փափուկ ուժի ռեսուրսների տիպաբանության բավականին յուրօրինակ և արդիական տարբերակ է առաջարկվում «Փափուկ ուժ 30» ինդեքսի հեղինակների կողմից: Վերջինս այսօր համաշխարհային մակարդակով փափուկ ուժի չափման առաջատար նախագծերից է[96]: Ճիշտ է՝ նախագիծն ավելի շատ զբաղված է կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների իրականացմամբ, քան տեսահայեցակարգային, սակայն դա որևէ կերպ չի նվազեցնում ինդեքսի հեղինակների կողմից մշակված փափուկ ուժի ռեսուրսների տիպաբանության օգտակարությունը:

Այսպես, այդ հետազոտությունում փորձ է արվում փափուկ ուժի ռեսուրսները վերածել չափելի ցուցիչների, որոնցով հնարավոր է պատկերացում կազմել տվյալ երկրի փափուկ ուժի հնարավորությունների վերաբերյալ: Որպես այդպիսիք են առանձնացվում են կառավարությունը (կառավարումը), մշակույթը, ներգրավվածությունը

[96] Տե՛ս «Soft Power 30» ինդեքսի պաշտոնական կայքէջ, https://softpower30.com/

միջազգային հարաբերություններում, ձեռնարկատիրությունը, կրթությունը և տեխնոլոգիաները[97]: Դրանցից յուրաքանչյուրի համար ինդեքսի հեղինակները մշակել են չափելի ցուցիչների համախումբ, ինչը թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել այս կամ այն երկրի փափուկ ուժի պոտենցիալը (չափման հիմնախնդրին ավելի մանրամասն անդրադարձ կարվի ստորև): Բացի այն, որ այս տիպաբանությունն աչքի է ընկնում իր համընդգրկունությամբ, նաև հատկանշական է փափուկ ուժի արդեն մեզ հայտնի ռեսուրսների կողքին տեխնոլոգիաների, որպես առանձին կատեգորիայի մատնաշումը, ինչը, հաշվի առնելով ժամանակակից աշխարհի տեխնոլոգիական զարգացման գերակա միտումները, կարելի է համարել լիովին հիմնավորված:

Վերլուծելով փափուկ ուժի ռեսուրսների միջավայրային դասակարգման տարբերակները՝ պետք է նշել, որ թեև դրանք մեթոդաբանական առումով տալիս են մի շարք առավելություններ, սակայն առաջացնում են նաև որոշակի դժվարություններ: Մասնավորապես, ժամանակակից գլոբալացվող աշխարհը խիստ բարդացնում է ռեսուրսների բացարձակ դասակարգումը արտաքին կամ ներքին տիպերի: Այսպես, օրինակ, տեխնոլոգիական ռեսուրսը միջավայրի տեսանկյունից խիստ դժվար չափելի է: Ուսումնասիրելով առկա մոտեցումները՝ կարծում ենք, որ վերոնշյալ տիպաբանությունների շարքում որպես ելակետ կարելի է ընդունել «Փափուկ ուժ 30» ինդեքսի մշակված մոտեցումը՝ մեկ վերապահմամբ. այնտեղ պակասում է սփյուռքի գործոնը: Միգուցե սփյուռքի ռեսուրսը մյուսների համեմատ այդքան

[97]Տե՛ս «The Soft Power 30: A Global Ranking of Soft Power», Portland, 2018, p. 27-29

էլ ունիվերսալ կիրառություն չունի, մի շարք երկրներ հանգամանքների բերումով պարզապես չունեն սփյուռք, սակայն անժխտելի է, որ մի երկրների մի ստվար հատվածի, այդ թվում նաև ՀՀ-ի համար այն ունի գերկարևոր նշանակություն: Սփյուռքի ներառումը փափուկ ուժի ռեսուրսների շարքում ավելացնում է փափուկ ուժի չափման ևս մեկ կարևոր տիրույթ: Օրինակ, ԱՄՆ-ի և Չինաստանի միջև փափուկ ուժի պոտենցիալների համեմատության գործում սփյուռքը շատ կարևոր փոփոխական է, քանի որ եթե ԱՄՆ փափուկ ուժի շրջանակներում այդ գործոնը համեմատաբար քիչ կարևորություն ունի, ապա Չինաստանի բազմամիլիոնանոց սփյուռքը աշխատանքի հսկայական դաշտ է բացում այդ երկրի համար: Ծարժվելով ինդեքսի հեղինակների տրամաբանությամբ՝ կարծում ենք, որ սփյուռքի գործոնը ևս կարելի է վերածել որոշակի չափելի ցուցիչների և ավելացնել արդեն առկա ռեսուրսներին: Որպես ցուցիչներ կարող են հանդես գալ աշխարհագրական սփռվածությունը, այս կամ այն երկրում համայնքի թիվը և տոկոսային հարաբերակցությունը տեղի բնակչությանը, ինքնակազմակերպման մակարդակը, քաղաքական համակարգում ներկայացվածության ճնաչափը և այլն:

Փափուկ ուժի ռեսուրսների հիմնահարցի հետ սերտորեն առնչվում է նաև փափուկ ուժի չափելիության խնդիրը: Ոչ նյութական գործոնների կարևորության մեծացումը, պետության հավաքական ուժի մասին ամբողջական պատկերացում կազմելու անհրաժեշտությունը դրդեց հետազոտողներին փորձելու կոշտ (ռազմական) ուժի համանմանությամբ չափման ենթարկելու փափուկ ուժի ռեսուրսները: Չափման

առաջին փորձերն ի հայտ եկան 2000-ական թվականների կեսերին:

Փորձելով խմբավորել մինչ այժմ փափուկ ուժի չափմանը նվիրված հետազոտությունները՝ Ն. Մինասյանը դրանք բաժանում է 3 տիպերի՝ վարկանիշային (երբ չափման հիմքում են դրվում փափուկ ուժի ռեսուրսները), կիրառական (երբ չափման հիմքում են դրվում փափուկ ուժի գործիքներն ու մեխանիզմները) և արդյունավետության (երբ գնահատվում է թիրախ երկրում փափուկ ուժի կիրառման արդյունավետությունը)[98]:

Փափուկ ուժի չափման առաջին փորձերից մեկը կարելի է համարել Չիկագոյի խորհրդի կողմից կազմված «Փափուկ ուժն Ասիայում. հասարակական կարծիքի բազմազգ հարցման արդյունքները» հետազոտությունը: Վերջինիս առանձնահատկությունն այն է, որ այն նպատակ ուներ չափելու կոնկրետ երկրների (ԱՄՆ, Չինաստան, Հարավային Կորեա, Ճապոնիա), ինչպես նաև նրանց միջև երկկողմ հարաբերությունների մասին այդ երկրների հասարակություններում առկա ընկալումները[99]: Հետազոտությունում այդ երկրների կողմից կիրառվող փափուկ ուժի մեխանիզմներին հատկացվում է շատ քիչ ուշադրություն, ինչը դրա հիմնական թերություններից մեկն է: Դրանով հանդերձ, պետք է նշել, որ լինելով առաջիններից մեկն իր տեսակի մեջ, այդ ուսումնասիրությունը շատ կարևոր դեր խաղաց և ճանապարհ բացեց հետագայում նմանատիպ հետազոտությունների համար:

[98] Տե՛ս **Մինասյան Ն.**, Պետության «փափուկ ուժի» չափելիության խնդիրը և միջազգային ինդեքսները // «21-րդ ԴԱՐ» N5, 2017
[99] Տե՛ս Soft Power in Asia: Results of a 2008 Multinational Survey of Public Opinion, The Chicago Council on Global Affairs, 2008, https://www.brookings.edu/wp-content/uploads/2012/04/0617_east_asia_report.pdf

Փափուկ ուժի չափման մեկ այլ փորձ կարելի է համարել Anholt-Gfk Nation Brands Index-ը: Այս ինդեքսի շրջանակներում փորձ է արվում չափելու պետությունների՝ որպես «բրենդի» գրավչությունը այլ երկրների աչքերում: Հետազոտություններն իրականացվում են տարբեր տարածաշրջաններ ներկայացնող աշխարհի 20 երկրներում: Այս ինդեքսը չափում է xերկրի շուրջ «թիրախ» երկրում ձևավորված պատկերացումները, x երկրի «մեդիա ներկայությունը», ինչպես նաև նրա հանդեպ առկա վերաբերմունքն ու ձեռնարկված քայլերի գնահատականները[100]: Այս ինդեքսի շրջանակներում ուսումնասիրվում են 6 չափումներ՝ արտահանումների ծավալը, կառավարումը, մշակույթը, մարդիկ, զբոսաշրջությունը,ներգաղթը և ներդրումները:

Մինչև այժմ փափուկ ուժի չափման թերևս ամենահաջողված փորձը կարելի է համարել «Փափուկ ուժ 30» ինդեքսի հեղինակներինը՝ Ջ. Մաքլորիի գլխավորությամբ, որի մասին խոսվեց վերևում: Այս ինդեքսի յուրահատկություններից մեկն այն է, որ դրա հեղինակներն առաջին անգամ փորձել են չափել և համադրել ինչպես տվյալ պետության օբյեկտիվ կարողությունները (կամ ռեսուրսները), այնպես էլ սուբյեկտիվ բաղադրիչը՝ այլ երկրների հասարակությունների սուբյեկտիվ ընկալումները և պատկերացումները:«Փափուկ ուժ 30» ինդեքսում օգտագործված մեթոդաբանությունը գերակատեղ է հատկացնում օբյեկտիվ բաղադրիչին՝ բուն ռեսուրսներին. օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչների միջև ինդեքսի հեղինակները սահմանում են 70-30 հարաբերակցություն: Ինչպես նշվեց վերևում, որպես փափուկ ուժի օբյեկտիվ

[100] Տե՛ս **Belloso J.C.**, Evaluation of existing rankings and assessment of the country brand // Paradigmes, issue no. 5, October 2010, p. 231

բաղադրիչներ՝ ռեսուրսներ դիտարկվում են տվյալ երկրի կառավարությունը (կառավարումը), մշակույթը, ներգրավվածությունը միջազգային հարաբերություններում, ձեռնարկատիրությունը, կրթությունը և տեխնոլոգիաները[101]:

Տվյալ ռեսուրսներից յուրաքանչյուրի համար ինդեքսի հեղինակները մշակել են չափման յուրահատուկ մեխանիզմ՝ հիմնված որոշակի օբյեկտիվ, քանակական, չափելի տվյալների վրա: Այսպես, օրինակ, կառավարման արդյունավետությունը փափուկ ուժի համատեքստում չափվում է տվյալ երկրում մարդու իրավունքների, ազատությունների պաշտպանության, ժողովրդավարական գործընթացների դինամիկայով, կոռուպցիայի մակարդակով (վերջիններս չափելու համար արդեն մշակվել են մի շարք հանրահայտ ինդեքսներ, որոնցից է, օրինակ, Freedom House-ը[102], Transparency international-ը[103] և այլն): Մշակույթի ազդեցությունը չափվում է, օրինակ, տվյալ երկիր տարեկան այցելող զբոսաշրջիկների քանակով, երաժշտության տարածվածությամբ (այդ թվում միջազգային ռեյտինգներում առաջատար տեղեր զբաղեցնող կատարողներով), սպորտային միջոցառումներում տվյալ երկրի մարզիկների զբաղեցրած տեղերով, ազգային ավիաուղիների աշխարհագրական տարածվածությամբ և այլն: Կրթության ազդեցությունը չափվում է տվյալ երկրում սովորող արտասահմանցի ուսանողների, կրթական փոխանակման ծրագրերի քանակով, միջազգային ռեյտինգներում տվյալ երկրի համալսարանների գրաված դիրքով և այլն: Ձեռնարկատիրության

[101] Տե՛ս «The Soft Power 30: A Global Ranking of Soft Power», Portland, 2018, p. 32-33
[102] Freedom House-ի պաշտոնական կայքէջ, https://freedomhouse.org/
[103] Transparency International-ի պաշտոնական կայքէջ, https://www.transparency.org/

բաղադրիչն առաջին հայացքից կարելի է նմանեցնել ընդհանուր տնտեսության գրավչության հետ, սակայն ինդեքսի հեղինակները շեշտադրում են հատկապես տվյալ երկրի բիզնես ոլորտի կառուցվածքի և նորարարությունների ընդօրինակումը մնացյալ դերակատարների կողմից, դրա մրցունակությունը, գործազրկության մակարդակը, օտարերկրյա ներդրող համարվելու համար անհրաժեշտ նվազագույն գումարը և այլն: Միջազգային ներգրավվածության գործոնը չափվում է այն միջազգային կազմակերպությունների քանակով, որոնց անդամակցում է տվյալ երկիրը, ինչպես նաև արտասահմանում դեսպանատների/հյուպատոսությունների քանակով: Տեխնոլոգիաների արդյունավետությունը չափվում է այդ ոլորտում տվյալ պետության ընկերությունների, անդրազգային կազմակերպությունների քանակով ու զբաղեցրած դիրքով, համացանցից օգտվող անձանց քանակով, սոցիալական ցանցերում տվյալ երկրի ակտիվ քաղաքական գործիչների քանակով և այլն[104]:

Ինդեքսի հեղինակների մոտեցմամբ, լավագույն արդյունք են ապահովում այն երկրները, որոնք համապատասխանաբար բարձր արդյունք են գրանցում բոլոր ռեսուրսների դեպքում: Այսպես, 2018թ. տվյալներով ինդեքսի առաջին 5 երկրներն են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիա, Գերմանիան, ԱՄՆ-ն և Ճապոնիան, որոնք համեմատաբար բարձր արդյունք են գրանցել ինդեքսի բաղադրիչներից յուրաքանչյուրում: Իսկ օրինակ Շվեդիան առաջատարն է կառավարման ռեսուրսի մասով,

[104] Օբյեկտիվ բաղադրիչների ամբողջական ցանկին ծանոթանալու համար տես "The Soft Power 30…", Portland, 2018, հավելված 1, էջ 169-171, https://softpower30.com/wp-content/uploads/2018/07/The-Soft-Power-30-Report-2018.pdf

սակայն համեմատաբար ցածր արդյունք է գրանցել մյուս ցուցանիշներով, ինչի հետևանքով հայտնվել է 8-րդ տեղում: Ձեռնարկատիրության ռեսուրսի դեպքում առաջատարն է Սինգապուրը, որը, սակայն, ընդհանուր սանդղակում գրավում է 21-րդ տեղը: Ուշագրավ է, որ առաջատար Մեծ Բրիտանիան 6 բաղադրիչներից և ոչ մեկով չի զբաղեցնում առաջին տեղը, սակայն դա փոխհատուցվում է համեմատաբար բարձր դիրքով միաժամանակ բոլոր բաղադրիչներում: Այսպես, 6 բաղադրիչներից 4-ում Մեծ Բրիտանիան գտնվում է առաջին եռյակում[105]:

2018թ. փափուկ ուժի չափման վերջին երկու ինդեքսների արդյունքներն ամփոփված են ստորև`

| | Soft Power 30[106] | Anholt-GFK Nation Brands Index[107] |
|---|---|---|
| 1. | Մեծ Բրիտանիա | Գերմանիա |
| 2. | Ֆրանսիա | Ճապոնիա |
| 3. | Գերմանիա | Մեծ Բրիտանիա |
| 4. | ԱՄՆ | Ֆրանսիա |
| 5. | Ճապոնիա | Կանադա |

Փափուկ ուժի չափման վերոնշյալ փորձերն ամենևին չեն հավակնում սպառիչ պատասխան տալ ու այս կամ այն երկրի փափուկ ուժի պոտենցիալի մասին: Այդուհանդերձ, դա մի կարևոր քայլ է` փափուկ ուժը չափելի, հետևապես նաև կառավարելի դաշտ բերելու ուղղությամբ: Դրանց հիմնական արդյունքն այն է, որ «փափուկ ուժի բնագավառում,

[105] Նույն տեղում, էջ 59
[106] Նույն տեղում, էջ 42-43
[107] America, the brand, has fallen in world rankings, 29.10.2018, https://qz.com/1441956/germany-is-the-top-nation-brand-of-2018-while-america-ties-with-italy-in-sixth-place/

որը մինչ այժմ վերացարկված և չափման ոչ ենթական երևույթի տպավորություն է թողնում, ի հայտ են գալիս հստակ կողմնորոշիչներ և պարամետրեր»[108]: Փափուկ ուժի չափման խնդիրը կարևոր է հենց կիրառող պետությունների համար, քանի որ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու սեփական փափուկ ուժի կիրառման տիրույթի և արդյունավետության մասին, ինչպես նաև այդ ուղղությամբ իրականացնել համապատասխան ռազմավարական պլանավորում: Ամեն դեպքում, հիմնավոր կլինի պնդել, որ փափուկ ուժի չափում իրականացնելիս, լիարժեք պատկեր ստանալու համար պետք է հաշվի առնվեն, ինչպես կիրառող սուբյեկտի ռեսուրսները և մեխանիզմները, այնպես էլ թիրախ երկրի ընկալումը և արձագանքը: Առանց այդ բաղադրիչներից որևէ մեկի փափուկ ուժի չափումը կլինի ոչ ամբողջական:

## 1.3. Փափուկ ուժի ինստիտուցիոնալացումը և մեխանիզմների տիպաբանությունը

Փափուկ ուժի ռեսուրսների տիրապետումը դեռևս չի երաշխավորում փափուկ ուժի արդյունավետ կիրառում: Ինչպես որ x քանակության սպառազինությունների տիրապետելը չի երաշխավորում, որ դրանց միջոցով կարող ես հաղթել պատերազմը, այնպես էլ փափուկ ուժի ռեսուրսների առկայությունը դրանց հաջող կիրառման միակ գրավականը չէ: Ինչպես նշում է Մ. Լեբեդևան, «ռեսուրսը դեռևս պետք է մտածված կերպով իրացնել, որպեսզի այն պոտենցիալ ազդեցությունից վերածվի իրական ազդեցության:

[108] Տե՛ս **Неймарк М.**, նշվ. աշխ. էջ 53

Թեև, ռեսուրսների առկայությունն ինքնին որոշակի առավելություններ է տալիս համաշխարհային թատերաբեմում այլ դերակատարների նկատմամբ»[109]:

Փափուկ ուժի ռեսուրսների՝ քաղաքական վերջնարդյունքի վերածման գործընթացում առանցքային նշանակություն ունի փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացը, որը ենթադրում է փափուկ ուժի ոլորտում պետության ամենօրյա քաղաքականությունը համակարգող որոշակի ինստիտուցիոնալ հենքի ստեղծում: Այդ գործընթացի արդյունքում ստեղծվում են փափուկ ուժի մեխանիզմները, որոնք կենտրոնական դեր են խաղում ռեսուրսների իրացման, կյանքի կոչման մեջ: Դրանք, ըստ էության, փափուկ ուժի «երևացող երեսն» են: Օրինակ, հարուստ մշակույթը կարող է լինել Չինաստանի փափուկ ուժի գլխավոր ռեսուրսներից մեկը, բայց դրա տարածման, դրա միջոցով բարենպաստ իմիջի ստեղծման համար աշխատում են տարատեսակ մեխանիզմներ՝ այդ թվում Կոնֆուցիոսի ինստիտուտները:

Պետք է նշել, որ փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացը յուրաքանչյուր երկրում տեղի է ունենում յուրովի: Անշուշտ, այդ գործընթացի լիարժեք արդյունավետության համար անհրաժեշտ են ծավալուն ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսներ, ինչպես նաև համապատասխան հմտություններ և ռազմավարություն: Փափուկ ուժի մեխանիզմների ձևավորման գործընթացում նախ պետք է հաշվի առնվի ռեսուրսային առկահիմքը, ինչպես նաև արտաքին քաղաքականության ոլորտում հետապնդվող նպատակները: Ջ. Նայը պատկերում է

---

[109] Տե՛ս **Лебедева М.**, Ресурсы Влияния в мировой политике // Полис. 2014, No 1, с. 103

փափուկ ուժի ռեսուրսների՝ քաղաքական վերջնարդյունքի վերածման գործընթացը՝ 5 փուլերի տեսքով.

Փափուկ ուժի ռեսուրսներ > Քաղաքական գործիքներ > Իրացման հմտություններ > Թիրախի արձագանք > քաղաքական վերջնարդյունք (ճանաչողական կամ վարքաբանական)[110]:

Ճիշտ է՝ Ջ. Նայն ինքը այս գործընթացը բնութագրելիս չի կիրառում ինստիտուցիոնալացում եզրը, այդուհանդերձ կարծում ենք՝ նրա առաջարկած սխեման բավականին լավ է բնութագրում փափուկ ուժի ռեսուրսների՝ քաղաքական վերջնարդյունքի վերածման գործընթացը: Դրանում փափուկ ուժի մեխանիզմների ձևավորման կատեգորիային թերևս ամենամոտը երկրորդ փուլն է՝ քաղաքական գործիքների կիրառումը: Որպես առանձին կատեգորիա՝ փափուկ ուժի մեխանիզմները նրա մոտեցումներում չեն մատնանշվում, թեև Ջ. Նայը առանձնացնում է հանրային դիվանագիտությունը, հեռարձակումը, փոխանակման ծրագրերը, աջակցությունը զարգացման հարցերում, հումանիտար օգնությունը և ռազմական շփումները՝ որպես փափուկ ուժի իրացման հիմնական գործիքներ[111]:

Ինչպես փափուկ ուժի ինստիտուցիոնալացման՝ փափուկ ուժի մեխանիզմների ձևավորման և կայացման, այնպես էլ դրանց կիրառման գործընթացներն ունեն իրենց առանձնահատկությունները: Ինչպես ռազմական ուժի դեպքում, փափուկ ուժի կիրառությունն ունիվերսալ չէ և չի կարող ապահովել միևնույն

[110] Տե՛ս **Nye J.**, The Future of Power, Public Affairs, New York, 2011, p. 100
[111] Նույն տեղում, էջ 228

արդյունքը բոլոր դեպքերում: Ավելին, փափուկ ուժին բնորոշ է «միջավայրային կախվածության» թերևս ավելի բարձր մակարդակ, քան ուժերի այլ տեսակներին՝ պայմանավորված գործոնների այն բազմությամբ, որը պետք է հաշվի առնվի փափուկ ուժ կիրառելիս: Այսպես, դրանց շարքում պետք է մատնանշել՝

1. Օբյեկտի մշակութային առանձնահատկությունները
2. Օբյեկտի նպատակներն ու պահանջմունքները
3. Կոնկրետ ժամանակի ընթացքում տեղեկատվական հոսքերը
4. Փափուկ ուժի մեխանիզմների հասանելիությունը

Ինչպես նշում են Ի. Բուսիգինան և Ի. Օկունևը, «միևնույն պետությունը կարող է տարբեր դաշտերում խաղալ տարբեր «խաղեր», օգտագործել կոշտ և փափուկ գործիքների առանձին համադրություններ՝ որպես օրինակ ԱՄՆ քաղաքականության տարբերությունները, մի կողմից, ԵՄ-ի, մյուս կողմից՝ Իրաքի և Սիրիայի նկատմամբ»[112]: Չինաստանի փափուկ ուժը կարող է արդյունավետ լինել Աֆրիկյան երկրներում, սակայն լիակատար ձախողման իր անմիջական հարևանների շրջանում, որոնց մեծ մասի հետ Չինաստանն ունի տարածքային խնդիրներ: Այստեղ թերևս կարելի է հիշատակել ամերիկացի հայտնի քաղաքագետ Յարոլդ Լասուելի խոսքերն այն մասին, որ «քաղաքական իշխանությունը փոխհարաբերություն է, որը դրսևորվում է կոնկրետ համատեքստում և արտացոլվում է նրանում, թե ով ստանում է ինչ, ինչպես, որտեղ և

---

112 Տե՛ս **Бусыгина И. М., Окунев И. Ю.**, Пространственное распределение силы и стратегии государства или что и как обьясняет геополитика // Полис. 2014. No 2, с. 114

երբ»[113], որը լիովին վերաբերում է նաև փափուկ ուժին: Սակայն միջավայրով սահմանափակ լինելը ամենևին հիմք չի տալիս փափուկ ուժը դասելու «անկարևոր» գործոնների շարքը: Տանկերն արդյունավետ են հարթավայրային պայմաններում, փոխարենը կիրառելի չեն լեռներում, սակայն դա որևէ կերպ չի վկայում վերջիններս անօգտակարության մասին:

Մասնագիտական գրականության մեջ թեև փափուկ ուժի մեխանիզմների տիպաբանություն, որպես առանձնացված կատեգորիա, չի հանդիպում, սակայն մի շարք հեղինակների կողմից փորձ է կատարվել դասակարգելու փափուկ գործիքակազմը ըստ այս կամ այն բաղադրիչի: Այսպես, պրագմատիկ տիպաբանություն է առաջարկում ռուս քաղաքագետ Օ.Լեոնովան, ով փորձ է արել համադրել փափուկ ուժի պետական և ոչ պետական մակարդակները: Այսպես, նրա կարծիքով, փափուկ ուժի մեխանիզմների շարքում են`

-տեղեկատվական հոսքերը

- արտասահմանյան լսարանին ուղղված քաղաքական պրոպագանդան

-գլոբալ մարքեթինգը

- պետական լեզուն և դրա տարածվածությունն աշխարհում

-հանրային դիվանագիտությունը

-զբոսաշրջությունը, սպորտը և մշակութային փոխանակումները

-կրթական համակարգը

- տեղեկատվական պատերազմներ վարելու ունակությունը

---

[113] Տե՛ս Lasswell H., Kaplan A., “Power and Society: A framework for Political Inquiry”, Yale University Press, New Haven, 1950

-միգրացիոն քաղաքականությունը (այդ թվում՝ սփյուռքի գործոնը)[114]

Փափուկ ուժի մեխանիզմների մեկ այլ տիպաբանություն է առաջ քաշում Ա. Վուվինգը, ով այդ մեխանիզմներն անվանում է «գործիքներ» (tools): Այսպես, ըստ նրա, փափուկ ուժի գործիքների թվին են դասվում՝

- Մշակույթի տարածմանն ուղղված քայլերը՝ փոխանակման ծրագրերը, հեռարձակման միջոցները

- Տնտեսական օժանդակությունը, որտեղ հեղինակը խոսում է պայմանական և ոչ պայմանական օժանդակության մասին՝ որպես վերջինիս օրինակ բերելով Չինաստանը

-Հումանիտար օժանդակությունը, որը կարող է տեղի ունենալ ինչպես ռազմական, այնպես էլ ոչ ռազմական միջոցներով:

- Արտաքին քաղաքականության իրականացման գործում միջազգային կազմակերպություններում ակտիվ ներգրավվածությունը, այլ դերակատարների հետ շփումը[115]

Մ. Մարգարյանը շեշտադրում է փափուկ ուժի քարոզչական ասպեկտը՝ դիտարկելով այն որպես տեղեկատվության, գիտելիքների և մշակույթի միջոցով գիտակցության վրա ազդելու մեխանիզմ: Տվյալ մոտեցման դեպքում շեշտադրվում է փափուկ ուժի հոգեբանական բաղադրիչը, մեխանիզմների տեսանկյունից առաջին պլան են մղվում հոգեբանական ազդեցության միջոցները՝

[114] Տե՛ս **Леонова О.**, նշվ. աշխ., էջ 29

[115] Տե՛ս **Vuving A.**, How soft power works, Paper presented at the panel "Soft Power and Smart Power," American Political Science Association annual meeting, Toronto, 03.09.2009, p. 13-15

տեղեկատվական հոսքերի կառավարումը, խորհրդանիշների կիրառումը և այլն[116]:

Ս. Ռոթմանն առաջ է քաշում փափուկ ուժի մեխանիզմների յուրահատուկ տիպաբանություն՝ դասակարգելով նորմերի արմատավորման և դիսկուրսի վերահսկողության տիպերը[117]: Նորմերի արմատավորման տակ հեղինակը նկատի ունի սուբյեկտին ձեռնտու որոշակի նորմերի տարածման և օբյեկտի կողմից դրանց յուրացման գործընթացը: Ս. Ռոթմանի կարծիքով, միջազգային հարաբերություններում պետությունները շարժվում են առավել ապես «նպատակահարմարության տրամաբանությամբ» (logic of appropriateness)՝ գործելով նախապես ձևավորված որոշակի նորմատիվ կառուցվածքի շրջանակներում: Այդպիսի նորմի օրինակ է միջուկային ուժի չկիրառումը:

Երկրորդ մեխանիզմը օրակարգի և դիսկուրսի կառավարման միջոցով թիրախ հասարակության վրա ազդեցությունն է, որն առավել ապես հոգեբանական բնույթ ունի, դրսևորվում է մեդիաընկերությունների, հասարակական կազմակերպությունների, խորհրդանիշների միջոցով հանրության վրա տեղեկատվական ազդեցության միջոցով:

Վ. Աթոյանը փափուկ ուժի մեխանիզմների շարքում առաջարկում է ներառել նաև ուղեղային կենտրոնները, որոնք ներկայումս զուտ ինտելեկտուալ հարթակներից վերածվել են ներքին ու արտաքին քաղաքականության ակտիվ դերակատարների, նույնիսկ ներգրավում են

[116]Տե՛ս **Մարգարյան Մ.**, «Փափուկ Ուժի» (Soft Power) տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտության մասին, 27.08.2016, https://bit.ly/2PIlg2y
[117] Տե՛ս **Rothman S.**, Revising the soft power concept: what are the means and mechanisms of soft power? // Journal of Political Power, 4:1, 2011, p. 56-60

համամարտությունների լուծման գործընթացներում[118]:

Ինչպես տեսնում ենք՝ հեղինակների կողմից առաջ քաշված դասակարգումներում մատնանշվում են փափուկ ուժի ամենատարբեր մեխանիզմներ, որոնք միգուցե և խմբավորված են այս կամ այն չափանիշի շուրջ, սակայն համապարփակ պատկերացում չեն տալիս փափուկ ուժի մեխանիզմների ամբողջ սպեկտրի վերաբերյալ: Դրանք ավելի շատ փափուկ ուժի դրսևորման առանձին օրինակներ են: Ուսումնասիրելով փափուկ ուժի մեխանիզմների վերաբերյալ առկա մոտեցումները՝ կարծում ենք անհրաժեշտություն կա խմբավորել ու դրանք առանձին տիպաբանության մեջ, որը հաշվի կառնի թե փափուկ ուժի դրսևորումների ամբողջ բազմազանությունը՝ ըստ ոլորտների և թե այդ ուժի կիրառման հետևում կանգնած դերակատարին:

Ինչպես նշվեց սույն գլխի առաջին ենթագլխում, փափուկ ուժի սուբյեկտայնության հիմնահարցի շրջանակներում, որպես այդպիսիք կարող են հանդես գալ ինչպես պետությունները, այնպես էլ այլ դերակատարները, մասնավորապես, քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Այս տարանջատումից բխում է տիպաբանական առաջին մոդելը, որի շրջանակներում որպես դասակարգման չափանիշ կարելի է սահմանել փափուկ ուժի տվյալ մեխանիզմի «պատկանելությունը»: Այդ հիմքով փափուկ ուժի առկա բոլոր մեխանիզմները կարելի է խմբավորել երկու լայն խմբերում՝ պետական և ոչ պետական: Պետական մեխանիզմների ներքո նկատի են առնվում փափուկ ուժի այն գործիքները, որտեղ պետությունն ունի որոշիչ դերակատարություն:

---

[118] Տե՛ս **Աթոյան Վ.**, Ուղեղային կենտրոնների գլոբալ և ազգային վարկանիշավորման միջազգային փորձը // «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (67), 2016, էջ 4

Այս շարքում նախևառաջ պետք է մատնանշել պետական հաստատությունները՝ սովորաբար արտաքին գործերի, մշակույթի, կրթության նախարարությունները, ինչպես նաև այն կառույցները, որոնք գործում են պետության հովանավորությամբ, ֆինանսավորվում և հրահանգներ են ստանում հենց պետության կողմից: Վերջիններիս սովորաբար բնորոշ է հիերարխիկ և կազմակերպչական ավելի կուռ կառուցվածք, հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ: Դասական օրինակը կարելի է համարել Կոնֆուցիուսի ինստիտուտները:

Փափուկ ուժի ոչ պետական մեխանիզմների ներքո նկատի է առնվում գործիքների այն համախումբը, որը կազմակերպչական, կառուցվածքային, ֆինանսական և այլ իմաստներով որևէ կախում չունի պետությունից: Սա չի նշանակում, որ տվյալ կազմակերպությունների գործունեությունը անպայման հակադրվում է փափուկ ուժի պետական քաղաքականությանը, թեև կարող են լինել նաև այդպիսի դրսևորումներ: Որպես օրինակը կարելի է հիշել աշխարհում բավականին ազդեցիկ Գյուլենական շարժման և պաշտոնական Անկարայի քաղաքական առաջնահերթությունների տարբերությունները:

Տիպաբանական այս մոդելը թույլ է տալիս վերհանել պետության շահի առաջ մղման գործում փափուկ ուժի պետական և ոչ պետական մեխանիզմների առանձնահատկությունները,վերջիններիս վարքի և հետապնդած նպատակների համադրվածությունը: Յատկապես Արևմտյան երկրներում, որտեղ փափուկ ուժի գործիքների ոչ պետական ոլորտն առավել զարգացած է,հաճախ կարելի է ականատես լինել այս

երկու տիպի մեխանիզմների գործունեության հետաքրքիր դրսևորումների:

Այս մոդելի հիմնական թերությունն այն է, որ հաճախ շատ դժվար է լինում բացահայտել փափուկ ուժի տվյալ գործիքների «պատկանելությունը», քանի որ դրանք շատ հազվադեպ են հանդես գալիս ամբողջովին մաքուր տեսքով՝ պետության հովանու ներքո կամ դրանից անկախ: Հաճախ նմանատիպ կազմակերպությունները թեև գործում են «հասարակական» անվան ներքո, սակայն լատենտ ֆինանսական/կազմակերպչական և այլ բնույթի օժանդակություն են ստանում պետության կողմից:

Վերոնշյալ առանցքային թերությունը հաղթահարելու համար նպատակահարմար է առաջ քաշել փափուկ ուժի մեխանիզմների ևս մեկ տիպաբանություն՝ որպես չափանիշ դիտարկելով այն ոլորտը, որում տվյալ մեխանիզմը կիրառվում է: Այդ հիմքով փափուկ ուժի մեխանիզմները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝

1) *Քաղաքական մեխանիզմներ*, որոնք ներառում են տարատեսակ քաղաքական ծրագրեր և ձևաչափեր՝ միտված «թիրախ» երկրի քաղաքական համակարգի բարեփոխումներին, ժողովրդավարացմանը, արդիականացմանը և այլ բնույթի աջակցության ցուցաբերմանը: Այս մեխանիզմների մասով բավականին մեծ փորձառություն ունեն արևմտյան երկրները:

2) *Տնտեսական մեխանիզմներ*, որոնց շարքում կարելի է մատնանշել տնտեսական օժանդակությունը, տնտեսական վերակառուցման, «թիրախ» երկրի ենթակառուցվածքների բարելավման ծրագրերը և այլն: Վերջին տարիներին նմանատիպ մեխանիզմների կիրառման մեջ մասնագիտացել է հատկապես Չինաստանը:

3) *Մշակութային մեխանիզմներ*, որոնց շարքին են դասվում լեզվի, արվեստի, գրականության և մշակույթի այլ տարրերի տարածմամբ զբաղվող կազմակերպությունները: Մեխանիզմի այս տիպը թերևս ամենատարածվածն է, աշխարհի հզոր ուժային կենտրոններից յուրաքանչյուրը կիրառում է նմանատիպ մեխանիզմներ: Որպես օրինակ՝ British Council (Մեծ Բրիտանիա), Alliance Francaise (Ֆրանսիա), Գյոթեյի ինստիտուտներ (Գերմանիա), Սերվանտեսի ինստիտուտներ (Իսպանիա), Կոնֆուցիուսի ինստիտուտներ (Չինաստան), Русский Мир (ՌԴ), Յունուս Էմրե մշակութային կենտրոններ (Թուրքիա), Մշակույթի և իսլամական կապերի կազմակերպություն (Իրան) և այլն:

4) *Կրթական մեխանիզմներ*, որոնց շարքին կարելի է դասել փոխանակման ծրագրերը, կրթական հաստատությունների միջև համագործակցությունը, «թիրախ» երկրում հովանավորվող կրթական հաստատությունների թիվը և այլն

5) *Տեղեկատվական մեխանիզմներ*, որոնց շարքին կարելի է դասել «թիրախ» երկրում հովանավորվող զանգվածային լրատվության միջոցները, հեռուստատեսությունը, համացանցային ռեսուրսները և այլն

6) *Սփյուռքի կառույցները*՝ որպես փափուկ ուժի մեխանիզմ: Նմանատիպ կառույցներից հատկապես օգուտ են քաղում փոքր պետությունները, որոնք սեփական ձայնը հնչեցնելու կարևորագույն խողովակ են ստանում: Այդպիսի երկրների շարքում է նաև Հայաստանը:

Ինչպես տեսնում ենք, տվյալ տիպաբանական մոդելի դեպքում հաղթահարվում է նախորդի հիմնական թերությունը՝ այստեղ տվյալ

մեխանիզմի ֆինանսավորման և կազմակերպչական կառուցվածքի խորքային ուսումնասիրության և հնարավոր հակասությունների վերհանման կարիք չկա: Այս մեխանիզմներից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է ինչպես պետության կողմից վերահսկվող, այնպես էլ հասարակական հիմքով գործող կազմակերպություններ և ծրագրեր: Չնայած դրան՝ տվյալ տիպաբանությունն էլ զերծ չէ թերի կողմերից: Մասնավորապես, երբեմն փափուկ ուժի այս կամ այն մեխանիզմը կարող է գործառույթներ իրականացնել միանգամից մի քանի ոլորտներում՝ այդպիսով դժվարացնելով դրա «տեղավորումը» վերոնշյալ կատեգորիաներից որևէ մեկում: Օրինակ, ռուսական «Россотрудничество» դաշնային գործակալությունն իրականացնում է ինչպես տնտեսական, այնպես էլ կրթական, մշակութային և այլ բնույթի գործառույթներ: Այդուամենայնիվ, կարծում ենք՝ այս մոդելը պրակտիկ վերլուծության իրականացման տեսանկյունից շատ ավելի արդյունավետ է: Այն նաև թույլ է տալիս պատկերացում կազմել, թե կոնկրետ որ բնագավառում է տվյալ պետությունը գրանցել որոշակի հաջողություններ, որ ոլորտում ունի համեմատաբար մեծ հնարավորություններ և որտեղ կարիք կա լրացուցիչ աշխատանքների:

# Գլուխ 2. ԱՐՏԱՍԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

## 2.1. ԱՄՆ փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում

Փափուկ ուժ եզրի մասին քննարկումները դարձել են ամերիկյան գիտական, ինչպես նաև հասարակական-քաղաքական դիսկուրսի անբաժան մասը, այն ԱՄՆ-ում չի ընկալվում որպես «բացառիկ» երևույթ: Դրա հիմնական պատճառն այն է, որ եզրը ամերիկյան քաղաքագիտական մտքի արգասիք է և կոնցեպտուալացվել է՝ հաշվի առնելով հենց ԱՄՆ-ի՝ որպես համաշխարհային ուժային կենտրոնի դերը ժամանակակից աշխարհում:

Հատկանշական է, որ եզրը ներմուծելիս Ջ.Նայի մտահոգության հիմնական առարկան այն էր, թե որքանով ԱՄՆ-ն կարող է փոխակերպվել նոր՝ հետսառըպատերազմյան աշխարհակարգին և դրանից բխող սպառնալիքներին համապատասխան: Այդ կապակցությամբ նա հույս էր հայտնում, որ ԱՄՆ-ն չի տրվի գայթակղությանը և կխուսափի այսպես կոչված «Հսկա մարդու» կեցվածքը ընդունելու, միայն ռազմական ուժին ապավինելու և սեփական բացառիկությունն ամեն կերպ պարտադրելու մտքից՝ փոխարենն առաջարկելով կիրառել փափուկ ուժ և ամրապնդել ԱՄՆ գրավչությունը միջազգային հանրության աչքերում: Այդ մոտեցումը, Ջ.Նայի կարծիքով, ոչ միայն ավելի արդյունավետ կլինի ԱՄՆ շահերի առաջմղման իմաստով, այլ և ավելի նախընտրելի է զուտ պրակտիկ նկատառումներից ելնելով՝ հաշվի առնելով, որ փափուկ ուժի կիրառումը պահանջում է համեմատաբար ավելի քիչ ֆինանսական և այլ ռեսուրսներ, քան պահանջվում է կոշտ (ռազմական) ուժը[119]:

[119] Տե՛ս **Nye J.**, Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, New York, 2004, p. 147

Է.Հալլամսի կարծիքով, թեև Ջ.Նայի առաջ քաշած գաղափարները չվերածվեցին ԱՄՆ նոր արտաքին քաղաքական պարադիգմայի, սակայն դրանք բավականին մեծ ազդեցություն թողեցին ԱՄՆ ղեկավարության մոտեցումների վրա: Այս իմաստով, նա առանձնացնում է հատկապես Բիլլ Քլինթոնի նախագահության ժամանակաշրջանը, ում աշխատակազմում Ջ. Նայը զբաղեցնում էր խորհրդականի պաշտոնը[120]: Բացի այդ, Ջ.Նայը տարբեր ժամանակաշրջաններում զբաղեցրել է պատասխանատու այլ պաշտոններ ամերիկյան վարչակազմում՝ լինելով Միջուկային զենքի չտարածման հարցերով Ազգային անվտանգության խորհրդի նախագահ, Ազգային հետախուզության խորհրդի նախագահ, պաշտպանության նախարարի՝ միջազգային անվտանգության հարցերով տեղակալ և այլն:

Հիմնավոր կլինի պնդել, որ ԱՄՆ-ն վերջին 2 տասնամյակների ընթացքում կարողացել է ստեղծել փափուկ ուժի մեխանիզմների թերևս ամենահագեցած և աշխարհագրորեն տարածված զինանոցը, թեև փափուկ ուժի չափման միջազգային ռեյտինգներում ԱՄՆ-ն միշտ չէ, որ զբաղեցնում է առաջին հորիզոնականը: Հատկանշական է, որ ԱՄՆ-ն փափուկ ուժի գործիքակազմի բավականին հաջող կիրառման «փորձ» էր ձեռք բերել դեռևս Սառը պատերազմի տարիներին: Խոսքն առաջին հերթին «Մարշալի պլանի» մասին է: Վերջինս հետպատերազմյան վերականգնման նպատակով եվրոպական երկրներին տնտեսական օժանդակության մի մեխանիզմ էր, որը նաև անուղղակիորեն միտված էր կոմունիստական գաղափարախոսության և կարգերի տարածումը կանխելուն՝ հաշվի առնելով, որ դրանք բավականին

[120] Տե՛ս **Hallams E.**, From Crusader to Exemplar: Bush, Obama and the Reinvigoration of America’s Soft Power // European journal of American studies, 6-1, 2011

հեղինակություն էին վայելում տնտեսական կոլապսի ենթարկված երկրներում, որտեղ դրանց սոցիալական հիմքը մեծամասամբ հենց չունևոր խավն էր[121]:

Վերլուծելով վերջին տարիներին ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ փափուկ գործիքակազմի կիրառման միտումները՝ կարելի է վերհանել մեկ օրինաչափություն, որին մասամբ անդրադարձել են մի շարք հեղինակներ[122]: Այսպես, փափուկ գործիքակազմի կիրառման տոկոսային հարաբերակցությունը փոփոխվում է՝ կախված նրանից, թե ԱՄՆ երկու խոշոր կուսակցություններից՝ Դեմոկրատական և Հանրապետական, որն է տվյալ պահին գտնվում իշխանության ղեկին: Առնվազն վերջին տարիների վերլուծությունները ցույց են տալիս, որ Հանրապետական կուսակցության, որը հայտնի է միջազգային քաղաքականության մեջ ավելի ուժային մոտեցումների նախընտրությամբ, իշխանության ղեկին գտնվելու ժամանակահատվածում արտաքին քաղաքականության մեջ փափուկ գործիքակազմի կիրառման հաճախականությունը նվազում է, մինչդեռ Դեմոկրատական կուսակցության արտաքին քաղաքականության փափուկ ուժի տարրերին հատկացվում է ավելի մեծ դերակատարություն:

Ասվածի վկայությունն է ԱՄՆ վերջին 3 նախագահների վարած արտաքին քաղաքականությունը: Այսպես, հետազոտողների մեծ մասը հակված է կարծելու, որ Հանրապետական Ջորջ Բուշ կրտսերի նախագահության (2001-2009թթ.) ժամանակահատվածում նկատվեց որոշակի հետընթաց

---

121 Տե՛ս **Zachariou S.**, Struggle for Survival: American Aid and Creek Reconstruction, Europe in Transition: The NYU European Studies Series, Palgrave Macmillan, New York 2001, p. 159

122 Տե՛ս **Hallams E.**, նշվ. աշխ.

ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ փափուկ գործիքակազմի կիրառման և աշխարհում ԱՄՆ հեղինակության և գրավչության մակարդակի իմաստով: Աշխարհը «բարու» և «չարի» առանցքների բաժանելը, Մերձավոր Արևելքում ամերիկյան «ժողովրդավարության տարածումը», քամահրական վերաբերմունքը ՆԱՏՕ-ի գործընկերների և նրանց առաջարկած օժանդակության վերաբերյալ ասվածի վառ վկայությունն են: Ահաբեկչության դեմ պայքարը, որը թերևս Ջ. Բուշի նախագահության արտաքին քաղաքականության կենտրոնական հիմնախնդիրներից մեկն էր, գրեթե ամբողջովին հիմնվում էր ուժային բաղադրիչի վրա:

Ի տարբերություն դրա՝ Բարաք Օբամայի նախագահության տարիներին (2009-2017թթ.)ԱՄՆ-ը փափուկ ուժի իմաստով գրանցեց որոշակի հաջողություններ՝ ի դեմս Իրանի միջուկային ծրագրի շուրջ ավելի քան 3 տասնամյակ շարունակվող ճգնաժամի հանգուցալուծման՝ Համապարփակ գործողությունների համատեղ ծրագրի ստորագրման, Կուբայի հետ հարաբերությունների բարելավման և այլն: Չնայած դրան՝ վերջինիս նախագահության ժամանակահատվածը ևս աչքի ընկավ ռազմական ուժի կիրառման մի շարք խոշոր դրվագներով, ինչպիսին էր օրինակ 2011թ. ՆԱՏՕ-ի ռազմագործողությունը Լիբիայում,որում ԱՄՆ-ը խաղաց կենտրոնական դեր:

2017թ. հանրապետական Դոնալդ Թրամփի նախագահ ընտրվելուց հետո, մի շարք հեղինակների կարծիքով, սկսվեց ամերիկյան փափուկ ուժի «հետընթացի» նոր ալիքը: Վերջինս դեռևս նախընտրական քարոզարշավի փուլում հանդես էր գալիս ԱՄՆ ավելի «եսակենտրոն»մոտեցման,արտաքին քաղաքական խնդիրների լուծման գործում ուժային

միջոցներին նախապատվություն տալու, փափուկ գործիքներին, ինչպես նաև տարատեսակ բազմակողմ ձևաչափերին և միջազգային կազմակերպություններին հատկացվող բյուջեի էական կրճատման դրույթներով[123]: Արդեն իսկ 2017թ. Pew հետազոտական կենտրոնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով ԱՄՆ ռեյտինգը նախորդ տարվա համեմատ 64-ից իջավ 49-ի[124]:

Միևնույն ժամանակ, հիմնվելով առաջին գլխում կատարված վերլուծությունների վրա՝ սխալ կլինի փափուկ ուժի արդյունավետությունը պայմանավորել բացառապես տվյալ պահին պետության քաղաքական վերնախավի հայացքների և նրա կողմից տարվող քաղաքականության հետ: Անշուշտ, այնքանով, որքանով փափուկ ուժը պետության արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասն է, քաղաքական իշխանությունն է հաճախորոշում՝ որ դեպքում և ինչպես այն պետք է կիրառվի: Սակայն չպետք է մոռանալ, որ միայն պետությունը կամ պետական կառույցները չեն, որ հանդես են որպես փափուկ ուժի սուբյեկտ. գոյություն ունեն նաև փափուկ ուժի ոչ պետական դերակատարներ՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտները և այլն, ինչով պայմանավորված պետության փափուկ ուժը որոշակի չափով «ապահովագրված է» քաղաքական իշխանության տատանումներից: Ասվածը հատկապես արդիական է հենց ԱՄՆ-ի դեպքում, երբ տարբեր նախագահների օրոք թեև նկատվել են հետընթացներ, սակայն միևնույն է, ԱՄՆ լիդերությունը մի շարք ասպարեզներում՝ մշակութային, տեղեկատվական և այլն, մնացել է անձեռնմխելի:

---

[123] Trump plans 28 percent cut in budget for diplomacy, foreign aid, 16.03.2017 https://www.reuters.com/article/us-usa-trump-budget-state-idUSKBN16N0DQ

[124] U.S. Image Suffers as Publics Around World Question Trump's Leadership, Pew Research Center, https://www.pewglobal.org/2017/06/26/u-s-image-suffers-as-publics-around-world-question-trumps-leadership/

ԱՄՆ-ը ներկայումս փափուկ ուժի ասպարեզում պետական մակարդակով կատարվող ֆինանսական հատկացումների ծավալով բացահայտ առաջատարն է: Այսպես, օրինակ, 2019թ. ԱՄՆ բյուջեով Պետքարտուղարության, արտաքին հարաբերությունների և հարակից ծրագրերի համար նախատեսվում է 41.86 մլրդ ԱՄՆ դոլլար[125], և դա ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի կողմից «փափուկ բյուջեի»զգալի կրճատման քաղաքականություն որդեգրելու պարագայում: Չնայած դրան՝ շատ հեղինակներ այդ թիվը համարում են անբավարար՝ համեմատության համար նշելով, որ անվտանգության և պաշտպանության ոլորտում նախատեսվող բյուջեն կազմում է 716մլրդ ԱՄՆ դոլլար[126]:

Վերջին 2-3 տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ը կարողացել է ստեղծել և գործարկել փափուկ ուժի մեխանիզմների թերևս ամենալայնամասշտաբ ցանցը: Սույն աշխատանքի նպատակներից և խնդիրներից ելնելով՝ հարկ է հակիրճ ներկայացնել դրանցից գլխավորները՝ հաշվի առնելով դրանց ներկայությունն ու գործառնությունը նաև Հարավային Կովկասի երկրներում:

Այսպես, ներկայումս ԱՄՆ փափուկ ուժի պետական ռազմավարության հիմնական ուղղությունների մշակման և իրականացման գործում կարևորագույն դերակատարներն են Պետքարտուղարությունը, ինչպես նաև վերջինիս հովանու ներքո գործող Միջազգային զարգացման ամերիկյան գործակալությունը (USAID): Պետքարտուղարության կառուցվածքային

[125] Department of State, Foreign Operations and Related Programs: FY2019 Budget and Appropriations, 12.03.2019, https://fas.org/sgp/crs/row/R45168.pdf

[126]Department of Defence Releases Fiscal Year 2019 Budget Proposal, https://comptroller.defense.gov/Portals/45/Documents/defbudget/fy2019/fy2019_Press_Release.pdf

ստորաբաժանումներից առանցքային նշանակություն ունեն հատկապես Կրթության և մշակութային հարցերի (Bureau of Education and Cultural Affairs)[127], ինչպես նաև ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի (Bureau of Democracy, Human Rights, and Labor) բյուրոները, որոնք իրականացնում են «փափուկ» գործառույթների մի ամբողջ սպեկտր՝ ժողովրդավարացման գործընթացներին և մարդու իրավունքներին աջակցությունից մինչև ուսանողական փոխանակումների կազմակերպում, կրթաթոշակների տրամադրում և այլն[128]:

ԱՄՆ փափուկ ուժի կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ այստեղ մեծ դերակատարություն ունեն քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Վերջիններս, ճիշտ է, թեև չի կարելի համարել ԱՄՆ փափուկ ուժի մեխանիզմներ դասական իմաստով, սակայն դրանք ԱՄՆ ազդեցության ընդլայնման տեսանկյունից բավականին մեծ դերակատարություն ունեն: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից գեներացվող փափուկ ուժի շրջանակներում կարևորագույն դերակատարություն ունի ժողովրդավարության ազգային հիմնադրամը (National Endowment for Democracy), որը թեև ամեն տարի ԱՄՆ Պետքարտուղարության կողմից ստանում է որոշակի ֆինանսական օժանդակություն, սակայն կառավարվում է հոգաբարձուների առանձին խորհրդի կողմից, որն ընդունում է կառույցին առնչվող կարևորագույն որոշումները: ԺԱՀ-ի հովանու գործում են 4 խոշոր կառույցներ՝

[127] ԱՄՆ Պետդեպարտամենտի Կրթության և մշակութային հարցերով բյուրոյի պաշտոնական կայքէջ, https://www.state.gov/r/eca/index.htm
[128] ԱՄՆ Պետդեպարտամենտի ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի հարցերով բյուրոյի պաշտոնական կայքէջ, https://www.state.gov/j/drl/

Ազգային ժողովրդավարական ինստիտուտը, Միջազգային հանրապետական ինստիտուտը, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնը, Միջազգային աշխատանքային համերաշխության ամերիկյան կենտրոնը: 2016թ. ԺԱՀ ընդհանուր բյուջեն կազմել է 155 մլն ԱՄՆ դոլլար, որը բաժանվել է վերոնշյալ 4 խոշոր կառույցների, ինչպես նաև մի շարք ավելի փոքր կազմակերպությունների և տեղական կառույցների միջև[129]: Այս 4 կառույցներից Հարավային Կովկասում համեմատաբար ակտիվորեն ներգրավված են Ազգային ժողովրդավարական ինստիտուտը և Միջազգային հանրապետական ինստիտուտը:

Բացի ԺԱՀ-ի հովանու ներքո գործող վերնոշյալ կառույցներից, ԱՄՆ-ում գործում են մի շարք այլ խոշոր ոչ կառավարական կազմակերպություններ, որոնց թվում պետք է նշել Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը, Ազատության տունը, Եվրասիա հիմնադրամը, ինչպես նաև Բաց հասարակություն հիմնադրամները: Վերոնշյալ բոլոր կառույցներն, ընդհանուր առմամբ, միտված են ժողովրդավարական արժեքների ամրապնդման, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակներին: Ըստ Գ. Ֆիլիմոնովի, հռչակված պաշտոնական նպատակների հետ մեկտեղ կամ դրանցից զատ, վերջիններս իրականացնում են նաև հետևյալ գործառույթները՝

- ԱՄՆ արտաքին քաղաքական կուրսի մշակում և նպատակների սահմանում
- ԱՄՆ արտաքին քաղաքական նպատակների «գաղափարախոսական» հիմնավորում

[129] National Endowment for Democracy 2016 Annual report, 29.01.2018, https://www.ned.org/publications/2016-annual-report/

- Կադրերի պատրաստում՝ ինչպես ամերիկացի, այնպես էլ արտասահմանցի[130]

Խոսելով Հարավային Կովկասում ԱՄՆ փափուկ ուժի մեխանիզմների մասին՝ նախ պետք է նշել, որ այն, ինչպես թերևս ամբողջ հետխորհրդային տարածությունը, ԱՄՆ ուշադրության կենտրոնում հայտնվեց ԽՍՀՄ փլուզումից հետո: Է. Վարդազարյանի կարծիքով, ԱՄՆ-ի համար 1991թ.-ից անհրաժեշտություն առաջացավ լրամշակելու «զսպման հայեցակարգը», քանի որ ԱՄՆ-ը դարձել էր միջազգային հարաբերությունների գլոբալ համակարգի առանցքը և թշնամական պետությունների զսպումը փոխարինվեց անբարենպաստ գործընթացների զսպմամբ: Այս համատեքստում փափուկ ուժն ի հայտ եկավ որպես ռազմավարական նպատակներին հասնելու մշակութաքաղաքակրթական գործիքների համախումբ՝ միաժամանակ պահպանելով կապն ավանդական ռազմաքաղաքական հայեցակարգերի հետ[131]: Հարավային Կովկասում նմանատիպ մեխանիզմների կիրառումը կարևոր է, նախ, գլխավոր մրցակից ՌԴ-ի, մյուս կողմից, Իրանի հանդեպ զսպման քաղաքականության համատեքստում: Տարածաշրջանը կարևոր է նաև ԵՄ էներգետիկ աղբյուրների բազմազանեցման համատեքստում՝ կասպյան էներգոռեսուրսների իրացման իմաստով, իսկ Իրաքում և Աֆղանստանում գործողությունների մեկնարկից հետո տարածաշրջանը ստացել է նաև կարևոր տարանցիկ դերակատարություն: Վերջին տարիների ընթացքում ԱՄՆ-ը Հարավային Կովկասում կիրառում է փափուկ գործիքակազմի գրեթե ամբողջ սպեկտրը:

---

[130] Տե՛ս **Филимонов Г.**, «Мягкая сила» культурной дипломатии США, РУДН, Москва, 2010, с. 129.

[131] Տե՛ս **Վարդազարյան Ե.**, ԱՄՆ, ԵՄ և ՌԴ հայեցակարգային մոտեցումներն անվտանգության հիմնախնդիրներին // «21-րդ դար», թիվ 5(45), 2012թ., էջ 52

Տարածաշրջանում ԱՄՆ կողմից կիրառվող փափուկ գործիքակազմի շրջանակներում առանձնահատուկ ուշադրության են արժանի հատկապես քաղաքական մեխանիզմները: Դրանց նպատակը տարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերի ժողովրդավարացմանը, մարդու իրավունքների պաշտպանության աջակցության ցուցաբերումն է: Այդ նպատակով ԱՄՆ-ը տարբեր ձևաչափերով տարածաշրջանի երկրներին տրամադրում է ֆինանսական օժանդակություն՝ համապատասխան բարեփոխումների իրականացման համար: Ֆինանսական այս օժանդակության գերակշիռ մեծամասնությունը հատկացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից (USAID), որն, ինչպես նշվեց, ԱՄՆ փափուկ ուժի առանցքային գործիքներից մեկն է: Միաժամանակ, օժանդակություն տրամադրող կառույցների շարքում է ԱՄՆ Պետքարտուղարությունը, ինչպես նաև մի շարք այլ կառույցներ: Ցուցաբերվող ֆինանսական օժանդակության առյուծի բաժինը Հայաստանում և Ադրբեջանում հիմնականում տրամադրվում է «արդյունավետ կառավարման» և քաղաքացիական հասարակության աջակցության դրույթներով, իսկ Վրաստանի դեպքում որպես առաջնային ոլորտ է առանձնացվում հակամարտությունները, խաղաղությունը և անվտանգությունը:

Այսպես, 2015-2017թթ. տարածաշրջանի երեք երկրներից յուրաքանչյուրին պետական մակարդակով հատկացված ֆինանսական միջոցներն ունեցել են հետևյալ պատկերը (տվյալները նշված են ԱՄՆ դոլլարով)[132]՝

[132] U.S. Foreign Aid by country, https://explorer.usaid.gov/cd

| | 2015թ. | 2016թ. | 2017թ. |
|---|---|---|---|
| **Հայաստան** | 37մլն | 46մլն | 29մլն |
| **Վրաստան** | 150մլն | 131մլն | 140մլն |
| **Ադրբեջան** | 19մլն | 25մլն | 16մլն |

Ինչպես երևում է, Վրաստանին ցուցաբերվող օժանդակության ծավալներն ահամեմատ ավելի մեծ են, ինչը պատահական չէ՝ հաշվի առնելով այդ երկրի պաշտոնապես հռչակված արևմտամետ դիրքորոշումը, ԱՄՆ հետ սերտ հարաբերությունները և արևմտյան կառույցներին ինտեգրվելու ցանկությունը: Ի հակադրություն դրա, ամենաքիչ օժանդակությունը ստացել է Ադրբեջանը, որտեղ ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում վատագույն վիճակն է տարածաշրջանում: Այստեղ ԱՄՆ փափուկ «ներկայությունը» նույնիսկ պարբերաբար ենթարկվում է տարաբնույթ ճնշումների Ադրբեջանի իշխանությունների կողմից: Ադրբեջանն ինքն իրեն դիրքավորել է որպես ավելի շատ տնտեսական գործընկեր՝ ԱՄՆ-ի հետ արտաքին քաղաքական տեսլականում հիմնականում հանդես գալով որպես ԵՄ-ի համար էներգառեսուրսների մատակարարման այլընտրանքային աղբյուր: Ընդհանուր պատկեր ստանալու համար, կարելի է դիտարկել նաև ԱՄՆ-ի և տարածաշրջանի միջև առևտրաշրջանառության ծավալները, որոնք 2015-2017թթ. ունեցել են հետևյալ տեսքը (տվյալները ներկայացված են ԱՄՆ դոլլարով)[133]՝

[133] Trade Map, Trade statistics for international business development, Monthly, quarterly and yearly trade data, https://trademap.org/Index.aspx

| | 2015թ. | 2016թ. | 2017թ. |
|---|---|---|---|
| **Հայաստան** | 159 մլն | 118.3 մլն | 172.8 մլն |
| **Վրաստան** | 357.3 մլն | 282 մլն | 389.5 մլն |
| **Ադրբեջան** | 979.4 մլն | 644 մլն | 790 մլն |

Ինչպես նշվեց, տարածաշրջանի երկրներում ակտիվ գործունություն են ծավալում նաև ամերիկյան ոչ պետական մի շարք կազմակերպություններ: Համադրելով պաշտոնական Վաշինգտոնի կողմից տարածաշրջանում իրականցվող քաղաքականության և հղվող ուղերձների բովանդակությունն այդ կառույցների գործունեության հիմնական ուղղություններին՝ կարելի է պնդել, որ դրանք որոշակիորեն տեղավորվում են տարածաշրջանում ԱՄՆ հետապնդած շահերի և տարվող փափուկ ուժի քաղաքականության տրամաբանության մեջ:

Այսպես, դրանց շարքում առաջինը Բաց հասարակության հիմնադրամներն են (Open Society Foundations), որը բավականին ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում և Վրաստանում: Վերջինս հովանավորվում է ամերիկացի ներդրող, բիզնես-մագնատ Ջորջ Սորոսի կողմից, ով մինչև այժմ կառույցի գործունեության համար հատկացրել է մոտ 32 մլրդ ԱՄՆ դոլլար[134]: Ըստ ԲՀՀ պաշտոնական կայքի՝ հիմնադրամի նպատակներն են կենսունակ և հանդուրժող հասարակությունների կայացմանը նպաստելը, օրենքի գերակայության, մարդու և փոքրամասնությունների իրավունքների և բազմակարծության հանդեպ հանդեպ հարգանքի

134 Վրաստանի Բաց հասարակության հիմնադրամների պաշտոնական կայքէջ, https://osgf.ge/en/about-us/

ամրապնդումը, քաղաքական, իրավական և տնտեսական համակարգերում արդարության նպաստելը, պայքարը կոռուպցիայի և մամուլի հանդեպ ճնշումների դեմ, ինչպես նաև աշխարհի ամենատարբեր գոտիներում մարգինալացված հանրություններում ապրող մարդկանց պաշտպանությունը և կյանքի որակի բարելավումը[135]:

Հայաստանում Բաց հասարակության հիմնադրամների գրասենյակը բացվել է 1997թ.-ին, և իր հիմնադրումից ի վեր իրականացրել է մոտ 47.7 մլն ԱՄՆ դոլլարի ծրագրեր: 2017թ.-ին Հայաստանի ԲՀՀ գրասենյակի բյուջեն կազմել է 3.5 մլն ԱՄՆ դոլլար, դրամաշնորհներ են տրամադրվել 147 անձանց: Ըստ պաշտոնական կայքում առկա տեղեկատվության, հատկացված գումարի կեսը ուղղվել է մարդու իրավունքների ոլորտում բարեփոխումներին, 30%-ը՝ ժողովրդավարական գործընթացներին և հակակոռուպցիոն ծրագրերին, և 10-ական տոկոս՝ կրթության և առողջապահության ոլորտներին: Բացի այդ, 1997թ.-ից ի վեր ազատ մամուլի կայացման նպատակով ծախսվել է մոտ 5 մլն ԱՄՆ դոլլար[136]:

Վրաստանում ևս 1993թ.-ից գործում է ԲՀՀ գրասենյակը, որի օրակարգը բավականին մոտ է Երևանում գործող գրասենյակի գործունեությանը այն տարբերությամբ, որ 1994-2018թ. Վրաստանում իրականացված ծրագրերի վրա ԲՀՀ Թբիլիսիի գրասենյակի կողմից ծախսվել է մոտ 100 մլն ԱՄՆ դոլլար[137]:

---

135 Բաց հասարակության հիմնադրամների պաշտոնական կայքէջ, https://www.opensocietyfoundations.org/

136 Հայաստանի Բաց հասարակության հիմնադրամների պաշտոնական կայքէջ, http://www.osf.am/about-company/who-we-are/

137 Վրաստանի Բաց հասարակության հիմնադրամների պաշտոնական կայքէջ, https://osgf.ge/en/about-us/

Բացի Բաց հասարակության հիմնադրամից տարածաշրջանում ակտիվ գործունեություն է ծավալում Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (National Democratic Institute), որը ներկայումս գրասենյակներ ունի աշխարհի 156 երկրներում: ԱԺԻ-ի հռչակված նպատակներն են աջակցությունը ժողովրդավարական կառավարմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը, քաղաքացիական մասնակցության խթանմանը, գենդերային հավասարության ամրապնդմանը[138]: Վերջինս գրասենյակներ ունի Երևանում՝ 1994թ.-ից և Թբիլիսիում՝ 2003թ.-ից: Բաքվում ԱԺԻ-ի գրասենյակը գործել է մինչև 2014թ. (բացվել էր 1995թ.), որից հետո պիտակավորվել է որպես հակապետական և փակվել է իշխանությունների ճնշումների հետևանքով: Հայաստանում և Վրաստանում ինստիտուտի գործունեությունը հիմնականում միտված է եղել քաղաքացիական հասարակության կայացմանը աջակցություն ցուցաբերելուն, ինչպես նաև կանանց քաղաքական մասնակցությանը բարձրացմանը: Հենց ԱԺԻ-ի օժանդակությամբ 2018թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրային հեռուստատեսության հետ համագործակցությամբ կայացավ ՀՀ խորհրդարանական ընտրությունների մասնակից բոլոր ուժերի առաջին համարների միջև իր բնույթով աննախադեպ նախընտրական բանավեճը:

Տարածաշրջանում ակտիվ ամերիկյան կազմակերպությունների շարքում պետք է նշել նաև Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (International Foundation for Election Systems), որը ներկայացված է Հայաստանում և Վրաստանում: Այդ կառույցի հիմնական գործառույթները առնչվում են «արդյունավետ կառավարմանը» և քաղաքացիական

[138] Ազգային ժողովրդավարական ինստիտուտի պաշտոնական կայքէջ, https://www.ndi.org/what-we-do

հասարակության կայացմանը նպաստելուն, ընտրական մեխանիզմների թափանցիկության ապահովմանը: Այսպես, օրինակ, Վրաստանում ԸՀՄՀ-ն 2014թ.-ից իրականացնում է հնգամյա ծրագիր՝ ժողովրդավարական ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման և հասարակության բոլոր խմբերի համար ներգրավվածության ապահովման ուղղությամբ[139]: Իսկ Հայաստանում 2018թ. սեպտեմբերից ընթացքի մեջ է «Ընտրությունների և քաղաքական գործընթացների աջակցության» քառամյա ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է 8մլն ԱՄՆ դոլլարի աջակցություն՝ Հայաստանի ընտրական համակարգում բարեփոխումների իրականացման համար[140]:

Ամերիկյան ոչ պետական կառույցների շարքում ուշադրության է արժանի նաև Եվրասիա հիմնադրամի գործունեությունը, որը կենտրոնացած է գերազանցապես քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների հետ աշխատանքի վրա: Այս կառույցն իր գործունեությունը սկսել է 1993թ.-ին՝ ի սկզբանե կենտրոնանալով հետխորհրդային տարածաշրջանի վրա, իսկ 2000-ականների սկզբին նաև ընդլայնվել է դեպի Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա, ինչպես նաև Չինաստան[141]: Այն ներկայումս գրասենյակներ ունի Երևանում, Թբիլիսիում և Բաքվում: Հատկանշական է այս կառույցի կողմից Հայաստան-Թուրքիա և Հայաստան-Ադրբեջան «երկխոսության» ուղղված մոտ 1 տասնյակ ծրագրերի իրականացումը[142]: Հիմնադրամի

139 Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայքէջ, https://www.ifes.org/georgia
140 U.S. Embassy Officials Discuss Elections Assistance with Armenia’s Central Electoral Commission, 21.11.2018, https://am.usembassy.gov/elections-assistance/
141 Եվրասիա հիմնադրամի պաշտոնական կայքէջ, https://www.eurasia.org/WhereWeWork
142 Եվրասիա հիմնադրամի պաշտոնական կայքէջի Հայաստանում իրականացված ծրագրերի բաժին, https://epfarmenia.am/program-portfolio#152

պաշտոնական կայքում առկա տեղեկատվությունն ընդհանրական բնույթի է, սակայն թույլ է տալիս պատկերացում կազմել, որ այդ ծրագրերի շրջանակներում իրականացվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, «կարծիք ձևավորողների», լրագրողների, հասարակական գործիչների համար տարատեսակ վերապատրաստումներ, որոնք, ըստ հիմնադրամի, պետք է նպաստեն կողմերի միջև փոխվստահության կառուցմանը և հասարակությունների երկխոսությանը:

Տարածաշրջանում ԱՄՆ փափուկ ներկայության հաջորդ կարևոր բաղադրիչը կրթական մեխանիզմներն են: Մասնավորապես, կրթական հաստատությունների ներկայացվածության և կրթական փոխանակումների առումով ԱՄՆ-ն ունի բավականին ամուր դիրքեր: Տարածաշրջանի երկրներում ԱՄՆ հովանավորությամբ գործում են մի շարք կրթական հաստատություններ՝ հիմնականում բարձրագույն կրթության ոլորտում: Այսպես, տարածաշրջանում առաջին նմանատիպ հաստատությունը 1991թ.-ից Հայաստանում բացված Հայաստանի ամերիկյան համալսարանն է, որում ներկայումս բոլոր կրթական ծրագրերով սովորում է մոտ 1800-2000 ուսանող[143]: Հատկանշական է, որ եթե մինչև 2013թ.-ը ՀԱՀ առաջարկում էր բակալավրի կրթական ծրագրեր, ապա 2013թ-ից՝ նաև մագիստրոսի: Պետք է նշել, որ ՀԱՀ-ի բացման գործում մեծ ներդրում ուներ ամերիկահայ համայնքը, իսկ ֆինանսավորման հարցում առանցքային դերակատարություն ուներ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ): Ուսումնասիրության առանձին առարկա է ռազմական

---

143 Հայաստանի ամերիկյան համալսարանի 2016-2017 ուս. տարվա ամփոփ տվյալներ, https://ira.aua.am/files/2012/02/2016-2017-Factsheet-arm-final.pdf

կրթության կատարելագործումը: Մասնավորապես, Հ. Քոթանջյանի կարծիքով, ԱՄՆ-ն, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով (ՆԱՏՕ) անկյունաքարային նշանակություն ունեցավ Հայաստանում ռազմական բարեփոխումների և հատկապես ռազմական կրթության բաղադրիչի զարգացման ուղղությամբ[144]:

Վրաստանում ևս գործում է Ամերիկյան համալսարան, որը պաշտոնապես հիմնադրվել է 2001թ.-ին՝ սկզբնական շրջանում հանդես գալով որպես իրավունքի դպրոց: ՎԱՀ-ի բացման գործում առանցքային դերակատարություն է ունեցել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի հարցերով Վրաստանի կառավարությունում ԱՄՆ խորհրդական Մայքլ Քոուգիլլը, ով ներկայումս զբաղեցնում է համալսարանի ռեկտորի պաշտոնը: ՎԱՀ-ի հովանու ներքո գործում են Բիզնեսի; Իրավունքի, սոցիալական գիտությունների և դիվանագիտության; Ինֆորմատիկայի և ինժեներիայի; ինչպես նաև Բանասիրության և ազատ արվեստի դպրոցներ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այստեղ մինչ այժմ նմանատիպ կրթական հաստատություն չի բացվել:

Կրթական գործիքակազմի կարևոր բաղադրիչ են ուսանողական փոխանակման ծրագրերը: Երևանում, Թբիլիսիում և Բաքվում գործում են Միջազգային կրթության ամերիկյան խորհրդի գրասենյակները, որոնք տեղում փոխանակման ծրագրերը կոորդինացնող հիմնական մարմիններն են՝ մասնագիտացած է **FLEX**, **PFP** և այլ ձևաչափերով

[144] Տե՛ս **Kotanjian H.**, Managing Strategic Changes Through DEEP Reforms: A View from the Perspective of U.S.–Armenia "Smart Power" Cooperation, Connections, Vol. 11, No. 4, Fall 2012,, p. 84-87

փոխանակումների, ինչպես նաև ԱՄՆ-ում ուսանելու համար տարատեսակ կրթաթոշակների տրամադրման մեջ[145]:

Ընդհանուր առմամբ, տարածաշրջանի երկրներից ԱՄՆ-ում տարատեսակ փոխանակման ծրագրերով սովորող ուսանողների քանակը 2016/2017 և 2017/2018թթ. ուսումնական տարիներին ունեցել է հետևյալ պատկերը[146]՝

| | **2016/2017թթ.** | **2017/2018թթ.** |
|---|---|---|
| **Հայաստան** | 280 | 313 |
| **Վրաստան** | 558 | 597 |
| **Ադրբեջան** | 386 | 426 |

Կրթության բաղադրիչին զուգահեռ, ԱՄՆ-ը տարածաշրջանում բավականին ակտիվ ներկայություն ունի նաև մշակութային մեխանիզմների մասով: Այս ոլորտում գործառույթների իրականացման հիմնական օղակը տարածաշրջանի երկրներում ԱՄՆ դեսպանություններն են և դրանց կազմում գործող Հասարակայնության հետ կապերի գրասենյակը, որի կողմից պարբերաբար իրականացվում են մշակութային միջոցառումներ: Դեսպանությունում սովորաբար առկա է մշակութային հարցերով սպայի հաստիք, ում պատասխանատվության ոլորտում են գտնվում մշակութային միջոցառումները:

[145] Հայաստանի Ամերիկյան խորհրդի պաշտոնական կայքէջ, http://americancouncils.am/american-councils-armenia/

[146] 2018 Open Doors report, International Student Exchange Data by Places of Origin, https://www.iie.org/Research-and-Insights/Open-Doors/Data/International-Students/Places-of-Origin

Այս համատեքստում պետք է նշել, որ տարածաշրջանի բոլոր 3 երկրներում ԱՄՆ դեսպանությունների հովանավորությամբ գործում են այսպես կոչված Ամերիկյան անկյուններ, որոնց թիվը վերջին տարիներին հասել է 650-ի՝ աշխարհի մոտ 150 երկրներում[147]: Այս կենտրոնները սովորաբար գործում են դպրոցների, գրադարանների տարածքում, այնտեղ կարելի է տեղեկություններ ստանալ ԱՄՆ-ում ուսանելու հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև ծանոթանալ ամերիկյան գրականությանը, ամսագրերին, ֆիլմերին և այլն: Ընդհանուր առմամբ, դրանք ԱՄՆ-ի և ամերիկյան մշակույթի մասին հանրային իրազեկման յուրատեսակ տեղայնացված գործիքներ են: Այսպես, Հայաստանում ներկայումս գործում է 5 նմանատիպ կենտրոն, Վրաստանում՝ 10-ը, Ադրբեջանում՝ 5-ը: Հատկանշական է, որ այդ կենտրոնները գտնվում են տարածաշրջանի 3 երկրների տարբեր քաղաքներում՝ այդպիսով որոշակի որոշակի ներկայացվածություն ապահովելով երկրների ամբողջ տարածքում:

Տարածաշրջանում ԱՄՆ փափուկ ներկայության մյուս կարևոր բաղադրիչը տեղեկատվական մեխանիզմներն են: Նույնիսկ հպանցիկ հայացք նետելով տարածաշրջանում գործունեություն ծավալող արտաքին լրատվամիջոցների պատկերին՝ կարելի է պնդել, որ տեղեկատվական մեխանիզմների հագեցվածությամբ տարածաշրջանում ԱՄՆ-ի միակ մրցակիցը թերևս Ռուսաստանն է:

Այդ մեխանիզմների շարքում թերևս ամենանշանակալին ԱՄՆ կողմից հովանավորվող Ազատություն ռադիոկայանն է, որը տարածաշրջանի

---

[147] American Corners, U.S. Embassy in Armenia, https://am.usembassy.gov/education-culture/american-corners/

բոլոր երեք երկրներում ամենալայն լսարան ունեցող լրատվամիջոցներից մեկն է: Ազատություն ռադիոկայանը հիմնադրվել և ֆինանսավորվում է 1953թ. և թեև կենտրոնակայանը տեղակայված է Պրահայում, սակայն ղեկավարվում է ԱՄՆ հեռարձակողների կառավարման խորհրդի կողմից: Այն ներկայումս Եվրոպայում և Ասիայում ԱՄՆ փափուկ ուժի տեղեկատվական ամենաարդյունավետ գործիքներից մեկն է, մոտ 20 լեզուներով հեռարձակվելու հանգամանքը դրա վառ վկայությունն է: Բացի Ազատություն ռադիոկայանից, ԱՄՆ հեռարձակողների կառավարման խորհրդի ֆինանսավորման ներքո է գտնվում նաև «Ամերիկայի ձայնը» ռադիակայանը: Վերջինս գործունեությունը ևս Հայաստանում և Վրաստանում որևէ խոչընդոտի չի հանդիպում, ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ այն ենթարկվում է պետական բռնաճնշումների:

Ադրբեջանում Ազատություն ռադիոկայանի գործունեությունը 2009թ. սկսած ենթարկվում էր պետական տարաբնույթ ճնշումների: Այն Ադրբեջանում իր գործունեությունը սկսել էր 1990-ականներից և, ըստ էության, Ադրբեջանի մեդիադաշտում այլընտրանքային տեղեկատվություն տրամադրող եզակի հարթակ էր, ադրբեջանական մեդիադաշտում ուներ ամենամեծ լսարանը, ինչի պատճառով էլ ենթարկվեց նման ճնշումների: Չնայած այդ ճնշումներին՝ մինչև 2014թ. ռադիոկայանն ուներ իր գրասենյակը Բաքվում: 2014թ. պետական իշխանությունների կողմից լրտեսության կասկածանքով մի քանի անգամ ենթարկվեց խուզարկության, մի շարք լրագրողներ

բանտարկվեցին[148]: Ձերբակալվածների թվում էր նաև Խադիջա Իսմայլովան, ով մինչ այդ ակտիվորեն բարձրաձայնում էր Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի բիզնես գործունեության մասին և ում գործը ստացավ բավականին մեծ միջազգային հնչեղություն: Խ. Իսմայլովան դատապարտվեց 3.5 տարվա պայմանական ազատազրկման, արգելքներ սահմանվեցին 2 տարի մասնագիտական գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև երկիրը լքելու վրա: 2017թ.-ից Ազատություն ռադիոկայանը կայքը, պետական անվտանգության համար սպառնալիք ներկայացնելու մեղադրանքով[149], առհասարակ դարձավ անհասանելի ադրբեջանցիների համար, թեև հասանելի է այլ երկրներում: Այս քայլը ԱՄՆ-ի և միջազգային հանրության կողմից ենթարկվեց խիստ քննադատության[150]:

Նման իրավիճակ է տիրում նաև Ամերիկայի ձայնը լրատվամիջոցի նկատմամբ, որը ամերիկյան մեկ այլ խոշոր մեդիա կորպորացիա է, թեև տարածաշրջանի երկրներում ունի ավելի համեստ լսարան: Տարածաշրջանի երեք երկրներում գործում են ռադիոկայանի կայքերը՝ տեղական լեզուներով: Ադրբեջանում Ամերիկայի ձայնը, ինչպես և Ազատությունը, 2009թ.-ից ենթարկվում է պետական ճնշումների, ինչի արդյունքում արգելվել է ռադիոակայանի հեռարձակումը ադրբեջանական ռադիոալիքներով, իսկ կայքէջը հասանելի չէ այդ երկրում:

Թբիլիսիում և Երևանում ԱՄՆ դեսպանությունների կազմում գործում են նաև Տեղեկատվական ռեսուրսների ամերիկյան

[148] Radio Station Backed by U.S. Is Raided in Azerbaijan, 28.12.2014, https://www.nytimes.com/2014/12/29/world/middleeast/radio-station-backed-by-us-is-raided-in-azerbaijan.html
[149] RFE/RL's Azerbaijani Service: Radio Azadliq list of facts, https://pressroom.rferl.org/rferl-azerbaijani-service-radio-azadliq
[150] BBG Condemns Raid of RFE/RL Baku Office, 26.12.2014, https://www.bbg.gov/2014/12/26/bbg-condemns-raid-of-rferl-baku-office/

կենտրոններ, որոնք այդ երկրների հասարակական-քաղաքական, ինչպես նաև գիտական շրջանակներում տեղեկատվություն են տրամադրում ԱՄՆ արտաքին քաղաքականության, տնտեսության, ժողովրդավարության և այլ հարցերի շուրջ[151]:

Հեռուստաալիքներից հայկական և վրացական հեռուստատեսությամբ հասանելի է ամերիկյան CNN հեռուստաալիքը:

Այսպիսով, կարելի է ասել, որ ԱՄՆ-ն տարածաշրջանում համաչափորեն ներկայացված է փափուկ ուժի մեխանիզմների ոլորտային գրեթե ամբողջ սպեկտրով, ինչով այն տարբերվում է այստեղ ներգավված մնացյալ դերակատարներից:

## 2.2. ԵՄ փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում՝ որպես նորմատիվ ուժի դրսևորում

Տարածաշրջանում փափուկ ուժի բավականին լայն գործիքակազմ կիրառող հաջորդ համաշխարհային դերակատարը Եվրոպական Միությունն է: Արդեն հետսառըպատերազմյան առաջին տարիներից ԵՄ-ն տարածաշրջանում գործարկեց փափուկ գործիքակազմի որոշակի «նախատիպեր», սական իրապես ակտիվացավ միայն 2000-ական թվականների կեսերից: Միաժամանակ պետք է նշել, որ ԵՄ-ն՝ որպես փափուկ ուժի սուբյեկտ զգալի տարբերություններ ունի փափուկ ուժ կիրառող այլ դերակատարների համեմատ՝ պայմանավորված առաջին հերթին կառուցվածքային գործոններով: Ն. Գալստյանի կարծիքով, տարածաշրջանում ԵՄ վարած

[151] The American Center for Information Resources, US embassy in Georgia, https://ge.usembassy.gov/education-culture/american-center-information-resources/, Տեղեկատվական Ռեսուրսների Կենտրոն, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն, https://am.usembassy.gov/hy/education-culture-hy/information-resource-center-hy/

քաղաքականությունը տարբերվում է նրանով, որ, չնայած տարածաշրջանի նկատմամբ միասնական ռազմավարության բացակայությանը, այն իր քաղաքականությունն իրականացնում է հստակ մշակված ծրագրերի միջոցով՝ հենվելով, հիմնականում, իր փափուկ ուժի և հարավկովկասյան երկրներում ունեցած «ազնիվ միջնորդի» համբավի վրա[152]:

Մինչ Հարավային Կովկասում ԵՄ փափուկ ուժի մեխանիզմները ներկայացնելը՝ կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե որքանով ԵՄ-ն կարելի է համարել մեկ կոնսոլիդացված դերակատար և այն համեմատության մեջ դնել այստեղ ներգրավված մյուս դերակատարների հետ: Ինչպես հայտնի է, ներկայիս Եվրոպական Միությունն ի սկզբանե՝ 20-րդ դարի կեսերին ձևավորվել է որպես տնտեսական բլոկ՝ ստանալով Ածխի և պողպատի եվրոպական համայնք (ԱՊԵՀ), այնուհետև Եվրոպական տնտեսական համայնք (ԵՏՀ) անվանումները: Այդ ժամանակից սկսած՝ ինտեգրացիան եվրոպական տարածաշրջանում հիմնականում ընթացել է տնտեսական գործոնի շուրջ, թեև գոյություն է ունեցել արտաքին հարաբերությունների համար պատասխանատու Արտաքին հարաբերությունների եվրոպական հանձնակատարի խորհրդանշական պաշտոնը: Ընդհանուր արտաքին քաղաքականությունը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրվեց 1993թ., երբ Մաաստրիխտի համաձայնագրով ԵՏՀ-ն վերածվեց Եվրոպական Միության, առաջադրվեցին վերջինիս 3 «սյուները», որոնցից մեկն էլ հենց Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունն

152 Տե՛ս Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում, միջմասնագիտական հետազոտություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009, էջ 10-11

էր (ԸԱԱՔ): 1997թ. Ամստերդամի համաձայնագրով ստեղծվեց ԵՄ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության Բարձր ներկայացուցչի պաշտոնը, ով ԸԱԱՔ հիմնական պատասխանատուն էր և, կարելի է ասել, ԵՄ «արտգործնախարարը»: Հաջորդ կարևոր հանգրվանը 2009թ. Լիսաբոնի համաձայնագրի ստորագրումն էր, որով Միության անդամ-երկրները վերացրեցին 3 «սյուների» կառուցվածքը՝ նպատակ ունենալով ԵՄ-ին հաղորդել մեկ միասնական իրավական սուբյեկտի կարգավիճակ՝ այդպիսով, օրինակ, հնարավորություն ընձեռելով ստորագրել միջազգային համաձայնագրեր: Լիսաբոնի համաձայնագրի մեկ այլ կարևոր արդյունք էր Արտաքին հարաբերությունների եվրոպական հանձնակատարի և ԵՄ ԸԱԱՔ Բարձր ներկայացուցչի պաշտոնների միավորումը՝ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության ԵՄ Բարձր ներկայացուցչի պաշտոնում, ով պետք է համակարգեր նույն համաձայնագրով ստեղծված Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության (EEAS) գործունեությունը: Վերջինս, ըստ էության, կատարում է ԵՄ «արտաքին գործերի նախարարության»գործառույթներ:

Մյուս կողմից, պետք է նշել, որ չնայած ԸԱԱՔ-ն ներմուծվել է արդեն 1990-ականների սկզբին, փափուկ գործիքակազմի մասով միասնական արտաքին քաղաքականություն վարելու խնդիրը ԵՄ օրակարգ է մտել միայն վերջին մի քանի տարիների ընթացքում: Այսպես, 2016թ. հունիսին Եվրոպական հանձնաժողովը և Արտաքին հարաբերությունների եվրոպական ծառայությունը համատեղ ներկայացրին «Միջազգային մշակութային հարաբերությունների ԵՄ ռազմավարության վերաբերյալ» զեկույցը,

որում, ի թիվս այլոց, առաջ էին քաշվում հետևյալ մոտեցումները՝

1. Մշակութային աջակցությունը որպես սոցիալական և տնտեսական բարեփոխումների շարժիչ
2. Մշակութային համագործակցության և երկխոսության խթանումը խաղաղ միջհամայնքային կապերի ամրապնդման տեսանկյունից
3. Մշակութային ժառանգության գծով համագործակցություն[153]

2018թ. հուլիսի 5-ին Եվրոպական խորհրդարանն ընդունեց «Միջազգային մշակութային հարաբերությունների ԵՄ ռազմավարության վերաբերյալ» բանաձևը, որը դրեց ԵՄ կողմից մշակութային ընդհանուր քաղաքականության հիմքերը:

Ինչպես նշվեց, ԵՄ փափուկ ուժը որոշակի էական տարբերություններ ունի այլ դերակատարների համեմատ, ինչն առաջին հերթին պայմանավորված է ԵՄ կազմակերպական կառուցվածքով: Եթե սկզբնական շրջանում Եվրոպայի ինտեգրացիան ընթանում էր գերազանցապես տնտեսական գործոնի շուրջ, ապա ներկայումս այն թափանցել է արժեքային դաշտ՝ ԵՄ-ն դարձնելով ընդհանուր արժեքների և նորմերի վրա հիմնված դերակատար:

Արժեքային և նորմատիվային այս ընդհանրության մասին եվրոպական գիտական դիսկուրսում քննարկումներն ընթացել են դեռևս 1970-ականներից: Այսպես, 1972թ. Ֆրանսուա Դյուշենի կողմից առաջ քաշվեց ԵՄ-ի՝ որպես «քաղաքացիական ուժի» (civilian power) հայեցակարգը, որի տակ նա նկատի էր

[153] Towards an Eu Strategy for International Cultural Relations, June 2016, http://www.europarl.europa.eu/legislative-train/theme-europe-as-a-stronger-global-actor/file-eu-strategy-for-international-cultural-relations

առնում այն, որ Եվրոպան տնտեսական և քաղաքական անվտանգության ու կայունության հաջողակ մոդելի շնորհիվ գրավչության առարկա է այլ դերակատարների համար[154]: «Քաղաքացիական ուժ»-ը բավականին նմանություններ ունի մոտ 20 տարի հետո գիտական շրջանառության մեջ մտցված փափուկ ուժ եզրի հետ՝ հաշվի առնելով, որ երկու եզրների կենտրոնական կատեգորիաներից մեկը գրավչությունն է:

ԵՄ-ի փափուկ ուժի շուրջ քննարկումների հաջորդ կարևոր հանգրվանը 2002թ. Իան Մաններսի «Եվրոպան որպես նորմատիվ ուժ. հակասությու՞ն եզրերում» հոդվածն էր, որտեղ վերջինս առաջ քաշեց ԵՄ-ի՝ որպես նորմատիվ ուժ հանդես գալու գաղափարը՝ այն հակադրելով «Ռազմական Եվրոպայի» գաղափարին[155]: Եթե Ֆ. Դյուշենը ԵՄ գրավչությունը հիմնականում տեսնում էր տնտեսական և քաղաքական հաջողությունների մեջ, ապա Ի. Մաններսը այն հիմնավորեց նաև ԵՄ-ին ներհատուկ արժեքային և նորմատիվային համակարգերի մեջ: Նրա կարծիքով, ԵՄ-ն դարձել է կառավարման վերպետական և միջազգային մոդելների հիբրիդ, որը դուրս է միջազգային հարաբերությունների Վեստֆալյան (պետականակենտրոն) ընկալումից, և որը ԵՄ-ի նորմատիվ ուժի առանցքային աղբյուրն է: Ի. Մաններսի կարծիքով, ԵՄ-ի՝ որպես նորմատիվ դերակատար հանդես գալու հիմքում ընկած են 5 հիմնարար սկզբունքներ՝ ԵՄ հավատարմությունը խաղաղության, ազատության, ժողովրդավարության, իրավունքի գերակայության, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության արժեքներին:

---

154 Տե՛ս **Duchêne F.**, Europe’s Role in World Peace, In Mayne, R. (ed.) Europe Tomorrow: Sixteen Europeans Look Ahead (London: Fontana), 1972, p. 32–47

155 Տե՛ս **Manners I.**, Normative Power Europe: A Contradiction in Terms? // JCMS 2002, Volume 40, Number 2, p. 235-258

Անկյունաքարային նշանակություն ունի Մանների կողմից առաջ քաշված նորմերի «տարրալուծման» մոդելների տիպաբանությունը, որը շատ նման է ավելի վաղ քննարկված փափուկ ուժի մեխանիզմների Ս.Ռոթմանի տիպաբանությանը: Այդ 6 ձևերն են՝

1) Ոչ միտումնավոր տարրալուծում, որն առավել մոտ է ընդօրինակման երևույթին

2) Տեղեկատվական տարրալուծում, որը ենթադրում է ռազմավարական հաղորդակցային խողովակների օգտագործում նորմերի տարածման համար

3) Ընթացակարգային տարրալուծում, որը տեղի է ունենում արտաքին դերակատարի հետ հարաբերությունների ինստիտուցիոնալացմամբ՝ պայմանագրի կնքմամբ, այդ երկրի՝ ԵՄ-ին անդամակցությամբ և այլն

4) Նորմերի «փոխանցում» տնտեսական հարաբերությունների՝ մարդու և կապիտալի արտահանման միջոցով

5) Բացահայտ տարրալուծում, որն այս կամ այն ձևաչափով ԵՄ-ի ուղղակի ներկայության հետևանքն է «թիրախ»երկրում

6) Մշակութային տարրալուծում, որը տեղի է ունենում միջմշակութային շփման միջոցով

Մանները ԵՄ-ի՝ որպես նորմատիվ ուժի վերոնշյալ տարալուծման եղանակների հաջող դրսևորման օրինակ է բերում մահապատժի վերացման դեմ արշավն ամբողջ աշխարհում[156]:

Տարրալուծման մոդելների այս ամբողջությունը ամփոփվում է «եվրոպականացում»

[156] Նույն տեղում

եզրի շրջանակներում, որը Մ.Յակոբյանի կարծիքով, եվրոպական արժեհամակարգի տարածման հիմնական մեխանիզմն է: Ավելին, հիմնականում ԵՄ-ն է սահմանում երրորդ երկրների հետ հարաբերությունների շրջանակն ու զարգացման օրակարգը, որտեղ, օգտագործելով արտաքին կառավարումը որպես գործիք, նպաստում է այդ երկրների քաղաքական փոխակերպմանը, ինչը մեկ բառով կարելի է բնորոշել որպես եվրոպականացում[157]:

Ինչպես նշվեց, Հարավային Կովկասում ԵՄ կողմից փափուկ գործիքների «նախատիպերի» կիառության կարելի է ականատես լինել արդեն հետսառըպատերազմյան առաջին տարիներից: Պետք է նշել, որ ի տարբերություն հարևան այլ տարածաշրջանների՝ ԵՄ փափուկ ուժի քաղաքականությունը Հարավային Կովկասում հատկապես խնդրահարույց է՝ հաշվի առնելով ներգրավված դերակատարների այն խճանկարը, որն առկա է տարածաշրջանում: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ԵՄ կողմից կիրառվող փափուկ ուժի մեխանիզմների դինամիկան մեծապես փոխկապակցված է Միության աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական՝ մասնավորապես էներգետիկ շահերի հետ: Մի շարք հեղինակներ հիմնավորում են այն տեսակետը, որ կարելի է նույնիսկ տեսնել որոշակի փոխկապվածություն կոնկրետ փափուկ ուժի մեխանիզմների և ԵՄ համար կենսական

[157] Տե՛ս **Յակոբյան Մ.**, «Արևելյան Գործընկերություն» ծրագրի գործառման համեմատական վերլուծությունը Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի օրինակով, ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2018, էջ 34-35

նշանակություն ունեցող էներգետիկ ծրագրերի գործարկման միջև[158]:

Ն. Գալստյանի կարծիքով, ԵՄ-ի նորմատիվ ուժը հանգում է եվրոպական քաղաքական մշակույթի և պրակտիկայի տարածմանը «թիրախ» երկրներում: Ընդ որում, այդ բուն նորմատիվ քաղաքականությունը իրականացվում է երկու մեխանիզմների միջոցով՝ փոխպայմանավորման և սոցիալականացման: Եթե առաջինի դեպքում պետությունների քաղաքական համակարգերի ժողովրդավարացումը խրախուսվում է որոշակի նյութական և այլ միջոցներով, ԵՄ-ի հետ շփումներում որոշակի առավելությունների տրամադրմամբ (օրինակ ազատ առևտրի գոտի և այլն), ապա սոցիալականացման դեպքում ԵՄ արժեքներն ու նորմերը «թիրախ» երկրում տարածվում են ԵՄ-ի հետ այս կամ այն ձևաչափով սերտ փոխգործակցության միջոցով[159]: Այդ երկու մեխանիզմների կիրառության միջոցով ԵՄ-ի ունակ է այլ դերակատարներին տեղ առաջարկելու «մեծ սեղանի շուրջ», ինչը ԵՄ փափուկ ուժի առանցքն է: Այդ երկու մեխանիզմների կիրառությանը կարելի է ականատես լինել նաև Հարավային Կովկասում:

Տարածաշրջանում ԵՄ փափուկ ուժի մեխանիզմներից առաջինը 1991թ. գործարկված ԱՊՀ երկրներին տեխնիկական օժանդակության գործիքն էր (TACIS), որի հռչակված նպատակն ԱՊՀ տարածքի երկրներին շուկայական տնտեսության կայացման ժամանակահատվածում տեխնիկական

[158] Տե՛ս **Թերզյան Ա.**, Էներգետիկ շահերի ապահովման հիմնահարցը Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականության մեջ (քաղաքական չափումներ), թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2014, էջ 72

[159] Տե՛ս **Գալստյան Ն.**, Հայաստանի եվրոպական ինտեգրման քաղաքական չափումները, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2006, էջ 85

օժանդակության ցուցաբերումն էր՝ կենտրոնանալով ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումների, ենթակառուցվածքների զարգացման վրա[160]:

Համագործակցությունն ինստիտուցիոնալ տեսք ստացավ 1996թ. տարածաշրջանի երեք երկրների հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի (ԳՀՀ) կնքմամբ, որոնք ուժի մեջ մտան 1999թ.-ից: Այդ համաձայնագրերով ամրագրվում էր քաղաքական, իրավական, սոցիալական, տնտեսական, ֆինանսական, գիտական, քաղաքացիական և մշակութային հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը, ժողովրդավարության, ԵՄ կողմից տարածաշրջանի երկրներում իրավունքի գերակայության սկզբունքների, մարդու իրավունքների պաշտպանության և շուկայական տնտեսության անցմանը աջակցության ցուցաբերումը[161]: Քանի որ ԳՀՀ առանցքային նպատակ էր սահմանվում գործընկեր երկրների քաղաքական համակարգերի ժողովրդավարացմանը նպաստելը, այն կարելի է համարել ԵՄ փափուկ ուժի քաղաքական մեխանիզմի յուրատեսակ նախատիպ:

Պետք է նշել, որ տարածաշրջանի կարևորությունը ԵՄ-ի արտաքին քաղաքականության մեջ հատկապես ընդգծվեց 2004թ. ընդլայնման ալիքից հետո՝ թեև նույնիսկ դրանից հետո ԵՄ-ն որևէ ընդհանուր սահման չուներ այս տարածշրջանի հետ: Ս. Ջոունսի կարծիքով՝ տարածաշրջանը հայտնվեց ԵՄ անմիջական ուշադրության կենտրոնում Վրաստանում Վարդերի հեղափոխությունից հետո, երբ այդ երկիրը հայտարարեց Արևմտյան

---

160 TACIS (Technical Assistance to the Commonwealth of Independent States and Georgia), Official website of the European Commission, http://europa.eu/rapid/press-release_MEMO-92-54_en.htm

161 EUR-LEX, Access to European Union Law, Partnership and Cooperation Agreements (PCAs): Russia, Eastern Europe, the Southern Caucasus and Central Asia, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM%3Ar17002

ինտեգրացիոն կառույցներին միանալու իր մտադրության մասին[162]: Կարծում ենք՝ դա կարելի է բացատրել նաև մինչ այդ Արևելյան Եվրոպայի և Բալկանների խնդիրների՝ ԵՄ-ի ուշադրության կենտրոնում գտնվելու և և վերջիններիս՝ եվրոպական տարածք ինտեգրելու գործընթացով:

2003թ. մարտին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց «Ավելի լայն եվրոպական հարևանության մասին» փաստաթուղթը, որտեղ նշվում էր, որ ԵՄ-ն պարտավորություններ ունի ոչ միայն իր անդամ-երկրների քաղաքացիների, այլև հարևան և ապագա հարևան երկրների հանդեպ՝ ապահովելու շարունակական սոցիալական համախմբվածություն և տնտեսական դինամիզմ[163]: Նույն տարվա դեկտեմբերին լույս տեսած ԵՄ-ի անվտանգության ռազմավարության մեջ Հարավային Կովկասը մատնանշվեց առաջին անգամ՝ հետևյալ ձևակերպմամբ. «Մենք պետք է ավելի ուժեղ և ակտիվ հետաքրքրվածություն ցուցաբերենք Հարավային Կովկասի խնդիրների հանդեպ, որը ժամանակի ընթացքում դառնալու է հարևան տարածաշրջան[164]»: 2004թ. ստեղծվեց նաև Հարավային Կովկասում Եվրոպական Միության հատուկ ներկայացուցչի պաշտոնը:

Այս ժամանակաշրջանը համընկավ ԵՄ գործիքակազմում նոր՝ Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ներմուծման հետ, որը փոխարինեց TACIS ծրագրին և որի հիմքում դրվեց այն մոտեցումը, որ ԵՄ-ի հարևան՝ հատկապես հարավային և արևելյան տարածաշրջանների կայունությունն

---

[162] Տե՛ս Jones S., The Rose Revolution: A Revolution Without Revolutionaries? // Cambridge Review of International Affairs, 19 (1), 2006, p. 46

[163] European Commission. Wider Europe – Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours, Brussels, 2003, p.3, http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/com03_104_en.pdf

[164] European Security Strategy: A Secure Europe In A Better World, Brussels, 2003, p. 5, https://www.cvce.eu/obj/european_security_strategy_a_secure_europe_in_a_better_world_brussels_12_december_2003-en-1df262f2-260c-486f-b414-dbf8dc112b6b.html

ու անվտանգությունը ուղղակի ազդեցություն ունեն Եվրոպայի վրա: Ըստ էության, ԵՀՔ ներմուծմամբ հարևան տարածաշրջաններում փափուկ ուժի կիրառումը ստացավ հայեցակարգային ամրագրում: Հարավային Կովկասում ԵՀՔ շրջանակներում գրանցված առաջին շոշափելի ձեռքբերումը 2006թ. տարածաշրջանի երեք երկրների հետ ստորագրված Գործողությունների ծրագրերն էին, որոնց մեջ առանցքային նշանակություն տրվեց ժողովրդավարացման, մարդու իրավունքների պաշտպանության, իրավունքի գերակայության սկզբունքներին, իրավական բարեփոխումների, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը[165]:

Այդուհանդերձ, ի սկզբանե ԵՄ-ն գիտակցում էր, որ «հարևանության» նման լայն բնորոշումը որոշակի խնդիրներ էր ստեղծում ԵՄ-ի համար, քանի որ ընդհանուր մոտեցումների կիրառումը միմյանցից էականորեն տարբերվող երկրների և տարածաշրջանների համար կաղում էր արդյունավետության տեսանկյունից: Այդ բացը լրացնելու և ավելի թիրախային ու տարբերակված մոտեցում ցուցաբերելու նպատակով հարավային հարևանների հետ համագործակցությունը իր ձևաչափային ամրագրումը ստացավ 2008թ. Միջերկրածովյան միության շրջանակներում: 2009թ. Պրահայում ԵՄ անդամ-պետությունների ղեկավարների, ինչպես նաև ստեղծվելիք ձևաչափի 6 մասնակից երկրների ղեկավարների մակարդակով տեղի ունեցած գագաթաժողովում գործարկվեց ԵՄ Արևելյան գործընկերությունը (ԱլԳ), որը համագործակցության յուրատեսակ ձևաչափ էր

165 Երեք գործողությունների ծրագրերի ավելի մանրամասն համեմատական վերլուծության համար տե՛ս “Analysis of European Neighbourhood Policy (ENP Action Plans for South Caucasus: Armenia, Azerbaijan and Georgia)”, http://pdc.ceu.hu/archive/00003063/01/Analyses_of_European_Neghbourhood_Policy.pdf

արևելյան հարևանների՝ Բելառուսի, Մոլդովայի, Ուկրաինայի, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար: Ձևաչափի գործարկման մեջ ԵՄ անդամ-երկրներից մեծ դեր էին խաղացել հատկապես Լեհաստանն ու Շվեդիան:

Հեղինակների մի մասի կարծիքով, ԵՄ ԱլԳ ձևաչափի գործարկումը պետք է դիտարկել ավելի լայն համատեքստում՝ տարածաշրջանում ԵՄ էներգետիկ քաղաքականության դիտանկյունից: Մասնավորապես, նույն տարվա ընթացքում նաև Հարավային գազային միջանցքի գործարկումը, որը ԵՄ-ն սնուցող այլընտրանքային էներգետիկ աղբյուրներից մեկն է, խոսուն վկայությունն է նրա, որ ԵՄ-ի համար տարածաշրջանում հետապնդվող նպատակները սերտորեն փոխկապակցված են էներգետիկ շահերի առաջմղման հետ[166]:

ԱլԳ ձևաչափը մինչ այդ գործարկված փափուկ ուժի մեխանիզմների համեմատ ենթադրում է շատ ավելի համապարփակ և ընդլայնված համագործակցություն: ԱլԳ շրջանակներում առանձնացվում են 4 հիմնական թեմատիկ հարթակներ, որոնց շուրջ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով ծավալվում է համագործակցություն: Այդ 4 հիմնական հարթակներն են՝

1) Քաղաքական ինստիտուտների ուժեղացում և արդյունավետ կառավարում

2) Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ

3) Փոխկապակցվածություն, էներգաարդյունավետություն,

[166] Տե՛ս **Թերզյան Ա.**, նշվ. աշխ., էջ 72

բնապահպանություն և կլիմայական փոփոխություններ

4) Սոցիալական շարժունություն, քաղաքացիական հասարակության ներգրավում[167]

Հենց այս 4 հիմնական հարթակների շրջանակներում էլ իրականցվում է տարածաշրջանի երկրներին ֆինանսական օժանդակության ցուցաբերումը, որն իրականացվում է այսպես կոչված Եզակի աջակցության ծնաչափերի (Single Support Framework) միջոցով: Այսպես, վերջին տարիների ընթացքում հատկացված և հատկացվելիք ֆինանսական օժանդակության ծավալների մասով գրանցվել է հետևյալ պատկերը (տվյալները ներկայացված են ԱՄՆ դոլլարով)՝

| | **2014-2017թթ.** | **2017-2020թթ.** |
|---|---|---|
| **Հայաստան** | 140-170մլն[168] | 144-176մլն[169] |
| **Վրաստան** | 335-410մլն[170] | 371-453մլն[171] |
| **Ադրբեջան** | 77-94մլն[172] | 42-51մլն[173] |

2017-2020թթ. ֆինանսական օժանդակությունն ըստ հարթակների բաշխվել է հետևյալ կերպ՝

[167] EAP Platforms and Panels, EP Civil Society Forum, https://eap-csf.eu/eap-platforms-and-panels/

[168] Programming of the European Neighbourhood Instrument (ENI) - 2014-2020 Single Support Framework for EU support to Armenia (2014-2017), p.7 https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_2014_2017_programming_document_en.pdf

[169] Summary of the EU Armenia ENI Single Support Framework 2017-2020, p.2, https://www.gtai.de/GTAI/Content/DE/Trade/Fachdaten/PRO/2017/08/Anlagen/PRO201708115014.pdf?v=1

[170] European Neighbourhood Instrument (ENI) 2014-2020 – Single Support Framework for EU Support to Georgia (2014-2017), p.2, http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/financing-the-enp/georgia_2014_2017_summary_of_the_programming_document_en.pdf

[171] Programming of the European Neighbourhood Instrument (ENI) – 2017-2020 - Single Support Framework for EU support to Georgia (2017-2020),p.8, https://eeas.europa.eu/sites/eeas/files/georgia_2017-2020_ssf_final.pdf

[172] Programming of the European Neighbourhood Instrument (ENI) - 2014-2020 Single Support Framework for EU support to Azerbaijan (2014-2017), p.8, https://library.euneighbours.eu/content/single-support-framework-eu-support-azerbaijan-2014-2017

[173] Ադրբեջանի պարագայում ներկայացված են 2018-2020թթ. տվյալները, տե՛ս Programming of the European Neighbourhood Instrument (ENI)-2018-2020-Single Support Framework for EU support to Azerbaijan, p.7, https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/c_2018_8075_f1_annex_en_v2_p1_991117.pdf

| | Քաղաքական ինստիտուտների ուժեղացում և արդյունավետ կառավարում | Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ | Փոխկապակցվածություն, էներգաարդյունավետություն, բնապահպանություն և կլիմայական փոփոխություններ | Սոցիալական շարժունություն, քաղաքացիական հասարակության ներգրավում | Լրացուցիչ |
|---|---|---|---|---|---|
| Հայաստան | 20% | 40% | 15% | 10% | 15 |
| Վրաստան | 20% | 40% | 15% | 10% | 15 |
| Ադրբեջան | 15% | 25% | 15% | 25% | 10 |

Հատկանշական է, որ 2019թ. մարտի 5-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ կայացած հանդիպման ժամանակ Եվրոպական խորհրդարանի նախագահ Դոնալդ Տուսկը հայտարարեց, որ հաշվի առնելով Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները՝ «ԵՄ-ն պատրաստակամ է ավելի նշանակալի տեխնիկական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերել Հայաստանին բարեփոխումների իրականացման գործում»[174]: Մինչ այդ՝ 2018թ. սեպտեմբերին Եվրոպական հարևանության և ընդլայնման բանակցությունների հանձնակատար Յոհաննես Հահնը նշել էր, որ «ԵՄ-ն, ողջունելով Հայաստանում ժողովրդավարական փոփոխությունները, լրացուցիչ ֆինանսական օժանդակություն կտրամադրի Հայաստանին արդեն

[174] The European Union welcomes the Armenian government’s ambitious reform agenda and is ready to support it with greater aid, 05.03.2019, https://mirrorspectator.com/2019/03/07/eu-vows-stronger-support-for-reform-process-in-armenia/

այս տարի»[175]: Լրացուցիչ օժանդակության ծավալների մասին պաշտոնյաները որևէ տեղեկատվություն չեն հայտնել:

ԱլԳ ձևաչափի կարևորագույն բաղադրիչներից մեկը Ասոցացման համաձայնագրերի մեխանիզմն է, որն, ըստ էության, փոխարինել է մինչ այդ գործող Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի մեխանիզմին: ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրումը ենթադրում է ուժեղացված քաղաքական երկխոսություն, ավելի սերտ համագործակցություն արդարադատության և անվտանգության բնագավառներում: Ասոցացման համաձայնագրերի կարևոր բաղկացուցիչ մասն է Խորը և համապարփակ առևտրի մասին համաձայնագիրը,որը

- բարելավում է ապրանքների և ծառայությունների հասանելիությունը

-նվազեցնում է առևտրի խոչընդոտները

- ապահովում է կայուն իրավական մթնոլորտ

- ենթադրում է նորմերի և ընթացակարգերի համաձայնեցում[176]

Ներկայումս տարածաշրջանի երկրներից ԵՄ-ի հետ Ասոցացման, ինչպես նաև Խորը և համապարփակ առևտրի մասին համաձայնագիր ունի միայն Վրաստանը: Ակնկալվում էր, որ Հայաստանը 2013թ. նոյեմբերին ԱլԳ Վիլնյուսի գագաթաժողովում ևս Ասոցացման համաձայնագիր կստորագրի ԵՄ-ի հետ, սակայն ՀՀ-ն 2013թ. սեպտեմբերին ընտրություն կայացրեց հօգուտ Մաքսային միության, ինչը

---

175 «Հայաստանը կարող է ակնկալել ԵՄ-ի հետևողական օժանդակությունը», Յոհաննես Հան, 26.09.2018, https://www.azatutyun.am/a/29510148.html

176 Free trade agreements (DCFTA), Eastern Partnership, https://www.consilium.europa.eu/en/policies/eastern-partnership/

անիրատեսական դարձրեց Ասոցացման համաձայնագրի ստորագրումն առնվազն այդ կառուցվածքով: Ներկայումս, որը ստորագրվել է Փոխարենը 2017թ. նոյեմբերին Բրյուսելում՝ ԱլԳ գագաթաժողովի շրջանակներում Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրվեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA), որը ներկայումս համագործակցության հիմնական ձևաչափն է: Այն մասնակիորեն ուժի մեջ է մտել 2018թ. հունիսի 1-ից: Վերջինիս հիմնական տարբերությունը ի սկզբանե նախատեսվող Ասոցացման պայմանագրից ազատ առևտրի մասին դրույթների կրճատումն է[177]: Այն, ըստ էության, սահմանում է համագործակցային այն դաշտը, որի շրջանակներում կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում կարելի է ակնկալել ԵՄ-ի կողմից փափուկ գործիքակազմի կիրառում: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ համաձայնագիրը ամբողջապես ուժի մեջ կմտնի ԵՄ անդամ բոլոր երկրների կողմից հաստատվելուց հետո:

Տարածաշրջանի երկրներից մյուսը՝ Ադրբեջանը, Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ չլինելու պատճառով Ասոցացման համաձայնագիր չստորագրեց ԵՄ-ի հետ: Դրա փոխարեն 2017թ.-ից ընթանում են ԵՄ-ի և Ադրբեջանի միջև առանձին փաստաթղթի ստորագրման շուրջ բանակցություններ:

ԱլԳ շրջանակներում համագործակցության արդյունքների մասին խոսուն փաստաթուղթ է ամեն տարի հրապարակվող Արևելյան գործընկերության ինդեքսը: Այն բաղկացած է 6 բաղադրիչներից, որոնց միջոցով գնահատվում են մասնակից երկրներից

[177] Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) Between The European Union and The European Atomic Energy Community and Their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part, p. 10-11, https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf

յուրաքանչյուրի հետ կոնկրետ ոլորտներում ունեցած համագործակցության մակարդակը և գրանցված արդյունքները: Կարելի է ասել, որ այդ ինդեքսը ԵՄ-ի՝ Հարավային Կովկասում փափուկ ուժի քաղաքական մեխանիզմների արդյունավետության ինքնագնահատականն է: Այսպես, 2017թ. ինդեքսի շրջանակներում տարածաշրջանի երկրները գրանցել են հետևյալ ցուցանիշները (0-ն վազագույն, 1-առավել ագույն)[178]՝

| | **Հայաստան** | **Վրաստան** | **Ադրբեջան** |
|---|---|---|---|
| **Ամուր և կայուն ժողովրդավարություն** | 0.60 | 0.70 | 0.32 |
| **Ինտեգրումը ԵՄ-ին** | 0.65 | 0.65 | 0.57 |
| **Կայուն զարգացում** | 0.72 | 0.57 | 0.79 |
| **Միջազգային անվտանգություն, քաղաքական երկխոսություն և համագործակցություն** | 0.46 | 0.75 | 0.38 |
| **Ոլորտային համագործակցություն և առևտուր** | 0.36 | 0.56 | 0.46 |
| **Քաղաքացիների թիվը Եվրոպայում** | 0.68 | 0.81 | 0.55 |

178 Տե՛ս Eastern Partnership Index 2017, Charting Progress in European Integration, Democratic Reforms, and Sustainable Development, Eastern Partnership Civil Society Forum, p. 20-23, https://eap-csf.eu/wp-content/uploads/EaP-Index-2017.pdf

Ինչպես երևում է, Ադրբեջանը գրանցված ցուցանիշների իմաստով ակնհայտորեն զիջում է տարածաշրջանի մյուս երկու երկրներին, որը, սակայն, Միության կողմից պատշաճ գնահատականի չի արժանանում (այդ մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև):

ԱլԳ շրջանակներում կարևոր նշանակություն ունի քաղաքացիական հասարակության ինստիտուտներին ցուցաբերվող աջակցության բաղադրիչը: Այս իմաստով առանցքային դերակատարություն ունի ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումը (ՔՀՖ), որը գլխավորապես գործում է տարաբնույթ հասարակական կազմակերպությունների դրամաշնորհների տրամադրման մեխանիզմով: Այսպես, 2014 – 2016 թվականներին ՔՀՖ-ի կողմից տարածաշրջանում ֆինանսավորվել է ավելի քան 260 նոր նախագիծ՝ ընդգրկելով ավելի քան 600 կազմակերպությունների[179]: Քաղաքացիական հասարակության ինստիտուտներին հատկացվում է ընդհանուր ֆինանսավորման 10%-ը[180]: 2014-2017թթ. ընթացքում ԱլԳ շրջանակներում հասարակական կազմակերպություններին աջակցության նպատակով առանձնացվել է մոտ 148մլն եվրո:

Քաղաքացիական ոլորտին ցուցաբերվող օժանդակությունն իրականացվում է մի շարք աղբյուրներից, որոնցից հիմնականներն են Քաղաքացիական հասարակության հաստատությունը, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամը, Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքը և այլն:

---

179 ԵՄ-ն Արևելյան գործընկեր երկրներում քաղաքացիական հասարակության հիմնական դոնորն է, 24.10.2017, https://bit.ly/2v9BGlk

180 Civil society At the heart of the Eastern Partnership, Civil Society Info pack, The EU Neighbourhood Info Centre, p. 2, https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2017-01/EaP%20Civil%20Society.pdf

Տարածաշրջանի երկրներում անցկացված հարցումները որոշակիորեն արտացոլում են այն դինամիկան և համագործակցության շրջանակը, որն առկա է տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի և ԵՄ-ի միջև: Այսպես, 2018թ. ԵՄ կողմից անցկացված հարցումների արդյունքերով, Վրաստանում ԵՄ-ի հանդեպ դրական վերաբերմունք ունի բնակչության 49%-ը և ընդամենը 5%-ը՝ բացասական[181]: Հայաստանում նույն հարցումների համաձայն ԵՄ-ին դրական է վերաբերվում 48%-ը, բացասական՝ 8%-ը[182]: Ադրբեջանում ԵՄ-ին դրական է վերաբերվում բնակչության 39%-ը, բացասական՝ 12%-ը[183]:

Միևնույն ժամանակ, թեև դժվար է վիճարկել այն հանգամանքը, որ ԱլԳ-ն, որպես փափուկ ուժի քաղաքական մեխանիզմ, զգալի օգուտներ է տվել տարածաշրջանի երկրներից հատկապես Վրաստանին և Հայաստանին և նպաստել է տարածաշրջանում ԵՄ գրավչության բարձրացմանը, չի կարելի չանդրադառնալ այս ձևաչափի մի քանի խոցելի կողմերին, որոնք որոշակիորեն սահմանափակում են նրա արդյունավետությունը: Այսպես, խնդիրների առաջին խումբը բխում է հենց ձևաչափի կառուցվածքից: ԱլԳ-ում ներառված 6 երկրները խմբավորված են բացառապես աշխարհագրական ընդհանրությամբ՝ որպես ԵՀՔ հավաքական արևելյան հարևանություն: Այն որևէ կերպ հաշվի չի առնում, մի կողմից, այդ երկրների հետապնդած քաղաքական գծի, մյուս կողմից՝ այդ երկրների քաղաքական համակարգերի

[181] Opinion Survey 2018: Georgia, Eu Neighbours East, 10.07.2018, https://www.euneighbours.eu/en/east/stay-informed/publications/opinion-survey-2018-georgia
[182] Opinion Survey 2018: Armenia, Eu Neighbours East, 10.07.2018, https://www.euneighbours.eu/en/east/stay-informed/publications/opinion-survey-2018-armenia
[183] Opinion Survey 2018: Azerbaijan, Eu Neighbours East, 10.07.2018, https://www.euneighbours.eu/en/east/stay-informed/publications/opinion-survey-2018-azerbaijan

առանձնահատկությունները: Տրամաբանական հարց է առաջանում՝ որքանո՞վ է արդյունավետ մեկ ձևաչափի շրջանակներում միավորելու երկրներ, որոնց մի մասը Միության անդամակցելու ձգտում ունի (Վրաստան, Մոլդովա), իսկ մյուսները երբեք այդպիսի նպատակ չեն դրել: Մյուս կողմից, ժողովրդավարության առումով մյուս 4 երկրներին էականորեն զիջող Բելառուսի և Ադրբեջանի ներառումը թերևս պետք է դիտարկել մեկ ընդհանուր տարածաշրջանային ձևաչափից վերջիններիս դուրս չթողնելու քաղաքական որոշման արդյունք, քան այդ երկրներում իրապես եվրոպական արժեքները և նորմերը տարածելու հիմք:

Նույնիսկ հպանցիկ հայացքը բավական է՝ նկատելու ԵՄ կողմից փոխպայմանավորման սկզբունքի կիրառության ԱլԳ տարբեր երկրների հանդեպ դրսևորվող հակասությունները: Հաճախ կարելի է ականատես լինել ԵՄ-ի համար էներգետիկ իմաստով կարևոր Ադրբեջանի հանդեպ «զիջողականության» դրսևորումների, մինչդեռ Բելառուսը «ճաշակում է» փոխպայմանավորման բոլոր բարիքները[184]: Այսինքն, ԵՄ-ն պատրաստակամորեն մի կողմ է դնում տարածաշրջանի ժողովրդավարացման իր նպատակները, երբ խոսքը գնում է էներգետիկ շահերի մասին: Այս հիմնախնդրին անդրադարձել են նաև հայրենի մի շարք հետազոտողներ: Ն.Գալստյանի կարծիքով,ԵՄ-ն տարածաշրջանում հետապնդում է 3 փոխկապակցված նպատակներ՝

1. անդրտարածաշրջանային էներգետիկ և հաղորդակցային ուղիների կառուցումը,

---

[184] Տե՛ս **Lehne S.**, Time to Reset the European Neighborhood Policy // Carnegie Europe, February 2014, p. 10, https://carnegieendowment.org/files/time_reset_enp.pdf

2. դրանց անխափան գործառնության համար տարածաշրջանային կայունության և համագործակցության ապահովումը,

3. այդ նպատակով տարածաշրջանի երկրների ու նրանց փոխհարաբերությունների եվրոպականացումը՝ ենթադրելով, որ այդ տնտեսաքաղաքական արդիականացման ուղղությամբ կատարված ցանկացած քայլ կնվազեցնի տարածաշրջանային լարվածությունն ու ռազմական բախման հավանականությունը

Նրա կարծիքով, այդ նպատակներից առաջինի դեպքում ԵՄ-ն հանդես է գալիս որպես ռացիոնալ արտաքին քաղաքական դերակատար, երկրորդ նպատակի շրջանակներում կողմնակից է առկա ստատուս-քվոյի պահպանմանը և միայն երրորդ նպատակի դեպքում հանդես է գալիս որպես նորմատիվային դերակատար, ինչի արդյունքում հռչակած նպատակների և իրականացվող քաղաքականության մեջ առաջանում է որոշակի հակասականություն[185]:

Ըստ էության, այս հակասականությունը բյուրեղացված ձևով իր արտահայտումը գտավ Արտաքին հարաբերությունների եվրոպական հանձնակատար Քրիս Պատտենի հարցազրույցներից մեկի մեջ, ըստ որի «ԵՄ-ի համար մեծ նշանակություն ունի Հրվ. Կովկասի տնտեսական և քաղաքական զարգացումն ու այդպիսով տարածաշրջանային կայունության ամրապնդումը, քանզի Հրվ. Կովկասը մուտք է ապահովում դեպի Կասպյան տարածաշրջանի էներգապաշարներ, որը ԵՄ կողմից դիտվում է որպես սեփական էներգետիկ պաշարների ուղիների

[185] **Գալստյան Ն.**, Եվրոպական միության հարավկովկասյան քաղաքականության հիմքերն ու առանձնահատկությունները // Ժամանակակից Եվրասիա, հատոր II (2), 2013, էջ 117

բազմազանեցման աղբյուր[186]: Նույն միտքը ԸԱԱՔ Բարձր ներկայացուցիչ Խավիեր Սոլանայի մակարդակով հայտարարվեց 2006թ. ԵՄ արտաքին էներգետիկ քաղաքականության կոնֆերանսում ունեցած ելույթում, որտեղ նա նշել էր, որ «ԵՄ-ն հարկադրված է համագործակցել այնպիսի կառավարությունների հետ, որոնց շահերը տարբերվում են մեր սեփականից և որոնք չեն կիսում մեր արժեքները: Նավթի և գազի հսկայական պաշարներին տիրապետելը հաղթաթուղթ է նրանց ձեռքում, նրանք կարող են դա օգտագործել այնպիսի նպատակների համար, որոնք մեզ համար խնդրահարույց են…Այդպիսով մեր էներգետիկ պահանջմունքներն զգալիորեն սահմանափակում են մեր արտաքին քաղաքական ազդեցության հնարավորությունները հակամարտությունների կարգավորման, մարդու իրավունքների և արդյունավետ կառավարման հարցերում[187]:

Արդյունքում, հայտարարությունների և պաշտոնական դիրքորոշման մակարդակով ԵՄ-ն մշտապես բարձրաձայնել է տարածաշրջանի հակամարտությունների և երկարատև կայունության ապահովման գործում դրանց լուծման կարևորության մասին, սակայն գործնականում շատ քիչ դերակատարություն է ունեցել դրանցում՝ ինչ-որ չափով հիասթափեցնելով տարածաշրջանի երկրներին՝ առաջին հերթին Վրաստանին: Նմանատիպ ակնկալիքներ ունի նաև Ադրբեջանը. պատահական չէ, որ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը ԵՄ-Ադրբեջան ԵՀՔ գործողությունների ծրագրում

---

186 The exclusive interview of Chris Patten, European Commissioner for External Relations to Mediamax news agency, July 2003, https://mediamax.am/en/news/interviews/52/

187 Javier Solana, EU High Representative for the Common Foreign and Security Policy Address , Towards an EU External Energy Policy, The 2006 Brussels Conference Brochure, 20- 21 November 2006, p. 16, http://eeas.europa.eu/archives/docs/energy/events/energy_conference_2006/final_brochure_en.pdf

ներառված էր համագործակցության առաջնահերթությունների հենց առաջին խմբում[188], մինչդեռ Հայաստանի դեպքում դրան անդրադարձ է կատարվում համագործակցության առաջնահերթությունների միայն 7-րդ խմբում[189]: Այդուհանդերձ, այսօր ԵՄ-ն ավելի շատ գերադասում է շրջանցել տարածաշրջանի զգայուն խնդիրները:

Հեղինակների մեկ այլ խումբ հարևան տարածաշրջանների հետ ԵՄ համագործակցության ձևաչափերի արդյունավետության հիմնական խոչընդոտը համարում է վերջին տարիներին ավելի մեծ ուշադրության հատկացումը ներքին խնդիրներին, որոնց թվին են դասվում 2011թ. եվրագոտու ճգնաժամը, անդամ մի շարք երկրներում՝ Հունաստանում, Իսպանիայում ստեղծված ճգնաժամային իրավիճակը, միգրացիան, Brexit-ը, գնալով խորացող Հյուսիս-Հարավ բաժանումը և այլն[190]:

Ինչ վերաբերում է տարածաշրջանում ԵՄ կողմից փափուկ գործիքակազմի այլ բաղադրիչների կիրառմանը, ապա այստեղ առաջին հերթին ուշադրության է արժանի փափուկ ուժի կրթական բաղադրիչը: Հատկանշական է, որ տարածաշրջանի երեք երկրները 2005թ.-ից մասնակցում են Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (European higher education area) ստեղծելու նպատակ հետապնդող Բոլոնյան գործընթացին, որը գործարկվել է 1999թ. և ներկայումս ունի 49 մասնակից երկիր: Բոլոնյան գործընթացը ենթադրում է մասնակից երկրների միջև դասախոսների և ուսանողների ազատ շարժունության և հավասարապես հասանելի

---

188 EU-Azerbaijan ENP Action Plan, p. 3, https://eeas.europa.eu/sites/eeas/files/azerbaijan_enp_ap_final_en.pdf
189 EU-Armenia ENP Action Plan, p. 9, https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_enp_ap_final_en.pdf
190 Տե՛ս **Patalakh A.**, EU Soft Power in the Eastern Neighborhood and the Western Balkans in the Context of Crises // Baltic Journal of European Studies, 7(2), 2017, p.148

կրթության տարածքի ստեղծում: Այն ենթադրում է նաև մասնակից երկրների կողմից կրթական ոլորտում էական բարեփոխումների իրականացում:

Կրթական բաղադրիչի շրջանակներում հատկապես էական դերակատարություն ունի բարձրագույն կրթության ոլորտում առկա համագործակցությունը: Եթե մինչև 2014թ. տարածաշրջանի երկրների՝ եվրոպական կրթական հաստատությունների հետ բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության հիմնական ձևաչափը «TEMPUS» մեխանիզմն էր, ապա ներկայումս այն փոխարինվել է «Erasmus+»-ով, որը նախատեսված է 2014-2020թթ.-երի համար և նպատակ ունի խթանել ու գործընկեր երկրների հետուսումնական շարժունությանը, նպաստել կարողությունների և որակի բարձրացմանը, սովորելու և վերապատրաստվելու հնարավորություն է ընձեռում գործընկեր երկրների ուսանողների և դասախոսների համար[191]:

Տարածաշրջանում ԵՄ կրթական քաղաքականությունը վերջին տարիներին ունեցել հետևյալ պատկերը՝

| | **2015-2018թթ. ԱլԳ շրջանակներում տարածաշրջանի երկրներին հատկացված ֆինանսական օժանդակութ** | **Տվյալ երկրի մասնակցության ընտրված նախագծերի թիվը** | **2015-2018թթ. Եվրոպա ուսանելու մեկնած ուսանողների և անձնակազմի թիվը** |
|---|---|---|---|

[191] What is Erasmus+ and how is it managed?, Education, Audiovisual and Culture Executive Agency, https://eacea.ec.europa.eu/erasmus-plus_en

| | | | |
|---|---|---|---|
| | յանպատկերը | | |
| Հայաստան[192] | 11% | 98 | 1857 |
| Վրաստան[193] | 24% | 601 | 3613 |
| Ադրբեջան[194] | 8% | 229 | 1300 |

Հատկանշական է, որ 2015-2018թթ.-երին Վրաստանին է հատկացվել Արևելյան գործընկերության մասնակից երկրների շարքում Erasmus+ ձևաչափով հատկացվելիք օժանդակության 24%-ը, որը երկրորդ ցուցանիշն է՝ Ուկրաինայից հետո: Պետք է նաև նշել, որ 2017թ. մարտից Վրաստանի և ԵՄ-ի միջև գործարկված առանց մուտքի արտոնագրի ռեժիմը մեծապես խթանում է նաև ուսանողական փոխանակումները:

Բացի այդ տարածաշրջանի երկրներում ԵՄ-ն հովանավորում է մի շարք խոշոր կրթական հաստատություններ, որոնց թվում պետք է մատնանշել

- Վրաստանում՝ 2012թ.-ից գործող Եվրոպական համալսարանը, Վրաստանի Եվրոպական դպրոցը, Թբիլիսիի պետական համալսարանի եվրոպական ուսումնասիրությունների ինստիտուտը

- Հայաստանում 1995թ.-ից գործող Ֆրանսիական համալսարանը, 2001թ.-ից գործող Եվրոպական

[192] Erasmus + Country Factsheet: Armenia, 2018, https://ec.europa.eu/programmes/erasmus-plus/resources/documents/country-factsheet-armenia_en
[193] Erasmus + Country Factsheet: Georgia, 2018, https://ec.europa.eu/programmes/erasmus-plus/resources/documents/country-factsheet-georgia_en
[194] Erasmus + Country Factsheet: Azerbaijan, 2018, https://ec.europa.eu/programmes/erasmus-plus/resources/documents/country-factsheet-azerbaijan_en

տարածաշրջանային կրթական ակադեմիան, ԵՊՀ-ում գործող եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, ինչպես նաև Հայաստանի դիվանագիտական դպրոցը, որի ֆինանսավորումը հատկացվում է ԵՄ-ի կողմից

- Ադրբեջանում ուշադրության արժանի 2011թ. բացված եվրոպական դպրոցը:

Փաստացի, տարածաշրջանը բավականին ինտեգրված է եվրոպական կրթական տարածքի հետ:

Հետաքրքրական է, որ կրթական մեխանիզմները ԵՄ-ի դեպքում չեն «տարածվել» նաև մշակութային դաշտ, ինչպես տարածաշրջանում ներգրավված այլ երկրների դեպքում: Սա պայմանավորված է առաջին հերթին միասնական մշակութային քաղաքականության բացակայությամբ և այս բնագավառում առանձին անդամ-երկրների անհամեմատ ավելի մեծ ակտիվությամբ (Ֆրանսիա, Գերմանիա):

Ինչ վերաբերում է տեղեկատվական հարթակներում ԵՄ քաղաքականության լուսաբանմանը, ապա այստեղ առանցքային դերակատարություն ունեն տարածաշրջանի երեք երկրներում ԵՄ ներկայացուցչությունները: Այսպես, դրանք, ընդհանուր առմամբ, իրականացնում են տեղում ԵՄ քաղաքականության համակարգման, մյուս կողմից՝ դրա առավել ուշագրավ բաղադրիչների լուսաբանման գործառույթներ: Պատահական չէ տարածաշրջանի երեք երկրներում ԵՄ պատվիրակությունների ղեկավարների պարբերաբար հարցազրույցները և մասնակցությունը հանրային միջոցառումներին: Պատվիրակությունները պարբերաբար հրապարակում են նաև տեղեկատվական գրքույկներ, թերթիկներ և այլն, իսկ դրանց կայքերից

հեշտությամբ կարելի է տեղեկատվություն ստանալ ԵՄ օրակարգում գտնվող կարևոր իրադարձությունների վերաբերյալ:

Բացի այդ, ազատ մամուլի կայացման նպատակներով ԱլԳ շրջանակներում ԵՄ-ն որոշակի օժանդակություն է ցույց տալիս տարածաշրջանի երկրներին՝ պարբերաբար լրագրողների համար անցկացնելով վերապատրաստումներ, աշխատաժողովներ և այլն[195]: Ըստ էության, տարածաշրջանի երեք երկրներում ԵՄ քաղաքականության տեղեկատվական ապահովումը կարելի է համաչափ համարել:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մինչ այժմ տարածաշրջանում ԵՄ փափուկ ուժի քաղաքականության օգուտները մեծ մասամբ քաղել է Վրաստանը, որն արդեն տևական ժամանակ հետապնդում է արևմտամետ քաղաքական կուրս, հասցրել է ԵՄ-ի հետ ստորագրել Ասոցացման համաձայնագիրը, որը ներառում է Խորը և համապարփակ առևտրի բաղադրիչ: Քաղաքական, Ֆինանսատնտեսական, կրթական համագործակցության և ստացվող օժանդակության առումով Վրաստանն անհամեմատ առաջ է տարածաշրջանի մյուս երկու երկրներից:

Մյուս կողմից, վերջին տարիների ընթացքում բավականին լուրջ օգուտներ է ստացել նաև Հայաստանը, որը չնայած Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններին, մշտապես ձգտել է եվրոպական համայնքի հետ սերտ համագործակցության և երբեք չի հակադրել իր արտաքին քաղաքականության այդ երկու բաղադրիչները: 2017թ. նոյեմբերին Հայաստանի և ԵՄ-

195 EU Support to Media In the Eastern Partner Countries, Factsheet, https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/factsheet_eu_support_to_independent_media_eap.pdf

ի միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA) ասվածի վառ վկայությունն է: Ընդ որում, Հայաստանում տեղի ունեցած ժողովրդավարացման գործընթացերով պայմանավորված՝ առկա են ԵՄ ֆինանսական և այլ բնույթի օժանդակության ավելացում ակնկալելու բոլոր հիմքերը:

Ադրբեջանի դեպքում ԵՄ փափուկ ուժի քաղաքականությունը կարելի է մեծ հաշվով համարել ձախողված՝ հաշվի առնելով այս երկրի հետ համագործակցության օրակարգում բացարձակ այլ առաջնահերթությունները և փոխպայմանավորման մեխանիզմի խիստ սահմանափակ արդյունավետությունը: Ադրբեջանն ինքը բավարարված է համագործակցության ներկայիս մակարդակով և առհասարակ հետաքրքրված չէ փափուկ բաղադրիչի մասով ԵՄ հետ հարաբերությունների կառուցմամբ, թեև այդ երկիրը շարունակում է ներգրավված մնալ մի շարք համագործակցային ձևաչափերում:

Կարծում ենք՝ տարածաշրջանում ԵՄ-ի փափուկ ուժի մեխանիզմների արդյունավետության բարձրացման առաջին նախադրյալը պետք է լինի տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի հետ իրապես համաչափ հարաբերությունների կառուցումը և փոխպայմանավորման սկզբունքի լիարժեք կիրառությունը: Լիովին կարելի է համաձայնել Ն. Գալստյանի այն տեսակետին, որ հակամարտությունների հարցում ԵՄ-ն պետք է հրաժարվի «անատամ» հայտարարությունների և Հայաստանի ու Ադրբեջանի հանդեպ «համահավասարության» պահպանման քաղաքականությունից՝ քննադատությունը ոչ միայն դարձնելով հասցեական, այլև դրանք

զուգորդելով կոնկրետ գործողություններով[196]: Այնքան ժամանակ, որքան ԵՄ-ն «թիրախավորված» չի արձագանքի Հայաստանը շրջանցող էներգետիկ նախագծերի գործարկմանը, ինչպես նաև Ադրբեջանի կողմից ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը, ԵՄ-ի փափուկ ուժի հռչակված նպատակների և գրանցված վերջնարդյունքի միջև մեծ կշարունակի լինել մեծ անհամապատասխանություն:

## 2.3. Չինաստանի փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում՝ որպես «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի բաղադրիչ

Փափուկ ուժի հիմնահարցը Չինաստանի քաղաքական օրակարգ է մտել 2000-ական թվականների կեսերից, սակայն, որպես այդպիսին, փափուկ ուժ հասկացության տարբեր ասպեկտներ դեռևս հնագույն ժամանակներից ամրագրված են եղել չինական հասարակական-քաղաքական մտքում: Ոչ ռազմական միջոցների արդյունավետության մասին նշում էր դեռևս չինացի նշանավոր փիլիսոփա Սուն-Ցզուն, ով իր հայտնի «Պատերազմի արվեստը» աշխատության մեջ, բնութագրելով հզոր պետություն ունենալու նախապայմանները, խոսում էր երկու տիպի ուժերի մասին՝ ուղղակի և անուղղակի: Եթե առաջինը մոտ է կոշտ (ռազմական) ուժին և ավելի շատ ապահովում է նպատակների իրականացում կարճաժամկետ հեռանկարում, ապա երկրորդը վերաբերում է հակառակորդի վրա

[196] Գալստյան Ն., Եվրոպական միության հարավկովկասյան քաղաքականության հիմքերն ու առանձնահատկությունները // Ժամանակակից Եվրասիա, հատոր II (2), 2013, էջ 120

տարատեսակ ազդեցության միջոցներին և նպաստում է երկարաժամկետ պատակների իրագործմանը[197]:

Արդեն 1990-ականների վերջից փափուկ ուժի հայեցակարգն սկսեց քննարկվել Չինաստանի գիտական շրջանակներում՝ նախանշելով այդ երկրի ազդեցության և կարևորության մեծացումը: Չինաստանի նորագույն պատմության մեջ փափուկ ուժի շուրջ քննարկումների սկիզբը դրեց չինացի քաղաքագետ Վանգ Հունինգը, ով իր «Մշակույթը որպես ազգային փափուկ ուժ» հայտնի հոդվածում կանխատեսում էր մշակութային գործոնի կարևորության մեծացումը և կարևորում էր Չինաստանի կողմից այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը[198]: Դրա արդյունքում Չինաստանի գիտական, ինչպես նաև հասարակական-քաղաքական շրջանակներում բուռն քննարկումներ ծավալվեցին՝ փափուկ ուժ հասկացության բովանդակային դաշտի և արդիականության վերաբերյալ:

Գիտական դիսկուրսից «անցումը» դեպի պրակտիկ քաղաքական դաշտ տեղի ունեցավ 2000-ական թվականների կեսին: Փափուկ ուժը որպես արտաքին քաղաքական զինանոցի կարևոր բաղադրիչ Չինաստանում պաշտոնապես ընդունվեց 2007թ., երբ այդ ժամանակ Չինաստանի կոմունիստական կուսակցության (ՉԿԿ) նախագահ Հու Ջինթաոն ՉԿԿ 17-րդ Ազգային համագումարում ունեցած իր ելույթում Չինաստանի վերելքը, տարածաշրջանում նրա ազդեցության մեծացումը կապեց փափուկ ուժի հետ:

Ինչպես իր ելույթում նշել էր Հու Ջինթաոն,

[197] Տե՛ս Sun Tzu and the Art of Soft Power” China (and others) are increasingly referencing Sun Tzu as a source of soft power, 31.03.2015, https://thediplomat.com/2015/03/sun-tzu-and-the-art-of-soft-power

[198] Տե՛ս Wang H., Culture as National Soft Power // Journal of Fudan University, March 1993, p.2.

«Մշակույթը ժամանակի ընթացքում դարձել համընդհանուր պետական հզորության ամենակարևոր աղբյուրներից մեկը»: Նրա խոսքերով, Չինաստանը «պետք է հզորացնի չինական մշակույթը որպես փափուկ ուժի բաղադրիչ՝ էլ ավելի ամրապնդելու մարդու մշակութային իրավունքների և շահերի պաշտպանությունը»[199]: Բացի այդ, նախագահը խոսել էր չինական գրականության և արվեստի տարածման (այդ թվում նաև համացանցի տիրույթում), շահույթ չհետապնդող մշակութային ծրագրերի գործարկման և համանման այլ քայլերի ձեռնարկման անհրաժեշտության մասին՝ ընդլայնելու համար Չինաստանի ճանաչելիությունն աշխարհում:

Կարծում ենք՝ ՉԿԿ նախագահի ելույթը և համագումարի արդյունքներով ընդունված հռչակագրում փափուկ ուժի ներառումը պետք է դիտարկել հետևյալ չափումներում.

1) Դա մի կողմից արդեն բազմաթիվ երկրների կողմից ընդունված փափուկ ուժի՝ որպես արտաքին քաղաքական գործիքակազմի կարևոր բաղադրիչի արձանագրումն էր Չինաստանի համար,

2) Դա վկայում էր Չինաստանի քաղաքական վերնախավի մոտ զուտ տարածաշրջանային ազդեցության ընդլայնման և այդ ուղղության փափուկ ուժի մեխանիզմների կիրառման անհրաժեշտության գիտակցման մասին

3) Փափուկ ուժի ռեսուրսների շարքում հատուկ կերպով շեշտադրվեց Չինաստանի հարուստ պատմամշակութային ժառանգությունը՝ որպես առանցքային ռեսուրս:

[199] Hu Jintao's report at 17th Party Congress, 15.10.2007, http://www.china.org.cn/english/congress/229611.htm

Համագումարն, ըստ էության, ազդարարեց Չինաստանի փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացի սկիզբը: Այս բնագավառում Չինաստանի կողմից վերջին տարիների ընթացքում ներդրվել է մի քանի միլիարդ դոլլար, որի արդյունքը եղել է աշխարհի բազմաթիվ երկրներում Կոնֆուցիուսի ինստիտուտների հիմնադրումը (ներկայումս գործում է մոտ 500 այդպիսի ինստիտուտ), որոնք ակտիվորեն զբաղվում են չինարենի և չինական մշակույթի տարածմամբ[200]: Որպես տեղեկատվական մեխանիզմների օրինակներ կարելի է նշել Xinhua լրատվական գործակալության, China daily օրաթերթի և մի շարք այլ լրատվական միջոցների և տեղեկատվական խողովակների հանրայնացումը և միջազգային ասպարեզում նրանց դիրքերի ամրապնդումը:

Չինաստանի փափուկ ուժի առանձնահատկություններից մեկն այն է, որ այս երկրի պարագայում ավելի ծանրակշիռ դերակատարություն ունի փափուկ ուժի մշակութային բաղադրիչը՝ մյուս բաղադրիչների՝ արտաքին քաղաքականության և քաղաքական արժեքների համեմատությամբ, ինչն, առաջին հերթին, պայմանավորված է Չինաստանի քաղաքական համակարգի առանձնահատկություններով: Մյուս կողմից, այն մեծապես ուղղորդվում և համակարգվում է պետական մակարդակով՝ ի տարբերություն, օրինակ, արևմտյան մի շարք երկրների, որտեղ որպես փափուկ ուժի սուբյեկտեն հանդես գալիս նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Այսպես, վերջին տարիներին Չինաստանը փափուկ ուժի

[200] Կոնֆուցիուսի ինստիտուտների պաշտոնական կայքէջ, http://english.hanban.org/node_7716.htm

ոլորտում, որոշ փորձագետների կարծիքով, ծախսում է տարեկան մոտ 10միլիարդ դոլար[201]:

Փափուկ ուժի տեսանկյունից Չինաստանը մինչ այժմ իր նպատակներին թերևս ամենաարդյունավետն է հասել Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում: Այդ երկրներում Չինաստանն իր տնտեսական ներկայությամբ գերազանցում է մյուս բոլոր խոշոր դերակատարներին: Դրա մասին են վկայում նաև վերջին տարիներին իրականացված մի շարք հարցումները[202]: Հատկանշական է, որ նույնիսկ Աֆրիկյան միության՝ Ադդիս-Աբեբայում գտնվող կենտրոնակայանը 2012թ.-ին կառուցվել է բացառապես Չինաստանի տնտեսական օժանդակությամբ (մոտավորապես 200մլն դոլար)[203]:

Հարավային Կովկասում Չինաստանի փափուկ ուժի մեխանիզմները սկսեցին գործել բավականին ուշ՝ միայն 2000-ականների վերջին: Չնայած դրան՝ Չինաստանը հատկապես տնտեսական և մշակութային ոլորտներում վերջին տարիների ընթացքում հասցրել է ապահովել «փափուկ ներկայության» որոշակի մակարդակ:

Տարածաշրջանում Չինաստանի փափուկ ուժի մեխանիզմների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է նախևառաջ ընդգծել, որ տարածաշրջանում Չինաստանի որդեգրած քաղաքականությունը տեղավորվում է այդ երկրի ավելի լայն աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական տեսլականի տրամաբանության մեջ՝ «վերակենդանացնելու» Արևելքն Արևմուտքին

---

201 Տե՛ս **Shambaugh D.**, China's Soft-Power Push: The Search for Respect // Foreign Affairs Magazine, July/August 2015 Issue, https://www.foreignaffairs.com/articles/china/2015-06-16/china-s-soft-power-push

202 Տե՛ս **Sayama O.**, China's Approach to Soft Power Seeking a Balance between Nationalism, Legitimacy and International Influence // Royal United Services Institute for Defence and Security Studies, 2016, p. 3

203 Report on "Global Opposition to U.S. Surveillance and Drones, but Limited Harm to America's Image Many in Asia Worry about Conflict with China", Pew Research Center, p. 29-30 http://www.pewglobal.org/files/2014/07/2014-07-14-Balance-of-Power.pdf

կապող հին «Մետաքսե ճանապարհը», որի միջոցով Չինաստանը կարող է մուտք ունենալ դեպի Եվրոպական շուկաներ, ինչը հսկայական հնարավորություններ և պոտենցիալ օգուտներ է պարունակում այդ երկրի համար: «Մետաքսե ճանապարհի» եզրը վերակենդանացնելուն ուղղված առաջին քայլը դրա վերաիմաստավորումն էր և կոնցեպտուալացումն որպես «Մեկ գոտի-մեկ ճանապարհ» նախաձեռնություն (ՄԳՄՃ): Վերջինս միավորեց մինչ այդ առանձին գոյություն ունեցող «Մետաքսե ճանապարհի տնտեսական գոտի» և «Ծովային մետաքսե ճանապարհ» նախագծերը: «Մեկ գոտի-մեկ ճանապարհ»կամ «Գոտի և ճանապարհ նախաձեռնության» մասին ՉԿԿ նախագահ Սի Ծինփինը պաշտոնապես հայտարարեց 2013թ. սեպտեմբերին և հոկտեմբերին Ղազախստան և Ինդոնեզիա կատարված այցերի ժամանակ: Նոր մոտեցման համաձայն ՄԳՄՃ-ն պետք է համախմբի մի շարք կարևոր ցամաքային և ծովային հաղորդակցային ուղիներ մեկ միասնական նախագծի շրջանակներում[204]: Մ.Սահակյանի կարծիքով,ՄԳՄՃ-ի որակումը որպես *նախաձեռնություն* կարևոր վկայությունն է նրա,որ Չինաստանը պատրաստակամ է իր շահերի առաջ մղման գործում համագործակցել դերակատարների լայն շրջանակի հետ[205]:

Տրամաբանական է, որ պատմականորեն հաղորդակցային կարևոր հանգույց հանդիսացող Հարավային Կովկասը չէր կարող դուրս մնալ նման խոշոր աշխարհատնտեսական նախագծից: Պատահական չէ, որ տարածաշրջանում Չինաստանի փափուկ ուժը հիմնականում ծավալվում է տնտեսական, և նվազ

[204] Chronology of China’s Belt and Road Initiative, 28.03.2015, http://english.gov.cn/news/top_news/2015/04/20/content_281475092566326.htm

[205] Տե՛ս **Սահակյան Մ.**, Չինաստանի «Մեկ գոտի մեկ ճանապարհ» նախաձեռնությունը և Հայաստանը,Նորավանք ԳԿՀ,Երևան 2018,էջ 23

չափով մշակութային և կրթական մեխանիզմների շուրջ:

Նախևառաջ, կարծում ենք՝ կարևոր է արձանագրել տարածաշրջանում Չինաստանի ներգրավվածության մակարդակի և որակի վրա ազդող մի քանի կարևոր գործոն՝

1) Տարածաշրջանում Չինաստանի ներգրավվածությունը չունի ռազմաքաղաքական չափում, ինչը չի կարելի ասել տարածաշրջանում ներգրավված այլ դերակատարների մասին, ինչպիսիք են ՌԴ-ն և ԱՄՆ-ն:

2) Առաջին հանգամանքի հետ սերտորեն փոխկապակցված է երկրորդը. Չինաստանի ազդեցության մեծացումը տարածաշրջանում զերծ է այն կոնֆլիկտայնությունից, որը բնորոշ է Ռուսաստան-Արևմուտք հարաբերություններին: Հատկապես ներկայիս «նոր սառը պատերազմի» իրավիճակում կարելի է ասել, որ Արևմուտքի և Ռուսաստանի միջև ազդեցության գոտիների համար պայքարը, որն ակնառու է նաև Հարավային Կովկասում, ավելի շատ վերածվել է «զրոյական գումարով խաղի»: Չինաստանն, այս իմաստով, դեռևս դուրս է գտնվում այդ «խաղից», ինչն ինքնին նպաստավոր գործոն է տարածաշրջանում Չինաստանի քաղաքականության համար:

3) Չինաստանն ի սկզբանե տարածաշրջանի երկրների համար զգայուն հիմնահարցերի՝ հակամարտությունների նկատմամբ որդեգրել է չեզոք դիրքորոշում և որևէ կերպով ներգրավված չէ դրանց լուծման գործընթացներում՝ սահմանափակվելով միայն խաղաղ կարգավորման պարբերական կոչերով:

Նշված հանգամանքների բերումով Չինաստանը փափուկ ուժի մեխանիզմների տեսանկյունից քիչ թե շատ համաչափ ներկայացված է տարածաշրջանի բոլոր երեք երկրներում՝ թեև յուրաքանչյուրի հետ հարաբերություններում առկա է ուրույն դինամիկա և օրակարգ:

Ինչպես նշվեց, պայմանավորված Չինաստանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական տեսլականով, տարածաշրջանում Չինաստանի փափուկ ուժի քաղաքականության առանցքը տնտեսական մեխանիզմներն են: Չինաստանի՝ տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի համար տնտեսական գրավչության մասին պատկերացում կազմելու ամենավառ ցուցիչը առևտրաշրջանառությունն է, որը 2015-2017թթ. ունեցել է հետևյալ պատկերը (տվյալները ներկայացված են ԱՄՆ դոլլարով)[206].

| | **2015թ.** | **2016թ.** | **2017թ.** |
|---|---|---|---|
| **Հայաստան** | 480.6 մլն | 463 մլն | 584 մլն |
| **Վրաստան** | 713 մլն | 717 մլն | 939.5 մլն |
| **Ադրբեջան** | 550 մլն | 1 մլրդ | 1.4 մլրդ |

Հատկանշական է, որ եթե մինչև 2012թ. Չինաստանը չէր մտնում տարածաշրջանի 3 երկրներից ոչ մեկի առևտրային գործընկերների տասնյակում, ապա 2017թ. տվյալներով այդ երկիրը Հայաստանի առևտրային գործընկերների շարքում զբաղեցրել է 2-րդ, Վրաստանի դեպքում՝ 3-րդ, Ադրբեջանի դեպքում՝ 9-րդ տեղը: Առևտրաշրջանառության ծավալների աճի

[206] Trade Map, Trade statistics for international business development, Monthly, quarterly and yearly trade data, https://trademap.org/Index.aspx

դինամիկան հատկապես ակնառու է Ադրբեջանի պարագայում:

Ադրբեջանի և Վրաստանի հետ հարաբերություններում Չինաստանը մեծ հետաքրքրվածություն է ցուցաբերում հատկապես հաղորդակցային ուղիների զարգացման ոլորտում: 2013-2018թթ. ընթացքում Չինաստանի տնտեսական ներդրումները Ադրբեջանում կազմել են մոտ 1.1 մլրդ ԱՄՆ դոլլար, Վրաստանում՝ 500մլն ԱՄՆ դոլլար[207]: Այս ոլորտում Չինաստանի հիմնական հետաքրքրությունը 2017թ. շահագործման հանձնված 850 կմ երկարությամբ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին է, որը «Մեկ գոտի-մեկ ճանապարհ» նախագծի մաս է կազմում: Այն մաս է կազմում ՄԳՄՃ-ի 6 հիմնական ցամաքային ուղիներից մեկի՝ Չինաստանի-Կենտրոնական Ասիա-Արևմտյան Ասիա ուղղությամբ: Այլ ցամաքային ուղիների համեմատությամբ այն ավելի քան 2 անգամ արագացնում է Չինաստանից Եվրոպայի ուղիներով ապրանքատեղափոխման արագությունը՝ 45-ից հասցնելով մոտ 15-20 օրվա[208]: Է. Դավթյանի պնդմամբ, ԲԹԿ մասնակից երկրները փորձում են, մի կողմից, քաղաքական երանգ տալ այս նախագծին, մյուս կողմից հակված են ուռճացնելու երկաթուղու նշանակությունը՝ այն համարելով եղած ամենաարդյունավետ ցամաքային ուղին, երբ իրականության մեջ այն զիջում է, օրինակ, անդրսիբիրյան երկաթուղուն[209]: ԲԹԿ թողունակությունը սկզբնական շրջանում նախատեսվում էր պահպանել տարեկան 1մլն ուղևոր և

---

[207] China global investment tracker, http://www.aei.org/china-global-investment-tracker/

[208] Full Steam Ahead: Long-Awaited Baku-Tbilisi-Kars Railway Opens, 30.10.2017, https://eurasianet.org/full-steam-ahead-long-awaited-baku-tbilisi-kars-railway-opens

[209] Տե՛ս **Դավթյան Է.**, Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական եռակողմ համագործակցությունը 1991-2016թթ., թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2018, էջ 75

6.5 մլն բեռ ծավալի շրջանակներում՝ հետագայում մինչև 17 մլն տոննայի հասցնելու նպատակով[210]: Բուն երկաթուղու կառուցման աշխատանքներին Չինաստանը չի մասնակցել (այն ֆինանսավորվել է գերազանցապես Ադրբեջանի և Թուրքիայի կողմից), փոխարենը մասնակցել է տարածաշրջանային հաղորդակցման այլ ուղիներին: Մասնավորապես, 2016թ. Ենթակառուցվածքների զարգացման ասիական բանկը, որտեղ մեծ ազդեցություն ունի Չինաստանը, մոտ 600 մլն վարկ է տրամադրել Տրանսանատոլիական գազամուղի կառուցման համար, որն այդ ժամանակ բանկի կողմից գազամուղի կառուցման նպատակով երբևէ տրամադրված ամենամեծ գումարն էր: 2017թ. նույն բանկի կողմից Վրաստանին 114 մլն ԱՄՆ դոլլար տրամադրվեց Բաթումը շրջանցող ճանապարհի կառուցման համար[211]: Ակնառու է, որ Չինաստանը մեծ կարևորություն է հատկացնում Վրաստանի՝ դեպի Սև ծով ունեցած ելքին, որը միջանցք է դեպի եվրոպական շուկաներ: Պատահական չէ, որ Փոթիի նավահանգստի ազատ առևտրի գոտու 1/3-ը պատկանում է Չինաստանին[212]:

Վրաստանում գործում են մի քանի տասնյակ չինական ընկերություններ, որոնց շարքում են Huawei-ը, CEFC CHINA Energy-ն և այլն: Ադրբեջանում գործում են մոտ 100 չինական ընկերություններ[213]: Վրաստանի և Ադրբեջանի նախագահները 2017թ.-ին մասնակցել են Դավոսում կայացած Համաշխարհային տնտեսական

---

210 Full Steam Ahead: Long-Awaited Baku-Tbilisi-Kars Railway Opens, 30.10.2017, https://eurasianet.org/full-steam-ahead-long-awaited-baku-tbilisi-kars-railway-opens

211 AIIB approves 1st equity investment, 2 loans of 324 mln USD for infrastructure projects, 15.06.2017, http://www.xinhuanet.com/english/2017-06/15/c_136368430.htm

212 Georgia hopes to use China's One Belt, One Road project to break its dependence on Russia, 31.01.2018, http://www.intellinews.com/opinion-georgia-hopes-to-use-china-s-one-belt-one-road-project-to-break-its-dependence-on-russia-136041/?source=georgia&inf_contact_key=0f5cb34d9c0bc52310d882abd5a0cd6f6e5f55d4b5d7607f3622556fe718484a

213 Տե՛ս **Rolland N.**, China's Ambitions in Eastern Europe and the South Caucasus // Russie.Nei.Visions, No. 112, Ifri, December 2018, p. 15-16, https://www.ifri.org/en/publications/notes-de-lifri/russieneivisions/chinas-ambitions-eastern-europe-and-south-caucasus

ֆորումի՝ «Մետաքսե ճանապարհի արդյունքները» խորագրով պանելին[214]:

Չինաստան-Վրաստան համագործակցության մեկ այլ կարևոր չափում է Վրաստանի և Չինաստանի միջև 2017թ. ստորագրված Ազատ առևտրի մասին պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ից: Վրաստանը տարածաշրջանի միակ երկիրն է, որն ունի նմանատիպ պայմանագիր Չինաստանի հետ: Ընդ որում, Չինաստանի հետ ազատ առևտրի մասին պայմանագիր ստորագրելու Վրաստանը ձգտում էր բավականին երկար, սակայն դա տեղի ունեցավ միայն 2017թ.-ին: Հենց այդ տարի Վրաստանի և ԵՄ-ի միջև ստորագրվեց Խորը և համապարփակ ազատ առևտրի մասին համաձայնագիրը, ինչն, անշուշտ, լրացուցիչ «արժեք» հաղորդեց Չինաստանի և Վրաստանի միջև ազատառևտրի մասին պայմագրին:

Տնտեսական հարաբերությունների փոքր-ինչ այլ մոդել է գործում Հայաստանում Չինաստանի տնտեսական քաղաքականության համատեքստում: Եթե Ադրբեջանը և Վրաստանը Թուրքիայի հետ մեկտեղ ներգրավված են տարածաշրջանի հաղորդակցային ուղիների մեծամասնությունում, և աշխարհագրորեն տեղավորվում են Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» տեսլականի աշխարհագրության և տրամաբանության մեջ՝ ձգվելով արևելքից արևմուտք, ապա Հայաստանն այս իմաստով, նաև թուրք-ադրբեջանական տանդեմի ջանքերով, դուրս է մնացել այս նախագծերից: Պայմանավորված դրանով՝ Հայաստանում Չինաստանը աչքի չի ընկնում որևէ լուրջ տնտեսական ներդրումներով: Վերջին նշանակալի ներդրումը 2015թ. մետալուրգիայի ոլորտում 7.51 մլն

---

[214] China’s Strategy in the Caucasus, 05.04.2017, https://eurasianet.org/chinas-strategy-caucasus

ԱՄՆ դոլլարի ներդրումն էր, որը սակայն որևէ էական արդյունք չտվեց[215]:

Կարծում ենք՝ այդ իրավիճակը հավասարակշռելու համար Հայաստանի ջանքերն այս ոլորտում պետք է ուղղվեն Հյուսիս-Հարավ ուղղությամբ ենթակառուցվածքների և հաղորդակցային ուղիների զարգացմանը՝ փորձելով ներգրավել նաև Չինաստանին՝ հեռանկարում ունենալով Պարսից ծոցը Սև ծովին կապող օղակ հանդիսանալու տեսլականը: Մ. Սահակյանի կարծիքով, Չինաստանի ՄԳՄՃ-ում ներառելու նպատակով է Հայաստանը պետք է աշխատի միաժամանակ մի քանի մակարդակներում, անհրաժեշտ է՝

1) Պարբերական խորհրդակցություններ անցկացնել Չինատանի բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարության հետ
2) Ուսումնասիրել և օգտագործել ազատ առևտրի գոտիներ բացելու հնարավորությունը
3) Ապահովել հայկական և չինական դրամների կոնվերտացիան
4) Կառուցել և համատեղ շահագործման հանձնել հաղորդակցային ուղիներ[216]

ՄԳՄՃ տեսանկյունից տարածաշրջանային երկու կարևոր հաղորդակցային հանգույցներն են Իրան-Հայաստան երկաթուղին և Հյուսիս-Հարավ ավտոճանապարհը (Մեղրի-Երևան-Բավրա): Դատելով չինական ընկերությունների հետաքրքրվածությունից՝ կարելի է եզրակացնել, որ վերջիններիս շահագրգռելը որոշակի չափով հաջողվել է. այսպես, չինական Սինոհիդրո ընկերությունը ստանձնել է Հյուսիս-Հարավ

[215] **Սահակյան Մ.**, նշվ. աշխ., էջ 98
[216] Նույն տեղում, էջ 15

ճանապարհի երրորդ փուլի շինարարությունը (Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի երկու տարածքների, որոնց երկարությունը 46.2 կմ է, իսկ արժողությունը 140 մլն դոլլար)[217]: Բացի այդ, որոշակի ակտիվություն են ցուցաբերում China Civil Engineering Construction Corporation-ը ու China Communication Construction Company-ն, որոնք, հավանաբար, կմասնակցեն «Հայաստան-Իրան» երկաթգծի Գավառ-Մեղրի հայկական հատվածի շինարարությանը[218]: Ինչպես նշել էր 2018թ. սեպտեմբերին Հայաստանի անկախության օրվա կապակցությամբ Չինաստանի նախագահ Սի Ծինփինն իր շնորհավորական ուղերձում, «Մեծ նշանակություն եմ տալիս հայ-չինական հարաբերությունների զարգացմանը և պատրաստ եմ օգտագործել «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» նախաձեռնության համատեղ իրականացման հնարավորությունը»[219]:

Բացի Հյուսիս-Հարավ ուղղությամբ ենթակառուցվածքների զարգացումը, չպետք է մոռանալ, որ Հայաստանը նաև ԵԱՏՄ անդամ-երկիր է և Չինաստանի համար ԵԱՏՄ-ի հետ համագործակցության հնարավոր ևս մեկ հարթակ: Հաշվի առնելով, որ տարածաշրջանում արդեն կա երկիր, որն ունի ազատ առևտրի պայմանագիր Չինաստանի հետ (Վրաստանը), ՀՀ-ն ևս կարող է ձեռնամուխ լինել Չինաստանի հետ համագործակցության համար ազատ տնտեսական գոտու հիմնմանը, ինչպիսին է օրինակ Մեղրու ԱՏԳ-ն Իրանի հետ համագործակցության համատեքստում: Չինաստանի՝ ԵԱՏՄ-ի հետ համագործակցելու

[217] Մեկ գոտի՝ մեկ ուղի. Չինաստանը Հայաստանի միջով դեպի Եվրոպա ճանապարհ է փորձում բացել, 29.09.2017, https://armeniasputnik.am/analytics/20170929/8853334/armenia-chinastan-metaqsi.html

[218] China Interested in Iran-Armenia Rail Project, 05.03.2018,https://financialtribune.com/articles/economy-business-and-markets/83024/china-interested-in-iran-armenia-rail-project

[219] ՉԺՀ նախագահ Սի Ծինփինի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության անկախության 27-րդ տարեդարձի առթիվ, 20.09.2018, https://www.president.am/hy/press-release/item/2018/06/23/President-Armen-Sarkissian-received-congratulation-message-from-President-of-China/

հետաքրքրվածության մասին է վկայում ԵԱՏՄ-Չինաստանի առևտրային տնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը[220]:

Անշուշտ ակնհայտ է, որ Չինաստանի այս «ենթակառուցվածքային էքսպանսիայի» առաջնային նպատակը Չինաստանի տնտեսական շահի ապահովումն է ու տնտեսական օգուտների ստացումը, և առաջին հայացքից հարց է առաջանում՝ որքանով այն կարելի է համարել փափուկ ուժի դրսևորում սույն աշխատանքում առաջ քաշված սահմանման շրջանակներում: Այս հարցադրման համատեքստում նախ պետք է նշել, որ պետությունների տնտեսական քաղաքականությունը բազմաչափ և բազմավեկտոր մեխանիզմների մի համալիր է, որը հետապնդում է բազմաբնույթ նպատակներ և երբեմն հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների: Այդ իմաստով, Չինաստանի այս «ենթակառուցվածքային էքսպանսիայի» առաջնային նպատակը սեփական տնտեսական շահի առաջ մղումն է, բայց մյուս կողմից այդ «էքսպանսիայի» արդյունքներից, զարգացվող հաղորդակցային ուղիներից և կատարվող ներդրումներից օգուտներ են քաղում նաև «ընդունող երկրները», ինչը միանշանակ բարձրացնում և ամրապնդում է Չինաստանի գրավչությունը, այդ թվում նաև քաղաքական ազդեցությունը այդ երկրների «աչքերում»: Ի վերջո, փափուկ ուժը, որպես այդպիսին, գոնե ֆորմալ իմաստով պետության արտաքին քաղաքական գործիքակազմի առանձին և ինքնուրույն բաղադրիչ չէ, պետությունները երբեք չեն հայտարարում, որ պատրաստվում են կիրառել փափուկ ուժ x երկրի նկատմամբ: Փոխարենը տարատեսակ բնագավառներում ծավալվող համագործակցությունը և տարվող

---

[220] **Սահակյան Մ.**, նշվ. աշխ., էջ 133

քաղաքականությունն հաճախ իր մեջ պարունակում է նաև փափուկ էլեմենտ, և այս դեպքը հենց դրա վկայությունն է: Մյուս կողմից, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Սահակյանը, ներգրավվածությունը Չինաստանի տնտեսական նախաձեռնություններում ավելի փոքր երկրների համար կարևոր է նրանով, որ հնարավորություն է ընձեռում իրենց ձայնն ավելի լսելի դարձնելու Չինաստանում[221]:

Բացի հաղորդակցային ուղիների զարգացման մեջ կատարված ներդրումներից, չի կարելի չհիշատակել նաև Հայաստանին տարատեսակ ձևաչափերով տրամադրվող տնտեսական օժանդակությունը՝ բուն ֆինանսական օժանդակության (վերջին տարիների ընթացքում մոտ 50 մլն ԱՄՆ դոլլար), հանրային տրանսպորտի և շտապօգնության մեքենաների[222], ինչպես նաև ռազմական օժանդակության տրամադրման տեսքով[223]: Չինաստանն ըմբռնումով է մոտենում Հայաստանի շրջափակված լինելու հանգամանքին և փորձում է տարածաշրջանային ծրագրերում ներառված պահել նաև վերջինիս: Հայաստանի հանդեպ «հոգատար» վերաբերմունքի դրսևորում կարելի է համարել Ցեղասպանության 100-րդ տարելիցը լուսաբանելու համար տրամադրված մոտ 40 տոննա տեխնիկական օժանդակությունը [224]: Երկու երկրների միջև բարեկամության խորագրի ներքո Չինաստանի կողմից տնտեսական օժանդակությունը տրամադրումը Հայաստանի հետ համաչափ հարաբերությունների կառուցման կարևոր ազդակ է:

---

221 Նույն տեղում, էջ 23

222 China Donates More Ambulances To Armenia, 17.10.2018, https://www.azatutyun.am/a/29549062.html

223 China to provide 10 million yuan in aid to Armenia, Public Radio of Armenia 04.09.2017, http://old.armradio.am/en/2017/09/04/china-to-provide-10-million-yuan-in-aid-to-armenia/

224 Տե՛ս China in the Caucasus, 06.02.2016, https://thediplomat.com/2016/02/china-in-the-caucasus/

Չինաստանի տնտեսական օժանդակության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն դեպքերի գերակշիռ մեծամասնությունում անհատույց է և չի ներառում որևէ փոխպայմանավորման բաղադրիչ՝ ի տարբերություն ԱՄՆ-ի և ԵՄ-ի: Չինաստանն իր գործընկերների առաջ չի դնում որևէ նախապայման, ինչպես օրինակ, ժողովրդավարացումը, մարդու իրավունքների վիճակի բարելավումը և այլն: Սա անհամեմատ մեծացնում է այդ օժանդակությունն «ընդունել» ցանկացող երկրների ցուցակը:

Բացի տնտեսական ներգրավվածությունից, Չինաստանը տարածաշրջանում որոշակի ակտիվություն է ցուցաբերում փափուկ ուժի մշակութային և կրթական մեխանիզմների մասով: Ընդ որում, Չինաստանի պարագայում այս երկու գործառույթները միահյուսված են փափուկ ուժի մեկ մեխանիզմի՝ Կոնֆուցիուսի ինստիտուտների գործունեության շրջանակներում:Պետք է նշել ,որ Չինաստանը վերջին տարիների ընթացքում բավականին զարգացրել է փափուկ ուժի «առաջամարտիկ» համարվող Կոնֆուցիուսի ինստիտուտների իր ցանցը՝ հասցնելով դրանց թիվը 500-ից ավելիի ամբողջ աշխարհում: Դրանց պաշտոնապես հռչակված նպատակը չինական լեզվի և մշակույթի տարածումն ու հանրայնացումն է [225]: Պատահական չէ,որ դրանք հիմնականում գործում են հյուրընկալող երկրի համալսարաններից որևէ մեկում, իսկ դրանց հովանու ներքո սովորաբար ստեղծվում են հիմնադրամներ,որոնք համակարգում են ուսանողական փոխանակումները: Կոնֆուցիուսի ինստիտուտները կարելի է համարել «Բրիտանական

[225] Տե՛ս **Hughes C.**, Confucius Institutes and the university: distinguishing the political mission from the cultural, Issues and Studies // 2014, 50 (4). ISSN 1013-2511, p. 46-47

խորհրդի», «Ալյանս Ֆրանսեզի», «Սերվանտեսի ինստիտուտների»յուրատեսակ նմանակը:

Հարավային Կովկասը ևս բացառություն չէ մշակութային ազդեցության ընդլայնման իմաստով: Կոնֆուցիուսի ինստիտուտներ առկա են տարածաշրջանի բոլոր երեք երկրներում՝ մեկական Երևանում և Թբիլիսիում և ևս 2-ը՝ Բաքվում: Կոնֆուցիուսի ինստիտուտները, մի կողմից, իրենց վրա են վերցրել կրթական մեխանիզմների դերակատարությունը. վերջիններիս օժանդակությամբ և հովանավորությամբ երեք երկրներում պարբերաբար անցկացվում են չինարենի ուսուցման, վերապատրաստման դասընթացներ տարատեսակ ձևաչափերով: Դրամաշնորհների չինական խորհրդի օգնությամբ և տրամադրված միջոցներով, ինչպես նաև երկկողմ փոխանակման ծրագրերով Չինաստանում սովորում են մի քանի տասնյակ ուսանողներ տարածաշրջանի երեք երկրներից[226]: Մյուս կողմից, Կոնֆուցիուսի ինստիտուտները զբաղվում են նաև չինական մշակույթի տարածմամբ, մշակութային փոխանակումների իրականացմամբ, տարատեսակ մշակութային միջոցառումների կազմակերպմամբ և այլն:

Տարածաշրջանում առաջին նմանատիպ ինստիտուտը բացվեց Երևանում՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում 2009թ.-ին և ստացավ «Կոնֆուցիուսի ինստիտուտ կրթական-մշակութային կենտրոն» անվանումը: Վերջինս զբաղվում է ինչպես

[226] Տե՛ս օրինակ «Միջպետական ծրագրերով 16 հայ ուսանող կրթություն կստանա Չինաստանում», 27.03.2017, https://bit.ly/2SR60Ph , «Министерство образования отправляет в Китай 23 студентов», 08.08.2018, http://1news.az/news/ministerstvo-obrazovaniya-otpravlyaet-v-kitay-23-studentov, “Цзи Яньчи: Мы готовы развивать грузино-китайские отношения по всем направлениям”, 13.06.2017, http://newcaucasus.com/economy/16346-tszi-yanchi-myi-gotovyi-razvivat-gruzino-kitayskie-otnosheniya-po-vsem-napravleniyam.html

չինարենի ուսուցման, այնպես էլ չինական մշակույթի, մասնավորապես արվեստի, գրականության, կինեմատոգրաֆիայի տարածմամբ: Այն օժանդակում է 2015թ. Երևանի պետական համալսարանում բացված Չինարենի և չինական մշակույթի կենտրոնին և գործող 3 Կոնֆուցիոսի լսարաններին:

Ադրբեջանում Կոնֆուցիոսի առաջին ինստիտուտը բացվեց 2011թ.-ին՝ Բաքվի պետական համալսարանի հովանու ներքո: Ինստիտուտի դասընթացներով դրա ստեղծումից ի վեր վերապատրաստվել է մոտ 1500 մարդ: Ներկայումս ինստիտուտի շրջանակներում սովորում են մոտ 300 ուսանողներ[227]: 2016թ.-ին ևս մեկ Կոնֆուցիոսի ինստիտուտ է բացվել Ադրբեջանի Լեզվաբանական համալսարանի հովանու ներքո:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այստեղ Կոնֆուցիոսի ինստիտուտը գործում է 2010թ-ից՝ Թբիլիսիի Ազատ համալսարանի հովանու ներքո: Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Միխայիլ Բատիաշվիլին և Վրաստանում Չինաստանի դեսպան Ցի Յանչին 2019թ. փետրվարի 17-ին փոխըմբռնման հուշագիր են ստորագրել, որի նպատակը չինական մշակույթի հանրայնացումն է Վրաստանում և դրա ուսուցմանը աջակցության ցուցաբերումը: Հուշագրի ստորագրումից հետո կարճ ժամանակ անց, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարվեց, որ վրացական միջնակարգ դպրոցներում 2019-2020թթ.

227 Տե՛ս **Wu H.**, “Azerbaijanis realising the chinese dream”, Winter 2016-2017, http://www.visions.az/en/news/856/118da09f/

ուսումնական տարվանից նախատեսում է ներառել չինարենը՝ որպես երկրորդ օտար լեզու[228]:

Բացի Կոնֆուցիուսի ինստիտուտներից, տարածաշրջանում Չինաստանի փափուկ ուժի կրթական մեխանիզմներից ուշադրության է արժանի նաև 2018թ. օգոստոսի 22-ին բացված Հայ-չինական բարեկամության դպրոցը, որը տարածաշրջանի միակ նմանատիպ դպրոցն է: Դպրոցի կառուցման համար Չինաստանը հատկացրել է մոտ 12 մլն ԱՄՆ դոլար: Այստեղ ուսանելու հնարավորություն ունի մոտ 400 աշակերտ՝ 5-12-րդ դասարաններում: Հայաստանի բնակչության թվաքանակի հարաբերակցությամբ, կարծում ենք,սա բավականին մեծ թիվ է: Ուշագրավ է այն հանգամանքը, որ դպրոցը հանրակրթական է և որևէ ֆինանսական պարտավորություն չի ամրագրում ուսանել ցանկացողների համար[229]: Դպրոցում դասավանդում են Չինաստանից ժամանած մասնագետները: Հայաստանում նմանատիպ դպրոցի բացումը արտացոլում է Հայաստանի հետաքրքրվածությունը չինական լեզվի և կրթության հանդեպ, ինչպես նաև որոշակիորեն «հավասարակշռում է» Չինաստանի տնտեսական ավելի ծանրակշիռ ներգրավվածությանը հարևան երկու երկրներում:

Ակնհայտ է, որ նմանատիպ կրթական և մշակութային մեխանիզմների ներդնումը միանշանակ դրականորեն է ազդում տարածաշրջանում Չինաստանի քաղաքականության վրա՝ նպաստելով այդ երկրի կողմից տարվող քաղաքականության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացմանը: Դա վկայում

---

228 Китайский в Грузии со следующего года, *19.02.2019*, http://jnews.ge/?p=29273

229 Չինարենը չինարենով. ինչու հայ ծնողը կընտրի Երևանում բացվող չինական դպրոցը, 06.03.2018, https://armeniasputnik.am/society/20180306/10808911/chinakan-dproc-erevan.html

է նաև այն մասին, որ տարածաշրջանում Չինաստանի հետապնդած նպատակներն ունեն երկարաժամկետ բնույթ և 3 երկրների հասարակությունների համակրանքն այս համատեքստում ունի կարևոր դերակատարություն: Մյուս կողմից, դա նաև այն բանի վկայությունն է, որ տարածաշրջանում Չինաստանը շահագրգռված է ավելի շատ սեփական իմիջի և գրավչության մակարդակի բարձրացմամբ, քան կոնկրետ քաղաքական/անվտանգային օրակարգի առաջ մղմամբ, ինչը բնորոշ է տարածաշրջանում ներգրավված այլ դերակատարներին:

Չինաստանի փափուկ ուժի քաղաքականությունը տարածաշրջանում հիմնականում պասիվ է քաղաքական մեխանիզմների մասով և սահմանափակվում է տարածաշրջանի երկրների համար «զգայուն» քաղաքական հիմնահարցերի նկատմամբ չեզոքության արտահայտումներով: Ի տարբերություն Արևմուտքի՝ Չինաստանը իր քաղաքական համակարգը «գովազդելու» և իր քաղաքական արժեքներն արտահանելու նպատակ չի հետապնդում: Սա չի նշանակում, որ Չինաստանն «արհամարհում է» տարածաշրջանի երկրների հետ քաղաքական հարաբերությունները: Այսպես, Երևանում ներկայումս կառուցվում է Չինաստանի դեսպանության նոր շենքը, որն իր մեծությամբ լինելու է 2-րդը՝ հետխորհրդային տարածաշրջանում Չինաստանի դեսպանությունների շարքում: Պետք է նաև մատնանշել Հայաստանի և Ադրբեջանի՝ Շանհայան համագործակցության կազմակերպությունում երկխոսության գործընկերոջ կարգավիճակ ունենալու հանգամանքը, որտեղ Չինաստանն ունի բավականին ծանրակշիռ դերակատարություն:

Չինաստանը տարածաշրջանում համեմատաբար պասիվ է նաև տեղեկատվական մեխանիզմների առումով՝ գրեթե ներկայացված չլինելով երեք երկրներից և ոչ մեկի մեդիադաշտում: Չինական այնպիսի խոշոր մեդիաընկերություններ, ինչպիսիք են Xinhua news-ը կամ China daily-ն որևէ ձևաչափով ներկայացված չեն տարածաշրջանում:Կարծում ենք՝ Չինաստանին տարածաշրջանում սեփական գրավչությունն ընդլայնելու հիմնական խոչընդոտներից մեկը տարածաշրջանի երեք երկրներում հանրային իրազեկման ցածր մակարդակն է, և տեղեկատվական մեխանիզմները կարող են լրացնել այդ բացը: Ուշագրավ է, որ տնտեսական ՄԳՄՃ հետ մեկտեղ Չինաստանն առաջ է քաշել նաև տեղեկատվական Մետաքսե ճանապարհի նախաձեռնությունը, որը նպատակ ունի զարգացնելու հեռահաղորդակցման ենթակառուցվածքները ՄԳՄՃ ամբողջ երկայնքով:

Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ Հարավային Կովկասում Չինաստանի «փափուկ ներկայությունը» հիմնականում ծավալվել է տնտեսական՝ մասամբ նաև մշակութային և կրթական մեխանիզմների շուրջ: Այս առումով Չինաստանը զիջում է տարածաշրջանում ներգրավված այնպիսի դերակատարների, ինչպիսիք են ԱՄՆ-ն, ԵՄ-ն կամ Ռուսաստանը,որոնք ներկայացված են փափուկ ուժի մեխանիզմների ոլորտային գրեթե ամբողջ սպեկտրով: Այսպիսի «թիրախային» ներգրավման հիմնապատճառ կարելի է համարել Չինաստանի՝ շատ կոնկրետ ձևակերպված աշխարհատնտեսական տեսլականը, որի շրջանակներում Հարավային Կովկասն ունի որոշակի դերակատարությունն որին շաղկապված են տարածաշրջանում այդ երկրի փափուկ ուժի մեխանիզմները: Մյուս կողմից,դա կարելի է բացատրել աշխարհաքաղաքական իմաստով

Չինաստանի առաջնահերթությունների շարքում Հարավային Կովկասի համեմատաբար ցածր դիրքով՝ չնայած այստեղ գործող հաղորդակցային ուղիների ընձեռած որոշակի առավելություններին: Այդ մասին է վկայում թեկուզ միայն այն հանգամանքը, որ Չինաստանի նախագահի մակարդակով տարածաշրջան այց երբևէ տեղի չի ունեցել:

Ընդհանուր պատկերը, որը ստացվում է տարածաշրջանի երկրներում Չինաստանի փափուկ ուժի մեխանիզմների վերլուծությունից հետևյալն է. Վրաստանում և Ադրբեջանում Չինաստանի փափուկ ուժի քաղաքականությունը ծավալվում է հիմնականում տնտեսական մեխանիզմների շուրջ՝ այսպես կոչված «ենթակառուցվածքային էքսպանսիայի» և ներդրումների տեսքով, որն, անշուշտ, պայմանավորված է այս երկրներում՝ «Մեկ գոտի մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում տեղավորվող հաղորդակցային ուղիների առկայությամբ: Միաժամանակ, այս երկու երկրներում Չինաստանն ունի նաև որոշակի կրթական և մշակութային ներգրավվածություն՝ ի դեմս Կոնֆուցիոսի ինստիտուտների և նրանց կողմից չինարենի և չինական մշակույթի հանրայնացմանն ուղղված ջանքերի: Մինչդեռ Հայաստանում, թեև նույնպես կարելի է նկատել տնտեսական ներգրավվածության և հատկապես տնտեսական օժանդակության որոշակի տարրեր, ավելի մեծ չափով շեշտադրվում են կրթական և մշակութային մեխանիզմները, ի դեմս նաև Հայաստանում գործող հայ-չինական բարեկամության՝ տարածաշրջանում միակ դպրոցի:

Ամեն դեպքում, կարելի է արձանագրել, որ Չինաստանը գիտակցում է միմիայն տնտեսական միջոցներով տարածաշրջանում իր գրավչությունը

պահպանելու մոտեցման ոչ լիարժեքությունը և վերջին տարիների ընթացքում կիրառում է նաև մշակութային և կրթական մեխանիզմների որոշակի բաղադրիչներ՝ փորձելով լրացնել տարածաշրջանի երկրներում հանրային իրազեկման մակարդակի բացը: Կարծում ենք, առկա գործիքներից զատ նաև տեղեկատվական մեխանիզմների կիրառումը կարող է նպաստել այդ բացը լրացնելուն:

# Գլուխ 3. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

## 3.1. Փափուկ ուժի ռուսական ընկալումը և ազդեցության մեխանիզմները Հարավային Կովկասում

Թեև փափուկ ուժ եզրի շուրջ քննարկումներն ի սկզբանե ծավալվել են արևմտյան քաղաքագիտական մտքի շրջանակներում, դրանք աստիճանաբար մուտք են գործել նաև աշխարհաքաղաքական այլ դերակատարների հասարակական-քաղաքական դիսկուրս, իսկ այնուհետև վերածվել են արտաքին քաղաքական զինանոցի կարևոր բաղադրիչի: Այդ դերակատարների շարքում է նաև Ռուսաստանը, որը, ժառանգելով ԽՍՀՄ ժամանակաշրջանի հսկայական տնտեսական և քաղաքական ենթակառուցվածքների զգալի մասը և միջուկային գերտերության կարգավիճակը, չէր կարող անմասն մնալ արտաքին

քաղաքական գործիքակազմի փոխակերպման, դրանում նմանատիպ նոր տարրերի ներմուծման գործընթացից:

Ռուսական հասարակական-քաղաքական դիսկուրսում փափուկ ուժը եզրը հայտնվեց միայն 2000-ական թվականների վերջերին: 2008թ. հոկտեմբերին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը, հարցազրույց տալով Русская Газета օրաթերթին, նշել էր, որ «...ժամանակակից աշխարհում մեծ դերակատարություն ունի այսպես կոչված փափուկ ուժը, որը քաղաքակրթական, հումանիտար, մշակութային, արտաքին քաղաքական և գրավչության այլ մեթոդներով միջավայրի վրա ազդելու կարողությունն է: Ես կարծում եմ, որ մեր հայրենակիցների հետկապը պետք է պահպանել հենց այս գործոնները հաշվի առնելով»[230]: Այդ ժամանակաշրջանը համընկավ ռուսական փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացի հետ:

Պաշտոնապես փափուկ ուժ եզրը ռուսական արտաքին քաղաքական գործիքակազմ մուտք գործեց 2013թ. ընդունված ՌԴ Արտաքին քաղաքականության հայեցակարգի ընդունմամբ: Այդ փաստաթղթում փափուկ ուժը դիտարկվում է որպես «արտաքին քաղաքական խնդիրների լուծման համալիր գործիքակազմ, որը հենվում է քաղաքացիական հասարակության, տեղեկատվական-հաղորդակցային, հումանիտար և դասական դիվանագիտությանը այլընտրանք հանդիսացող այլ մեթոդների ու տեխնոլոգիաների վրա: Միաժամանակ, համաշխարհային մրցակցության ուժեղացումը և ճգնաժամային պոտենցիալի կուտակումը առաջացնում են փափուկ ուժի ապակառուցողական և հակաիրավական օգտագործման ռիսկեր՝ (...)

[230] Эксклюзивное интервью главы МИД РФ Сергея Лаврова "Российской газете", 30.10.2008, https://rg.ru/2008/10/30/lavrov.html

ինքնիշխան պետությունների վրա քաղաքական ճնշումների գործադրման, նրանց ներքին գործերին միջամտության, իրավիճակի ապակայունացման, հասարակական կարծիքի և գիտակցության մանիպուլյացիայի, այսպես կոչված մարդասիրական և մարդու իրավունքների պաշտպանության ծրագրերի ֆինանսավորման միջոցով»[231]:

2016թ. ընդունված Արտաքին քաղաքականության նոր հայեցակարգում հասկացությանը տրված է ավելի նեղ բնորոշում, մասնավորապես՝ «Ժամանակակից միջազգային հարաբերությունների անբաժան մասն է դառնում արտաքին քաղաքական խնդիրների լուծման գործում փափուկ ուժի գործիքների կիրառումը՝ առաջին հերթին քաղաքացիական հասարակության հնարավորությունները, տեղեկատվական-հաղորդակցային, հումանիտար և այլ մեթոդներն ու տեխնոլոգիաները, ի լրումն ավանդական դիվանագիտական մեթոդների»[232]:

Հիմնախնդրի հետազոտողներ Ա. Սերգունինի և Լ. Կարաբեշկինի կարծիքով, ռուսական մոտեցման մեջ գերակայում է փափուկ ուժի «ինստրումենտալ» ընկալումը, որի շրջանակներում այն դիտարկվում է որպես որոշակի քաղաքական գործիքների և մեխանիզմների ամբողջություն, որոնք կոչված են կոնկրետ շահերի սպասարկմանը[233]: Այդ ընկալման տրամաբանությամբ, փափուկ ուժը կարող է օգտագործվել ինչպես դրական/կառուցողական, այնպես էլ բացասական/ապակառուցողական նպատակներով: Ընդհանուր առմամբ համաձայնելով

---

[231]Концепция внешней политики Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В.В. Путиным 12 февраля 2013 г.) (утратила силу), http://www.mid.ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/122186

[232] Концепция внешней политики Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В.В.Путиным 30 ноября 2016 г.), http://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/2542248

[233] Տե՛ս **Sergunin A., Karabeshkin L.**, Understanding Russia's Soft Power Strategy // Sage Journals, 12.10.2015., p.352

այս մեկնաբանության հետ՝ կարելի է նշել, որ ըստ էության, այն տարբերվում է եզրի հեղինակ Ջոզեֆ Նայի ընկալումից, ով փափուկ ուժը դիտարկում էր որպես գրավչության միջոցով համակրանքի այնպիսի մթնոլորտի ստեղծում, որը նպաստում է երկարաժամկետ շահերի բավարարմանը[234]: Նայի ընկալման մեջ շեշտադրվում է փափուկ ուժի դրական/գրավիչ ասպեկտը, այդ ուժի արդյունքում օբյեկտի՝ կամավոր հիմքով սեփական նախընտրությունների և վարքի փոփոխությունը: Փոխարենը ռուսական ընկալման մեջ փափուկ ուժին ավելի լայն մեկնաբանություն է տրվում՝ դիտարկելով որպես միջազգային հարաբերություններում պետությունների կողմից սեփական նպատակներին հասնելու գործիքներից մեկը: Այդ մոտեցումը, կարծում ենք, տրամաբանական է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եզրն ի սկզբանե դիտարկվել է որպես արտասահմանում ապրող ռուս բնակչության ռեսուրսը իրացնելու միջոց, սփյուռքի հետ աշխատանքի հիմնական գործիք:

Ֆ. Լուկյանովի կարծիքով, ռուսական փափուկ ուժը հետապնդում է 3ընդհանրական նպատակներ՝

1) Տարածելու ռուսական մշակույթը, լեզուն և կրթական համակարգը՝ որպես գրավիչ
2) Հակազդել արտասահմանյան մամուլում Ռուսաստանի բացասական իմիջի ստեղծմանը
3) Ստեղծել Ռուսաստանի ընկերների խումբ ամբողջ աշխարհում[235]

Ռուսաստանի փափուկ ուժը հենվում է այնպիսի ռեսուրսների վրա, ինչպիսիք են այդ երկրի մշակույթը, պատմությունը, կրթական համակարգը,

---

[234] Տե՛ս **Nye J.**, Bound to Lead: The Changing Nature of American Power, Basic Books, New York, 1990, p. 8-9
[235] Տե՛ս **Lukyanov F.**, Why Russia’s Soft Power Is Too Soft, 01.02.2013, https://eng.globalaffairs.ru/redcol/Why-Russias-Soft-Power-Is-Too-Soft-15845

արտասահմանում ապրող մեծաթիվ ռուսալեզու բնակչությունը և այլն:

2000-ական թվականների վերջը կարելի է համարել նաև ռուսական փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացի սկիզբը: Առաջին նշանակալի իրադարձությունն այս բնագավառում ՌԴ նախագահ Վ. Պուտինի հրամանագրով 2007թ. «Русский Мир» հիմնադրամի ստեղծումն էր, որին տրվեց հասարակական կազմակերպության կարգավիճակ: Հիմնադրամի նպատակը ռուսական մշակույթի, լեզվի, կրթական համակարգի տարածմանն ուղղված քայլերի ձեռնարկումն է[236]: Հիմնադրամի անվանումը պատահական չէ.աշխարհում ռուսական լեզվի և մշակույթի կրողները դիտարկվում են որպես փափուկ ուժի յուրատեսակ կապիտալ,որոնք իրացման կարիք ունեն:

Ռուսական փափուկ ուժի մյուս «առաջամարտիկը» 2008թ. ստեղծված «Россотрудничество» դաշնային գործակալությունն է,որին տրվել է ՌԴ ԱԳՆ-ին կից մարմնի կարգավիճակ: Գործակալության հիմնադրման ժամանակ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը խոսել էր այդ գործակալությունը Ռուսաստանի փափուկ ուժի հիմնասյունը դարձնելու մտադրության մասին[237]: Գործակալության հիմնանպատակներն են ռուսական մշակույթի և լեզվի տարածումը,հանրային դիվանագիտությունը, արտասահմանում բնակվող ռուսական համայնքին աջակցությունը, պատմական ժառանգության պահպանումը, ՌԴ դաշնային սուբյեկտների միջազգային կապերի ընդլայնումը և այլն[238]: Գործակալությունն այսօր

[236] «Русский Мир» հիմնադրամի պաշտոնական կայքէջ, https://russkiymir.ru/fund/
[237] Д. Медведев: Россотрудничество должно стать проводником "мягкой силы", 03.09.2012., https://www.vedomosti.ru/politics/news/2012/09/03/medvedev_rossotrudnichestvo_dolzhno_stat
[238] «Россотрудничество» գործակալության պաշտոնական կայքէջ, http://rs.gov.ru/ru

ներկայացուցչություններ ունի 80-ից ավելի երկրներում, այդ թվում՝ եվրոպական երկրների մեծամասնությունում, ԱՄՆ-ում, Կանադայում, ինչպես նաև մի շարք լատինամերիկյան, ասիական և աֆրիկյան երկրներում:

Բացի այս երկու խոշոր կառույցներից, հասարակական հիմունքներով, ինչպես նաև ՌԴ ԱԳՆ հովանու տակ գործում են մի շարք ավելի փոքր կառույցներ, որոնցից են Հանրային դիվանագիտության աջակցության Գորչակովի հիմնադրամը և այլն:

Հիմնավոր կլինի պնդել, որ նմանատիպ մեխանիզմների ներդնումը արտաքին քաղաքական գործիքակազմում խորհրդանշեց ՌԴ-ի կողմից համաշխարհային մակարդակում գրավչության ընդլայնման անհրաժեշտության գիտակցումը: Վալերի Տիշկովի կարծիքով, որպես այդ ընդլայնման շարժիչ ուժ է հանդես գալիս 20-րդ դարի ընթացքում աշխարհակարգի մի քանի հիմնական տեղաշարժերի արդյունքում ամբողջ աշխարհով մեկ սփռված ռուսալեզու բնակչությունը[239]: Որոշ տվյալներով, ամբողջ աշխարհում առնվազն ռուսերեն հասկացող մարդկանց թիվը հասնում է մոտ 280 մլն-ի, ինչը, բնականաբար, աշխատանքի հսկայական դաշտ է բացում Ռուսաստանի համար[240]:

Խոսելով Հարավային Կովկասում Ռուսաստանի փափուկ ուժի ազդեցության մեխանիզմների մասին՝ պետք է նախ նշել, որ այս տարածաշրջանը ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի կողմից դիտարկվեց այսպես կոչված «Մերձավոր արտասահմանի» (Ближнее

---

[239] Տե՛ս **Tishkov V.**, The Russian World – Changing Meanings and Strategies // Carnegie Papers 95, August 2008., p.13, https://www.ciaonet.org/attachments/6481/uploads

[240] Տե՛ս **Crystal D.**, The Cambridge Encyclopedia of Language (Cambridge: Cambridge University Press, 1987), R. G. Gordon Jr., (ed.), Ethnologue: Languages of the World (15th edition). 2005, https://www.ethnologue.com/language/rus

зарубежье) տիրույթում: Ե.Վարդազարյանի կարծիքով,դա նշանակում էր հետևյալը՝

1) ՌԴ-ն այդ գոտում հակազդելու է սեփական շահերն առաջ մղող բոլոր արտաքին դերակատարներին
2) ՌԴ-ն փորձելու է կանխել դաշինքների ստեղծումը և հակառուսական տրամադրությունները
3) ՌԴ-ն պաշտպանելու է այդ տարածաշրջանի երկրների ռուսալեզու բնակչությանը
4) ՌԴ-ն այդ տարածքներին տալիս է աշխարհառազմավարական նշանակություն
5) Արևմուտքը փորձում է թուլացնել ՌԴ ազդեցությունը[241]

Բնականաբար, ինչպես Հարավային Կովկասի, այնպես էլ մնացյալ հետխորհրդային տարածաշրջանի հանդեպ առանձնահատուկ մոտեցում որդեգրելու հիմքում առկա էին որոշակի օբյեկտիվ պատճառներ, այդ թվում՝ մոտ 70 տարվա «համատեղ կյանքի» փորձը, ռուսական համայնքների առկայությունը հատկապես հետխորհրդային մի քանի երկրներում (Ղազախստան, Ուկրաինա, Բելառուս,Մերձբալթյան երկրներ),ինչպես նաև այդ երկրների տեղի բնակչության շրջանում ռուսերենի, ռուսական մշակույթի տարածվածությունը, որն ինքնին որոշակի բարենպաստ հող է ստեղծում Ռուսաստանի ազդեցության պահպանման համար:

Ասվածը նաև արդիական է Հարավային Կովկասի համար. տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրում ևս առկա են ռուսական

[241] **Վարդազարյան Ե.**, ԱՄՆ, ԵՄ և ՌԴ ռազմավարությունը Հրվ. Կովկասում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ,Երևան 2013,էջ 88-89

համայնքներ, չնայած թվաքանակով դրանք միմյանցից էականորեն տարբերվում են (Հայաստանում՝ 12.000[242], Վրաստանում՝ 26.000[243], Ադրբեջանում՝ 120.000[244]): Համայնքների առկայությունը Հարավային Կովկասում ՌԴ փափուկ ուժի քաղաքականության էությունը պայմանավորող հիմնական գործոններից և առանձնահատկություններից մեկն է: Ընդ որում, տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի հետ ՌԴ հարաբերությունները որակապես տարբերվում են: Այսպես, եթե Հայաստանի հետ Ռուսաստանի հարաբերությունները կարելի է բնութագրել դաշնակցային եզրով, Ադրբեջանի հետ՝ գործընկերային, ապա Վրաստանի հետ հարաբերությունները գտնվում են փաստացի սառեցված վիճակում:

Տարածաշրջանի երկրների համար Ռուսաստանի տնտեսական գրավչությունը և կարևորությունը պատկերացնելու համար հարկ է նախևառաջ դիտարկել ՌԴ-ի և տարածաշրջանի 3 երկրների միջև առևտրաշրջանառությունը 2015-2017թթ.[245] (տվյալները ներկայացված են ԱՄՆ դոլլարով).

| | **2015** | **2016** | **2017** |
|---|---|---|---|
| **Հայաստան** | 1.2մլրդ | 1.3մլրդ | 1.7մլրդ |
| **Վրաստան** | 675մլն | 881մլն | 1.1մլրդ |
| **Ադրբեջան** | 1.8մլրդ | 2մլրդ | 2մլրդ |

242 Տե՛ս «Հայաստանը թվերով. ժողովրդագրություն», ՀՀ Վիճակագրական կոմիտե, 16.11.2018., https://armenpress.am/arm/news/757921, https://www.armstat.am/file/article/armenia_2018_3.pdf
243 2014 General Population Census, National Statistics Office of Georgia (Geostat), http://geostat.ge/cms/site_images/_files/english/population/Census_release_ENG_2016.pdf
244 Ethnic composition of Azerbaijan: 2009 census., http://pop-stat.mashke.org/azerbaijan-ethnic2009.htm
245 Trade Map, Trade statistics for international business development, Monthly, quarterly and yearly trade data, https://trademap.org/Index.aspx

Աղյուսակն, ըստ էության, արտացոլում է տարածաշրջանի երկրների հետ տնտեսական հարաբերությունների մակարդակը: Ռուսաստանը Հայաստանի կարևորագույն առևտրային գործընկերն է, այդ թվում նաև բազմակողմ ձևաչափում (ԵԱՏՄ), Ադրբեջանի համար՝ հիմնականներից մեկը, իսկ Վրաստանը միտված է դեպի արևմտյան շուկաներ և Ռուսաստանը բարձր դիրք չի զբաղեցնում վերջինիս առաջնահերթությունների ցանկում: ՌԴ-ն ավանդականորեն բավականին ակտիվ է տարածաշրջանի երկրներում տնտեսական ներդրումների իմաստով: Ընդ որում, այս պարագայում առյուծի բաժինը հասել է Ադրբեջանին՝ 2018թ. դրությամբ մոտ այդ թիվը հասնում է մոտ 4.2 մլրդ ԱՄՆ դոլլարի: Նույն ժամանակահատվածի համար Հայաստանում ՌԴ ներդրումները կազմել են 1.3 մլրդ ԱՄՆ դոլլար, Վրաստանում՝ 392մլն[246]:

Հատկապես Հայաստանի դեպքում Ռուսաստանի փափուկ ուժի տնտեսական մեխանիզմները դիտարկելիս պետք է հաշվի առնել նաև Ռուսաստանից ուղարկվող տրանսֆերտների ծավալները: Վերջին տարիների ընթացքում դրանց ծավալներն էականորեն նվազել են՝ 2008թ. 2.2 մլրդ ԱՄՆ դոլլարից 2017թ.-ին հասնելով 1.1 մլրդ ԱՄՆ դոլլարի[247]: Սա բացատրվում է համաշխարհային տնտեսական ճգնաժամով, ինչպես նաև Ռուսաստանի հանդեպ կիրառվող պատժամիջոցներով: Բնականաբար, ՌԴ վերաբերմունքը արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների հանդեպ ուղղակի ազդեցություն ունի տրանսֆերտների ծավալի վրա:

---

[246] Статистика внешнего сектора, Центральный Банк Российсой Федерации, https://www.cbr.ru/statistics/?PrtId=svs

[247] Россотрудничество: Объем накопленных российских инвестиций в Армении составил 40% от их общего объема, 30.01.2019, https://finport.am/full_news.php?id=37187&lang=2

Վերջին տարիների ընթացքում Ռուսաստանը որոշակի ակտիվություն է ցուցաբերում Հայաստանում հատկապես փափուկ ուժի մշակութային մեխանիզմների մասով՝ ուղղված ինչպես տեղի ռուսական համայնքի համար մշակութային տարատեսակ միջոցառումների իրականացման, այնպես էլ տարածաշրջանի երկրների հետ մշակութային կապերի ընդլայնման տեսքով: Դրանց շարքում պետք է առանձնացնել «Россотрудничество» գործակալության և «Русский Мир» հիմնադրամի ներկայացուցչությունները՝ համապատասխանաբար Երևանում և Գյումրիում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնները, ինչպես նաև ԵՊՀ Ռուսական կենտրոնը, որոնք նպաստում են երկկողմ մշակութային, կրթական կապերի զարգացմանը[248]: «Россотрудничество»-ի ղեկավարի՝ ԱՊՀ-ի, արտասահմանում բնակվող հայրենակիցների և միջազգային մարդասիրական համագործակցության գծով տեղակալ Պավել Շեվցովի խոսքերով՝ «Россотрудничество»-ի գործունեությունը Հայաստանում գրանցել է բավականին դրական դինամիկա: «2009-2014թթ. այդ կառույցի կողմից ցուցաբերված օժանդակությունը կազմել է տարեկան մոտ 19 մլն ԱՄՆ դոլլար: Իսկ 2013-2015թթ. այդ կազմակերպությունը մոտ 10 մլն ԱՄՆ դոլլար է տրամադրել դպրոցական սննդի բարելավման նպատակով: 2014թ.-ից սկսած ՌԴ հովանավորությամբ իրականացվել է նաև Հայաստանի գյուղական համայնքների զարգացման համակարգային ծրագիր»[249]:

Որոշակի գործունեություն է ծավալում նաև Հանրային դիվանագիտության Գորչակովի

---

[248] Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի պաշտոնական կայքէջ, http://arm.rs.gov.ru/ru/activities/419

[249] ««Россотрудничество»: За последние годы помощь Армении росла неплохими темпами», 30.01.2019, https://news.am/rus/news/493587.html

հիմնադրամը, որն իրականացնում է մշակութային, կրթական, գիտական և այլ համագործակցության ծրագրեր, զբաղվում է ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության հետաշխատանքով[250]:

Ռուսաստանը բավականին ծանրակշիռ ներկայություն ունի Հայաստանում կրթական մեխանիզմների իմաստով՝ այստեղ ՌԴ կողմից հովանավորվող կրթական հաստատությունների շարքում հարկ է նշել Հայ-Ռուսական սլավոնական համալսարանը, որտեղ ներկայումս սովորում են մոտ 3000 ուսանողներ, 2015թ.-ին բացված Մ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղը, Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսական տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղը: Պ.Ծեվցովի խոսքերով՝ Հայաստանը ռուսական համալսարանների մասնաճյուղերի քանակով զբաղեցնում է առաջին տեղը: Միաժամանակ,Ռուսաստանի բուհերում սովորում են մոտ 5.500 Հայաստանի քաղաքացիներ, որոնցից 1.500-ը՝ ՌԴ-ի կողմից տրամադրված կրթաթոշակներով[251], ինչը խոսունցուցանիշ է:

Առանձնահատուկ իրավիճակ է ՀՀ-ում ռուսական դպրոցների գործունեության շուրջ: Ինչպես հայտնի է, 1993թ.-ին որոշում ընդունվեց փակելու ՀՀ տարածքում գործող բոլոր օտարալեզու դպրոցները, ինչն առաջին հերթին հարվածեց ռուսական դպրոցներին: Նույն տարվա ընթացքում ընդունված «Լեզվի մասին» օրենքով օտարալեզու դպրոցների թույլատրվեց միայն էթնիկ փոքրամասնությունների և Ռուսաստանի քաղաքացիների համար: Այս քաղաքականության արդյունքում ԽՍՀՄ ժամանակաշրջանում գործող մի

[250] Հանրային դիվանագիտության աջակցության Գորկչակովի հիմնադրամի պաշտոնական կայքէջ, https://gorchakovfund.ru/about/
[251] Նույն տեղում

քանի տասնյակ ռուսական դպրոցներից 2010թ. դրությամբ ՀՀ-ում մնացել էր ընդամենը 2 ռուսական դպրոց, թեև բոլոր դպրոցներում ռուսերենը մինչ այժմ էլ պարտադիր առարկա է[252]: Ընդհանրապես լեզվի հիմնախնդիրը բավականին արդիական է Ռուսաստանի համար, քանի որ ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ ամբողջ հետխորհրդային տարածաշրջանում ռուսերենի դիրքերն ու տարածվածությունն աստիճանաբար նվազում է, ինչն ուղղակի հարված է ռուսական փափուկ ուժի հնարավորություններին:

Գործում են մի շարք ռուսական եկեղեցիներ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, որոնք հիմնականում զբաղվում են տեղի ռուսական համայնքներին հոգևոր ծառայությունների մատուցմամբ:

Այդուհանդերձ, հատկապես հայ հասարակության աչքերում Ռուսաստանի գրավչության բարձրացումը հաճախ բախվում է մի շարք խոչընդոտների: Այսպես, մի կողմից Հայաստանի ռազմավարական դաշնակցի, Հայաստանի անվտանգության կարևոր բաղադրիչի՝ այդ թվում նաև դաշինքային ձևաչափով, մյուս կողմից Ադրբեջանին սպառազինություններ մատակարարող Ռուսաստանի իմիջները հայ հասարակության աչքերում մշտական հակազդեցության մեջ են, ինչն էականորեն դժվարացնում է այդ երկրի հանդեպ իրապես խորքային դրական վերաբերմունքի արմատավորումը: Հանրության մի հատվածի մոտ ընդհանրապես ՌԴ-ն դիտարկվում է որպես վտանգ: Բացի այդ, ռուսական իմիջի հանդեպ դրական վերաբերմունքի ամրապնդման ևս մեկ խոչընդոտ է

[252] Տե՛ս **Галстян Н., Маркаров А., Микаелян Г.**, Открытая Россия: новый облик в эру информации, Издательство Института диаспоры и интеграции, Москва 2012, с. 49-50

ռեսուրսների ոչ նպատակային ծախսումը և ընդհանուր «սոսնձող» ռազմավարության բացակայությունը, ընդ որում, այս երևույթը նկատելի է ոչ միայն Հայաստանում կամ նույնիսկ միայն տարածաշրջանում: Ռուսական փափուկ ուժի այդ խնդիրներն ամփոփում է Մ. Նեյմարկը, ով առանձնացնում է հետևյալ սահմանափակումները՝

1) Ռուսաստանի՝ որպես բրենդի գրավչության ցածր մակարդակը

2) Ոչ բավարար ֆինանսական և այլ ռեսուրսների ներդնումը

3) Քաղաքացիական հասարակության թույլ կայացվածությունը

4) Գործադիր իշխանության կողմից հանրային քաղաքականության ոլորտում առկա թերացումները

5) Տեղեկատվական-հաղորդակցային խողովակների ոչ օպտիմալ օգտագործումը[253]:

Ամփոփելով վերոնշյալ գործոնները՝ մի շարք հեղինակներ հանգում են այն եզրակացության, որ դրանցով պայմանավորված փափուկ ուժի պակասուրդը հարկադրում է Ռուսաստանին միջազգային մակարդակում ապավինել կոշտ ուժի միջոցներին[254]:

Ինչ վերաբերում է կոնկրետ Հարավային Կովկասում այս թերությունների կիրառականությանը, ապա թերևս կարելի է համաձայնել Հ.Սարգսյանի և Ն.Դունամալյանի այն դիտարկմանը, որ Ռուսաստանը փափուկ ուժի ոլորտում իր հիմնական ջանքերն ուղղում է տարածաշրջանի երկրների էլիտաների հետ

---

[253] Տե՛ս **Неймарк М.**, «Мягкая сила» в мировой политике, Дипломатическая академия МИД России, Москва, 2017, с. 35-36

[254] Տե՛ս **Караганов С.**, Россия в евроатлантике, Российская газета - Федеральный выпуск №5046 (222), 24.11.2009, https://rg.ru/2009/11/24/europa.html

հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ՝ ի վնաս այդ երկրների բնակչության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ աշխատանքի: Համեմատության համար, ԱՄՆ-ն այս ասպարեզում տանում է ավելի համալիր աշխատանքներ՝ կապեր հաստատելով տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական կենտրոնների, ընդդիմադիր ուժերի հետ[255]: Թերևս հենց այս համատեքստում կարելի է դիտարկել նաև տարածաշրջանի երկրներից հատկապես Ադրբեջանին սպառազինությունների վաճառքի միջոցով սեփական դիրքերն ամրապնդելու մոտեցումը՝ քանի որ այդպիսով, հասարակության զգալի հատվածների մոտ խորքային գրավչության լծակների բացակայության պայմաններում, առնվազն ապահովում է քաղաքական էլիտայի համակրանքը:

Ինչ վերաբերում է Ադրբեջանում Ռուսաստանի փափուկ ուժի մեխանիզմներին, ապա պետք է նշել, որ այստեղ ևս գործում են «Россотрудничество» գործակալության և «Русский Мир» հիմնադրամի ներկայացուցչությունները՝ համապատասխանաբար Բաքվի մշակութային-տեղեկատվական ռուսական կենտրոնը և «Русский Мир» հիմնադրամի Բաքվի պետական համալսարանի մասնաճյուղը: Դրանցից առաջինը զբաղվում է ինչպես մշակութային միջոցառումների իրականացմամբ, այնպես էլ հանրային դիվանագիտությամբ և տեղեկատվական քաղաքականությամբ, ակտիվորեն համագործակցում է ՁԼՄ-ների հետ, իսկ երկրորդն առավելապես կենտրոնացած է ռուսական մշակույթի, գիտության, արվեստի, գրականության տարածման վրա: Կարելի է նշել նաև սլավոնա-թուրքական միության, ինչպես

---

[255] Տե՛ս **Саркисян О. Л., Дунамалян Н. А.**, Публичная дипломатия на научной Южном Кавказе // Сборник международной конференции «Современные проблемы управления», № 3-4/2017, с. 440-441

նաև Լ. Գումիլյովի կենտրոնների գոյությունն Ադրբեջանում, որոնք հիմնականում թյուրքական և մահմեդական Ադրբեջանի իմիջը՝ որպես եվրասիական քաղաքակրթության մաս[256]:

Ադրբեջանում գործում են ռուսական կրթական մի շարք հաստատություններ՝ այդ թվում Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղը, Բաքվի սլավոնական համալսարանը: Ադրբեջանում ՌԴ դեսպանության կողմից կազմակերպված «Կրթություն» խորագրով միջազգային ցուցահանդեսի շրջանակներում ՌԴ դեսպան Մ. Բոչարնիկովը նշեց, որ ՌԴ-ում 2018թ. դրությամբ ուսում է ստանում մոտ 15.000 ադրբեջանցի[257]: Ադրբեջանում ներկայումս գործում են 16 ռուսական դպրոցներ, իսկ ադրբեջանական դպրոցներում դասավանդվում է ռուսերեն[258]:Գործում է 5ռուսական եկեղեցի:

Վերջին տարիների ընթացքում Ռուսաստանը ակտիվորեն զբաղվել է նաև տարածաշրջանում սեփական քաղաքականության տեղեկատվական ապահովման մեխանիզմների ամրապնդմամբ, որի վկայությունը տարածաշրջանի երկրներում ռուսական լրատվամիջոցների ակտիվ գործունեությունն է: Տարածաշրջանում ներկայացված են այնպիսի խոշոր ռուսական տեղեկատվական ընկերություններ, ինչպիսիք են Sputnik-ը և Interfax-ը: Ռուսական այնպիսի հեռուստաալիքներ,ինչպիսիք են ռուսական Առաջին ալիքը, «Россия-24»-ը, «Мир»-ը հեռարձակվում են հայկական և ադրբեջանական հեռուստատեսությամբ:Ուշագրավ է

---

256 Տե՛ս **Shiriyev Z.**, Betwixt and between: the reality of Russian soft-power in Azerbaijan, Heinrich Boll Stiftung, 16.10.2017, https://ge.boell.org/en/2017/10/16/betwixt-and-between-reality-russian-soft-power-azerbaijan

257 М. Бочарников: Российские вузы ждут азербайджанских студентов, 11.10.2018, https://az.sputniknews.ru/video/20181011/417392086/vystavka-obrazovanie-vuzy-russia.html

258 Россия – Азербайджан: «мягкая сила» на службе образовательной интеграции, 29.09.2015, https://eadaily.com/ru/news/2015/09/29/rossiya-azerbaydzhan-myagkaya-sila-na-sluzhbe-obrazovatelnoy-integracii

հատկապես Ադրբեջանում ռուսական տեղեկատվական մեխանիզմների գործունեությունը, որոնք, ի տարբերություն օրինակ արևմտյան և իրանական լրատվամիջոցների, հիմնականում զերծ են մնում պաշտոնական Բաքվի քաղաքականության քննադատությունից՝ ավելի շատ կենտրոնանալով արևմուտքին հակազդելու և «տատանվող զանգվածին» իր կողմը գրավելու վրա:

Ռուսաստանի փափուկ ուժի արդյունավետության տեսանկյունից բոլորովին այլ է իրավիճակը Վրաստանում, որտեղ ՌԴ փափուկ ուժի քաղաքականությունը գրանցել է շատ ավելի նվազ հաջողություններ, ինչն, իհարկե, պայմանավորված է մի շարք օբյեկտիվ պատճառներով: Դրանցից հիմնականը Աբխազիայի և Հրվ. Օսիայի հիմնախնդիրների շուրջ երկու երկրների հակադիր դիրքորոշումներն են, որի կուլմինացիան 2008թ. ռուս-վրացական պատերազմն էր և դրանից հետո Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հրվ. Օսիայի անկախության ճանաչումը: Ընդ որում, այս հարցում լարվածությունն ակնհայտ դարձավ արդեն ԽՍՀՄ փլուզման տարիներին՝ հետագայում խորանալով և ստանալով խրոնիկ բնույթ: Արդյունքում Վրաստանը 2005թ. հայտարարեց իր տարածքից ռուսական ռազմաբազան դուրս բերելու իր որոշման և Արևմտյան ինտեգրացիոն կառույցներին անդամակցելու իր մտադրության մասին: Հեղինակների մի մասը հակված է կարծելու, որ եթե նույնիսկ Վրաստանում առկա էին Ռուսաստանի փափուկ ուժի ամրապնդման որոշակի նախադրյալներ, ապա դրանք ի չիք դարձան 2008թ. ռուս-վրացական պատերազմով[259]: Մյուս կողմից, պատերազմը ցույց տվեց, որ Ռուսաստանն իր

---

[259] Տե՛ս **Nye J.,** The Future of Power, Public Affairs, New York, 2011, p. 176-177

անմիջական ռազմավարական շահերի գոտում տարբերակում չի դնում գործածվող միջոցների միջև և կարող է ընդհուպ մինչև կիրառել ռազմական ուժ սեփական շահերն առաջ մղելու համար:

Վրաստանի կողմից 2017թ. ընդունված «Պաշտպանության ռազմավարական վերանայում 2017-2020թթ.» փաստաթղթի մեջ Ռուսաստանի փափուկ ուժը դիտարկվում է որպես Վրաստանի անվտանգության ուղղակի սպառնալիք[260]: Այսպես, ըստ այդ փաստաթղթի, «Կրեմլը փորձ է անում առավելապես շեշտը դնել փափուկ ուժի տարրերի վրա՝ Վրաստանում պետական ինստիտուտների թուլացման, ռուսամետ խմբերի ուժեղացման և Վրաստանի պրոարևմտյան դիրքորոշման վարկաբեկման նպատակով»: Այդ փաստաթղթում փափուկ ուժը նույնացվում է քաղաքական պրոպագանդայի և մանիպուլյացիայի հետ՝ դրանից բխող բոլոր վտանգներով: Բնականաբար, Վրաստանում Ռուսաստանի փափուկ ուժի մեխանիզմների ֆորմալ ներկայացվածության մասին խոսելն ավելորդ է:

Վրաստանում Ռուսաստանի փափուկ ուժի մեխանիզմների խիստ սահմանափակ ներկայության ուղղակի հետևանքն այդ երկրում ԱՄՆ-ի և ԵՄ-ի, ինչպես նաև Թուրքիայի ծանրակշիռ ներկայությունն է: Այսպես, Վրաստանում Արևմուտքի կողմից քաղաքական, քաղաքացիական, կրթական, մշակութային և այլ ոլորտներում ներկայությունն անհամեմատելի է Ռուսաստանի հետ: Ավելին, երկրում քաղաքականություն է տարվում ռուսական մշակույթի և լեզվի սահմանափակման ուղղությամբ[261]:

---

[260] «Strategic Defence Review 2017-2020" Georgia, p. 53, https://mod.gov.ge/uploads/2018/pdf/SDR-ENG.pdf

[261] Տե՛ս **Kanashvili G.**, Russian Soft Power in Georgia: Exploits, Limitations and Future Threats, Henrich Boll Stiftung, 16.10.2017., https://ge.boell.org/en/2017/10/16/russian-soft-power-georgia-exploits-limitations-and-future-threats

Միևնույն ժամանակ, չի կարելի չնշել երկու երկրների միջև «փափուկ համագործակցության» յուրատեսակ դրսևորում հանդիսացող Ռուս և Վրաց Ուղղափառ եկեղեցիների համագործակցությունը՝ հաշվի առնելով, որ կրոնական գործոնն ավանդականորեն կողմնորոշիչ է եղել երկու երկրների բնակչության զգալի հատվածի համար: Թերևս կարելի է համաձայնել Ա. Կոռնիլյովի և Ա. Մակարիչևի այն պնդմանը, որ ռուսական ուղղափառ եկեղեցին ներկայումս վերածվել է ռուսական փափուկ ուժի հիմնասյուներից մեկի[262]: Հետաքրքրական է, որ երկու եկեղեցիները միմյանց հանդեպ համերաշխություն են դրսևորում քաղաքական զգայուն հիմնախնդիրներում: Այսպես, Ռուս ուղղափառ եկեղեցին ճանաչում է Վրաց եկեղեցու գերակա դիրքը Աբխազիայում և Հրվ. Օսիայում՝ հրաժարվելով ճանաչել վերջիններիս ինքնուրույնությունը, իսկ Վրաց ուղղափառ եկեղեցին հրաժարվում է ճանաչել Ուկրաինայի ուղղափառ եկեղեցու անջատումը ռուսականից[263]: Հատկանշական է, որ 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո երկու երկրների միջև երկխոսության միակ խողովակը մնացին Ռուս և Վրաց ուղղափառ եկեղեցիների շփումները: Ավելին, 2016թ. Մոսկվա կատարած այցի ժամանակ Վրաց պատրիարք Իլյա 2-րդը նշեց, որ «թեև մենք քաղաքական գործիչներ չենք և չենք կարող լուրջ քայլեր ձեռնարկել հարաբերությունների կարգավորման ոլորտում, սակայն մենք կարող ենք որոշակի չափով ազդել այս գործընթացի վրա[264]»:

---

[262] **Kornilov A., Makarichev A.**, Russia's Soft Power in the South Caucasus, Discourses, Communication, Hegemony, Religion, Nation and Democracy in the South Caucasus, Routledge Taylor and Francis Group, 2014, p. 264-265

[263] Տե՛ս **Conroy K.**, Semi-recognized states and ambiguous churches: the Orthodox Church in South Ossetia and Abkhazia // Journal of State and Church, 57(4), 2015, p. 621-639.

[264] «Georgian Patriarch visits Moscow», 21.11.2016, http://civil.ge/eng/article.php?id=29640

Պատահական չէ նաև, որ այդ երկրում շարունակում են գործել ռուսամետ կողմնորոշմամբ մի շարք քաղաքական կուսակցություններ, որոնց թվում կարելի է մատնանշել «Վրաստանի հայրենասերների կուսակցությունը», «Միասնական Վրաստան ժողովրդավարական շարժում կուսակցությունը»:

Ամեն դեպքում, հաշվի առնելով հարաբերությունների առկա վիճակը, ավելի կոնկրետ՝ դրանց բացակայությունը,կարծում ենք, որ Վրաստանում Ռուսաստանի փափուկ ուժի տեսանկյունից որևէ առաջընթաց ակնկալելու հիմքեր կարճաժամկետ հեռանկարում չկան և երկխոսության միակ խողովակը կմնա երկու եկեղեցիների միջև համագործակցությունը:

Ելնելով վերոնշյալից՝ հիմնավոր կլինի պնդել, որ չնայած վերջին տարիների ընթացքում փափուկ ուժի մեխանիզմների բավականին ճյուղավորված համակարգի ներդրմանն ու աշխարհագրության ընդլայնմանը, Ռուսաստանը դեռևս չի կարող այս բնագավառում լիարժեքորեն մրցակցել Արևմուտքի հետ՝ պայմանավորված փափուկ ուժի վրա ծախսվող միջոցների անհամեմատելիությամբ, Արևմուտքի հետ լարված հարաբերությունների հետևանքով Ռուսաստանի իմիջին հասցվող վնասով և այլն: «Россотрудничество»-ի նախկին ղեկավար Կոնստանտին Կոսաչյովի խոսքերով, թեև Ռուսաստանը կարողացել է Արևմուտքի հետ հարաբերություններում պահպանել հավասարակշռության ռազմական (կոշտ) բաղադրիչի մասով, սակայն բավականին հետ է մնացել փափուկ ուժի համատեքստում[265]: Մի շարք

---

[265]Տե՛ս **Косачев К.**, «В мире сложилась презумпция виновности России», 03.09.2012, https://www.kommersant.ru/doc/2014308

հեղինակներ, վերլուծության ենթարկելով ՌԴ փափուկ ուժի քաղաքականությունը, հանգում են այն եզրակացության, որ ՌԴ-ն ներկայումս ունի փափուկ ուժի որոշակի պակասուրդ և դրա լուծման ուղղությամբ համակարգային աշխատանքները էական արդյունքներ չեն տվել նույնիսկ այն ժամանակ, երբ փորձ է արվել ներգրավելու արտասահմանյան ընկերություններ[266]: Պատահական չէ, որ 2012թ. հուլիսին դեսպանահավաքի ժամանակ ՌԴ նախագահ Վ. Պուտինն իր ելույթում նշեց, որ «մեր դիվանագիտական աշխատանքի ավանդական,ամենօրյա մեթոդներն աշխատում են բավականին լավ, եթե ոչ կատարյալ, սակայն նոր տեխնոլոգիաների օգտագործման մասով, ինչպիսին է այսպես կոչված փափուկ ուժը,դեռևս կան անելիքներ»[267]:

Ասվածը որոշակիորեն արդիական է նաև Հարավային Կովկասում ՌԴ փափուկ ուժի քաղաքականությանը, որին բնորոշ են հետևյալ սահմանափակող գործոնները՝

1) տարածաշրջանի երկրների հասարակությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ ոչ բավարար աշխատանքը, կողմնորոշումը դեպի քաղաքական էլիտաների հետ համագործակցություն
2) ռեսուրսների ոչ օպտիմալ օգտագործումը
3) ընդհանուր ռազմավարության բացակայությունը:

Արևմուտքի և Ռուսաստանի կողմից փափուկ ուժի վրածախսվող միջոցներն և իրականացվող ծրագրերը քանակապես անհամեմատելի են: ՌԴ

---

266 Տե՛ս **Лукьянов Ф.**, Сила мягкость ломит: в чем слабость внешней политики России // Forbes. 28.08.2015, https://www.forbes.ru/mneniya/tsennosti/297945-sila-myagkost-lomit-v-chem-slabost-vneshnei-politiki-rossii
267 Владимир Путин выступил на совещании послов и постоянных представителей Российской Федерации, 09.07.2012, http://kremlin.ru/events/president/news/15902

արտգործնախարար Ս. Լավրովի խոսքերով՝ «ՌԴ-ն չի կարող ստեղծել նույն քանակությամբ կազմակերպություններ և իրականացնել նույնքան ծրագրեր[268]»: Դրա հետ մեկտեղ, կարելի է ասել, որ նույնիսկ առկա ձևաչափերի պոտենցիալը չի օգտագործվում առավելագույնս: Այդ ասպարեզում Արևմուտքի գերակա դիրքը ՌԴ-ն կարող է հավասարակշռել փափուկ ռեսուրսների և մեխանիզմների օպտիմալ օգտագործմամբ, հանրային մակարդակում և մեդիադաշտում իրապես թիրախային աշխատանքով:

## 3.2. Իրանի փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում

Հարավային Կովկասում ներգրավված հաջորդ դերակատարն Իրանն է, որի համար այս տարածաշրջանը պատմականորեն հանդիսացել է անմիջական շահերի գոտի և հաճախ նաև այլ դերակատարների հետ բախման թատերաբեմ: ԽՍՀՄ փլուզումից հետո Իրանն ակտիվացրեց իր քաղաքականության հարավկովկասյան բաղադրիչը, որը 1979թ. այդ երկրում տեղի ունեցած իսլամական հեղափոխության արդյունքում Արևմուտքի հետ վատթարացած հարաբերությունների և Իրանին միջազգային հարաբերություններից մեկուսացնելու փորձերի պայմաններում ուներ խիստ կարևոր նշանակություն:

Պետք է նշել, որ 1979թ. հեղափոխությունը, փոխակերպման ենթարկելով Իրանի հասարակական-քաղաքական համակարգը, չէր կարող չազդել փափուկ

[268] Интервью Министра иностранных дел России Сергея Лаврова "Комсомольской правде", 17.12.2018, https://www.kp.ru/daily/26920/3967737/

ուժի իրանական մոդելի վրա. եթե մինչ 1979թ. այդ երկիրը գտնվում էր Արևմտյան ազդեցության տակ և ձգտում էր աշխարհիկ և համեմատաբար ազատական արժեքներով պետության տեսլականին, ապա հեղափոխությունից հետո այն առավելապես կողմնորոշվեց դեպի ավանդական արժեքներ,կրոն և մշակույթ: Հեղափոխությունը հիմք հանդիսացավ հիրավի աննախադեպ՝ պետության կառավարման թեոկրատական մոդելի ստեղծման համար, որը գլխավորում է Բարձրագույն հոգևոր առաջնորդը՝ Այաթոլլան: Հեղափոխության արդյունքում ընդունված Սահմանադրությունն ինքնին սահմանում է Իրանի ներկայիս փափուկ ուժի քաղաքականության հիմքերը՝ հռչակելով Իսլամական եղբայրությունը և բոլոր մարդկանց միջև հանրային համագործակցության ընդլայնումը և ուժեղացումը որպես առանցքային նպատակ[269]:

Փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացն Իրանում սկսվեց Մոհամմադ Խաթամիի նախագահ դառնալուց հետո, ով քաղաքական դիսկուրս ներմուծեց «Քաղաքակրթությունների երկխոսություն» եզրը և գերակա ուշադրություն սկսեց հատկացնել հատկապես Իրանի մշակութային և դրա բաղադրիչ կրոնական ազդեցության ընդլայնմանը[270]: Այդ ժամանակվա Իրանի մշակույթի և իսլամական առաջնորդման նախարար Այաթոլլա Մոհաջերանիի խոսքերով, «մշակույթը Խաթամիի կառավարության ժամանակահատվածում առանցքային դերակատարություն ուներ ...հաճախակի կարելի էր ականատես լինել իրավիճակների, երբ մշակույթի նախարարի պաշտոնին տրվում էր ավելի

---

[269] The Constitution of the Islamic Republic of Iran, Chapter 1, provision 15, https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/ir/ir001en.pdf

[270] Տե՛ս **Petito F.**, Khatami Dialogue among Civilizations as International Political Theory // J. Humanities, Vol. 11 (3), 2004, p. 11-29

մեծ նշանակություն, քան արտաքին գործերի նախարարի պաշտոնին[271]:

Իրանի փափուկ ուժի ինստիտուցիոնալացումն էլ ավելի մեծ թափով շարունակվեց Մահմուդ Ահմադինեջադի նախագահության (2005-2013թթ.) ժամանակահատվածում: Մասնավորապես, իրանական Նախագահական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից լայնածավալ հետազոտություններ իրականացվեցին ոչ միայն փափուկ ուժի՝ որպես վերլուծական եզրի, այլև որպես քաղաքական գործիք նրա օգտակարության վերաբերյալ՝ նպատակ ունենալով հակազդել Արևմուտքի փափուկ ազդեցությանը, որն իրանական քաղաքական շրջանակներում հաճախ անվանվում էր «Մշակութային ՆԱՏՕ»: Ըստ այդմ, հիմնավորվում էր Իրանի կողմից փափուկ ուժի տարրերի կիրառումը՝ որպես Իրանին պարտադրված «Փափուկ պատերազմում» գերակայության հասնելու անհրաժեշտ միջոց[272]:

Վերջին տարիների ընթացքում Իրանը բավականին լուրջ միջոցներ է ներդրել փափուկ ուժի տեղեկատվական մեխանիզմների ստեղծման գործում: Ներկայումս դրանք համակարգող հիմնական մարմինը Իրանի Իսլամական Հանրապետության հեռարձակման ծառայություններն է, որն ուղղակիորեն հաշվետու է Գերագույն առաջնորդին: Այդ ծառայության մեջ մտնող 5 խոշորագույն հեռուստաալիքներն են Ալ-Ալամ, Ալ Քովթար (արաբերեն, Մերձավոր Արևելքի համար), Press TV-ն (24 ժամյա անգլալեզու ծառայություն), Hispan TV-ն (իսպանալեզու-Իսպանիա և Լատ.Ամերիկա), Իսլամական Հանրապետության ձայնը ռադիոալիքը, որոնք իրանական շահի առաջ մղման կարևոր գործիքներն են:

---

[271] Տե՛ս Wastnidge E., The Modalities of Iranian Soft Power: From Cultural Diplomacy to Soft War // Sage journal of Politics, 35 (3–4), 2015, p. 369

[272] Khamenei Address to Basij Members, 25.11.2009, http://farsi.khamenei.ir/speechcontent?id=8430

Սակայն, պատժամիջոցների խստացման հետ մեկտեղ, դրանք դուրս մնացին արբանյակային հեռարձակման փաթեթներից: Կարծում ենք՝ նման թիրախային խմբերի առանձնացումը և դրանց համար տեղեկատվական առանձին մեխանիզմների ստեղծումը վկայում են Իրանի կողմից փափուկ ուժի պոտենցիալ օգուտների և այդ ուղղություններով պրակտիկ քաղաքականության մշակման լիարժեք գիտակցման մասին:

Խոսելով Հարավային Կովկասում Իրանի շահերի և այդ շահերին համահունչ փափուկ ուժի քաղաքականության և մեխանիզմների կիրառման վերաբերյալ՝ պետք է նախնշել, որ թեև ներկայիս Իրանի ազդեցությունը և կշիռը նախկինում ունեցած իր գերտերության կարգավիճակի համեմատությամբ էականորեն փոխվել է, սակայն այն դեռևս ամուր կերպով նստած է իրանցիների գիտակցության մեջ: Իրանական հասարակական-քաղաքական դիսկուրսում երբեմնի Պարսից գերտերության կազմի մեջ մտնող հարակից տարածաշրջաններն հաճախ անվանվում են հավաքական «Իրանզամին»եզրով[273]:

Հարավային Կովկասում Իրանի փափուկ ուժի քաղաքականությունը վերլուծելիս ևս պետք է հաշվի առնել մի շարք համակարգային գործոններ, որոնք պայմանավորում են տարածաշրջանում Իրանի ներգրավվածության բնույթը. այդ թվում պետք է մատնանշել, նախևառաջ, Իրանի չեզոք վերաբերմունքը տարածաշրջանային հակամարտությունների, որը հնարավորություն է ընձեռել այդ երկրին համեմատաբար բարիդրացիական հարաբերություններ ունենալու տարածաշրջանի բոլոր 3 երկրների հետ: Հատկապես

273 Տե՛ս **Rubin M.**, նշվ. աշխ.

կարևոր է ընդգծել Իրանի հավասարակշիռ պահվածքը Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում, որտեղ, չնայած Ադրբեջանի հետ կրոնական ընդհանրություններին[274], Իրանն արեց և անում է առավելագույնը՝ պահպանելով չեզոքություն և կոչ անելով կողմերին լուծել խնդիրը միմիայն բանակցային և խաղաղ ճանապարհով: Ի պատասխան Իրանի չեզոք և հավասարակշիռ կեցվածքի, Հայաստան-Իրան փոխհարաբերությունների շրջանակներում Հայաստանն իրեն մշտապես դրսևորել է որպես հավատարիմ գործընկեր՝ Իրանի հանդեպ պատժամիջոցների ժամանակաշրջանում պահպանելով բացառիկ սերտ փոխհարաբերություններ այդ երկրի հետ:

Պետք է նաև հաշվի առնել, որ Հարավային Կովկասն Իրանի համար կարևոր է որպես տարանցիկ գոտի՝ հաշվի առնելով պատժամիջոցների այն ծավալը, որը կիրառվում է Իրանի հանդեպ, համաշխարհային գործընթացներից Իրանին մեկուսացնելու Արևմուտքի փորձերը: Նման պայմաններում Իրանի համար տարանցման ուղիները ստանում են կենսական նշանակություն, և Հարավային Կովկասն այս իմաստով բացառություն չէ: Վերջին տարիների ընթացքում տարածաշրջանը հիմնականում դիտարկվել է Հյուսիս-Հարավ ուղղությամբ հաղորդակցային ուղիների ստեղծման համատեքստում:

Իրանը բավականին զգայուն է էթնիկական հիմնահարցերի նկատմամբ, ինչը տարածաշրջանում, հատկապես Իրան-Ադրբեջան հարաբերությունները պայմանավորող կարևոր գործոն է: Թեև անցկացված մարդահամարներում ադրբեջանցիները որպես

---

274 Երկու երկրներում էլ բնակչության ճնշող մեծամասնությունը մահմեդականության շիա ուղղության հետևորդ է

առանձին կատեգորիա չեն մատնանշվում, սակայն մոտավոր հաշվարկներով Իրանում ապրում է մոտ 20-30 մլն էթնիկ ադրբեջանցի[275]: Հնարավոր անջատողական տրամադրությունների խնդիրը մշտապես պաշտոնական Թեհրանի ուշադրության կենտրոնում է:

Տարածաշրջանում Իրանի կողմից կիրառվող փափուկ գործիքակազմի առաջին բաղադրիչը մշակութային մեխանիզմներն են: Այս իմաստով բավականին սերտ են կապերը Հայաստանի հետ: Այսպես, Երևանում Իրանի դեսպանությունում ներկայումս գործում է Մշակույթի և իսլամական կապերի կազմակերպության (ՄՀԻԿ) առանձին մասնաճյուղ, որն, ըստ էության, Հայաստանում իրանական մշակութային և կրթական քաղաքականությունը համակարգող հիմնական մարմինն է և զբաղվում է տարատեսակ ծրագրերի ու միջոցառումների իրականացմամբ:ՄՀԻԿ-ը զբաղվում է տարբեր երկրներում Իրանի մշակութային քաղաքականության՝ լեզվի, արվեստի, գրականության տարածմամբ: Այն ունի Իրանի Մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարության կից կառույցի կարգավիճակ, ղեկավար կազմի անդամների նշանակվում են Գերագույն հոգևոր առաջնորդի կողմից[276]: Հայ-իրանական միջմշակութային հաղորդակցման իմաստով առանձնահատուկ նշանակություն ունի Երևանի Կապույտ մզկիթը: Դեռևս 18-րդ դարում կառուցված այս մզկիթը ներկայումս Հայաստանի տարածքում գործող միակ մզկիթն է: Այն վերակառուցվել է 1990-ական թվականներին՝

[275] Տե՛ս **Rotar I.**, Islamic Fundamentalism in Azerbaijan: Myth or Reality?, Publication: Prism Volume: 6 Issue: 8, 31.08.2000, Jamestown Foundation, https://jamestown.org/program/islamic-fundamentalism-in-azerbaijan-myth-or-reality/, կամ **Сулейманов Э.**, Эволюция азербайджанской идентичности и перспективы сепаратизма в Иранском Азербайджане // The Quarterly Journal, January 2011, p. 92

[276] Մշակույթի և իսլամական կապերի կազմակերպության պաշտոնական կայքէջ, http://en.icro.ir/index.aspx?fkeyid=&siteid=257&pageid=9292

իրանական իշխանությունների ֆինանսավորմամբ, իսկ 1995թ.-ից սեփականության իրավունքով տրվել է Իրանի Իսլամական Հանրապետությանը: Կապույտ մզկիթի հանդեպ հայկական իշխանությունները մշտապես դսևորել են առանձնահատուկ հոգատար վերաբերմունք՝ ինշան Իրանի և իրանցի ժողովրդի հետհամերաշխության և բարեկամության:

Հետաքրքրական է, որ սկսած 2016թ.-ից, Կապույտ մզկիթում ամեն տարի տոնվող Աշուրայի փառատոնը բաց է հյուրերի համար: 2016թ. հոկտեմբերի 12-ին կայացած այդ տոնակատարության ժամանակ ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Սեյյեդ Քազեմ Սաջջադը նշել է, որ «այսօրվա միջոցառման նպատակն է ցույց տալ ամբողջ աշխարհին, որ Շիա մահմեդականները քրիստոնյա հայերի կողքին ապրում են բացառիկ խաղաղասիրության և միմյանց կրոնական ծեսերի հանդեպ փոխադարձ հարգանքի պայմաններում»: Դեսպանի խոսքով, այդուհետ կրոնական տոները պետք է նշվեն բաց՝ որպես քրիստոնյաների և մահմեդականների համերաշխ կյանքի, տոները միասին տոնելու օրինակ[277]: Մզկիթում պարբերաբար անցկացվում են պարսկերենի դասընթացներ, կրոնական ծեսեր,Ղուրանի ընթերցումներ և այլն:

Մշակութային իմաստով հարկ է նշել նաև պարսկական նոր տարու՝ Նովրուզի տոնակատարության հետ կապված Հայաստան այցելող իրանցի զբոսաշրջիկների թվի կտրուկ մեծացումը: Պաշտոնական վիճակագրության համաձայն 2017 թվականին Իրանից Հայաստան է այցելել 220 հազար զբոսաշրջիկ, ինչը 16 տոկոսով ավելի է, քան 2016 թվականին[278]: Նովրուզի տոնակատարությունը

[277] Տե՛ս Mkrtchyan T., Iran's Soft Power Policy In Armenia: Cultural Diplomacy and Religion, Religion and Soft Power in the South Caucasus, Conference paper, March 2017, p. 67

[278] Իրանցի զբոսաշրջիկները բողոքում են, թե Հայաստանում քչերն են խոսում անգլերեն, 23.03.2018, https://www.azatutyun.am/a/29119886.html

լայնորեն լուսաբանվում է հայկական և իրանական ԶԼՄ-ներով:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ Հայաստանում իրանական մշակութային քաղաքականության հիմնանպատակը Իրանի մշակույթի, կրոնի, ավանդույթների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացումն է և այդպիսով իրանական մշակույթի՝ որպես իր բնույթով տարբերվող, սակայն բարեկամական մշակույթի ներկայացումը:

Մշակութային մեխանիզմների տեսանկյունից Իրանը փոքր-ինչ ավելի պասիվ է Վրաստանում: Կրոնական բաղադրիչի մասով Իրանի ազդեցության հնարավորությունները հատկապես մեծ են Քվեմո-Քարթլիի շրջանում, որտեղ կենտրոնացած է մահմեդականության շիա ուղղության հետևորդների առավել զգալի հատվածը: Այս շրջանի մահմեդական բնակչությունը աչքի է ընկնում վրացական հասարակության հետ ինտեգրվածության բավականին ցածր մակարդակով, ինչը ճանապարհ է բացում այլ դերակատարների ներգրավվածության համար: Իհարկե, այս ասպարեզում ամենաակտիվն Ադրբեջանն է,սակայն Իրանը ևս փորձում է որոշակի չափով առաջ մղել իր սեփական օրակարգը: Առհասարակ, թեև Վրաստանի փոքրամասնությունների շարքում գերակշիռ մեծամասնություն են կազմում թուրքերը և մահմեդականության սուննիական ուղղության հետևորդները, այդուհանդերձ, որոշակի ակտիվություն ունեն նաև շիաները: Միաժամանակ, Վրաստանն ամեն տարի ընդունում է իրանցի զբոսաշրջիկների բավականին մեծ թիվ՝ 234 հազար 2018թ.-ին[279]: Դրան բավականին նպաստեց 2016թ.

[279] National Statistics Office of Georgia, http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=2771&lang=eng

փետրվարից իրանցիների համար մուտքի արտոնագրի ռեժիմի վերացումը:

Մշակութային մեխանիզմների կրոնական ենթաբաղադրիչի մասով հատկապես ուշադրության է արժանի Ադրբեջանում Իրանի քաղաքականությունը, որի թիրախն ինչպես բուն ադրբեջանցիներն են, այնպես էլ փոքրամասնությունները՝ հատկապես թալիշները: Հատկանշական է, որ Ադրբեջանը ներկայումս աշխարհում երկրորդն է Իրանից հետո՝ մահմեդականության շիա ուղղության հետևորդների թվաքանակով: Ադրբեջանի անկախության հռչակումից հետո Իրանի կողմից հնչեցին այդ նորաստեղծ պետության հետ շիականության հենքի վրա կրոնական-գաղափարախոսական համերաշխության կոչեր, որոնք, սակայն, միանշանակ չընդունվեցին Բաքվի կողմից: Վերջինս Թեհրանի այդ կոչերն ընկալեց որպես Իրանի կողմից նորանկախ պետության ներքին գործերին միջամտելու փորձ[280]:

Ադրբեջանում Իրանի կրոնական ազդեցությունը վերլուծելով հարկավոր է հաշվի առնել մի շարք հանգամանքներ.

1) Ադրբեջանը ԽՍՀՄ փլուզումից ի վեր տարել է համեմատաբար աշխարհիկ պետության կառուցման քաղաքական գիծ, ինչն ամրագրված է այդ երկրի սահմանադրությունում:
2) Ադրբեջանի իշխանությունները մշտապես զգուշավորություն են ցուցաբերել երկրում արտասահմանյան կրոնական կազմակերպությունների ներկայության և գործունեության նկատմամբ: Այսպես, օրինակ,

280 Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրան-ադրբեջան. Հարևաննե՞ր թե աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հատ. XXII, Երևան, 2003թ., էջ 29

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի կողմից 2001թ. ստեղծված Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովը վերահսկում է Ադրբեջանի տարածքում գործող կրոնական կազմակերպությունների գործունեությունը, իսկ 2009թ. ընդունված կրոնի մասին օրենքը պարտադրում է Ադրբեջանի տարածքում գործող բոլոր կրոնական կազմակերպություններին միանալ Կովկասյան մահմեդականների խորհրդին և արգելում է օտարերկրացի գիտնականներին, ինչպես նաև արտերկրում կրթություն ստացած Ադրբեջանի քաղաքացիություն ունեցող հոգևորականներին կրոնական քարոզչություն իրականացնել երկրում[281]: 1990-ականների վերջին նույնիսկ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի կողմից որոշում ընդունվեց իրանցի մի քանի մոլլաների արտաքսելու մասին[282]:

3) Շիա ուղղության հետևորդները Ադրբեջանում թեև մեծամասնություն են, սակայն նրանք ընդհանուր բնակչության մոտ 60-65%-ն են կազմում, իսկ հասարակության մի զգալի հատվածն իրեն նույնականացնում է սուննիական Թուրքիայի հետ: Շիա ուղղությանը դավանող բնակչության մեծամասնությունը բնակվում է Իրանի հետ սահմանակցող Ադրբեջանի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում և մահմեդականության միևնույն ուղղության դավանելուց զատ, իրանցիների հետ ունի նաև լեզվական ընդհանրություններ:

---

281 Милли Меджлис Азербайджана принял закон, запрещающий деятельность незарегистрированных религиозных общин, 08.03.2009, http://wap.islam.az/news/a-4081.html

282 Տե՛ս **Constantin-Bercean I.**, Impact of Iran on Azerbaijan: Means of Religious Influence // Studia Universitatis Babeș - Bolyai Studia Europaea, 2017

Չնայած այս գործոններին՝ Իրանը փորձում է օգտագործել կրոնական ռեսուրսը, ինչի մասին են վկայում այդ պետության հոգևոր շրջանակի՝ Ադրբեջան կատարվող բարձրաստիճան մակարդակով այցերի պարբերական բնույթը[283]: Այս իմաստով, հատկապես լայնածավալ աշխատանքներ են տարվում հենց Իրանի հետ սահմանակցող Ադրբեջանի հարավային շրջաններում: Պատահական չէ, որ 1991թ. հենց այդ տարածաշրջանում՝ Նարդարանում հիմնադրվեց Ադրբեջանի իսլամական կուսակցությունը (ԱԻԿ), որը հանդես էր գալիս Ադրբեջանի և Իրանի միջև հարաբերությունների ամրապնդման, հակաիսրայելական, հակարևմտյան դիրքերից: Այդ կուսակցության գործունեությունը պաշտոնապես կասեցվեց 1995թ., երբ դրա ղեկավարները մեղադրվեցին Իրանից գաղտնի ֆինանսավորում ստանալու մեջ[284]: Չնայած դրան՝ ԱԻԿ-ը մինչ այժմ էլ Իրանի աջակցությամբ շարունակում է իր ընդհատակյա գործունեությունը: Այսպես, օրինակ, 2011թ. կուսակցության փաստացի նախագահ Մովսուն Սամեդովը հանդես եկավ բռնապետական վարչակարգը վերացնելու՝ ադրբեջանցի ժողովրդին ուղղված կոչով, ինչի արդյունքում նա, ինչպես նաև մոտ 40 ԱԻԿ ակտիվիստներ ձերբակալվեցին՝ մեղադրվելով Իրանի համար լրտեսության իրականացման և 2012թ. Բաքվում նախատեսված Եվրատեսիլ մրցույթին սաբոտաժ ծրագրելու մեջ: Մ. Սամեդովը դատապարտվեց 12 տարվա ազատազրկման[285]:

Վերլուծելով Ադրբեջանում Իրանի կրոնական քաղաքականության պատճառականները՝ Ա.

---

283 Տե՛ս օրինակ Ayatollah Houssein Nouri Hamadani's visit to the Republic of Azerbaijan, 03.09.2015, http://tehran.mfa.gov.az/news/4/3043

284 Տե՛ս Cornell S., The Politicization of Islam in Azerbaijan, Silk Road Paper, Central Asia-Caucasus Institute, October 2006, p. 60-61

285 Islamic Party Of Azerbaijan Head Jailed For 12 Years, 07.10.2011, https://www.rferl.org/a/islamic_party_of_azerbaijan_head_jailed_for_12_years/24352745.html

Իսրայելյանը հանգում է այն եզրակացության, որ կրոնական գործոնի օգտագործումը պետք է դիտարկել ավելի լայն աշխարհաքաղաքական պրիզմայի դիտանկյունից՝ հաշվի առնելով, որ Իրանը գտնվում է շրջափակման մեջ և ստիպված է հակազդելու նաև Ադրբեջան-Իսրայել ռազմաքաղաքական տանդեմին[286]:

Իրանական կրոնական քաղաքականության ևս մեկ «թիրախ է» Ադրբեջանի թալիշական համայնքը: Առհասարակ թալիշները էթնիկական և լեզվական իմաստով թալիշները բավականին ընդհանրություններ ունեն իրանցիների հետ: Նրանց թիվը 2009թ. Ադրբեջանի մարդահամարի պաշտոնական տվյալներով կազմել է 112.000[287], իսկ օրինակ Չներկայացված ազգերի և ժողովուրդների կազմակերպության տվյալներով նրանց թիվը հասնում է մոտ 540.000-ի[288]: Ջ. Լյուիսի կարծիքով, թալիշական համայնքին աջակցություն ցուցաբերելով Իրանը նպատակ է հետապնդում որոշակիորեն հակակշռելու Իրանում ադրբեջանցիների միջոցով էթնիկական հիմքով լարվածություն ստեղծելու վտանգը[289]: Մյուս կողմից, Իրանը խնդիր ունի հակազդելու նաև Ադրբեջանի կողմից Իրանում բնակվող ադրբեջանցիների շրջանում «թյուրքականության» գործոնի շահարկմանը, որը, հիմնահարցի հետազոտող Ա. Իսրայելյանի կարծիքով, ուղիղ

[286] Տե՛ս **Իսրայելյան Ա.**, Իրանի կրոնական կաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ (2010-2016 թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXX, 30, Երևան 2016, էջ 202-203, http://www.ysu.am/files/irani-kronakan-qaghaqakanutyun.pdf

[287] Ադրբեջանի 2009թ. պաշտոնական մարդահամարի տվյալներ, http://pop-stat.mashke.org/azerbaijan-ethnic2009.htm

[288] Չներկայացված ազգերի և ժողովուրդների կազմակերպության պաշտոնական կայքէջ, https://unpo.org/members/17338

[289] Տե՛ս **Lewis J.**, Replace Turkey as a Strategic Partner? // Middle East Quarterly, Spring 2006,

համեմատական է Իրանի հետ այդ երկրի ունեցած հարաբերություններին[290]:

Կրոնական ազդեցության ընդլայնումից զատ, Իրանն Ադրբեջանում որոշակիորեն ակտիվ է նաև մշակութային այլ բաղադրիչների մասով: Ադրբեջանում գործում է Իրանի մշակութային կենտրոնը, որի կողմից պարբերաբար կազմակերպվում են Իրանի օրեր Ադրբեջանում, ֆիլմերի ցուցադրություն[291]: 2014թ. և 2016թ. Ադրբեջան է այցելել և այդ երկրի ղեկավարության հետ հանդիպել ՄՀԻԿ ղեկավարը: 2017-ը Ադրբեջանում իսլամական համերաշխության տարի հռչակելը բավականին դրական ընդունվեց Իրանի կողմից[292]:

Տարածաշրջանում Իրանը որոշակի ակտիվություն է ցուցաբերում նաև տնտեսական մեխանիզմների մասով: Տարածաշրջանի երկրների հետ առևտրաշրջանառությունը 2015-2017թթ. ունեցել է հետևյալ պատկերը[293] (տվյալները ներկայացված են ԱՄՆ դոլլարով)՝

| | 2015թ. | 2016թ. | 2017թ. |
|---|---|---|---|
| **Հայաստան** | 276.2 մլն | 234.5 մլն | 258.4 մլն |
| **Վրաստան** | 128 մլն | 131 մլն | 181.4 մլն |
| **Ադրբեջան** | 229.3 մլն | 204.4 մլն | 254.9 մլն |

[290] Տե՛ս **Իսրայելյան Ա.**, «Թյուրքականության» գործոնը Իրանի և Ադրբեջանի Հարաբերություններում (1991-2016թթ.) // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXXI, Երևան 2018, էջ 151

[291] Տե՛ս **Mahammadi M.**, Azerbaijan – Iran Cultural Relations: Dynamics and Potentials // Caucasus International, Vol. 7, No: 2, Winter 2017, p. 115-116

[292] 2017 declared as Year of Islamic Solidarity in Azerbaijan Republic, http://www.irna.ir/fa/News/82382048

[293] Trade Map, Trade statistics for international business development, Monthly, quarterly and yearly trade data, https://trademap.org/Index.aspx

Տարածաշրջանում Իրանի տնտեսական ներգրավվածության բնույթը պայմանավորող առանցքային գործոնը տարածաշրջանի կարևոր տարանցիկ դերակատարությունն է այդ երկրի համար: Այս իմաստով, տարածաշրջանի բոլոր երեք երկրների հետ բարձրագույն մակարդակի հանդիպումների օրակարգում հաղորդակցային ուղիների հարցն առանցքային տեղ է զբաղեցնում՝ հատկապես Հյուսիս-Հարավ ենթակառուցվածքների զարգացման բաղադրիչի մասով:

Տնտեսական իմաստով Իրանը հատկապես կարևոր գործընկեր է Հայաստանի համար. երկու երկրները միմյանց համար տնտեսական շրջափակման (Իրանի դեպքում՝ պատժամիջոցների) հետևանքները մեղմացնելու կարևորագույն դերակատարություն ունեն: Պատահական չէ, որ Իրանի հետ առևտրաշրջանառության ծավալներով Հայաստանը տարածաշրջանի առաջատարն է: Այսպես, 2016թ. դեկտեմբերին ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի Հայաստան կատարված պաշտոնական այցելության ժամանակ տեղի ունեցած Հայաստան-Իրան գործարար համաժողովի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն իրանցի գործարարներին կոչ արեց ներդրումներ կատարել Հայաստանում: Իրանցի գործարարներին շահագրգռելու համար նախագահ Սարգսյանը շեշտադրեց ԵԱՏՄ-ին ու GSP+ համակարգին Հայաստանի անդամակցությունը, առանձնացրեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Իրանի հետ համագործակցության հնարավորությունները[294]:

Տնտեսական ոլորտում վերջին տարիներին նախաձեռնված կարևոր քայլերից է 2017թ.

294 ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Հայաստան-Իրան գործարար համաժողովում, 21.12.2016, http://www.president.am/hy/press-release/item/2016/12/21/President-Serzh-Sargsyan-attended-Armenian-Iranian-Business-Forum/

դեկտեմբերի 15-ին պաշտոնապես բացված «Մեղրի» ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) և Իրանի «Արաս» ԱՏԳ-ի միջև գործակցությունը: «Մեղրի» ԱՏԳ-ն ոչ միայն ապահովեց այդ շրջանի բնակչության մի մասին աշխատանքով, այլ և բարենպաստ պայմաններ ստեղծեց Հայաստանում իրանական կապիտալի ներդրման ծավալների ավելացման համար: Իրանի համար սա նաև Եվրասիական տնտեսական միության հետ հարաբերվելու յուրատեսակ մեխանիզմ է: Ասվածն էլ ավելի կարևոր է՝ հաշվի առնելով 2018թ մայիսի մայիսի 17-ին ԵԱՏՄ-ի և Իրանի միջև ստորագրված «Միջանկյալ համաձայնագիրը», որն առաջին քայլն է՝ ազատ առևտրի գոտու ստեղծման ճանապարհին: Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Տիգրան Խաչատրյանի խոսքերով, դա մեծ հնարավորություն է ընձեռում Հայաստանին՝ Իրանի 80 մլն-անոց շուկա մատակարարելու շուրջ 300 անուն ապրանք ցածր մաքսատուրքերով[295]: Պետք է նշել նաև, որ Հայաստանում սպառվող գազի մոտ 20%-ը մատակարարվում է Իրանից, որի դիմաց Հայաստանը վճարում է էլեկտրաէներգիայով:

Հատկանշական է, որ Երևանում է գործում նաև իրանական Մելլաթ բանկի մասնաճյուղը, որը ներկայումս գտնվում է արևմտյան պատժամիջոցների ազդեցության տակ:

Հաշվի առնելով Ադրբեջանի հետ Իրանի հարևանության հանգամանքը, ինչպես նաև ադրբեջանական շուկայի համեմատաբար մեծ լինելը՝ կարելի է նկատել Իրան-Ադրբեջան տնտեսական հարաբերությունների անհամաչափությունը: Դրա հիմնական

[295] «Իրանի հետ պարզեցված առևտրի համաձայնագիրը «մեծ հնարավորություններ» կընձեռի նաև հայաստանյան կազմակերպություններին», 24.03.2019, https://www.azatutyun.am/a/29802648.html

պատճառներից մեկն Ադրբեջանի՝ Թուրքիայի մասնակցությամբ Արևելք-Արևմուտք ուղղությամբ հաղորդակցային նախագծերին նախապատվություն տալն է: Էներգառեսուրսների արտահանման համատեքստում ուշագրավ է, Իրանի և Ադրբեջանի միջև Կասպյան ավազանի իրավական կարգավիճակի շուրջ առկա տարաձայնությունները: Չնայած դրան՝ Ադրբեջանում Իրանի փափուկ ուժի տնտեսական մեխանիզմների համատեքստում ևս առկա են մի շարք կարևոր գործոններ: Մասնավորապես, Իրանը Նախիջևանի գազի միակ մատակարարն է: Ադրբեջանում գործում է իրանական մեքենաշինական «Iran Khodro» կոնցեռնի մասնաճյուղ-գործարանը:

Ադրբեջանում մինչև 2013թ. որոշակի ակտիվություն էր ցուցաբերում նաև Իմամ Խոմեյնիի Օժանդակության կոմիտեն, որը պարբերաբար տարատեսակ աջակցություն էր ցույց տալիս հատկապես հարավային շրջաններում բնակվող ադրբեջանական բնակչությանը: 2013թ. ադրբեջանական իշխանությունների որոշմամբ այդ կազմակերպության գործունեությունն Ադրբեջանում դադարեցվեց:

Միևնույն ժամանակ, Հյուսիս-Հարավ ուղղությամբ հաղորդակցային ուղիների զարգացումը պարբերաբար քննարկվում է նաև Ադրբեջանի ղեկավարության հետ հանդիպումներում: Ադրբեջանն ինքը շահագրգռված է այդ տեսլականի անմիջական մասնակիցը դառնալու, կարծում ենք, երկու հիմնական նպատակով՝

1) Այն այլընտրանքային ճանապարհ է բացում դեպի Պարսից ծոց՝ ի հակադրություն Վրաստանի և Սև ծովի միջոցով տարանցման ուղու

2) Այն ուղղակիորեն նպատակ է հետապնդում դուրս թողնելու Հայաստանին այդ նախագծից: Ընդ որում, եթե Ադրբեջանի համար այս ուղին տարանցման այլընտրանքներից մեկն է, ապա Հայաստանի համար Հյուսիս-Հարավ միջանցքը կենսական կարևորություն ունի՝ հաշվի առնելով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շրջափակման մեջ գտնվելու հանգամանքը:

Մինչ այժմ Հյուսիս-Հարավ ուղղությամբ հաղորդակցային ուղիների զարգացման համատեքստում լավագույն արդյունքը եղել Իրան-Ադրբեջան երկաթուղու մի հատվածի կառուցումը: Վրաստանն ինքը փորձում է առավելագույն օգուտներ քաղել իր աշխարհագրական դիրքից՝ փորձելով օգտագործել ոչ միայն Արևելք-Արևմուտք, այլև Հյուսիս-Հարավ ուղղությամբ պոտենցիալ տարանցիկ ուղի հանդիսանալու հանգամանքը: Այդ իմաստով, Վրաստանը կանգնած է խնդրի առաջ՝ հավասարակշռելու իր արևմտամետ դիրքորոշումը և հատկապես սերտ հարաբերություններն ԱՄՆ-ի հետ տարածաշրջանի այնպիսի կարևոր դերակատարի, ինչպիսին Իրանն է, հարաբերությունները պահպանելու հետ մեկտեղ: Պետք է հաշվի առնել նաև, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների փաստացի բացակայության պայմաններում Իրանն ունի կարևոր այլընտրանքային գործընկերոջ կարգավիճակ: Իր հերթին, Վրաստանն Իրանի համար հատկապես գրավիչ է՝ հաշվի առնելով նրա սերտ տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ և ելքը դեպի Սև ծով: 2017թ. ԻԻՀ նախագահ Հասան Ռոուհանիի և Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլիի հանդիպման արդյունքներով Փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր ստորագրվեցին Հյուսիս-Հարավ միջանցքի և Պարսից ծոցը Սև ծովին

կապող ճանապարհի մասին՝ Իրան-Հայաստան-Վրաստան կամ Իրան-Ադրբեջան-Վրաստան ուղիներով[296]:

Իրանը աչքի է ընկնում Վրաստանում տնտեսական ներդրումների համեմատաբար համեստ ծավալով. 2017թ. դրանց ընդհանուր թիվը կազմել է 53.5 մլն դոլլար, մինչդեռ առաջատար Ադրբեջանը գրանցել է 465 մլն դոլլար ցուցանիշ: Մյուս կողմից, եթե Վրաստանում կատարվող ներդրումներով Իրանի մտնում նույնիսկ առաջին տասնյակի մեջ, ապա Վրաստան այցելող զբոսաշրջիկների թվով Իրանը 5-րդն է[297]:

Տարածաշրջանում Իրանի կողմից կիրառվող փափուկ ուժի մեխանիզմների շարքում ավելի համեստ դերակատարություն ունի կրթական բաղադրիչը: 2017թ. հուլիսի 7-ին ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Մոհամմադ Ֆարհադիի՝ Հայաստան կատարված այցի ժամանակ նրա և ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկտչյանի միջև հուշագիր ստորագրվեց Իրանի կողմից հայաստանցի 5 դասախոսի և 15 ուսանողի կրթաթոշակի տրամադրման վերաբերյալ՝ բնական գիտությունների ուղղությամբ Իրանում աշխատելու և սովորելու համար: Հուշագրով նախատեսվում էր նաև խթանել գիտական կազմակերպությունների, համալսարանների և հետազոտական հաստատությունների միջև համագործակցությունը, ինչպես նաև ամրապնդել երկու պետությունների գիտական համայնքների միջև կապերը[298]: Հուշագրի արդյունքներով ստեղծված գիտության, հետազոտությունների և

---

[296] Տե՛ս **Dumbadze D.**, Embrace of Iranian Overtures Undermines Georgia's Counter-Terrorism and NATO Integration Efforts // Jamestown Foundation, Eurasia Daily Monitor Volume: 14 Issue: 65, 2017

[297] National Statistics Office of Georgia, http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=2771&lang=eng

[298] Իրանը հայ 15 ուսանողի կրթաթոշակ է տրամադրել՝ իրենց երկրում սովորելու համար, 07.07.2017, https://bit.ly/2vaBAdk

տեխնոլոգիաների հայ-իրանական համատեղ կոմիտեի անդրանիկ նիստը կայացավ 2019թ. փետրվարի 8-ին: Պետք է նաև նշել, որ Երևանում գործում են պարսկական թեքումով 2 դպրոցներ:

Տարածաշրջանի մյուս երկրներում Իրանի կրթական ներգրավվածությունն էլ ավելի համեստ է: Ադրբեջանում, մասնավորապես, վերջին շրջանում այս ասպարեզում տեղի ունեցած ամենանշանակալի իրադարձությունը, թերևս, Ծահրիյարի մշակույթի պալատում 2018թ. սեպտեմբերից «Իրանագիտություն» ծրագրի ներմուծումն է, որը կազմակերպվել է Ադրբեջանում Իրանի դեսպանության կողմից[299]: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այստեղ Իրանը, Ադրբեջանի և Սաուդյան Արաբիայի հետ մեկտեղ, կրթական իմաստով որոշակի ակտիվություն ցուցաբերող դերակատարներից մեկն է: Այս բնագավառում քիչ թե շատ կշիռ ունեցող կազմակերպություններից է Ալի Բեյթը, որը անցկացնում է պարսկերենի դասընթացներ, աջակցում է մզկիթների վերակառուցմանը և այլն: 2011թ.-ից Վրաստանում գործում է Քոմի Ալ-Մուսթաֆա Միջազգային համալսարանի Թբիլիսյան մասնաճյուղը, որը թեև պաշտոնապես չի ճանաչվել Վրաստանի ԿԳՆ կողմից, սակայն բավականին մեծ դերակատարություն ունի տեղում պարսկերենի դասընթացների կազմակերպման և տեղում կրոնական և կրթական ծառայություններ մատուցելու համար կադրեր պատրաստելու գործում[300]:

Հետաքրքիր է տարածաշրջանի երկրներում Իրանի փափուկ ուժի տեղեկատվական մեխանիզմների

---

[299] Iran Offers Educational Courses in Azerbaijan, September 2018, http://en.farsnews.com/newstext.aspx?nn=13970714000988

[300] Տե՛ս **Gabedava M., Turmanidze K.**, Iran's Soft Power in Georgia –Weak for Now, Bigger Potential for the Future, Religion and Soft Power in the South Caucasus Compendium Policy Memos, Georgian Institute of politics, Tbilisi, 2017, p. 61

գործունեությունը: Մասնավորապես, Ադրբեջանում՝ հատկապես Իրանա-ադրբեջանական սահմանին բավականին մեծ ազդեցություն ունի իրանական Sahar TV հեռուստաալիքը, որի հաղորդումները մեծամասամբ ադրբեջաներեն և թալիշերեն են[301]: Այն հատկապես ակտիվ է սահմանային Աշտարա, Լենքարան, Մասալի բնակավայրերում: Վերջինս Ադրբեջանում հարավային շրջաններում ուներ այնքան մեծ լսարան, որ 2017թ. ադրբեջանական իշխանությունները որոշում ընդունեցին բոլոր արտասահմանյան հեռուստաալիքների լիցենզիայի դադարեցման վերաբերյալ: Իրանական հեռուստաալիքների հաջողության և զանգվածայնության հիմքը ադրբեջանական հասարակության այլընտրանքային բովանդակությամբ ծրագրերի ներկայացումն է[302]: Իրանական մեդիայի գործունեությունն Ադրբեջանի որոշ շրջանակներում առաջացրել է ակնհայտ դժգոհություններ՝ մեղադրելով նրանց հակաադրբեջանական քարոզի մեջ:

Առկա են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության ծավալման որոշակի հիմքեր: Մասնավորապես,հարկ է նշել 2019թ. փետրվարին հեռահաղորդակցության ոլորտի հայկական UCOM ընկերության՝ Իրանի և Քաթարի հետ համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրման մասին, ըստ որի՝ Ծոցի և Ասիայի երկրները Եվրոպային միացնելու ինտերնետի հասանելիության տարանցիկ կապուղի է ստեղծվելու: Նոր կապուղին այլընտրանք է

---

301 Տե՛ս **Jödicke A.**, Religious soft power in the South Caucasus: The influence of Iran and Turkey, Brookings institution, 13.12.2018, https://www.brookings.edu/blog/order-from-chaos/2018/12/13/religious-soft-power-in-the-south-caucasus-the-influence-of-iran-and-turkey/

302 «Azerbaijani Audience Gets A Taste Of Iranian 'Soft Power'», 09.07.2008, https://www.rferl.org/a/Azerbaijan_Gets_Taste_Iranian_Soft_Power/1182664.html

դառնալու ներկայումս գործող՝ ծովային ճանապարհով անցնողին, որը փաստորեն, անցնելու է Հայաստանով՝ շրջանցելով Ադրբեջանն ու Թուրքիան[303]:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Իրանի փափուկ ուժի քաղաքականությունը Հարավային Կովկասում նպատակ ունի, մի կողմից, մեղմացնելու միջազգային պատժամիջոցների ազդեցությունը, մյուս կողմից՝ զսպելու իր կազմում էթնիկ ադրբեջանցիների անջատողական որևէ նկրտում կամ փորձ, ինչպես նաև նպաստելու Պարսից Ծոցի և Սև ծովի միջև Իրանի կապող օղակ հանդիսանալու տեսլականին: Անուղղակիորեն այն նպատակ ունի նաև հակակշռելու Թուրքիայի ազդեցությանը տարածաշրջանում և հատկապես վերջինիս մասնակցությամբ էներգետիկ նախագծերին: Տարածաշրջանի երկրներից Հայաստանի հետ Իրանն ունի բարիդրացիական հարաբերություններ, որի շրջանակներում առավել հատկանշական են տնտեսական (Հյուսիս-Հարավ ուղղությամբ ենթակառուցվածքների զարգացման մասով) և մշակութային (ՄՀԻԿ), մասամբ նաև կրթական և տեղեկատվական ոլորտներում կիրառվող մեխանիզմները: Իր կազմում էթնիկ ադրբեջանցների ինքնուրույնության միտումներին Իրանը փորձում է հակակշռել Ադրբեջանում իր կրոնական ազդեցության ընդլայնմամբ՝ մի կողմից ադրբեջանցիների, մյուս կողմից՝ թալիշների շրջանում: Հատկապես Ադրբեջանի հարավային շրջաններում, կրոնական և տեղեկատվական գործիքների արդյունավետ կիրառման միջոցով, դա Իրանին մեծամասամբ

303 Եվրոպա-Հայաստան-Իրան-Քաթար կապուղի. UCOM-ն առաջ է անցել թուրքական ընկերություններից ու ընդգրկվել տարածաշրջանային մեծ նախագծում, 27.02.2019, https://armenpress.am/arm/news/965810/

հաջողվել է: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այստեղ Իրանը հատկապես մեծ ակտիվություն է ցուցաբերում տնտեսական մեխանիզմների տեսքով՝ հաշվի առնելով Վրաստանի տարանցիկ դիրքը, ԵՄ-ի սերտկապերը, ինչպես նաև ելքը դեպի Սև ծով:

## 3.3. Թուրքիայի փափուկ ուժի մեխանիզմները Հարավային Կովկասում

Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո Թուրքիան ակտիվացրեց իր արտաքին քաղաքականության հարավկովկասյան ուղղությունը՝ փորձելով լրացնել տարածաշրջանում առաջացած ուժային վակուումը: Թուրքիան այդ ժամանակաշրջանում կարողացավ շատ արագ կողմնորոշվել՝ գիտակցելով Կասպյան ավազանի էներգառեսուրսների կարևորությունը և դրանց տարանցումից ստացվելիք հնարավոր օգուտներն իր համար: Հետագայում այս գիտակցումն արդեն վերածվեց հստակ մշակված արտաքին քաղաքական առաջնահերթության և հայեցակարգի:

Թուրքիայի հարակից տարածաշրջաններում՝ այդ թվում նաև Հարավային Կովկասում առավել համապարփակ՝ այդ թվում նաև փափուկ ուժի քաղաքականություն մշակելու և իրականացնելու նախաձեռնությունը սկսվեց 2002թ. Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) իսլամամետ կուսակցության իշխանության գալուց հետո: Փափուկ ուժի «թուրքական մոդելի» մանրամասն կոնցեպտուալացումը և կիրառման անհրաժեշտությունը տեղ գտան ԱԶԿ ներկայացուցիչ, 2009-2014թթ. Թուրքիայի

արտգործնախարար և 2014-2016թթ. վարչապետ Ահմեդ Դավութօղլուի՝ 2000-ական թվականներին մշակված «Ռազմավարական խորության» հայեցակարգում, որի հիմքում դրվեց «Զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը: Վերջինիս համաձայն, Թուրքիայի բոլոր հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը և զարգացումը բխում է Թուրքիայի առաջնային շահերից և դրանք պետք է դրվեն արտաքին քաղաքական առաջնահերթությունների ցանկում[304]: Թեև, հետադարձ հայացք նետելով, այդ հայեցակարգի արդյունավետությունը կարելի է դնել խիստ կասկածի տակ, սակայն հենց դրա շրջանակներում հարևան երկրների հանդեպ փափուկ ուժի քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությունը ստացավ հայեցակարգային ամրագրում:

«Ռազմավարական խորություն» հոդվածի մեջ Ա. Դավութօղլուն փափուկ ուժը դիտարկում էր ինստրումենտալ պրիզմայի ներքո՝ որպես տարածաշրջանում սեփական շահերը ոչ ռազմական ճանապարհով առաջ մղելու գործիքակազմ: Նա Թուրքիայի դերի մեծացումը կապում էր հարևանների հետ ակտիվ քաղաքական երկխոսության, տնտեսական փոխկապվածության և նախաձեռնողական մշակութային քաղաքականության իրականացման հետ, որի շրջանակներում հենց տեղավորվում էր «Զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը[305]: Դիտրիխ Յունգի կարծիքով, ԱԶԿ կողմից փափուկ ուժի եզրի որդեգրման և այն արտաքին քաղաքական գործիքակազմում ներառման նպատակը նաև

---

304 Տե՛ս **Yeşiltaş M.**, The transformation of the geopolitical vision in Turkish foreign policy // Turkish Studies, vol. 14, no. 4, 2013, էջ 670

305 Տե՛ս **Сафонкина Е.А.**, Турция как новый актор политики мягкой силы // Вестник международных организаций, , vol. 9, 2014, c. 148

թուրքական ներքին և արտաքին քաղաքականության վրա ավանդաբար ուժեղ զինվորական խավի ազդեցության թուլացումներ[306]:

ԱԶԿ կառավարման տարիներին Թուրքիայի փափուկ ուժի բնորոշ մեկ այլ առանձնահատկություն է մահմեդական ինքնության բաղադրիչի կարևորումը՝ այդ թվում հատկապես Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում փափուկ ուժի ընդլայնման տեսանկյունից: Վերջինս դիտարկվում էր որպես առանձնահատուկ ռեսուրս, որը Թուրքիան կարող է կիրառել մի շարք երկրների հետ ընդհանրություններ գտնելու նպատակով: Պատահական չէ, որ մեծապես ակտիվացավ Թուրքիայի Կրոնական գործերով նախագահության (Diyanet, Դիյանեթ) գործունեությունը, որն զբաղվում է ամբողջ աշխարհում մզկիթների կառուցմամբ, հոգևոր ծառայությունների՝ այդ թվում հոգևոր կրթության կազմակերպմամբ:

Եթե Ա. Դավութօղլուն տեսական կոնցեպտուալացման ենթարկեց փափուկ ուժի քաղաքականության «թուրքական մոդելը», ապա դրա պրակտիկ ասպեկտները լուսաբանվեցին այդ ասպարեզում նշանակալի դերակատարություն ունեցած մեկ այլ անձնավորության՝ Թուրքիայի վարչապետի խորհրդական, Հանրային դիվանագիտության գրասենյակի ղեկավար Իբրահիմ Քալընի կողմից: Վերջինս բավականին մեծ դեր է խաղացել 2000-ականների կեսերին փափուկ ուժի դիսկուրսը թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում շրջանառելու գործում[307]: Ի. Քալընը փափուկ ուժի թուրքական մոդելի հիմքում

306 Տե՛ս **Jung, D.**, The Domestic Context of New Activism in Turkish Foreign Policy. // International Journal, 67 (1), 2012, p. 23–38

307 Տե՛ս **Benhaïm Y., Öktem K.**, The rise and fall of Turkey's soft power discourse // European Journal of Turkish Studies, 21 | 2015, p.5

տեսնում էր Օսմանյան կայսրության պատմամշակութային ժառանգությունը և աշխարհագրությունը, որոնք ընկած են ժամանակակից թուրքական ինքնության հիմքում: Դրանք, ըստ Քալընի, պետք է օգտագործվեն Թուրքիայի գրավչության ամրապնդման համար: Յարևան երկրների հետ ընդհանուր պատմական ընդհանուր հիշողության հիման վրա Ի. Քալընը առաջ էր քաշում «Նոր Թուրքիայի» ստեղծման գաղափարը, որտեղ առանցքային դերակատարություն պետք է ունենա հանրային դիվանագիտությունը[308]:

Թուրքիայում փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացը սկսվեց 2000-ական թվականների կեսերին՝ տնտեսական, մշակութային, տեղեկատվական և այլ ոլորտներում «փափուկ գործիքների» ներդրումով: Պետք է նշել, որ այդ մեխանիզմների մեծամասնությունը չունի հստակ ոլորտային պատկանելություն, դրանց գործունեությունը ծավալվում է միաժամանակ մի շարք ոլորտներում: Այսպես, օրինակ, Յամագործակցության և համակարգման թուրքական գործակալությունը (ՅՅԹԳ-TİKA), որը գործում է 1992թ.-ից և տարատեսակ ձևաչափերով ներգրավված է մոտ 100 երկրներում, զբաղվում է թուրքական համայնքներին բազմաբնույթ՝ այդ թվում տնտեսական օժանդակության ցուցաբերմամբ, Օսմանյան կայսրության ժամանակաշրջանի պատմամշակութային հուշարձանների և կոթողների վերակառուցմամբ և այլն[309]: Եթե 2002թ. վերջինիս ֆինանսական միջոցները 2002թ. կազմում էին 82 մլն

[308] Տե՛ս **Kalin I.**, Soft Power and Public Diplomacy in Turkey // Perceptions, Volume XVI, Number 3, Autumn 2011, p. 11
[309] Տե՛ս «TIKA»-ի պաշտոնական կայքէջ, http://www.tika.gov.tr/en

ԱՄՆ դոլլար, ապա 2011թ.-ին այդ թիվը հասավ 1.273 մլրդ-ի[310]:

Թուրքիայի փափուկ ուժի մեխանիզմների ուսումնասիրության համատեքստում հստակ դրսևորվում է կարևոր փափուկ ուժի պետական և ոչ պետական մեխանիզմների տարբերությունները՝ ի դեմս, մի կողմից, պաշտոնական Անկարայի հովանու ներքո գործող մեխանիզմների, մյուս կողմից՝ այսպես կոչված Ֆեթուլլահ Գյուլենի շարժման հետևորդների: Գյուլենական շարժումը ձևավորվել է 1960-ական թվականներին, այն կուռ կազմակերպական հիերարխիկ կառուցված ունեցող կառույց է, որի ներկայացուցիչներն իրենց համարում են իսլամական աստվածաբան Սաիդ Նուրսիի (1878-1960) հետևորդներ: Գյուլենական շարժումը նուրսիականության առավել ազդեցիկ ճյուղավորումներից մեկն է և հանդես է իսլամի դերակատարության մեծացման և պանթուրքական գաղափարների տարածման դիրքերից: Այդ նպատակով ամբողջ աշխարհում ստեղծվել է շարժման հովանու ներքո ամբողջ աշխարհում ստեղծվել է կրթական հաստատությունների ճյուղավորված ցանց:Այսպես, եթե մինչև 2014թ. Գյուլենական շարժումը հիմնականում վայելում էր պաշտոնական Անկարայի հովանավորությունն ու աջակցությունը, ապա 2014թ. Ռ. Էրդողանի և Ֆ. Գյուլենի տարաձայնություններից հետո դրանք ոչ միայն տարբերվում են, այլև հաճախ տրամագծորեն հակադրվում են միմյանց[311]: Այդ տարաձայնություններն ակնհայտորեն

---

310 Տե՛ս **Tol G.**, Turkey’s Bid for Religious Leadership, How the AKP Uses Islamic Soft Power, Foreign Affairs, 10.01.2019, https://bit.ly/2DicZHT

311 Տե՛ս **Balci B.**, The Gülen Movement and Turkish Soft Power, Carnegie Endowment for International Peace, 04.02.2014, https://carnegieendowment.org/2014/02/04/g-len-movement-and-turkish-soft-power-pub-54430

դրսևորվում են նաև Հարավային Կովկասում, որին ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի ստորև:

Խոսելով Հարավային Կովկասում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականության հիմնական ուղղությունների և մեխանիզմների մասին՝ հարկ է նախևառաջ առանձնացնել այն համակարգային գործոնները, որոնք պայմանավորում են այդ երկրի՝ տարածաշրջանում ներգրավվածության մակարդակը: Դրանց թվում կարևորագույններն են՝

1) տարածաշրջանային էներգետիկ հանգույց դառնալու Թուրքիայի տեսլականը, որի շրջանակներում առանցքային դերակատարություն ունի Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա եռամիասնությունը
2) Ադրբեջանի հետ «եղբայրական» հարաբերությունները, որը 1994թ. Թուրքիա կատարած այցի շրջանակներում Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը դիպուկ կերպով բնորոշեց որպես «մեկ ազգ, երկու պետություն»
3) Հայաստանին շրջափակման մեջ պահելը

Ինչպես նշվեց, համակարգային այդ գործոններից առաջինի ի կատար ածման գործում առանցքային դերակատարություն ունեն Վրաստանը և Ադրբեջանը: Ընդհանուր հայացք նետելով Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի մեխանիզմներին՝ կարելի է ասել, որ այնտեղ բավականին համակողմանի ներկայացվածություն ունի, ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ նման փափուկ «հագեցվածությունն» այդքան էլ կենսական նշանակություն չունի: ԱԶԿ իշխանության գալը մոտավորապես համընկավ Վրաստանում «Վարդերի հեղափոխության» և Միխեիլ Սաակաշվիլու իշխանության գալու հետ, ով որդեգրեց Թուրքիայի հետ մերձեցման քաղաքական կուրս՝ դրանով իսկ

ստեղծելով բարենպաստ պայմաններ Թուրքիայի ազդեցության մեծացման համար: Պատահական չէ, որ Վրաստանի նախագահը թուրք-վրացական երկկողմ հարաբերությունների այդ ժամանակահատվածն անվանել է «ոսկե դար»[312]:

Ինչպես նշվեց, Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը այդ երկրի՝ տարածաշրջանային ավելի լայն քաղաքականության բաղադրիչներից մեկն է՝ հաշվի առնելով Վրաստանի տարանցիկ կարևորությունը ինչպես իր՝ այնպես էլ տարածաշրջանում մյուս երկրների՝ Հայաստանի և ավելի հեռահար իմաստով Թուրքիայի մրցակից Իրանի համար: Խնդիրը կրկնակի արդիական է Հայաստանի համար, քանի որ ուղղակիորեն առնչվում է ՀՀ-ն տարածաշրջանային նախագծերից մեկուսացնելու թուրք-ադրբեջանական տանդեմի քաղաքականությանը և մյուս կողմից վտանգներ է ստեղծում Վրաստանում բավականին մեծաթիվ հայ համայնքի բնականոն կենսագործունեության համար:

Ներկա փուլում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը Վրաստանում ընթանում է մի քանի հիմնական ուղղություններով: Հիմնավոր կլինի պնդել, որ դրանցից առանցքայինը տնտեսական ծրագրերն են, Թուրքիայի տնտեսական ներգրավվածությունը և ազդեցությունը Վրաստանի տնտեսության մի շարք ոլորտներում: Հատկապես 2000-ական թվականների կեսերից, ռուս-վրացական հարաբերությունների վատթարացումից հետո, Թուրքիան առաջատար դիրք զբաղեցրեց Վրաստանի տնտեսական գործընկերների շարքում՝ զբաղեցնելով առաջին տեղն այդ երկրի հետ առևտրի

[312] Տե՛ս «Interview with Mikheil Saakashvili: Georgia’s Westward March» // Turkish Policy Quarterly, v. 12, n. 1, 2013, p. 21

ծավալների չափով[313]: Եթե 1995-2003թթ. այդ ծավալները չէին գերազանցում $200 մլն-ը, ապա 2004-2007թթ. ընթացքում այդ թիվը կրկնապատկվեց[314]: 2007թ. նոյեմբերի 21-ին երկու երկրների միջև ստորագրվեց ազատ առևտրի մասին համաձայնագիր, ինչպես նաև վերացրեց կրկնակի հարկման սկզբունքը, որը կարևոր ցուցիչ է երկկողմ հարաբերությունների մակարդակի գնահատման գործում: Իսկ վերջին տարիներին Թուրքիա-Վրաստան առևտրաշրջանառությունն ունեցել է հետևյալ տեսքը՝ 2015թ.- $ 1.5մլրդ, 2016թ.- $ 1.526մլրդ, 2017թ.- $ 1.591 մլրդ[315]: Ինչպես երևում է, առևտրաշրջանառության տարեկան ծավալները կայուն կերպով մնում են $1.5մլրդ և ավելի շեմի վրա, ինչը տպավորիչ ցուցանիշ է:

Թուրքական տնտեսական ներդրումներն ու կապիտալը ներկայումս զգալի դերակատարություն ունեն վրացական շուկայում, ինչը ևս այդ երկրի ազդեցության ընդլայնման մասին վկայող հանգամանք է և փափուկ ուժի վառ արտացոլում: Համեմատության համար կարելի է ասել, որ եթե 1997-2003թթ. ընթացքում Վրաստանում Թուրքիայի ներդրումների ընդհանուր ծավալը կազմել էր ընդամենը $103մլն, ապա 2003-2012թթ. այդ թիվը հասել է $864 մլն-ի[316]: Վրաստանում տարատեսակ խոշոր տնտեսական ծրագրերի մեջ (ՀԷԿ-եր, ճանապարհներ և երկաթուղիներ) ներգրավված են մոտ 1մլրդ-ից ավել կապիտալով թուրքական ընկերություններ[317], որոնց

---

[313] Վերջին տարիներին այդ դիրքում Թուրքիային երբեմն փոխարինում է Ադրբեջանը

[314] Տե՛ս **Ter-Matevosyan V.**, Cooperation paradigms in the South Caucasus: Making sense of Turkish-Georgian relations // Varia, No. 4, 2014, https://eac.revues.org/689#tocto1n3

[315] Տե՛ս Trade statistics for international business development, Monthly, quarterly and yearly trade data, https://www.trademap.org/Bilateral_TS.aspx?nvpm=1|792||268||TOTAL|||2|1|1|2|2|1|1|1|1

[316] Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակ, Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, http://www.geostat.ge/index.php?action=page&p_id=140&lang=eng

[317] Տե՛ս **Ivane Chkhikvadze**, Zero Problems with Neighbors: The Case of Georgia, Turkish Policy

շարքում կարելի է մատնանշել, օրինակ, թուրքական TAV group-ը (Tepe-Akfen-Vie), որն ակտիվ մասնակցություն է ունեցել Թբիլիսիի և Բաթումի օդանավակայաններում նոր մասնաշենքերի կառուցման գործում՝ ներդնելով $100 մլն[318]: TAV գրուպի ակտիվ ներգրավվածությունը մեծ խթան հանդիսացավ թուրքական ավիաընկերությունների՝ վրացական շուկայում իրենց դիրքերն ամրապնդելու համար: Բաթումի օդանավակայանը հետագայում ներառվեց Թուրքիայի ներքին թռիչքների համակարգում:

Հատկանշական է նաև Թուրքիայի և Վրաստանի միջև 2006թ.-ից ուժի մեջ մտած առանց մուտքի արտոնագրի ռեժիմը, որը զգալիորեն հեշտացրել է թուրք գործարարների ներդրումները Վրաստանում, ինչպես նաև այդ երկրների քաղաքացիների փոխայցելությունները:

Գրեթե բոլոր տարածաշրջանային տնտեսական նախագծերում երկու պետությունները հանդես են գալիս միասնաբար: Դրանցից կարևորագույններն են 2005թ. շահագործման հանձնված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը և 2007թ. գործարկված Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Որպես երրորդ համանման նախագիծ կարելի է դիտարկել Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցումը, որը դեռևս վերջնականորեն չի գործարկվել՝ ներկայումս գործում է դրա միայն բեռնափոխադրման բաղադրիչը: Էներգետիկ ճնաչափերի շարքում պետք է մատնանշել նաև TAP/TANAP նախագծերը: Վրաստանում գործում է Թուրք արդյունաբերողների և ձեռներեցների

Quarterly, 2011 Summer

318 New Airport Terminal Opened in Tbilisi, https://old.civil.ge/eng/article.php?id=14587

միջազգային համայնքը, որը առաջ է մղում թուրք գործարարների շահերը 1994թ.-ից:

Տնտեսական մեխանիզմներին զուգահեռ, Թուրքիան փորձում էր իր փափուկ քաղաքականությունը Վրաստանում համալրել նաև մշակութային բաղադրիչով՝ ակտիվ քայլեր ձեռնակելով կրոնական, կրթական, լեզվական և այլ ենթաոլորտներում: Ընդ որում, «մշակութային էքսպանսիայի» թուրքական քաղաքականության թիրախն ինչպես տեղի բազմաքանակ թուրք/մահմեդական բնակչությունն է, այնպես էլ վրացիներն ու այլ ազգությունների ներկայացուցիչները՝ մասնավորապես հայ համայնքը:

Ընդհանուր առմամբ, մշակութային ասպարեզում Թուրքիայի քաղաքականությունը հիմնականում հենվում է վարչապետի հովանու ներքո գործող Համագործակցության և համակարգման թուրքական գործակալության (ՀՀԹԳ-TİKA), Յունուս Էմրեի անվան թուրքական մշակութային կենտրոնների, ինչպես նաև Կրոնական գործերով նախագահության (Diyanet, Դիյանեթ) վրա, որոնք տարբեր ձևաչափերով ներկայացված են Վրաստանում:

ՀՀԹԳ-ի կողմից Վրաստանում վերջին տարիներին իրականացված ծրագրերից կարելի է առանձնացնել սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավման, կրթական կենտրոնների վերանորոգման, առողջապահական ոլորտի բարելավման ուղղությամբ իրականացված քայլերը: ՀՀԹԳ-ի նախաձեռնած կարևորագույն քայլերից մեկը 2000թ. «Թուրքաբանություն» ծրագրի ներմուծումն էր, որի շնորհիվ Վրաստանի տարբեր բուհերում ստեղծվեցին թուրքագիտական

հետազոտական ամբիոններ և կենտրոններ[319]: Ընդ որում, ՀՀԹԳ-ի կողմից իրականացրած ծրագրերի քանակով և մասշտաբայնությամբ Վրաստանը զբաղեցնում է երկրորդ տեղը՝ Ղրղզստանից հետո[320]: Այդուհանդերձ ,այդ կառույցի կողմից Վրաստանում իրականացված ծրագրերի հիմնական թիրախը տեղի թուրքերով/մահմեդականներով բնակեցված շրջաններն են, իսկ Վրաստանի այլ շրջաններում նմանատիպ ծրագրեր գրեթե չեն իրականացվում:

ՀՀԹԳ-ից զատ, Վրաստանում Թուրքիայի իմիջի և գրավչության բարձրացմամբ զբաղվող մյուս կառույցը Յունուս Էմրեի անվան թուրքական մշակութային կենտրոններն են: Վերջիններս պաշտոնական Անկարայի կողմից ներդրվեցին 2007թ., նպատակը Թուրքիայի պատմության, լեզվի, գրականության և արվեստի տարածումն է, միաժամանակ նաև այսպես կոչված «Գյուլենի դպրոցներին» հակակշռելը[321]: Յունուս Էմրեի անվան մշակութային կենտրոնները ֆորմալ առումով պետական գործիքներ չեն, սակայն դրանք զգալի ֆինանսական և այլ բնույթի աջակցություն են ստանում պետությունից: Նմանատիպ կենտրոններ են գործում Թբիլիսիի պետական համալսարանում, Քութայիսիի Ակակի Ծերեթելիի անվան և Ախալցխայի Պետական կրթական համալսարաններում: Հատկապես ուշագրավ է Ախալցխայում նման կենտրոնի բացումը՝ հաշվի առնելով այդտեղ մեծաթիվ հայ համայնքի առկայությունը: Թեև պաշտոնական մակարդակում այդ մասով, բնականաբար, ոչինչ չի հայտարարվել, սակայն պարզ է, որ Ախալցխայում կենտրոնի գործունեությունը նպատակ ունի

---

319 Տե՛ս **Алексанян Л. М.**, Политика «Мягкой силы» Турции в отношении Грузии // Вестник Мгимо, 2 (47), 2016, с. 74-75
320 Տե՛ս **Ter-Matevosyan V.**, Cooperation paradigms in the South Caucasus: Making sense of Turkish-Georgian relations // Études arméniennes contemporaines, 4 | 2014, p. 113
321 Տե՛ս **Сафонкина Е.А.**, Турция как новый актор политики мягкой силы // Вестник международных организаций, , vol. 9, 2014, с. 152

հակակշռելու և սահմանափակելու տեղի հայ համայնքի ազդեցությունը:

Ի տարբերություն վերոնշյալ երկու կառույցների, որոնց հիմնական շեշտադրումը համագործակցությունն է մշակութային և կրթական ոլորտներում, Վրաստանում գործող թուրքական երրորդ խոշոր կառույցը՝ Դիյանեթը, ավելի կենտրոնացած է կրոնական, հոգևոր, մասամբ նաև կրթական խնդիրների վրա: Կառույցը հիմնականում զբաղվում է Վրաստանի մահմեդական բնակչությանը հոգևոր տարատեսակ ծառայությունների մատուցմամբ և ապահովմամբ: Այն նաև համակարգում է Վրաստանում առկա կամ կառուցվող մզկիթների ֆինանսավորման հարցերը, խթանում կրոնագիտական ուսումնասիրությունները[322]: Պաշտոնական տվյալներով, մահմեդականները կազմում են Վրաստանի ընդհանուր բնակչության 10-11%-ը և հիմնականում կենտրոնացած են Քվեմո Քարթլիի, Կախեթիի և հատկապես Աջարիայի շրջաններում[323]: Վերջինում, ըստ որոշ տվյալների, մահմեդականությունն է դավանում բնակչության 30%-ը[324]: Դիյանեթը սերտորեն համագործակցում է Աջարիայի մուսուլմաններին ներկայացնող մուֆթիյաթի հետ:

Բացի Թուրքիայի վարչապետի հովանու տակ գործող վերոնշյալ մարմիններից, Վրաստանում գործունեություն են ծավալում թուրքական ոչ պետական մի շարք կառույցներ, որոնց թվում, ինչպես նշվեց, պետք է առանձնացնել Գյուլենական շարժման ներկայացուցիչներին, որոնք ինքնակազմակերպվել են «Caglar Educational Institutions» անունով

[322] Տե՛ս **Korkut, Ş.**, The Diyanet of Turkey and Its Activities in Eurasia after the Cold War // Acta Slavica Iaponica, 28, 2010, p. 117-139

[323] CIA, The World Factbook, https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/gg.html

[324] 2014 Georgia General Population Census, http://census.ge/en/home

կառույցների ներքո և Վրաստանում գործում են 1992թ.-ից: Վերջիններիս նպատակն ի սկզբանե եղել է Վրաստանի կրթական համակարգում սեփական ազդեցության ընդլայնումը: Այդ ասպարեզում գյուլենականները կարողացել են գրանցել բավականին տպավորիչ հաջողություններ՝ հաշվի առնելով ներկայումս Վրաստանում նրա հովանու ներքո գործում են 7 մասնավոր դպրոցները[325], Քութայիսիի թուրքական ուսումնասիրությունների կենտրոնը, իսկ 1995թ.-ից՝ Միջազգային սևծովյան համալսարանը, որը Վրաստանի ամենահեղինակավոր մասնավոր կրթական հաստատություններից մեկն է:

Միևնույն ժամանակ, չի կարելի աչքաթող անել այն հանգամանքը, որ Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը Վրաստանում ոչ բոլոր շրջանակների կողմից է ընդունվում անվերապահորեն. հատկապես հոգևոր գործիչների շրջանում առկա է ակնհայտ բացասական վերաբերմունք Վրաստանում Թուրքիայի գրավչության բարձրացման և հատկապես կրոնամշակութային հարցերում թուրքական ազդեցության ընդլայնման դեմ: Քաղաքական կուսակցությունների շրջանում ևս կան նմանատիպ կողմնորոշմամբ ուժեր. բացի իշխող «Վրացական երազանք» դաշինքի որոշ շրջանակներում առկա նման տրամադրություններից, նման դիրքորոշում ունեն «Ազատ Վրաստան» կուսակցությունը, ինչպես նաև «Վրաստանի Հայրենասերների դաշինքը», որոնք թեև ներկայացված չեն խորհրդարանում, սակայն մշտապես բարձրաձայնում են Վրաստանում

[325] Տե՛ս Ter-Matevosyan V., նշվ. աշխ., էջ 115

Թուրքիայի նման ակտիվ ներգրավման վտանգների մասին[326]:

Թուրքիայի փափուկ ուժի, և հատկապես դրա բաղկացուցիչ կրոնամշակութային քաղաքականության հանդեպ ակնհայտ բացասական վերաբերմունք ունի Վրաց ուղղափառ եկեղեցին, որի դիրքորոշումն ավանդականորեն ուղենիշային է եղել վրաց ժողովրդի մի ստվար հատվածի համար: Այսպես, վերջինիս մտահոգության հիմնական առարկան մզկիթների և այլ հուշարձանների կառուցումն է, կրոնական քարոզչության մակարդակի աճը: Խնդիրը հատկապես արդիական է Աջարիայում, որտեղ և կենտրոնացած է թուրք/մահմեդական բնակչության ստվար հատվածը, և որտեղ դաառավել ակնհայտկերպով է դրսևորվում: Որոշ տվյալներով, Աջարիայի շրջանին է բաժին ընկնում Վրաստանում գործող 300-ից ավելի մզկիթների գրեթե կեսը, որոնց գերակշիռ մեծամասնությունը կառուցվել է վերջին տարիներին[327]:

Կարծում ենք, որ Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականության էությունն ու դինամիկան ընկալելու համար պետք է դրանք անպայման դիտարկել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ձևաչափի, դրանում երկրներից յուրաքանչյուրի շահերի ու հետաքրքրությունների համատեքստում: Թուրքիան մշտապես գիտակցել է Վրաստանի կենսական նշանակությունը՝ որպես ոչ միայն թուրք-ադրբեջանական տանդեմի, այլ և Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թուրքալեզու երկրների միջև կապող օղակ: Կասպյան ավազանի էներգետիկ

[326] Նույն տեղում, էջ 112

[327] Տե՛ս **Տեր-Մաթևոսյան Վ.**, Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում // «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (65), 2016, էջ 51

ռեսուրսների արդյունահանման ծավալների բարձրացմանը զուգահեռ, Վրաստանն սկսեց առանցքային դերակատարություն ունենալ Թուրքիայի՝ տարածաշրջանային էներգետիկ հանգույց դառնալու տեսլականի շրջանակներում[328]:

Պետք է նաև նշել, որ Վրաստանն ինքը լուրջ շահագրգռվածություն ունի թուրք-ադրբեջանական տանդեմի հետ համագործակցության մեջ՝ գիտակցելով իր օգուտները տարանցիկ երկիր լինելու հանգամանքից և հաշվի առնելով նաև Ռուսաստանի հետ լուրջ տարաձայնությունների ու հարաբերությունների փաստացի բացակայությունը: Վրաստանի ակտիվ ներգրավվածությունը թուրք-վրացա-ադրբեջանական տարատեսակ եռակողմ նախագծերում դրա վառ վկայությունն է: Այդ շարքում կարելի է մատնանշել, օրինակ, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան գազամուղը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում նավթամուղը, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին և այլ՝ ավելի փոքր հաղորդակցային ուղիները (օրինակ, 2016թ. փետրվարից գործող էլեկտրաէներգիայի տարանցումը Ադրբեջանից Թուրքիա): Ասվածի վառ վկայությունն են նաև երեք երկրների ղեկավարների[329], արտաքին և պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների մակարդակով պարբերաբար տեղի ունեցող հանդիպումները, 2012թ.-ից սկսած համատեղ իրականացվող «Անվերջություն» զորավարժությունները և այլն: Է. Դավթյանը հանգում է այն եզրակացության, որ այդ եռակողմ ձևաչափում առավելագույն օգուտները ստանում է

[328] Տե՛ս **Tagliapietra S.**, Turkey as a Regional Natural Gas Hub: Myth Or Reality? // Turkish Policy Quarterly, vol. 12, no. 4, Winter 2014

[329] Այդ ձևաչափով վերջին հանդիպումը տեղի է ունեցել 2018թ. հունիսի 12-ին Թուրքիայում՝ TANAP գազամուղի բացման կապակցությամբ

Վրաստանը՝ հաշվի առնելով տնտեսական ներդրումների ծավալը, որն իրականացվում է տարատեսակ նախագծերի կյանքի կոչման նպատակով[330]: Եռակողմ նախագծերում հաճախ Վրաստանի վրադրվում են նվազագույն ֆինանսական պարտավորություններ, ինչպես օրինակ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու դեպքում, իսկ վերջնարդյունքից ստացվող օգուտներն անհամեմատ մեծ են և դա Վրաստանի դիրքի շահեկանության մասին վկայող մեկ այլ հանգամանք է:

Հիմնավոր կլինի պնդել, որ թուրքական իշխանությունների համար ևս ակնհայտ է՝ բացառապես թուրք-ադրբեջանական աշխարհաքաղաքական շահերի հետապնդմամբ Վրաստանում սեփական գերակադիրքը պահելը դժվար և երկարաժամկետ առումով ռիսկային մոտեցում է: Փափուկ ուժի քաղաքականությունն, այս իմաստով, նպատակ ունի ստեղծելու առավել բարենպաստ մթնոլորտ երկկողմ փոխհարաբերությունների զարգացման և ամրապնդման համար:

Մյուս կողմից, այդ քաղաքականությունը որոշակի վտանգներ է պարունակում նաև ՀՀ-ի համար: Կարելի է ասել,որ Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը «կոշտ» հետևանքներ ունի Հայաստանի համար: Այն լիովին տեղավորվում է տարածաշրջանային տնտեսական նախագծերից, տարատեսակ հաղորդակցային ուղիներից ՀՀ-ին մեկուսացնելու,շրջափակման մեջ պահելու թուրք-ադրբեջանական ռազմավարության տրամաբանության մեջ: Չի կարելի հաշվի չառնել հնարավոր վտանգները նաև Վրաստանում բավականին

[330] **Դավթյան Է**., նշվ. աշխ., էջ 17-18

մեծաթիվ հայ համայնքի համար: 2014թ. մարդահամարի պաշտոնական տվյալներով, Վրաստանում մահմեդականների ընդհանուր թիվը 399.000 է, ադրբեջանական համայնքինը՝ 233.000, հայ համայնքի թիվը՝ 168.000[331]: Վրաստանում թուրք-ադրբեջանական տանդեմի ազդեցության մեծացումը մտահոգվելու և աշխատանքի մեծ դաշտ է բացում Հայաստանի համար՝ դրանից բխող վտանգները չեզոքացնելու իմաստով: Այս իմաստով, առանցքային դերակատարություն ունի, մի կողմից, Վրաստանում ՀՀ դեսպանությունը, որը տեղում իրավիճակի վերահսկման և այդ օրակարգը մանիպուլյացիաներից զերծ պահող հիմնական օղակն է: Մյուս կողմից, աշխատանքների կարիք կա նաև Վրաստանի իշխանությունների հետ երկկողմ ձևաչափով՝ հիմնախնդիրը ուշադրության կենտրոնում պահելու և էթնիկ խմբերի միջև լարվածության գերլարումը բացառելու երաշխիքներ ստանալու նպատակով:

Փափուկ ուժի մեխանիզմների իմաստով այլ իրավիճակ է Հարավային Կովկասի երկրներից մյուսում՝ Ադրբեջանում: Հետխորհրդային տարիներին պատմամշակութային, էթնիկական, լեզվական և կրոնական հիմքի վրա ստեղծված թուրք-ադրբեջանական «եղբայրական» հարաբերությունները խարսխվեցին քաղաքական և տնտեսական շահերի վրա. Թուրքիայի համար Ադրբեջանը միջանցք էր պանթյուրքական գաղափարախոսության քաղաքական իրագործման ճանապարհին, իսկ Ադրբեջանի համար Թուրքիան կապող օղակ էր ՆԱՏՕ-ի և էներգառեսուրսների մեծ պահանջարկ ունեցող եվրոպական շուկայի միջև[332]: 1994թ. Թուրքիա կատարված այցի ընթացքում

331 Georgia General Population Census Main Results, 2014, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf

332 Տե՛ս **Չոբանյան Գ.**, Թուրքական կրոնական ազդեցությունը Ադրբեջանի Հանրապետության վրա // 21-րդ ԴԱՐ, թիվ 6 (76), 2017թ., էջ 37

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը դիպուկ կերպով երկու երկրների հարաբերությունները բնութագրեց որպես «մեկ ազգ, երկու պետություն», որը կարծում ենք կարելի է որպես ելակետ ընդունել երկու երկրների հարաբերությունների բնութագրման համար: Ամենևին պատահական չէ, որ Թուրքիայի գրավչությունը Ադրբեջանում, մեծ հաշվով, հարցականի տակ երբեք չի դրվում և լուրջ տատանումների գրեթե չի ենթարկվում:

Այդուամենայնիվ, Թուրքիան Ադրբեջանում պահպանում է փափուկ ներկայության որոշակի մակարդակ, որի նպատակն, առաջին հերթին, բավականին մեծ հեղինակություն ունեցող գյուլենական շարժմանը հակակշռելն է, ինչպես նաև այդ երկրում իր ազդեցության պահպանումն ու տարածումը:

Ինչպես և Վրաստանի դեպքում, Ադրբեջանում ևս Թուրքիայի փափուկ ուժի մեխանիզմները դիտարկելիս պետք է անել կարևոր տարանջատում պաշտոնական Անկարայի փափուկ ուժի մեխանիզմների և Գյուլենական շարժման փափուկ ուժի մեխանիզմների միջև: Պետք է նշել, որ գյուլենականներն արդեն 1990-ական թվականներից ներգրավվեցին Ադրբեջանի հասարակական-քաղաքական և կրթական կյանքում՝ բացելով դպրոցներ և ծավալելով ակտիվ հասարակական գործունեություն: 1992թ.-ից նրանց հովանավորությամբ սկսած հիմնվել է ինստիտուտների ճյուղավորված բավականին ազդեցիկ մի ցանց՝ իր կրթական (Քաֆքասի համալսարանը, մի շարք այլ համալսարաններ և դպրոցներ), լրատվական (Զաման Ադրբեջան օրաթերթը և այլն), մշակութային (Երիտասարդության օժանդակության ադրբեջանական հիմնադրամ) և այլ

բաղադրիչներով: Թուրքիայի բարձրագույն մակարդակի այցերն Ադրբեջան հաճախ կազմակերպվում էին հենց գյուլենականների ջանքերով: Մինչև 2014թ.-ի հակասությունները որոշ հեղինակներ այդ շարժումը նույնացնում էին Թուրքիայի հետ[333]: Իսկ պաշտոնական Անկարայի հետ տարաձայնություններից հետո նրանց հովանու տակ գործող հաստատությունները սկսեցին փակվել, կամ ծավալել ընդհատակյա գործունեություն: Գ. Չոբանյանի տվյալներով, Գյուլեն-Էրդողան հակասությունից հետո գյուլենական 13 կրթական կենտրոններ, 11 բարձրագույն դպրոցներ և Կովկասի ինստիտուտը պետականացվեցին և փոխանցվեցին Ադրբեջանի պետական նավթային և գազային ընկերության (SOCAR) կից գործող Ադրբեջանի միջազգային կրթական կենտրոնին (ներկայում այդ հաստատությունները փակվել են Ադրբեջանի կառավարության կողմից)[334]: Գյուլենական շարժման դեմ պայքարն ընդհուպ մինչև բարձրագույն մակարդակով երկու երկրների ներկայացուցիչների քննարկման առարկա է: 2016թ. Թուրքիայում հեղաշրջման անհաջող փորձից հետո Ադրբեջանն իր հավատարմությունը հայտնեց Թուրքիային՝ հետ գյուլենականության դեմ պայքարում: Նույն տարում փակվեց ադրբեջանական ANS մասնավոր լրատվական գործակալությունը՝ Ա. Գյուլենի հետ հարցազրույց նախապատրաստելու մեղադրանքով[335]: Այս փաստերը ցույց են տալիս, թե որքանով են այս ոլորտում համընկնում երկու երկրների օրակարգերը: Դրանով պայմանավորված՝ կարելի է ասել, որ փափուկ ուժի մեխանիզմների ոչ

[333] Տե՛ս **Goksel N.**, Changing Soft Power Elements in Turkey's Relations with Azerbaijan // Center for Conflict Prevention and Early Warning Occasional Papers, Vol. 4 nr. 8, 2011, p. 6

[334] Տե՛ս **Չոբանյան Գ.**, նշվ. աշխ., էջ 49

[335] Azerbaijani TV Station Closed Over 'Interview' With U.S.-Based Turkish Cleric Accused By Ankara In Coup, 19.07.2016, https://www.rferl.org/a/azerbaijani-tv-station-shut-down-gulen-interview-turkey/27867890.html

պետական ոլորտը, ըստ էության, դուրս եկավ խաղից՝ տեղը զիջելով պաշտոնական Անկարայի:

Միևնույն ժամանակ, կարելի է նաև կարծել, որ գյուլենականները երբեք էլ իրենց պարտավորված չեն զգացել պաշտոնական Անկարայի քաղաքական կուրսով և օժանդակել են այն դեպքերում, երբ նրանց շահերը հատվել են: Անկախ այս հիմնահարցի պատասխանից՝ փաստ է, որ Ադրբեջանում առ այսօր գործում է գյուլենական շարժման փափուկ ուժի մեխանիզմների բավականին ճյուղավորված մի համակարգ, թեև այն ենթարկվում է պետական ճնշումների և ստիպված է ծավալել ընդհատակյա գործունեություն:

Ինչ վերաբերում է պաշտոնական Անկարայի ներգրավվածությանը կրոնական ոլորտում, ապա այստեղ որպես առանցքային դերակատար պետք է նշել Դիյանեթը՝ Կրոնական գործերի նախագահությունը, որը չի սահմանափակվում միմիայն կրոնական հարցերով՝ ընդգրկելով նաև կրթական և տեղեկատվական բաղադրիչներ[336]: Ընդ որում , Դիյանեթի ազդեցությունը հատկապես ընդլայնվեց ԱՁԿ-ի իշխանության գալուց հետո, ինչի արդյունքում Ադրբեջանում վերջինիս բյուջեն և անդամների քանակը զգալիորեն ավելացվեց[337]: Դիյանեթն Ադրբեջանում պարբերաբար ֆինանսավորում և մասնակցում է տարատեսակ կրոնական հաստատությունների կառուցմանը, իրականացնում է հոգևորականների վերապատրաստումներ և այլն[338], ֆինանսավորվում է Բաքվի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետը: Կրոնական իմաստով Դիյանեթը

[336] Տե՛ս Religion and Soft Power in the South Caucasus, edited by Jodicke A., 1st Edition, Routledge Taylor and Francis group, p. 135
[337] Նույն տեղում
[338] Տե՛ս **Goksel N.**, նշվ. աշխ., էջ 1

հատկապես ազդեցիկ է ադրբեջանցի սունիների շրջանում:

Երկու երկրներն ունեն տնտեսական համագործակցության բավականին հագեցած օրակարգ՝ առաջին հերթին էներգետիկ ոլորտում: Էներգետիկ հանգույց դառնալու Թուրքիայի տեսլականում Ադրբեջանն էներգառեսուրսների մատակարարման առաջնային օղակն է: Երկու երկրների առևտրաշրջանառությունը վերջին տարիներին ևս գրանցել է զգալի աճ՝ 2015թ. հասնելով 1.6 մլրդ ԱՄՆ դոլլարի, 2016թ.՝ 2.3 մլրդ ԱՄՆ դոլլարի և 2017թ.-ին՝ 2.6մլրդ ԱՄՆ դոլլարի:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա հարաբերությունների բարելավման, և ըստ այդմ նաև հնարավոր փափուկ ուժի գործիքների կիրառման մասին որևէ խոսք առնվազն կարճաժամկետ հեռանկարում չի կարող գնալ: Ավելին, նույնիսկ եթե տեսականորեն պատկերացնենք Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հաստատում, ապա որևէ հեռանկար կոնկրետ փափուկ ուժի իմաստով ակնկալել անիրատեսական է՝ հաշվի առնելով հայ հասարակական ինքնագիտակցության մեջ այդ երկրի հանդեպ արմատավորված խորը բացասական վերաբերմունքը՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ հանգամանքներով: Ինչպես նշում է Ա. Տենենկոն, փափուկ ուժի կիրառումն էականորեն սահմանափակող հիմնական գործոններից հիմնականը ազգերի, ժողովուրդների միջև թշնամությունն է: Փափուկ ուժի կիրառումն անհնար է այնտեղ, որտեղ սուբյեկտի նկատմամբ հասարակական ընկալման մեջ կա խորը

արմատավորված բացասական, ընդհուպ մինչև թշնամական վերաբերմունք[339]:

Հարաբերությունների կարգավորման որոշակի հեռանկար առաջացավ 2008-2009թթ., երբ ստորագրվեցին հայ-թուրքական արձանագրությունները, սակայն դրանից կարճ ժամանակ անց Թուրքիան Ադրբեջանի ճնշման տակ որպես արձանագրությունները վավերացնելու նախապայման առաջ քաշեց հայկական զինված ուժերի դուրս բերումը Լեռնային Ղարաբաղի «գրավյալ» տարածքներից: Դրանով Թուրքիան ոչ միայն խախտեց առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորման նախնական համաձայնությունը, այլ նաև որպես նախապայման առաջ քաշեց երկկողմ հարաբերությունների անմիջական շրջանակից դուրս գտնվող հիմնահարց: Առանց հարաբերությունների կարգավորման և սուր հիմնահարցերի հարթման՝ ինչպես քաղաքական էլիտայի, այնպես էլ բնակչության ստվար հատվածի համար փափուկ ուժ կիրառելու հեռանկարը գրեթե բացակայում է:

---

339 Տե՛ս **Фененко А.**, Реальность и мифы «мягкой силы», РСМД, 27.01.2016, https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/realnost-i-mify-myagkoy-sily/

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փափուկ ուժ հասկացությունը քաղաքագիտության և միջազգային նագիտության բնագավառի համեմատաբար «երիտասարդ» եզրերից է՝ գիտական շրջանառության մեջ դրա ներմուծումից ի վեր չի անցել նույնիսկ 30 տարի: Մասնագիտական գրականության մեջ դրան տրվել են մի քանի տասնյակ սահմանումներ: Առկա մոտեցումների մի մասը փափուկ ուժը սահմանում է շատ լայն՝ որպես ցանկացած ոչ ռազմական միջոցներով սեփական նպատակներին հասնելու կարողություն, մյուս մասը փորձում է որոշակիացնել դրա կիրառման տիրույթը: Ամփոփելով մասնագիտական գրականության մեջ եզրի սահմանման հիմնական մոտեցումները՝ կարելի է վերհանել փափուկ ուժի հիմնական հատկանիշները. ա) փափուկ ուժը որոշակի միջոցների/կարողությունների

ամբողջություն է, որոնց մի մասն է միայն գտնվում պետության վերահսկողության ներքո,բ) փափուկ ուժի գործադրման արդյունքում օբյեկտը կամավոր «ենթարկվում է» սուբյեկտին, հակառակ պարագայում գործ ունենք հարկադրանքի հետ, գ) փափուկ ուժը կարող է գեներացվել ինչպես սուբյեկտի կողմից հատուկ նպատակադրման արդյունքում, այնպես էլ առանց դրա դ) փափուկ ուժի արդյունավետ կիրառման վերջնարդյունքը կարող է լինել ինչպես օբյեկտի վարքագծի, այնպես էլ նրա առաջնահերթությունների/գերակայություններ ի փոփոխությունը:

2. Ելնելով վերոնշյալ հիմնական տարրերից՝ փափուկ ուժը կարելի է սահմանել որպես *առանձնահատուկ միջոցների և կարողությունների այնպիսի ամբողջություն, որոնց գործադրման արդյունքում օբյեկտը կամավոր կողմնորոշվում է դեպի սուբյեկտի գաղափարախոսությունը, արժեքները, առաջնահերթությունները՝ արդյունքում նպաստելով վերջինիս քաղաքական կամ այլ շահերի բավարարմանը:*
3. Ժամանակակից աշխարհում փափուկ ուժի «պահանջվածության» և դերակատարության աճի հիմքում ընկած են մի շարք նախադրյալներ կամ համակարգային գործոններ: Դրանց թվում պետք է մատնանշել ժամանակակից անվտանգային սպառնալիքների բնույթի փոփոխությունը՝ հատկապես «ոչ ավանդական» սպառնալիքների առաջին պլան մղվելը, որոնց դիմագրավումը միայն ռազմական ուժով անհնար է; սպառազինությունների կործանարար հզորությունը և կիրառման անհեռանկար լինելը; ժամանակակից սպառազինությունների

մրցավազքի պայմաններում մրցունակ մնալու համար պահանջվող ահռելի ֆինանսական, մարդկային և այլ միջոցները; ժողովրդավարացման միտումների աճը, որի արդյունքում հասարակություններն ավելի շատ են ներգրավվում քաղաքական գործընթացներում և ազդում իշխանությունների վարքագծի վրա; միջազգային հարաբերությունների լայնամասշտաբ ինստիտուցիոնալացումը՝ երկկողմ և բազմակողմ ձևաչափերի աննախադեպ աճը, ինչը լրացուցիչ խոչընդոտներ է առաջացնում միակողմանիորեն ռազմական ուժ կիրառել ցանկացող դերակատարի համար:

4. Փափուկ ուժի էության բացահայտման հիմնախնդրի շրջանակներում առանցքային նշանակություն ունի կոշտ (ռազմական) ուժի հետ նրա փոխհարաբերակցության հիմնահարցը՝ հաշվի առնելով, որ փափուկ ուժը, որպես եզր, ձևավորվել է հենց կոշտ (ռազմական) ուժի հետ հակադրության համատեքստում: Երկու եզրերի փոխհարաբերակցության շուրջ մոտեցումները կարելի է պայմանականորեն բաժանել 2 խմբերի՝ *փոխլրացման* և *ստորադասման*, որոնցից առավել հիմնավոր է թվում փոխլրացման մոտեցումը: Մյուս կողմից, ուժի այդ երկու տեսակները հաճախ հանդես են գալիս այնքան շաղկապված, որ հաճախ դժվար է լինում դրանք սահմանազատել: Մեկ գործողության մեջ կարող են պարունակվել ինչպես կոշտ, այնպես էլ փափուկ ուժի բաղադրիչներ՝ օրինակ ՀՀ մասնակցությունը ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելություններին, մի կողմից, բարձրացնում է կոնկրետ այդ մասնակից ստորաբաժանումների մարտունակությունը, մյուս կողմից՝ դրականորեն է ազդում

Հայաստանի միջազգային իմիջի վրա՝ որպես անվտանգության «մատակարար»:

5. Փափուկ ուժի հիմնահարցի ուսումնասիրության անբաժան մաս է կազմում փափուկ ուժի ռեսուրսների դասակարգումը և տիպաբանությունը: Ինչպես նշվեց, փափուկ ուժը առաջին հերթին միջոցների և կարողությունների ամբողջություն է, իսկ վերջիններիս տակ նկատի են առնվում փափուկ ուժի ռեսուրսները: Մասնագիտական գրականության տեղ են գտել փափուկ ուժի ռեսուրսների մի շարք տիպաբանություններ, որոնք որպես հիմք են ընդունում տարբեր չափանիշներ՝ «ծագման» ոլորտը, միջավայրը և այլն: Ուսումնասիրելով և ամփոփելով փափուկ ուժի ռեսուրսների տիպաբանության առկա մոտեցումները՝ որպես ելակետ է ընդունվում ըստ ոլորտի փափուկ ուժի ռեսուրսների դասակարգումը և առաջ է քաշվում հետևյալ տիպաբանական մոդելը՝ *կառավարում, կրթություն, մշակույթ, ներգրավվածություն միջազգային հարաբերություններին, ձեռնարկատիրություն, տեխնոլոգիաներ, սփյուռք*:
6. Փափուկ ուժի ռեսուրսների տիրապետելն ինքնին դեռևս չի վկայում դրանց արդյունավետ կիրառման մասին: Այդ ռեսուրսները դեռևս պետք է անցնեն իրացման գործընթաց, որի շրջանակներում առանցքային նշանակություն ունի փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացը: Այն ենթադրում է փափուկ ուժի մեխանիզմների ստեղծում, որոնք, ըստ էության, շարժման մեջ են դնում փափուկ ուժի ռեսուրսները, «միս ու արյուն» են տալիս դրանց,

նպաստում են դրանք քաղաքական վերջնարդյունքի վերածելուն:

7. Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել փափուկ ուժի մեխանիզմների տասնյակ օրինակների, թեև դրանք հիմնականում տարերային բնույթ ունեն, որևէ կերպ խմբավորված չեն այս կամ այն չափանիշի շուրջ: Յաշվի առնելով այս բացը և աշխատանքի համար փափուկ ուժի մեխանիզմների տիպաբանման անկյունաքարային նշանակությունը՝ առաջարկվում է փափուկ ուժի մեխանիզմների տիպաբանական 2 մոդել՝ որպես չափանիշներ ընդունելով տվյալ մեխանիզմը կիրառող սուբյեկտին և կիրառության ոլորտը: Առաջին դասակարգման դեպքում հաշվի է առնվում, թե ով է կենտրոնական դեր խաղում փափուկ ուժի տվյալ մեխանիզմի գործարկման համատեքստում, արդյոք այն գտնվում է պետության հովանու տակ, թե գործում է ինքնուրույն: Այս հիմքով փափուկ ուժի մեխանիզմները կարելի է բաժանել *պետության կողմից հովանավորվող* և *ինքնուրույն* մեխանիզմների: Տիպաբանական այս մոդելի հիմնական թերությունն այն է, որ հաճախ շատ դժվար է լինում բացահայտել՝ արդյոք փափուկ ուժի տվյալ մեխանիզմը գործում է անկախ, թե պետությունից այդուամենայնիվ ստանում է այս կամ այն բնույթի օժանդակություն: Այդ թերությունը հաղթահարվում է տիպաբանական երկրորդ մոդելի շրջանակներում. ըստ կիրառության ոլորտի փափուկ ուժի մեխանիզմների դասակարգման դեպքում հաշվի է առնվում այն ոլորտը, որում տվյալ մեխանիզմը կիրառվում է: Այդ հիմքով փափուկ ուժի մեխանիզմները կարելի է բաժանել *քաղաքական,*

*տնտեսական, մշակութային, կրթական, տեղեկատվական և սփյուռքի*:

8. Փափուկ ուժի մեխանիզմների արդյունավետությունն էականորեն կախված է այն միջավայրից, որում այն կիրառվում է: Կիրառման գործընթացում պետք է հաշվի առնվեն մի շարք գործոններ, այդ թվում՝ ա) օբյեկտի մշակութային և այլ առանձնահատկությունները, բ) օբյեկտի շահերը, գ) կոնկրետ ժամանակային միջակայքում տեղեկատվական հոսքերը, դ) փափուկ ուժի մեխանիզմների հասանելիությունը: Հիմնավոր է այն միտքը, որ կենսական շահերի բախման դեպքում փափուկ ուժը առաջին զոհերից մեկն է:
9. Հարավային Կովկասն իրենից փափուկ ուժի տարատեսակ մեխանիզմների կիրառման յուրատեսակ խճանկար է: Ընդ որում, այստեղ ներգրավված դերակատարներից յուրաքանչյուրի փափուկ ուժի մեխանիզմների բնույթն ուղղակիորեն պայմանավորված է նրանց հետապնդած աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերով և դրանցում փափուկ բաղադրիչներին հատկացված դերակատարությամբ:
10. Հարավային Կովկասում ներգրավված արտատարածաշրջանային դերակատարներից ԱՄՆ-ը համաչափորեն ներկայացված է փափուկ մեխանիզմների ոլորտային ոլորտային գրեթե ամբողջ սպեկտրով: Դրանց շարքում առաջնայինը քաղաքական մեխանիզմներն են, որոնց «թիրախը» տարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերի ժողովրդավարացմանը նպաստելն է, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ամրապնդումը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այդ

ուղղությամբ նշանակալի ջանքեր են գործադրում ինչպես պետական մի շարք կառույցներ և կազմակերպություններ, ինչպիսիք են ԱՄՆ պետքարտուղարությունը և Միջազգային զարգացման ամերիկյան գործակալությունը, այնպես էլ ոչ պետական մի շարք կազմակերպություններ, ինչպիսիք են Ազգային ժողովրդավարական ինստիտուտը, Եվրասիա հիմնադրամը, Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը, Բաց հասարակության հիմնադրամները և այլն: Ժողովրդավարացման գործընթացներին աջակցությանն ուղղված ամերիկյան օժանդակության մեծ մասը բաժին է հասնում Վրաստանին, ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով այդ երկրի արևմտամետ դիրքորոշումը և արևմտյան ինտեգրացիոն կառույցներին միանալու ցանկությունը: Միևնույն ժամանակ, բավականին շոշափելի է նաև Հայաստանին տրամադրվող օժանդակությունը: Իսկ Ադրբեջանում քաղաքական մեխանիզմների մասով ԱՄՆ-ն կարողացել է հասնել շատ քիչ արդյունքների՝ հաշվի առնելով այդ երկրի ավտորիտար քաղաքական համակարգը և օտարերկրյա կազմակերպությունների նկատմամբ պետական իշխանության պարբերական ճնշումները: Ոչ պակաս կարևոր դերակատարություն ունեն նաև կրթական և մշակութային մեխանիզմները՝ ի դեմս Հայաստանի և Վրաստանի ամերիկյան համալսարանների, կրթական փոխանակման ծրագրերով ԱՄՆ-ում ուսանող մի քանի հազար ուսանողների, երեք երկրներում գործող մեկ տասնյակից ավելի Ամերիկյան անկյունների: Փափուկ գործիքակազմի կիրառումն ուղեկցվում է նաև տեղեկատվական մեխանիզմների կիրառմամբ,

որոնց թվում կարևոր դերակատարություն ունեն Ազատություն և Ամերիկայի ձայնը ռադիոկայանները:

11. Եվրոպական Միությունը տարածաշրջանում փափուկ ուժի գործիքակազմի «նախատիպեր» սկսել է կիրառել արդեն հետսառըպատերազմյան առաջին տարիներին: Փափուկ ուժի մեխանիզմների կիրառման դինամիկան հաշվի առնելով՝ ԵՄ քաղաքականությունը տարածաշրջանում կարելի է պայմանականորեն բաժանել երեք ընդհանրական փուլերի՝ 1991-2004թթ., որը բնորոշվեց տարբեր ձևաչափերով (TACIS, ԳՀՀ) մեծամասամբ տեխնիկական և հումանիտար օժանդակության տրամադրմամբ; 2004-2009թթ., որի ընթացքում Հարավային Կովկասի աստիճանաբար տեղ զբաղեցրեց ԵՄ առաջնահերթություններում, ներմուծվեց ԵՀՔ-ն, որտեղ առաջին անգամ հայեցակարգային իմաստով ամրագրվում էր Հարավային Կովկասի հանդեպ փափուկ ուժի կիրառման անհրաժեշտությունը և 2009թ.-ից մինչ այսօր՝ որպես ԱլԳ գործարկման և ընդլայնված և համապարփակ համագործակցության փուլ: Ընդհանուր առմամբ, մինչ այժմ տարածաշրջանում ԵՄ փափուկ ուժի քաղաքականության օգուտները մեծ մասամբ քաղել է Վրաստանը, որն արդեն տևական ժամանակ հետապնդում է արևմտամետ քաղաքական կուրս: 2013թ. ստորագրված Ասոցացման համաձայնագիրը՝ իր Խորը և համապարփակ առևտրի բաղադրիչով ներկայումս ԵՄ-Վրաստան համագործակցության հիմնական ձևաչափն է: Քաղաքական, ֆինանսատնտեսական, կրթական համագործակցության և ստացվող օժանդակության առումով Վրաստանն առաջ է տարածաշրջանի մյուս երկու երկրներից: Մյուս կողմից, վերջին տարիների ընթացքում բավականին լուրջ

օգուտներ է ստացել նաև Հայաստանը, որը չնայած Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններին, մշտապես ձգտել է եվրոպական համայնքի հետ սերտ համագործակցության և երբեք չի հակադրել իր արտաքին քաղաքականության այդ երկու բաղադրիչները: Դրա վկայությունն էր 2017թ. Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA), որը սահմանում է համագործակցության հիմնական ոլորտները: Ընդ որում, առկա են Հայաստանում տեղի ունեցած ժողովրդավարացման գործընթացերով պայմանավորված ԵՄ ֆինանսական և այլ բնույթի օժանդակության ավելացում ակնկալելու բոլոր հիմքերը: Ադրբեջանի դեպքում ԵՄ փափուկ ուժի քաղաքականությունը կարելի է մեծ հաշվով համարել ձախողված՝ հաշվի առնելով այս երկրի հետ համագործակցության օրակարգում բացարձակ այլ առաջնահերթությունները և փոխպայմանավորման մեխանիզմի խիստ սահմանափակ արդյունավետությունը: Ադրբեջանն ինքը բավարարված է համագործակցության ներկայիս մակարդակով և առհասարակ հետաքրքրված չէ փափուկ բաղադրիչի մասով ԵՄ հետ հարաբերությունների կառուցմամբ: Տարածաշրջանում ԵՄ փափուկ ուժի հիմնական սահմանափակող գործոնը Միության շահերի և հետապնդած նպատակների ներքին հակասականությունն է՝ ի դեմս, մի կողմից, էներգետիկ աղբյուրների բազմազանեցման, մյուս կողմից՝ տարածաշրջանում ժողովրդավարացման: Արդյունքում հռչակված նպատակների և գրանցված վերջնարդյունքի միջև առաջանում է մեծ անհամապատասխանություն:

12. Հարավային Կովկասում ներգրավված արտատարածաշրջանային դերակատարներից Չինաստանի փափուկ ուժի քաղաքականությունը սերտորեն շաղկապված է այդ երկրի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական տեսլականին՝ վերակենդանացնելու «Մետաքսե ճանապարհը», որը ներկայումս ստացել է «Մեկ գոտի մեկ ճանապարհ» նախագիծ անվանումը: Արդյունքում ՉԺՀ փափուկ ուժի մեխանիզմների շարքում կենտրոնական տեղ են զբաղեցնում տնտեսական գործիքները: Ընդհանուր պատկերը, որը ստացվում է տարածաշրջանի երկրներում Չինաստանի փափուկ ուժի մեխանիզմների վերլուծությունից հետևյալն է. Վրաստանում և Ադրբեջանում Չինաստանի փափուկ ուժի քաղաքականությունը ծավալվում է հիմնականում տնտեսական մեխանիզմների շուրջ՝ այսպես կոչված «ենթակառուցվածքային էքսպանսիայի» և ներդրումների տեսքով, որն, անշուշտ, պայմանավորված է այս երկրներում՝ «Մեկ գոտի մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում տեղավորվող հաղորդակցային ուղիների առկայությամբ: Միաժամանակ, այս երկու երկրներում, ինչպես նաև Հայաստանում Չինաստանն ունի նաև որոշակի կրթական և մշակութային ներգրավվածություն՝ ի դեմս Կոնֆուցիուսի ինստիտուտների և նրանց կողմից չինարենի և չինական մշակույթի հանրայնացմանն ուղղված ջանքերի: Մինչդեռ Հայաստանում, թեև նույնպես կարելի է նկատել տնտեսական ներգրավվածության (Հյուսիս-Հարավ ուղղությամբ ենթակառուցվածքների զարգացման մասով) և հատկապես տնտեսական օժանդակության որոշակի տարրեր, ավելի մեծ չափով շեշտադրվում են կրթական և մշակութային մեխանիզմները, ի

դեմս նաև Հայաստանում գործող հայ-չինական բարեկամության՝ տարածաշրջանում միակ դպրոցի: Փափուկ ուժի մեխանիզմների շարքում Չինաստանի հիմնական բացթողումը տեղեկատվական մեխանիզմների բացակայությունն է, որոնք կարող էին ապահովել հանրային իրազեկման շատ ավելի բարձր մակարդակ տարածաշրջանի երեք երկրներում:

13. Ռուսաստանում փափուկ ուժի ինստիտուցիոնալացման գործընթացը սկսվեց բավականին ուշ՝ միայն 2000-ական թվականների վերջերին: Հարավային Կովկասը, որը Ռուսաստանի համար անմիջական շահերի գոտու՝ Մերձավոր արտասահմանի մասն է կազմում, չէր կարող անմասն մնալ փափուկ գործիքներից: Այսպես, վերջին տարիների ընթացքում ՌԴ փափուկ ուժը հիմնականում տնտեսական, մշակութային, կրթական, ինչպես նաև տեղեկատվական մեխանիզմներ, ակտիվ գործունեություն ծավալող հիմնական կազմակերպություններն են Россотрудничество-ն, Русский Мир-ը, Հանրային դիվանագիտության աջակցության Գորչակովի հիմնադրամը: Բացառություն է կազմում միայն Վրաստանը, որի հետ փաստացի հարաբերությունների բացակայության պայմաններում փափուկ ուժի դասական մեխանիզմները չեն աշխատում, փոխարենը բավականին մեծ դերակատարություն ունի երկու ուղղափառ եկեղեցիների միջև համագործակցությունը, որն ավանդականորեն կողմնորոշիչ է եղել երկու երկրների հասարակությունների համար: Միևնույն ժամանակ, տարածաշրջանում ՌԴ-ն դեռևս չի կարողանում իրացնել փափուկ ուժի իր ամբողջ պոտենցիալը հետևյալ հիմնական սահմանափակող

գործոնների պատճառով՝ 1) տարածաշրջանի երկրների հասարակությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ ոչ բավարար աշխատանքը, կողմնորոշումը դեպի քաղաքական էլիտաների հետ համագործակցություն 2) ռեսուրսների ոչ օպտիմալ կիրառումը 3) ընդհանուր ռազմավարության բացակայությունը: Այս սահմանափակումների արդյունքում առաջացած փափուկ ուժի պակասուրդից ՌԴ-ն հաճախ ապավինում է կոշտ միջոցներին:

14. Իրանի փափուկ ուժի քաղաքականությունը միտված է լուծելու միանգամից մի քանի խնդիր՝ մեղմացնելու միջազգային պատժամիջոցների ազդեցությունը, զսպելու իր կազմում էթնիկ ադրբեջանցիների անջատողական որևէ նկրտում կամ դրա փորձ, կապող օղակ հանդիսանալ Պարսից Ծոցի և Սև ծովի միջև, հակակշռելու Թուրքիայի ազդեցությանը տարածաշրջանում և հատկապես վերջինիս մասնակցությամբ էներգետիկ նախագծերին: Տարածաշրջանի երկրներից Իրանը գործընկերային հարաբերությունների ունի Հայաստանի հետ, որտեղ առավել հատկանշական են տնտեսական (Հյուսիս-Հարավ ուղղությամբ ենթակառուցվածքների զարգացման) և մշակութային (ՄՀԻԿ), մասամբ նաև կրթական և տեղեկատվական ոլորտներում կիրառվող մեխանիզմները: Իր կազմում էթնիկ ադրբեջանցների ինքնուրույնության միտումներին Իրանը փորձում է հակակշռել Ադրբեջանում իր կրոնական ազդեցության ընդլայնմամբ՝ մի կողմից ադրբեջանցիների, մյուս կողմից՝ թալիշների շրջանում: Հատկապես Ադրբեջանի հարավային շրջաններում, կրոնական և տեղեկատվական գործիքների

արդյունավետ կիրառման միջոցով, դա Իրանին մեծամասամբ հաջողվել է: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այստեղ Իրանը հատկապես մեծ ակտիվություն է ցուցաբերում տնտեսական մեխանիզմների տեսքով՝ հաշվի առնելով Վրաստանի տարանցիկ դիրքը, ԵՄ-ի սերտ կապերը, ինչպես նաև ելքը դեպի Սև ծով:

15. Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը հստակորեն տեղավորվում է միջազգային էներգետիկ հանգույց դառնալու այդ երկրի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական տեսլականի, ինչպես նաև ավելի լայն՝ պանթյուրքիստական տեսլականի շրջանակներում: Տարածաշրջանի երկրներից Վրաստանը Թուրքիայի փափուկ ուժի մեխանիզմների գլխավոր «թիրախն» է՝ այստեղ Թուրքիան գործադրում է մեխանիզմների մի ամբողջ համալիր՝ ոլորտային գրեթե ամբողջ սպեկտրով: Առաջին հերթին խոսքը գնում է տնտեսական բաղադրիչի մասին՝ ի դեմս եռակողմ հաղորդակցային ուղիների (խողովակաշարեր, ավտոճանապարհներ) կառուցման և Վրաստանի տնտեսության տարբեր ենթաոլորտներում (բանկային, ձեռնարկատիրական) ներգրավման: Ադրբեջանում Թուրքիայի փափուկ ուժը հիմնականում ուղղված է այդ երկրում 1990-ական թվականներից բավականին ազդեցիկ գյուլենական շարժմանը հակազդելուն: Եթե մինչև 2014թ. գյուլենականները հիմնականում գործում էին պաշտոնական Անկարայի քաղաքական կուրսի և շահերի համատեքստում, ապա 2014թ. Ռ. Էրդողանի և Ֆ. Գյուլենի տարաձայնություններից հետո սկսվեց դրանք սկսեցին տրամագծորեն հակադրվել միմյանց: Ընդ որում, Ադրբեջանի իշխանությունները համակողմանի

աջակցություն են ցույց տալիս Թուրքիային այդ հարցում՝ վերջին տարիներին փակելով կամ «սեփականաշնորհելով» գյուլենական կրթական հաստատությունների մեծ մասը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ այս գոնե կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում Թուրքիայի փափուկ ուժի արդյունավետ կիրառում ակնկալելն անիրատեսական է՝ հաշվի առնելով հայ հասարակության ինքնագիտակցության մեջ այդ երկրի հանդեպ առկա խորը բացասական վերաբերմունքը, որն ի չիք է կդարձնի փափուկ ուժի գործադրմանն ուղղված որևէ ջանք կամ փորձ:

# Օգտագործված գրականության ցանկ

***Միջազգային պայմանագրեր և ներպետական փաստաթղթեր***


1. Концепция внешней политики Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В.В.Путиным 30 ноября 2016 г.), http://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/2542248
2. Концепция внешней политики Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В.В. Путиным 12 февраля 2013 г.) (утратила силу), http://www.mid.ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/122186
